Որ առաքեցեր զմիածին Որդիդ քո յաշխարհ՝ լոյս 'ի լուսոյ, կեանք 'ի կենաց, որ եկն զգենուլ զմեր նմանութիւնս մարմնոյ 'ի կուսէ անտի, զի զմեզ անդրէն առ աստուածութիւն յարմարեսցէ իւրոյ նմանութեանն որ իբրեւ զմեզն եղև ։ Ծնաւ 'ի կուսէն մարմնով և մարդացաւ և մարմնացաւ իբրեւ զմեզ ։ Այլ կեաց և մնաց 'ի փառս աստուածութեան իւրոյ ։ և ոչ ընկալաւ փոփոխումն յաստուածութենէն

խորհին. այլ նոյն է որ էն, և էն,
և կայ և մնայ յաւիտեան ընդ
Հօր և ընդ սուրբ Հոգւոյն: Այլ
զի սերելոց զմտաբերելին, վասն այս-
նօրինակ եղև բերել զմիտս, զի զմիտս
ածցէ յաստուածաբանութիւն շնորհօք
աստուածածնութեան խորոց, որ են
կամք ծնողին խորոց. և կատարելոց
զկամսն նորա. որ զսուրբ խորհուրդ
մատուցանելոց համեմատութեամբն
կերել զհուր անմարմնութեան մշտնոց
մնահու աստեղենաց, մնահրաշամքն
և թագաւորութեանն համբերերձ. որ վասն
զի սերելոցն մտաբերելի պաշտել ըղ-
ձապատկերս մտաբերութեան վայելա-
գործս Քահանայապետագործս Հիւսանոց,
եղև լինելն պատկեր մտաբերութեան, զի
զպատկերագործն և զպատկե-
րականն և զպատկերագործան
խոր պատկերի աստուածածութեն
Հնազանդեցուցէ:

Եւ վասն զի ամենայն կերնն մտաբերելի
երկիր պատուանին աննշմարելի պատկե-
րաց մտածելոց, եղև լինելն պատկեր
մտածելոյ ՚ի մերոյ խորհին, և մտ-
ածու և անձնաշարժութեան, զի ընդերկու-

կանանուն զնոսա առաջ. առաջ հնա-
զանդգեցուցանէ խոտում պատճե-
րին. իբրև զկարծ երևեցուցեալ
զխաչն, և զմարմինն իւր անձնէր
կերակուր ախտեգերաց. զի այնու-
որպիսացի յարքունականն ատենին,
մշտնջենաւոր արքայութեանն աս-
տուածութեանն իւրոյ :

Եւ փոխանակ դրօշելոյ փայ-
տիցն՝ զխաչ իւր կանգնեաց 'ի մէջ
ախտեգերաց. զի որով ամենայն եղեն
երկիր պատուաւորել փայտին, ամե-
րականանաւ ընդդիմականանաւն հաւա-
տացեն երկիր պատուաւորել խաչին
փայտին, և որ 'ի վերայ նորա պատա-
կերին և մարգարէին եղէ. զի 'ի վե-
րայ խաչին առեր այսպէս, զոր նը-
շանակեալ մարգարէին ասէ թէ ե-
դէ ես որպէս զխոյլ՝ որ ոչ լսէ, և
իբրև զհամր՝ զի ոչ բանայ զբերան
իւր : Զի դու, Տէր, ասէիր մար-
գարէիւն յառաջ, մինչ չև հասեալ
ժամ կրելոյ Որդւոյ քոյ Յիսուսի
զայս ամենայն համբերութիւնս,
Թէ արարից զքեզ համր, և կա-
պեցից զլեզու քո 'ի քիմս քո. և

եղիցես դու. Կարեւ զայր մի՝ որոյ
ոչ զուգեն բանք յանդգնելիանու-
թեան 'ի բերան խաղումս:

Քանզի ակնկեցին մարդկեկ զանհ-
խոս կարաս պատկերաց դիցն մեհե-
անաց, վասն այսորիկ եւ որդին
Աստուածոյ մարմնանալ պատկեր եւ-
ղեւ մարդոյն 'ի նմանութեան
մարդկան պատկերաց, եղեալ 'ի
բարձրաւանդակ խաչն, երրե 'ի
վերայ բարձր դիտակի եղեալ՝
ցուցանէր անդաստանաց մեծաւորու-
թեամբն առ արարածս. վասն
որոյ տանելին զնա 'ի վերայ բար-
ձուն ախերդերը, ցնծացան եւ եր-
կիր պարզէն եւ հնազանդեցան:

Եւ վասն զի սակեր էին մարդիկ
սաղասի լինել 'ի մեհեանս կացեն
զոհելով՝ զոր անհամեմատեցին մասու-
ցանէին, վասն այսորիկ եւ դու կա-
ռեցեր 'ի զենումն արդւոյ քոյ ըն-
տրելոյն եւ սատուցեր. զպատարագ
իմ զենեալ է, եւ զմարմին իմ պատա-
րաստեալ է. եւ բարեկամացեր
զուարթութեան 'ի խաչելոյ որ-
դւոյ քոյ. եւ յանդրեցուցեր զամե-

նոյն ախտեղեօք 'ի կենդանաբարուր մարմնոյ, որ էին կերպակոյք և կենդանութիւն բաւականին՝ ամենայն երկրպագութեան քոյ ընդ ամենայն ախտեղեօք։ Իսկ որ ոչն կամեցան դառն 'ի կոչումն հարսանեաց հոգևոր սեղանոյն, պատրաստեցեր 'ի տանջանս յաւիտենից, յանձնեաւ ատատակումն յանհանց դատապարտանացն, և դժոխային նոցա շինեցեր պատրաստեցեր 'ի մէջ հրոյն տանջանացն պատրաստելոց բարկութեան։

Եւ քանզի ուտէին և ըմպէին մարդիկ զարիւն զոհից անասնոց դիցապաշտութեան, վասն այսորիկ եհեղ զարիւնն իւր 'ի վերայ փայտին. զի փայտն ընդ գրոշեալ փայտիցն, և ինքն ընդ մարդադէմ պատկերացն պղծութեան, և արիւնն իւր ընդ նուագացն ուրախութեան արբեանցն, որով և նորոգումն մարմնոյ դալարութեան մարդկան։ Զի եկն գնեաց զմեզ արեամբն իւրով 'ի ստրկութիւն ծառայութեան աստուածութե

խորքոյ, և աղօթականաց 'ի ծառայու-
թեանն շնորհութեանն մերոյն. զի
մեք եւս զինչ արարեալն Որդւոյ քոյ,
փրկչականք և աղօթականքս արարեալս
և մարմնոյն նորա. զի ոչ եւս ան-
ձանց աւետիք, եթէ ըստ կամաց
զխորհրդութեանն անձանց մերոց զը-
նառաջութ, և կամս ըստ կամաց ա-
մենայն մանկկանանցու. մարդկան,
թէպէտեւ և խղճն մեր աւետիք մար-
մնաւորքս: Մանկունն ազատ է սպա-
սաւորել զնուա, որպէս 'ի քեն է
հրամանաւորել. և ոչ զգեղ ընդ անձ
մանկականաց. մարդկան փոխա-
նակել. զի ոչ զխորհրդն նմա
կարող են շնորհաւորել, խակ Որդին
միածին՝ Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս՝ կարող է արկանել 'ի սան-
ձանան յաւիտենից հաստատութ ող-
ւոյ և մարմնոյ հանդերձ՝ 'ի
հանգիտ անշէջ և յորդոն անմահ:

Այլ, Տէր, տուր ինձ զօրու-
թիւն հաւատարմութեան նմանութեա-
ցուցոյ վասն անձնոյ. և ողորմեա
ինձ խորհ 'ի մեռելոյ աւանդականն՝ որ
ընդ զենուլ էր կարող շնորհաւորութեանց

խօսքի քոյ. և արդ առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց, որով կեցոյ ամենայն երկրի՝ առ հասա-րակ արդարոց և մեղաւորաց՝ փոխան ներելոյ քաղցրութեան քոյ. զի ծագես զարեգակն քո 'ի վերայ չա-րաց և բարեաց, և ածես զանձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց. զի ապահովես զբարերարութիւն քո, և ցուցանես զողորմութիւն քո առ ամենայն մարդիկ առ հասարակ:

Տուր ինձ, Տէր, շնորհս համբերու-թեան զատուն առանձնանցս՝ ո-րով կատարեն զիս. զի և ես արժանի լեցեց պահել զպատուիրանս բա-րեսաւորութեան հաւատոց՝ զոր ետուր ինձ. ճանաչել զքեզ և ա-նել զկամս քո: Զի մի՛ ամաչես-ցեն յուսացեալքն 'ի քեզ, որոց միաբանեալ պարծեցեալ են 'ի միա-ծին Որդիդ քո 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ 'ի քէնէ առաքե-ցաւ. զոր դու առաքեցեր 'ի մահ փոխան մեղաց մերոց, զի առցէ ըզ-մեղս մեր 'ի յանձն իւր, և փոխան յանցանաց մերոց պատարագեսցի, և

առնուցէ զմեղսն յանձին իւր, և ընդ նմին տարցի զպատուհասն յանցանաց մերոց յանձին իւր՝ չարչարանօք խաչին, կատարեսցէ և տացէ շնորհս պարգևաց՝ իւրոց հաւատացելոցն:

Եւ արդ, Տէր բարերար, որ ասացեր եթէ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ՚ի վախճան աշխարհի, մի թողուր զմեզ ՚ի ձեռանէ քումմէ, այլ զօրացո զմեզ ՚ի կամս քո, զի համբերեսցուք կարասցուք պատերազմիլ՝ վասն մեծի անուանդ քոյ · զի յայտնի լիցի պարծանք հաւատոցս մերոց ծառայից քոց՝ ՚ի տէրութիւն աստուածութեան քո · զի և այս յայտնի լիցի՝ եթէ ոչ կարէ ոք ՚ի թշնամեաց յաղթել յուսացելոց քոց, որք անձանց են թշնամիք:

Այլ, Տէր, խառնեսս զմեզ ՚ի թիւ արդարոց քոց՝ վասն մարդասիրութեան քոյ · որ ոչ թողեր զմեզ ընդ վայր ՚ի մեղս հարցն մերոց, և ՚ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց, և յանօրէնու-

թիւն տառապելոցն մերոց ։ Եւ ե-
տուր ձանձրացեալ զմտօք թիւն ապա-
շխութեանց. անառակութեանց
քոյ, զի մի կորիցուք յանհնազանդու-
թեանց հեթանոսութեան ։ Այլ
զթացար յարարածս քո, զի մի
եկեսցէ 'ի մերոյ մեր 'ի տապա-
րակութիւն քո. և մի մահաբա-
նեսցէ զմեզ սրտմտութիւն քո ։
և մի յուղեսցի ցասումն քո առ
արարածս քո ։

Եւ արդ տուր, Տէր, զօրութիւն պատուիրանացդ 'ի ներքոյ ճշմարտութեան ամենատուրք անհանդքոյ և մեռանել, և դարձեալ նորոգել փառօք միանգամայն, յորժամ դարձեալ առաքեսցես առմեզ զհատուցմանն խոստացեալ հրաւէր զՏէր մեր Յիսուս Քրիստոս. զի կացցուք և մեք զուարթերեսօք առաջի նորա, և առցուք զպսակս յաղթութեան ընդ սրբոցն քո. զի դու միայն կալոց և մնալոց ես յաւիտեան, և աննոյն տառապեալքն անցաւոր արարածք բանին քով մնչեսցին. բայց

զուր միայն եւ յաւիտենականն, եւ
փոփոխոս զանազանելի երկրէ զգործեան
'ի շարունակութեան 'ի ժամանակս իւ-
րեանց, եւ զարգանալ միաւորեալ
նորոգելոց: Թուաւորութեանս յերկինս
զտեսիլս մարմնական, զանձանձրոյթ-
գամենա, նորափետուր զարդարեալ
երկրէ զարդարեալ զերկրայինս քո Տէր:

Տէր առանձինեան եւ Հաստատիչ խառ-
նարդի, արարիչ լուսոյ, քո է տիւ
եւ քո է գիշեր, որ հաստատեցեր
լուսաւորս 'ի պէտս` առաջնորդս
արարածոց քոց, որ են յերկինս
քում. որ արարեր զերկնաւոր լու-
սաւորս առ 'ի պէտս շրջանաց առա-
րեւոյ, ամսոց, ժամանակաց, առ
'ի բովանդակ զժամանակս, չափողս
աւուրց` որ են յաշխարհի. զմին
երկնաւորական առանձնեան` որ ունի
զօրութեան միածնութ. քոյ, զանձնէն
եւ զանհաղթելի, զանհնարին եւ զան-
խափանելի լուսոյ, որ յայտնեցեալ է
իւրոց արդարոց 'ի հանդերձեալ
աշխարհին, ուր ոչ աւուրք եւ ոչ
գիշերք. ոչ շաբաթք եւ ոչ ամիսք
եւ ոչ ամք եւ ոչ ժամք եւ ոչ ժա-

մանաւանդ և ոչ չարչարանք տարերաց և ոչ չարչարանք ժամանակաց. քանզի միայն Տէր է, և անուան նորին մի-այն։ Որ առնես զհաստատութիւն ուրախութեան քոյոց երկրպագու-ղուաց քարոզին, որոց ոչ գոյ փո-փոխումն բարութեան, և ոչ հատ-ումն պարգևացն առատաց։

Իսկ զնմանէ լուսաւորականութեան գի-շերոյն, որ ունի քոյով կամօք միածնիդ. քոյ զօրինակ յարու-թեան, յանձին բարձեալ բերել ցուցանել նշանակել ամենայն եր-կրաւորաց. զքաջալերութիւն ա-մենայն մեռելոց յարութեան. յարևելից մինչև յարևելս եր-թալ 'ի մանկութիւն։ Դարձեալ յարևմտուստ կամօք քոյք ծերա-ցեալ հասանէ, պատի, թաղի, գուշակ թաղելոց, յարութիւն մեռելոց, մխիթարութիւն քա-ջալերութեան առ ապառաժս մա-տուցանէ, զգալուստ Որդւոյ նշա-նակէ յերկնից և զնորոգումն արա-րածոց, ակնարկէ զհաշումն մաշ-մանն մեղաւորաց, ուսուցանէ

զծագել արեգականն յարքայու-
թեանն 'ի զաւակունսն : Դարձեալ
զաղաւհանդիսութիւնն հնազանդելոց 'ի մեղս՝
յուսացանել : Նա և զուաշակէ մեղաւ-
կանաց զյաւիտենականնեգ , անցա-
կանաց զանմահնելեգ , հնականնս զնո-
րոգչեգ խորհն . որ կամօք քոյք
փոփոխումն 'ի կերպարանս՝ որպէս
կամք քո հրամայեցին լինել . մեզ
չև բարձցին առաւելք լինելոցն , զոր
եղեր պատրաստեցեր յոր կա-
տարելումն խոստացիլ քոց . յոր-
ժամ անմտեցեա անմեղեցուն հա-
տուցումն 'ի ձեռն միածնի . և
հոգւոյդ որոյ . զի քո է , և քեզ
վայելէն փառք յաւիտեանս և յա-
ւիտեանս :

Տէր ամենակալ՝ որ պատկեր ըղ-
յուսացելոյս քո , և կատարես
զկամս երկխողածաց քոց , ար-
ժանի արա զիս Տէր՝ զի պահեցից
զպայման իմ որ 'ի քեզ , և զերկիւղն
զմեծ՝ զոր ածելոց եմ առ զխմա-
զարմ անխայրշատեալն 'ի քեզ . և
խնձ տուր համբերութիւն կատա-
րել զընթացս իմ նեղութեանմբս՝

յոր կամս ։ Փրկեսջիր ցաւոց մարմնոյ , ողջացուցիչ ընկելոց , անդամոյժիչ նեղելոց և արձակիչ կապելոց , մխիթարիչ սգաւորաց , յոյս անյուսից , խռովելոց հանգիստ , աշխատելոց նաւահանգիստ ․ որ նաւյիս ալեօք յարուցեալ եմ , և ներակեալս զամենակալեան քաղցրութեամբ քով ։ Տուր ինձ , Տէր , ասնուլ պատկ ընդ առաքելին՝ որ արժանի արարեր մեռանել վասն անուան քո , որոց փառաւորեալ են մինչ խորհրդոյ առաջին քո ․ զի և ես արժանի եղէց մերձանալ ընդ առաջի որդւոյ քոյ սիրելւոյդ , յորժամ յափշտակեսցէ զանձկացեալն իւր 'ի Ճառագայթ լուսոյ իւրոյ , զասնել Ժառանգութեան զամենայն ախտեղերս հրով բարկութեամբ իւրով ։

Այլ այժմիկ , Տէր , զօրացո ըղծառայս քոյ վասն անուան քոյ , զի յաղթեսցուք թշնամւոյն ․ և բարձ և փարատեա զմեզս չարութեան կապապաշտութեան հեթանոսութեան՝ քաղցրութեամբ

սիրով քով առ արարածս քո. որ եդիր զանձն քո 'ի վերայ խաչանց քոց, մի' Թողուր զհօտ քո, զի ածցես յուղղութիւն. որ դու միայն կարող ես Թողուլ զմեղս, և քաւել զյանցանս և զանօրէնութիւնս քոյոց արարածոց, զի ըզքեզ միայն պաշտեսցեն և զկամս քո արասցեն, և լցցին փառաբանիչք աստուածութեանդ քոյ. և ապրեսցին 'ի զատուցանողաց քոց, և վայելեսցեն յանձկաւ բարիս քո. զի ամենեքին արժանի լիցին առանց ամօթոյ և պատրաստականաց կալ առաջի մեծութեանդ քոյ. զի և զգործ ողորմութեան սոցա անմեղութիւն համարեսցիս :

Եւ զի սովոր ես յաղթել յոչընչէ զանինչսն յինչ ածել, և յոչընչէ 'ի լինելութիւն արարածոց. որ ոչ Թողեր զազգս մարդկան 'ի կամս անձանց զինչպիսութեան իւրեանց. այլ զԹացար առաքեցեր զմիածին Որդին քո, որ եկն դարձոյց զարարածս յաստուածութիւն քո, և հրամայեաց քա-

րոզել աւետարանին ընդ ամենայն տիեզերս։ Այն զի քո միայն է փառաւորութիւն, և քեզ իսկ վայելէ երկրպագութիւն յամենայն արարածոց. զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի։ Արդ գթա յարարածս քո, քոյով բարերարութեամբ շնորհօքդ և առ երկիրս Հայոց աշխարհիս. զի և սոքա ծանիցեն զքեզ և զՄիածին Որդի քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ 'ի քէնդ առաքեցաւ առ մեզ, և զգեցաւ զմարմին մարդկութեան մերոյ և նկարեաց և տպաւորեաց զանձն իւր 'ի ստեղծուած ձեռաց իւրոց, զի զգեցցի զմարմին մարդկեղէն, և ազգականեան մերձեցուսցէ զմարդիկ առ քեզ։ Քանզի ոչ հանդարտէին մարդիկ տեսանել զերեսս քո և ապրել, վասն այնորիկ եղև նա 'ի նմանութիւն մարդկան, զի զմարդիկ արժանիս արասցէ աստուածութեանն իւրոյ. զի զազգակիցս մարմնոյն որ 'ի մէնջ առեալ՝ զաստուածու-

Միածին Որդւոյն յարգեցուք բարերարութեամբ Հօր . և ընդ նմին ընկալցուք զշնորհս բարերարութեան Հոգւոյդ սրբոյ` որ 'ի քէն. զի և շնորհեսցեն պատգամք աւետարանի քո այսմ աշխարհի, զի և ողքա ծանիցեն զքեզ և զերախտիս բարերարութեանդ շնորհի քոյ, որ առ ամենեսին է:

Այլ որ դատաստանաւոր ամենեցուն, տուր մեզ զի լիցուք վկայք աստուածութեանդ քոյ, չարչարել վասն անուան քո, և մեռանել վասն ճշմարտութեան քո, և նորոգել միանգամ 'ի գալստեան քո . զի դու եկիր և մեռար 'ի վերայ արարածոց քոց, և խառնեցեր զմահկանացու բնութիւնս մեր յանմահութիւն քո : Վասն այսորիկ և մեք մինչև 'ի մահ լիցուք վկայք կենդանութեան քոյ, զի խառնեսցուք 'ի թիւ վկայից քոց. զի այլ զինչ արդեօք կարեցեմք տանել դարձուածս փոխարէն բարեացն որ 'ի քէն, եթէ ոչ տացուք զանձինս մեր փոխանակ

պատուիրանաց քոց՝ 'ի հաճութեան
կամաց քոց. զի լիցուք ժառան-
գաւորք արքայութեան քում ընդ
այնոսիկ՝ որ հաճոյ եղեն առաջի
քո. զի մատուսցուք զանձինս մեր
պատարագ աստուածութեան քում.
զի կորուսցուք զանձինս, և գար-
ձեալ գտցուք զնա յաւուր յա-
րութեան. կեցցուք ընդ աջմէ
քումմէ զանմեղութիւն զգեցեալ՝
ընդ գառինս աջակողմեան դա-
սուն կամարարաց քոց՝ յուրա-
խութիւն սրբոց քոց որ սիրեցին
զաստուածութիւն քո, և զՄիա-
ծին Որդին՝ զՏէր մեր Յիսուս
Քրիստոս. որ եղև գառն ճշմա-
րիտ, և մատոյց զանձն իւր քեզ
պատարագ վասն մեղաց ամենայն
աշխարհի. զի լիցի հաճեցուցիչ
և բարեխօս ընդ արարիչ և ընդ
արարածս: Իսկ որ յայս հաճու-
թիւն ընթացեալ մերձեցան,
պատրաստեաց նոցա օթեվանս
յարքայութեան աստուածու-
թեանն իւրոյ: Իսկ որք ոչ կա-
մեցան մտանել 'ի հաճութիւն

Հնազանդութեան զաւակացն նո-
րա, յաւիտենից անանցանելի խոս-
տացաւ :

Եւ արդ, Տէր բարերար, որ եկիր և խոնարհեցար, և առեր զկերպարանս մարդկան, և ետուր զանձն քո ամենայն համբերու-թեան, և ոչ դարձուցեր զանձն քո յանարգանաց ընդ երեսս թքա-նելոյ, և մատուցեր հարկանե-լեաց զթիկունս քո, քացախ և լե-ղի դառնութեան վասն մեր ար-բեր, քաղցրացո զսիրտ ամենայն մարդկան 'ի պաշտօն քո, զի հնա-զանդեսցին ընդ ամենահեշտ լծով քով, և աղերսեսցին 'ի յաւիտենից անանցանացն : Զի լցաւ երկիր աս-տուածպաշտութեամբ քով. և որ մնացեալքս են՝ զի և սոքա մի՛ վրիպեսցին 'ի ճշմարտութեան ճանապարհաց քոց, և հրաժա-րեսցին յաղքապաշտութեան սնզանդ, և վայելեսցեն 'ի համբերութենէ քումմէ. որ վասն ամենեցուն ե-կեր 'ի սպանումն խաչի զգառն, և ուրախ առարեր 'ի մարմնի քո՝ զոր

ետուք ՚ի փրկութիւն ամենեցուն, և շնորհս փառաւորութեան քոյ ետուր ընծայել զարիւն քո՝ վասն կենաց ամենայն աշխարհի։ Գթա զի յիշեսցեն և դարձցին և եկեսցեն առ քեզ ամենայն ծագք երկրի. և երկիր պագցեն առաջի քո ամենայն՝ որք իջանեն ՚ի հող. զի կարող ես միշտամնալով կանգնել, կենդանացուցանել և առնել արժանիս մարդասիրութեան քո. զի քո իսկ արեամբ են փրկեալք, և ազատեալք յիշխանութենէ խաւարի։ Արդ ծանիցեն զքեզ յորոց վերայ մեռար դու. զի քո իսկ են ծառայք և քեզ լիցին երկրպագուք. զի մի՛ եկեսցէ ՚ի վերայ մարդկան բարկութիւն արդատութեան քոյ։

Արա զմեզ որդիս լուսոյ և որդիս տուընջեան, զի փառաւորեսցի անուն քո ՚ի վերայ ամենայն տիեզերաց. զի դու ես փառաւորեալ ՚ի մշտնջենաւոր արքայութեանդ, որ եսդ յէութեանդ, յանեղութեանդ, յինքնութեանդ։

Այլ եւ սուրբ օրինակ չարչարանաց քոյոց չարչարողացն խոնարհու-թեամբդ՝ քոյոց սիրելեաց. եւ ցու-ցեր զհամբերութիւն քոյով համբերու-թեամբ, եւ ցուցեր զառաքինութիւն քոց սրբոց՝ 'ի քո մտանելդ 'ի տանջանս կամաւոր համբերութեամբդ: Իսկ մեք հո-գեղէնիքս բնաւ. իսկ զի՞նչ ընծայեսցուք 'ի համար զմեր նեղութիւնս չար-չարանաց. զի դու, Տէր, խոնար-հեցար եւ առեր յանձն զամե-նայն, եւ բարձեր զվէրս եւ զչար-չարանս ամենայն ախտաժետաց: Արդ զօրացո զիս, Տէր, 'ի ժուժ-կալութիւն աղքատութեան նեղու-թեանն՝ որ կամիս. զի յերկայնամտու-ցի խնամ պատրաստել 'ի նեղութեան տանջանաց. զի համատարածեցից եւ ես ընդ սիրելիս քո՝ յաւուր յար-ժամու հատուցմանն զանկապտաման բարիսդ, որ կայ պահի յուսա-ցելոց քոց՝ որ յաւիտենից:

Ը. Եւ մինչդեռ կայցեն կա-խեալ այնպէս, խնայեցաւ զայս ա-մենայն. եւ զգեցցին աստենական զը-ստիճանն նշանաւորացն. զի առ ոչինչ

համարեցաւ դիպախառնականն, և ոչ ղրգռածեծ զանձինս զգեստուց ինչ ըն-դէջաս. զի Հաղորդեաւ էր զամենայն մտադրմանն յողորմածեծն առնել: Եւ այլ եւս բազում քան զայս խո-նեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ. և զգեցյլն և մատուցին զայն առա-ջի Թագաւորին. քանզի էր կա-խեալ զեւ Թն օր: Եւ յետ այնր եա հրամանն, և իջուցին զնա անտի:

Սկսաւ խօսել ընդ նմա Թա-գաւորն Տրդատ և ասէ. Զի՞նչ ունիցիս, և կամ զի՞նչ եղիցի 'ի մէնջ, լինել կցորդ կենաց իմոց, որպէս աշխատեցար ընդ իս 'ի մանկու-թենէ վաստակովք, եթէ մեռա-նել տարապարտ, 'ի տարապայման խորհրդոց ընդդիմանալ աստուածութեանն մե-ծացդ՝ ուր կայր խել: Նա պա-տասխանի ետ և ասէ. Փութամ ես երանել 'ի մարտիրոսս. և առ-նուլ զպսակսն յաւիտենից. այլ առ քո հրամանն վասն իմ որպէս և կամիս՝ զինչ մահու հրամայես 'ի վերայ իմ:

Եւ պատասխանի արքայ և

ասէ · Ոչ արժան դոյզն առարկեալ՝ եթէ լեալ քեզ վարժեցան. մնահո-նորոգ երագ, և համարել 'ի ատե-նական զոր կոչեն զօտ կեաւոր յաւաքեամենց · այլ կարծել զքեզ՝ յերկար՝ որ ոչ Գիտար լեալ քեզ նորոգ մնասանել · այլ սատեմել ըզ-քեզ յերկաթ և առաքհամբել 'ի քեն զաշտագտորդելն զեցն և զյամանաւու-թիւնք քո, որ ոչ կամեցար առաջ-ասել զմասն:

Եւ նա հրամանն ընկալեալ կոճեայ փոյթայն, և առնել ըստ աղոթի խառացեալ սուրեց նորա · և զնել և աղեղել ունեցին առաւաւելորդ, մին-չեւ նշանակք ադիխուն ընդ ծայրս ա-ռեց մնասանեաց նորա · և ասէ · Գի-տեցեն կամ զդաշտեն խնչ առաջեաց զնաւաւ: Նա եւս ապաշխարհեցին, և ասէ · Տուաւ ինձ զօրութիւն, քանզի խնդրեցի եւ յարարաւորչեն աղաւարածոց, որ է ճառարարաւորեաւ և արարիչ ամենայնի որ երեւին և որ ոչն երեւին:

Եւ հրամանեցաւ և ըռածին զնա յայնժամ: Եւ նա հրամանն ըն-

ընդ բնաւորս երկնաւորի, և մաքրել ընդ. ներքնայինս սրտից նորա. և ա-ռաւել զձեռնանէ նորա սաստիկ և ան-ւոյ՝ ընթացուցանէին զնա յայս կողմն և յայն կողմն. և արքայն հա-ւանէր իշխանքն յասից անձանց. և ա-ռաքեալները զերկիրն աստուածային յաղթ. Եւ դարձեալ ասէ ցնա. Ա՞յդ են աներեւոյթ արարածք Աստուա-ծոյն քոյ՝ զոր դուն տեսանես:

Նա ասէ. Բարերարք աստղեր ե-թէ այս եղեն աներեւոյթ արա-րածք Աստուածոյն իմոյ. վասն զի սերմանի տկարութեամբ՝ և յառ-նէ զօրութեամբ. սերմանի անար-գութեամբ՝ և յառնէ փառօք: Զի լաւագոյն լան՝ որք տեսանիցեն զաներ-մանելոս իւրեանց. այսպիսիքն են վերջոք և չարչարանք՝ որ հասա-նեն մեզ որ վասն աստուածպաշ-տութեանն են. այլ յորժամ ո-րայն՝ ի հանդէս երևեալ մատուցէ զառողջութեանն բերրի զպտուղ՝ սերմանողացն, ընդ. նմին և զգըն-ծութիւն բարութեանց ուրա-խութեանց ամենայնի:

Սակ թագաւորին · Բռնաբերեցէք զաւանսն բազում աշխատասիրութեամբ, թող եկեղեցւոյ նմա ուղղափառութիւն: Եւ հանդերձ նմա կատարեալ 'ի զգուշին [illegible] զնոսա [illegible]: Սկսաւ հարցանել զնոսա և ասէ · Ո՞րդ է ուղղափառութիւնն: Եւ նոքա ասեն · Այն որ է · որ թէ ոչ զբարո-նեն մեծամեծ 'ի տաճար [illegible] Քրիս-[illegible], ոչ [illegible] [illegible] հայրապետութեանն: Եւ [illegible] ասէ · Դուք [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] կայսեր:

Եւ [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] և [illegible], և [illegible] զնոսա [illegible] · և [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] · և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] ·

և արքայիցն Թագաւորացն, զի մի՛ կարէ լինել վասն տօնախմբութեան ընչոցն. զի հարկաւորեալ ընդ խնդրոյն վերանորոգեսցէ զնոսա: Եւ ապաւինեցին զայնն 'ի գլուխս նորա, և կատարեցին զխնդրանս աղաչելեացն 'ի փառս նորա. և կայց նոսաւու առաւօտու մինչ: Եւ յետ այսորիկ եւս հրամանն և ածին առաւելի Թագաւորութեան, և 'ի բաց հանեն զաղաչանսն 'ի գլխոյն:

Սկսաւ խօսել Թագաւորութեան և ասէ. Ուստի՞ գաս. Թէպէտ և յարքայութենէ անտի գայցես զոր ասէիր: Եւ պատասխանի Գրիգորիոս և ասէ. Այժմ իսկ յարքայութենէն զոր ասէի՝ անտի գամ. վասն զի արժանի արար զիս Աստուած զայս ամենայն կրել յանձին վասն անուան իւրոյ: Արդ արդէն իսկ կայ մնայ ինձ արքայութիւնն որ ոչ անցանէ, փոխանակ մոխրոյն՝ անթառամ ծաղիկքն, և փոխանակ քաղցախոյն՝ անապական ուրախութիւնքն:

Թ. Եւ առաջի կացեալ Թագաւորին՝ եւս աղաչել զնա նորա 'ի

հրապարակաւ տեսանէ, և կամենալ զնոսա զգեստաւորել. և նա զնել ձեռաց ՚ի ճանապարհորդաց ճորս, և տեսանել ինքն տեսանէ յորժամ հոգւոյն ճոխս: Իսկ նա հրամանաւ և կենդանի յայտնեացնել. և տեսանէ հաստատեալ զնոսա և տեսանէ. Աստուծոյ զգեստու իւր և պատշաճու զգեստն՝ որ են ամենայն երկրի կերակուր և չխնաւթիւն:

Իսկ պատասխանի Գերեզմանատան և տեսանէ. Իսկ տեսանէ Աստուածոյ իմաց երկիր պատրաստեալ, զի նա է արարիչ և կերակուր և չխնաւթիւն. և զՍուրբն Հաւատոյ և Համբերութ և Համրագութե, և զՀոգի Սուրբն՝ որ երկնի խոնարհութեամբ զամենայն տեսեղերս: Այլ զկենդանի կերակուր, կաթնաւոր, քերթեալ և պտղաբերեալ, ոչ կարող երկրէ ջրով Աստուածոյ, և մի ընդ այլ ունել՝ մինչև իսկ շնորհ իմ ՚ի մարմին խմեալ: Իսկ պատասխանի Թագաւորն և տեսանէ. Փառաւորեալ զի երկնից սահմանել կերակուր և քերթեալ զնոյն, պահանջեացի զա ընդ այդպիսի:

Իսկ նա հրամանաւ քերթել զնոյն

նոցա երկայնմիտ քերթողք, մինչև ու_
սուցանել վարդապետին ամենայն յաղթե_
նել նոցա. և սկսաւ ասել ցնոսա.
Արդ արարայցէս զկամս իմ, Գրի_
գորիոս, որ յաջողեալսն աստուածա_
մատուցեցեր: Ասէ ցնոսա. Ինձ մի_
ջի պատճէլ զուխտ աստուածա_
պաշտութեան, զոր ուսայց 'ի մանկ_
կութենէ իմմէ. որ կարօղն է փրկ_
կել զիս յամենայն նեղութենէ,
և զերծեալ ապրեցանել 'ի տանջանաց՝
որ ոչ ձանձրանայցես զնա. զարդարեալ
զայլս ևս զարհուրեցուցանել
կամիս, և քակել 'ի պաշտամանէ
սիրոյ նորա: Եւ պատասխանի
թագաւորին և ասէ. Ո՞ր է Աս_
տուած քո՝ որ փրկէր զքեզ 'ի
ձեռաց իմոց, և կամ զաւակ՝ որ_
պէս ասացեր՝ զատաստանաւքն իւ_
րովք:

Եւ ետ հրամանն, և բերին տա_
տասկ երկաթի բաղադրեալ սանկա_
ռեօք, և արկին 'ի վերայ գետնի
թանձր. և մերկացուցին զԳրիգո_
րիոս, և արկին 'ի վերայ տատաս_
կին խթոցն. և ծակոտեալ լինէին

մարմինք նորա առ հասարակ. և քարշեցին և թաղեցին զնա 'ի տատասկօքն. և շրջշրջեցին զնա անդէն՝ մինչև առ հասարակ ծակոտեցան մանրելով մարմինք նորա, մինչ զի ոչ մնաց 'ի նմա տեղի ողջ:

Եւ 'ի միւսում աւուրն ածին զնա առաջի նորա. սկսաւ հարցանել զնա և ասէ. Զարմացեալ եմ կարի քեզ՝ զիա՛րդ կեաս դու կենդանանիս. և ոչ ինչ զգեցեր դու զցաւսդ, և խօսիս ես. զի արժան էր թէ վաղուց էիր դու մախձանեալ 'ի տանջանաց այտի:

Եւ պատասխանի Գրիգորիոս և ասէ. Ոչ է իմ ժուժկալութիւն տոկալոյդ՝ իմով զօրութեամբս, այլ շնորհիւ Տեառն իմոյ, և իմոյ յօժարութեան կամացն որ խնդրեցի 'ի նմանէ, զի և դու ըղ-փորձ առցես զծառայս Աստուծոյ. զի գիտասցես զի ոչ ոք կարասցէ մեկնել զյուսացեալս 'ի նա՝ 'ի սիրոյ նորա: Զի նա տայ ուժ և զօրութիւն համբերութեան, համբերել նեղութեանց

և փորձութեանց ․ զի ամաչեա-
ցեն անօրէնք յունայնութեան
խորհրդոց և յամբարշտութեան
և յապստամբութեան խորհրդոց ,
որ խորև զքեզդ խցեն ․ և կացցեն
ամօթով յաւուրն այցելութեան
և յանդգիմանութեան ։

Ժ․ Եւ ետ հրաման արկանել
կապերձս երկաթի 'ի ծունկս նո-
րա , և վարել ուղտուծս սատուարս ․
և բառնալ 'ի կախաղան՝ մինչև
յօշեցան ծունկք նորա անդրէն ։
Եւ կաց կախեալ զերիս աւուրս ։

Եւ յաւուրն չորրորդի հրա-
ման ետ թագաւորն և իջուցին
զնա 'ի կախաղանէն , և ածին կա-
ցուցին զնա առաջի նորա ։ Խօսել
սկսաւ թագաւորն և ասէ ․ Տես
դու , Գրիգորիոս , զի ոչ փրկեաց
զքեզ անուն յոյսն քո՝ որ յու-
սայիր դու ․ չեհան զքեզ ապրել
'ի ձեռաց իմոց ։

Ետ պատասխանի Գրիգորիոս
և ասէ ․ Տես , զի անուն են յոյզն
քո , և ոչ կարացին հաւանեցու-
ցանել և ոչ կարացին երկեցու-

ցանկել զիս, զի զոր գտանն պաշտօնս՝ սնոտի է, և ամենայն գործ մոլորութեան քո: Այլ ասա դու՝ զի ոչ 'ի տանջանաց քոց երկեայ ինչ եւս. այլ զօրութեամբ Տեառն իմոյ մարտեայ ընդ Թշնամւոյն՝ որ 'ի ծածուկն քեւ պատերազմի ընդ Ճշմարտութեան: Եւ մատնեցից զմարմինս իմ տանջանաց. զի եԹէ վաղ եԹէ անագան՝ սակայն քակտի հնացեալ մարմինն. զի եկեսցէ Ճարտարապետն, գտեալ զորդիս մարդկան՝ միւսանգամ նորոգեսցէ: Զի զորոց զոգիսն գտանէ 'ի պարկեշտութեան, 'ի զգաստութեան, 'ի սրբութեան, 'ի քաղցրութեան, 'ի հեզութե՛, յաստուածպաշտութե՛ կեցեալ՝ նորոգէ, զարդարէ, կեցուցանէ զնոյն ոգիս նոցին մարմնով: Իսկ զորս գտանէ յանօրէնութեան և յամբարշտութեան, յաստուածատեցութեան, 'ի կռապաշտութեան, Թէպէտ և բուսանել բուսանիցին մարմինք նոցա առ ժամանակ մի, այլ զոգիսն նոցին ող-

ւով և նովին մարմնով արկանել ՚ի գեհեն, յանշէջ հուրն յաւի-տենից տանջանաց. մանաւանդ զայ-նոսիկ՝ որ իբրև զքեզ են ՚ի կատա-րածութեան:

Իսկ իբրև զայն Թագաւորն լուաւ, բարկացաւ ընդ բանին և ասէ. Ինձ ոչ է փոյթ զայնմա-նէ՝ Թէ նորոգէ զքեզ Աստուածն-քո, Թէ ոչ. ինձ ոչ է այժմ զայն-մանէ: Այլ զի ասացեր՝ եԹէ ընդ-քեզ յանշէջ հուրն արկանէ, եւ զքեզ աստէն իսկ այրեցից չինջա-նուա հրով. տեսցուք քո Աս-տուածն զքեզ ապրեցէ:

Եւ ետ հրաման երկաԹի պղու-տամենք հալել կապար, և ընդ մինչդեռ էր իբրև զջուր, հրամեր արկանել զմարմինն նորա: Եւ այրեցին զմարմինն նորա առ հա-սարակ, և ոչ մեռաւ. այլ կայր մեծ ուժով, և զինչ հարցանէին՝ վաղվաղակի տայր պատասխանի:

Եւ զարմացեալ Թագաւորն ընդ ժուժկալութիւն համբերու-Թեանն կարի անհնարինն և առեկալ

նորա, և ասէ՝ Թէ դիմո՞րդ կայ 'ի քեզ շունչդ յայնչափ ժամանակաց, և չարաչար կատաղեցեր որով զքեզ կատարեցի: Եւ պատասխանի Գրիգորիոս և ասէ. Ո՞չ վաղ իսկ ասացի քեզ, եթէ դիմացես դու զփորձ համբերութեան ծառայիս Աստուծոյ. զի այս զօրութիւն, յամօթ առնել զայնոսիկ՝ որ առաւել նորա իցեն, և մարտնչիցին ընդդէմ նորա խորուզելոց: Զի այսպէս ասէ. Ոչ Թողից զձեզ, և ոչ ընդ վայր հարից: Արդ այն է պահպանութիւն նորա առ արարածս իւր և առ սիրելիս իւր, զի պահեսցէ զնոսա 'ի հաւատս իւրեանց՝ որ 'ի նա, մինչև հաստատեսցին նոցա 'ի պայմանաւն իւրում:

ԺԱ. Մինչդեռ խորհէր Տրդատիոս խօսել և այլ ողոքով ընդ նմա, և յղել պատրաստ և խրատանաւ կեանս և պատիւ՝ որում ոչ ինչ էր լսելոց, եթէ այնու ոչ լսիցէ՝ ասէ, և այլ ևս յաւելից, և 'ի սուկ կատարեցից, ամե

մատուցեալ ՚ի նախախնամարարութեանն սր-տաւ խօսել և տալ աներկիւղութիւն, և տանել այսպիսեա վասն նորա, թէ վասն զի չէ պարտ կենաց` վասն այնորիկ ոչ կամի կեալ` և զայս տեսանել ։ Զի այդքան ժամա-նակս են` որ առ մեզ բնակեալ է և ոչ գիտէաք զնա ․ այլ դա է որ-դի Անակայ մահապարտի` որ ըս-պան զհայր քո Խոսրով, և արար խաւար Հայոց աշխարհիս, և ՚ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ՚ի գերութիւն ․ արդ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապար-տի է դա ։

Եւ յետ այսչափ հարցից և տանջանաց, գանից և բանտից, զրկանաց և կախաղանաց, առ-նեղութիւն ամենայն կտտանաց` որով կտտեցին զնա, բազում համբերութիւն յանձն իւր առ-եալ վասն անուան Տեառն մե-րոյ Յիսուսի Քրիստոսի, արդ իբ-րեւ զայն եւս հասանէր Թագա-ւորին ՚ի վերայ իրացն, եթէ ար-դարեւ որդի Անակայ Պարթեւի

էր. որ սպան զԽոսրով հայր նո-
րա, հրամանն տայր կապեալ ո-
տիւք և կապեալ ձեռօք և կա-
պեալ պարանոցաւ խաղացուցա-
նել զնա յԱյրարատ գաւառ, և
տալ զնա 'ի դղեակ բերդին Ար-
տաշատ քաղաքին, և իջուցանել
'ի վիրապն ներքին՝ որ անհնարին
էր խորութեամբ, մինչև անդէն
մեռցի։ Եւ եղև նա յայնմ վիրա-
պի ամս երեքտասան։ Եւ ինքն
իսկ Թագաւորն խաղայր գնայր
'ի ձմերոց յԱյրարատ գաւառ, 'ի
Վաղարշապատ քաղաք՝ 'ի Հայոց
աշխարհ յարևելս։

Իսկ Թագաւորն Տրդատ զա-
մենայն ժամանակս իւրոյ Թագա-
ւորութեանն աւերէր ~քանդէր
զերկիրն Պարսից Թագաւորու-
թեանն. զաշխարհն ասորեստանի
աւերէր, և հարկանէր 'ի հարուա-
ծս անհնարինս։ Վասն այսորիկ
պատաշաճեցան բանքս այս 'ի բանս
կարգի առակաց, թէ իբրև զսէգն
Տրդատ, որ սիգալովն աւերեաց
զթումբս գետոց, և ցամաքեցոյց

իսկ 'ի սկզբան իւրում՝ պյորձանս ծովուց ։ Վասն զի սէզ իսկ էր առ հանդերձ , և այլ ուժով անդու-թեան հաստատութեանց բուսան ոսկերօք և յաղթ մարմնով , քաջ և պատերազմող անհնարին , բարձր և լայն հասակաւ . որ զժամանակս կենաց իւրոց պատերազմաւ և առնէր մարտից յաղթութեան ։ Մեծ անուն պարծանաց քաջու-թեան անձին ստանայր , և զհոյա-կապ շքեղութեան յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցա-նէր . հարկանէր 'ի հարուածս զԹշնամին , և խնդրէր զքէնս վրէ-ժուց իւրոց հայրենեացն . առնոյր աւար բազում 'ի կողմանցն Ասո-րոց , և Թափէր կողոպուտ սա-տիկս անհնարին 'ի նոցանէն ։ Ար-կանէր 'ի սուր զզօրս Պարսից , և Թափէր զկողոպուտ անհնարին . լինէր առաջնորդ առն և ձիոյ զօ-րացն Յունաց , և մատնէր նոցա զբանակս նոցա . հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ , և գերէր զկողմանս Պարսից ։

Եւ զայն ամս երեքտասան որ եղև Գրիգորիոս 'ի բերդին բանտին և 'ի խոր վիրապին, կին մի այրի որ էր 'ի բերդին յայնմիկ, հրամանին առեալ յարհաւրայ զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստականն ընկենոյր 'ի ներքըս 'ի խոր վիրապին. և այնու կերակրեալ լինէր նա 'ի հրամանէն Աստուծոյ զայն ամն' որ եղև նա անդ: Իսկ յայն վիրապն' ուր ընկեցին զնա, պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն իւրոյ: Իսկ այլ մարդիկ' որ միանգամ էր ընկեցեալ անդր' ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաչարանաց պատուհասին տեղւոյն, վասն կարաւկուտ օձին, օձախառն բնակութեան և խորութեան: Վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղին և 'ի պատուհասն մահապարտացն ամենայն Հայոց,

ԾԲ. Եւ յետ այսորիկ հրաման եա Տրդատ արքայ' հրովարտակ առնել ընդ ամենայն աշխարհս

իշխանութեան իւրոյ, հրաման հանեալ օրինակ զայս ·

Տրդատ արքայ Հայոց մեծաց առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ զօրականս և առ այլ մարդիկ՝ որ ընդ իմով իշխանութեամբ էք յաւանս, 'ի շէնս, 'ի գեօղս, յագարակս, առ ազատս և առ շինականս՝ միանգամայն իսկ առ ամենեսեան ողջոյն :

Ողջոյն հասեալ և շինութիւն գիցեն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ 'ի քաջն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս, իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտաց կայսերաց, և 'ի մեր գիւցախտան Պարթևաց հասցէ այցելութիւն, 'ի փառաց թագաց և 'ի քաջ նախնեաց :

Ամենայն ոք գիտասցէ 'ի մերոց հրամանացս, որ ձեզ վասն ձեր շինութեան եկեալք հոգացեալք · զի յորժամ էաք մեք 'ի Յունաց

աշխարհէին , անդ տեսանէաք զհո-
գաբարձութիւն Թագաւորաց՝ 'ի
հոգալ ընդ շինութիւնն իւրեանց
յաշխարհէն ,'ի պատուել զբագի-
նըս դիցն աստուածոց շինուա-
ծովք և սպանդիւք զոհիցն , և ե-
րևելի պատարագացն ընծայիւք
և գունակ գունակ նուիրօքն և
պտղոցն յամենայնէ՝ զամենայն
նոցա մատուցանելով , և ջերմե-
ռանդն եռել զեռալ պաշտամանն ,
շքեղեցուցանելով և զարդուքն
զարդարեալ , և զերևելի հոյակապ
զանեղծ դիան մեծարելով : Եւ-
զայն ես տեսանէաք 'ի նոցանէ՝ 'ի
նոցունց դէց անտի զխաղաղասէր
շինութիւն մարդաշատութեանն
հեղձ բազմամբոխ լիութեանք
պարարտութեանն՝ նոցա զայն
փոխադարձ փոխարինացն շինու-
թիւն շնորհել · ամենայնիւք բա-
րութեանց մեծացեալ խաղաղա-
ցեալք 'ի բարիսն վայելեն :

Վասն որոյ պատուէր առեալ՝
ահարեկ արարեալ Թագաւորաց
աշխարհին , զմարդիկ կացուցա-

նէՖն՝ զի 'ի պաշտաման դիցն յու-լովելոյ. վասն զի եթէ խառնա-ղանջ բազմամբոխ խաժամուժ մարդիկ առ տգիտութեան ինչ կամ թէ ոք յանկարծ առ փո-խելութեան իշխեսցէ արհամար-հել զպաշտօն դիցն, հրաման ե-լեալ զօրացեալ 'ի թագաւորաց՝ զի խլեսցեն բրեսցեն իշխանքն որ իցեն յիւրաքանչիւր գործակա-լութեանց, զի շինութիւն աշ-խարհի 'ի դիցն բազմացի: Զի գուցէ թէ յանկարծ ոք զդիսն անգոսնեսցէ՝ վնաս մեծի ցասման 'ի դիցն յուզեսցէ. այնպիսիքն զանձինս կորուսանեն, և աշխար-հի մեծ ոճիրս վնասուց 'ի նոցա-նէն ընդոստուցանիցէ. վասն այ-սորիկ խսկ և եռուն զհրամանս սաստիցն այնպիսեացն պատու-հասի մահու՝ թագաւորքն Յու-նաց յիւրեանց յաշխարհին:

Արդ և մեք հրաման շինու-թեան կամեցեալ, ձեզ հոգա-ցեալ. զի և ձեզ ամենայնիւքն ա-մենաբարիքն 'ի դիցն բազմասցին.

զի 'ի ձեռն պաշտօն նոցա և փառաւորութիւն, և 'ի նոցանէ շինութիւն՝ լիութիւն և խաղաղութիւն. զի որպէս ամենայն տանուտէր ընդ տան իւրոյ և ընդ ընտանեաց հոգայ, նոյնպէս և մեք հոգամք ընդ Հայոց աշխարհիս շինութեան :

Արդ ամենայն նախարարացդ մեծամեծք և ազատք և գործակալք և սիրելիք մեր Թագաւորաց, և շինականք, բնակք և ձեռաստուտնկք և ձեռաստունք մեր Արշակունեաց՝ զոր յանձնանձեալք և սնուցեալք անխնայեալք և յառաջեալք, վասն որոց մեր օգնել ետ. հաստատակ հաղացեալ, զի զգլխոն պատուականեք : Արդ՝ եթէ յանկարծ ոք թէ զացէ՝ որ զգլխոն անապատուեացէ, և զացեն զայնպիսին, կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ 'ի դրունս արքունի ածցեն. և տուն և կեանք և արարք և ստացուածք և զանձք, այն ամենայն այնուցիկ լիցի որ զայնպիսին 'ի մէջ ածցէ : Ողջ լե-

րուք ՚ի դէպն օգնականութենէ զօրաց ամենեքին, և ՚ի մեր Թագաւորաց՝ որ ընդ այս հրաման կամիք, և ՚ի չքնաղութեան բնակեսցիք ամենեքեան. զի մեք զկնովին իսկ ողջ եմք ։

Իսկ զամենայն ամս ժամանակաց իւրոց Թագաւորն Տրդատ զառաջեալ ընդ Պարսից ոխերութեանն, խնդրելով զքէնս վրիժուց մարտից պատերազմաց։ Իսկ ՚ի լինել ամացն որ եղև Դիոկղետիանոս ՚ի միապետին, իբրև ամք երեքտասան, և էր մարտ սաստիկ խստութեան Տրդատայ ընդ Պարսից Թագաւորին՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ։

Իսկ մինչ նա այլ հրովարտակ հրամայեաց գրել ընդ աշխարհս, և ընդ գաւառս իշխանութեանն իւրոյ՝ օրինակաւս այսուիկ.

Տրդատախոս Հայոց մեծաց արքայ, առ աշխարհս և առ գաւառս, առ նախարարս և առ զօրս և առ շինականս և առ ամենեսին ողջոյն. ողջ լինիջիք. և մեք մեզէն իսկ ողջ եմք ։

Դուք կենդանիք գնացէք, գնայք 'ի ընդ նախնեաց ձեր յաղթութեան խաղաղութեան բազում չնորհեալ մեզ դիցն օգնականութեամբ· մրցեալս զամենայն ազգ նուաճեալ էք, և 'ի հնազանդութեան ունէք: Իսկ յորժամ սա գիտեն ոչ մարթացայք հաճել պաշտամամբն՝ զկամս նոցա քաղցրացուցանել, հանեին մերժեցին 'ի ցամանին խռովեանց զմեզ 'ի մեծ աղէտութեանէն: Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ, զի հազար և բիւր գեղ՝ եթէ գտցի ոք, զի նոքա անհնարին լինին խափան դիցն պաշտամանն, զայնպիսին թէ գտցեն՝ վաղվաղակի 'ի մէջ անցցեն· յաղթութեան պարգևք և պատիւս նոցա լինին չնորհեալ՝ որ զնոսին յայտնեսցեն: Ապա թէ ոք չյայտնեսցէ զայնպիսին, կամ թաքուսցէ և գտցի, այնպիսին ընդ մահապարտօք համարեալ լիցի, և 'ի հրապարակ ապրուստ[illegible]եկեալ մեռցի, և տուն նորա յաւարառումն երթիցէ:

Արդ զայս օրինակ ես ոչ խը– նայեցի յիմ վաստակաւոր Գըրի– գորիոս՝ յիմ աշակերտին, որ վասն գործին իւրոյ իբրայց չարաչար և աստ– ուծի տանջանօք տանջեցի, և յետ այնորիկ եւստ զնա 'ի խոր վի– րապին ընկենուլ, զի անդէն իսկ միանգամայն օձից լեցի կերա– կուր · զի և ոչ զմեծ վաստակն նորա համարեցայ ինչ, առ ափ– րով և առ ահիւ դիցն դրեցի ինչ · զի և 'ի ձեզ ահ լեցի այս և եր– կիւղ 'ի մահուանէն · այլ զի կեց– ջիք ընդ հովանեաւ դիցն, և 'ի մէնջ բարիս մարթայցէք գտա– նել: Ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք:

ԺԳ. Նա եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս · և այ– նուհետև ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ արձակեալք շըջէին պատկերագործ նմանա– հանք ճշգրտագործք գեղատախ– տակք · պայծառ[illegible]կեշխ հասակա– չափ զգեղ երեսացն և զմրագարդ

յօնիցն 'ի տասխատական հանենն նը-
մանն նմանենալ գեղովքն պատճա-
ճառանաց , յայս յանդգնեան ցու-
ցանենն առաջին անկանահաճոյ կա-
մաց Թագաւորին :

Ցայնժամ ժամանակի եկեալ դը-
տանենին 'ի քաղաքին հռոմայեց-
ւոց՝ արդարելավաճան մի կուսանաց ·
միանձնական , ճգնաւորական , ըն-
կալեալս , զգաստացեալս , պարկեշ-
տական , սրբամատոյց կանայս
քրիստոնէական հաւատով · որ ըղ-
ջայղ և զեղերեկ և յամենայն ժա-
մանակի փառաւորութեամբ և
օրհնութեամբ զկատարեալ ա-
ղօթսն խուրեանց տուաքեալ 'ի բար-
ձունս արժանի լինէին : Որոյ ա-
նուան զլխաւորին Գայիանէ · և
սանն նորին 'ի գաւառաց ուրուցն՝
յաստուածապաշտ և 'ի Թագա-
կալ տոհմէ , զի անուն էր նմա
Հռիփսիմէ :

Եւ խորև եկլին հասաին՝ բանու-
Թեամբ մահին 'ի խուրը կայսեանն
տուաքենեացն , անսանալ զպար-
կեշտագեղն Հռիփսիմէ , զարմա-

Digitized by Google

ցեալ սփռեցեալ ընդ պերճանչելա-
ռեալին տեսիլ , 'ի Նկարապարանոյճ
'ի տախտականն յօրինելին , և տա-
Թագաւորին հաստատութեանն :

Եւ կրկին եւս Թագաւորին ըղ-
ձեղապատանձ վայելչութեան պատ-
կերականերով Նկարագիրն Հռովմայ-
մեայ, մոլեգնական ցանկութեամբ
տարփողաց՝ զի անկարգ ցանկու-
Թիւնն յիմարութեանն տախտակէր ;
ժամ տուեալ հարսանեաց՝ ձե-
պով տագնապաւ ձեռնէր զուրա-
խութիւնս հարսանեացն կատա-
րել : Յայնմ ժամանակի տագնա-
պափոյթ սոխակաւ գեսպանս ար-
ձակեալ՝ պատուիրակս հանել
ընդ աշխարհ , զի ամենեքեան օժ-
տաքեր ընծայատար լիցին մեծի
հարսանեացն , և բազում ուրա-
խութեամբ զալ կատարել առ
հասարակ ամենեցուն զօրէնս ար-
քայական փեսայելն՝ ըստ օրինացն
Թագաւորաց :

Իսկ կրկին տեսլին սուսերինքն
զգաղտաձիգ Նետս Թշնամւոյն , զի
որով 'ի ծածուկն սովոր էր ձգել

'ի սուրբան քրիստոսասէրան, ա-
մեան չարի գտեալ զԹագաւորն,
որպէս 'ի դրախտի անդ զօձն անդ-
րանվար արարեալ՝ առ 'ի զպա-
տուիրանն մոռանալոյ, մնեալ
յանդգնամ 'ի յուշնկն կնոջն ասաղ-
նոյ. սոյնպէս և սաստ զԹագաւորն
անօրէն՝ խերև զվահանակ երեսաց
գտեալ, նովաւ մարտուցեալ ընդ
աստուածաշէն եկեղեցիս:

Իսկ զԹագաւորն հպարտացու-
ցեալ ամբարհաւաճեցուցանէր
որոգայթադիր Թշնամին՝ 'ի գըլ-
գուել յարուցանել հալածանս 'ի
վերայ եկեղեցեաց Աստուծոյ.
խելացնորեցուցեալ՝ պագանել
երկիր ուրուականաց մեհենաց,
ոսկեղէն արծաԹեղէն փայտեղէն
քարեղէն պղնձագործ պատկե-
րաց դիցն սնոտեաց, և պղծու-
Թեանն պաշտաման: Ուս եղեալ
համբաւանայր հարկանէր ընդ վե-
մին հաստատութեան ընդ հաւա-
տոյն Եկեղեցւոյ. վեմին ինչ ոչ
սանանել կարացեալ, ինքն առ
վեմին խորտակեցաւ: Սակայն

յամբարշտաւանութեանն մոլեգնութե՛ն վտարահացեալ, բաղում և անչափ էր այն՝ որ 'ի նմանէ անցանէր ընդ եկեղեցիս Աստուծոյ ։

Իսկ երանելին պարկեշտասէրն Գայիանէ՝ սրբասնելոյն Հռիփսիմեաւ հանդերձ և այլ ընկերօքն իւրեանց յիշեալ զուխտան սրբութեան, զօրէնաւոր կրօնիցն զգաստութեան սրբութիւնն՝ յոր միտեալ էին, ողբալով յանձինս իւրեանց վասն նկարագրացոյց հրամանին, առ 'ի նկարել զպատկերս նոցա ալիղծ և անօրէն թագաւորին, ճգնութեամբ մարտուցեալ յաղօթս՝ խնդրել 'ի բազումողորմ Տեառնէն օգնութիւն, փրկել ըղնոսա 'ի փորձութենէն, որ հասեալ էր 'ի վերայ նոցա ։ Եւ յաղաչելն իւրեանց այսպէս ասէին.

Տէր տերանց, Աստուած աստուծոց, Աստուած յաւիտենական, Աստուած երկնից, Աստուած անճառ լուսոյ, որ հաստատեցեր զամենայն բանիւ քով. որ արարեր զերկինս և զերկիր և զամե-

նայն զարդ նոցա. որ ստեղծեր զմարդն հող յերկրէ և իմաստուն կացուցեր, և բազմացուցեր զնա ՚ի վերայ երկրի. և օրհնական եղեր նոցա ՚ի դարս իւրաքանչիւր որ յուսացան ՚ի քեզ:

Այլ օգնեա և մեզ, Տէր, ՚ի պատերազմին՝ որ նեղէն զմեզ, զի յաղթեսցուք որոգայթից նենգութեանց սատանայի, և անուն քո, Տէր, փառաւոր լիցի, և եղջիւր Եկեղեցւոյ քոյ բարձրացեալ լիցի. զի և մեք արժանի լիցուք հասանել յօթեւանս արքայութեան պատուիրանապահաց քոց: Եւ մի՛ լիցի պակասութիւն ձիթոյ ՚ի լապտերաց մերոց. և մի՛ շիջցին ճրագունք հաւատոյ ուխտի սրբութեան մերում. և մի՛ հասցէ ամպ խաւարական մթացուցիչն զխշերոյ կորստականն՝ ՚ի վերայ լուսաւոր ճանապարհաց մերոց. և մի՛ գայթակղեսցին ոտք մեր ՚ի լուսաւորաց շաւղաց քոց. և մի՛ կուրասցին բիբք տեսանելեաց մերոց ՚ի զուարթարար ճառագայթից Հոգ-

մարդասիրութեան քոյ. և մի՛ յափշ-տակեսցէ Թռչուն մահացման ըղ-ջերմանեփան բուսոց կենաց, զոր սերմանեաց 'ի մեզ միածին Որդիդ քո Տէր մեր Յիսուս Քրիստոս. և մի՛ տարցի զզաստութիւն սուրբ հօտի քոյ գազանն ապստամբ. և մի՛ յաղթահարեսցէ զզառնիկս հօ-տի քոյ գայլ ապականիչ. և մի՛ վարատեսցէ թշնամին ուխտին մերոյ զոչխարս առաքելական Ե-կեղեցւոյ քո սրբոյ:

Տէր Աստուած մեր՝ որ առա-քեցեր զՄիածին Որդիդ քո, որ եկն և ելից զամենայն տիեզերս հոգւով իմաստութեամբ քով. զի զամենեսեան յԻսրայէլ անուն աստուածատեան գրեսցէ: Եւ մեք լուաք զի ասաց, թէպէտ և հա-լածեսցեն զձեզ քաղաքէ 'ի քա-ղաք՝ ոչ կարասջիք սպառել զքա-ղաքս Իսրայէլի, մինչև 'ի դարձ գալստեան իւրոյ այսրէն:

Արդ խնայեա, Տէր, յանձինս՝ որ ապաւինեցան յանուն քո սուրբ. զի մի՛ խառնակեսցուք ընդ

Digitized by Google

անտարբերութիւն պղծութեան հե-
թանոսաց. և մի՛ տար զպատու-
թիւն սրբութեան մերոյ բռնա-
նաց անօրէն շանապղծաց լկտու-
թեան նոցա, և մի՛ զկուսութեան
մարգարիտ հաւատոց մերոց՝ 'ի
շաւիղս խողագնաց անբարշտու-
թեան նոցա: Նա մի՛ շարժեսցէ
ուղխ անյագ ջուրց բազմութեց
մոլորահողմ խառնէութեան, զջրա-
հեղեղ 'ի սաստկութեան, զհե-
մուծս սուրբ Եկեղեցւոյ քո, որ
բազմապատիկ վիմօքն արդարովք
շինեցաւ 'ի վերայ վիմին հաստատու-
նոյ, որոյ գլուխ անկեանն կատարա-
մանն եղև Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս 'ի ձեռն մարգարէից, առքեան,
մահուան, յարութեան, վերա-
նալոյ ընդ երկինս և նստել ընդ
աջմէ աստուածութեանդ՝ ուր
էր յառաջն:

Արդ նայեաց, Տէր, յերկնից 'ի
սրբութենէ քումմէ, զի մի՛ լկցուք
մեք խորև որ 'ի վերայ աւաղոյն
շինեալ էր, զոր դրդուեցին խռո-
վութիւնք նեղութեցն փորձու-

թեանց. այլ՛ հաստատեա՛ զմեզ ճշմարտութեամբ աւետարանին խաղաղութեան, եւ առաջնորդեա մեզ ըստ կամաց քոց, եւ արժանի արա զմեզ զկէչերոյն լուսոյ հարսանեաց, յորում՛ զգեչերին կարե զախս առնիցես 'ի ծագել ճառագայթից յերեւեաց քոց փառացդ. եւ ապրեցո զմեզ 'ի ներքոյ թեւոց քոց, եւ մեք հասցուք 'ի նաւահանգիստ կամաց քոց: Եւ տուր մեզ զի արբցուք զբաժակ նահատակութեան, զի առցուք զփոխարէն պսակն յաւուր արդար դատաստանին 'ի յայտնութեան փառաց քոց:

Եւ յետ այսորիկ սուրբն Գայիանէ սանուհեացն Հռիփսիմեայ եւ պարկեշտամօրոյն ընկերացն հանդերձ դէմ եդեալ տարապարգէմ գընացեալ փախստեայ լինէին. զի զանձինս իւրեանց սրբութեամբ պահեսցեն յայսմիկ հողաթաւալ, աղաթաթառ, մեղանչական, անօրէն զխուսակամ խառն 'ի մարդկանէս. զի առաւելութեան յուսոյն

կենդանութեան, լուսոյն յայտնութեան արժանի լինիցին հասանել, ընդ առաքելական սահմանօքն ապրել յանվախճան 'ի հանդերձեալ դատաստանաց անդր, և յաջակողմն դասուն մնեալ խոստացելոց բարեացն հասանել. անթառամ պսակօքն զարդարեալ՝ ընդ հնգեկան կամաւորացն կուսանաց, գործովքն բարութեան լուսաւորեալք 'ի հանգիստ նորոգական վայելչութեան դրախտին, ընդ աստուածական փեսային 'ի բազմաժողովս արքայոցն՝ 'ի բազմականս Աբրահամու անպակաս ուրախութեանցն լինել ժառանգորդ: Որպէս և Տէրն յաւետարանի անդ ասաց, եթէ որ թողցէ զընտանութիւն իւր վասն անուան իմոյ, 'ի միւսանգամ պալատեան իւրոյ զկեանս յաւիտենականս ժառանգեցուցանիցէ նմա: Իսկ և ոչ 'ի ժամանակեան մահուանէս փախուցեալք, այլ յանհնարին մոլեկան անօրէն ցանկութեանցն Ճողոպ-

րեալք : Ներև ոչ զի զմարմինս իւրեանց ՚ի տանջանաց երկրաւորաց ՚ի զրպարտութենէս ապրեցուսցեն , այլ զի զոգիսն իւրեանց սըրբութեամբ առանց աղտեղութեան պահել մարթասցեն յանօրէն գիճութեան պղծութեան խառնից մարդկան անօրէն կրօնից. այլ զի զանձինս իւրեանց և բանդից կապանաց և պատժոց , մահու և անհնարին նեղութեանց վասն անուան Տեառն պատրաստեալ , զի արդարութեանն պսակին արժանի լինիցին հասանել : Վասն այսորիկ թողեալ զերկիր ծննդեան իւրեանց , զինչս և զըստացուածս և զմերձաւոր զազգակիցս և զտոհմայինս վասն աստուածական հրամանին , զանձինս իւրեանց հրեշտակական զուարթական կարգօք լուսաւորեալ վարուցն քաջութեամբք , զի զԱստուած տեսանել կարասցեն :

Ցայնմ ժամանակի գայլին հասանէին յերկիրն Հայոց , յԱյրարատ գաւառ ՚ի Վաղարշապատ ,

Digitized by Google

զոր և Նորաքաղաքն կոչեն, 'ի նիստս Թագաւորացն Հայոց։ Այնուհետև եկեալ մտանէին 'ի հնձանայարկս այգեստանւոյն՝ որ կան շինեալ 'ի հիւսիսոյ յարևելից կուսէ․ և կերակրէին ընչիւք իւրեանց 'ի վաճառաց քաղաքին․ և ոչ ինչ այլ ինչ գոյր թոշակ 'ընդ նոսա զոր ունէին ; բայց մի ոմն 'ի նոցանէ ունէր արուեստ ապակագործութեան՝ առնել ուլունս ապակեղէնս, և տալ գինս ընդ կերակրոյ աւուրն պարենի ռոճիկ։

ԺԴ․ Յայնժամանակի ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր 'ի մէջ Յունաց աշխարհին․ 'ի կողմանս կողմանս յուզախնդիրք ելանէին, դեսպանս արձակէին՝ թերևս ուրեք գտանել կարասցեն։ Յայնժամանակի գայր հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց մեծաց, և յանդիմանն լինէր Թագաւորին 'ի Վաղարշապատ քաղաքի։ Եւ իբրև մատոյց զհրովարտակն, առ 'ի ձեռանէ նորա խնդալով։ Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ զայս․

Ինքնակալ կայսր Դիոկղետիա-նոս, առ ախոյեանն եղբայր աթոռա-կից մեր Տրդատ՝ ողջոյն։

Գիտութիւն լիցի եղբայրու-թեանդ քում նիզակակցի մե-րում, վասն չարեացն որ անցա-նեն ընդ մեզ հանապազ 'ի մոլար աղանդէս քրիստոնէից. զի յամե-նայնի դարձուցեալ լինին տէրութիւնս մեր յուխտէ նոցա, և արհամար-հեալ լինին արքայութիւնս մեր 'ի նոցանէ, և ինչ համեստութիւն ոչ գոյ 'ի նոսա։ Զի ինքեանք զմե-ռեալ ոմն զխաչեալ պաշտեն, և զփայտի երկիր պագանեն, և զոս-կերս սպանելոցն պաշտեն, որ զնեղեալն մահն՝ որ վասն Աստու-ծոյն իւրեանց՝ փառս և պատիւ համարին։ Եւ 'ի մերոց արդար օ-րինաց դատապարտեալ լինին. վասն զի և զմեր զնախնեաց զաստուա-ծքն հարցն զթագաւորացն դառնա-ցուցեալս ձանձրացուցին. զի մեր աւուրքս ըմթեցան, և նոքա ոչ դար-հուրեցան 'ի մեռանելոյ։ Զի ին-քեանք զհետ Հրէի ումեմն խաչե-

Digitized by Google

լոյ մոլորեալ են, և զԹագաւորս անպատուել ուսուցանեն, և զըն-խոմքն իւրե զպատուէրս գրոցն զպա-տուածոց անարգել ուսուցանեն։

Նա և զլուսաւորացդ զօրու-Թիւնս, զարեգակնդ և զլուսինդ աստեղզքդ հանդերձ՝ առ ոչ ինչ համարեցան, նա և արարած ա-նեն այնմ խաչելոյ։ Եւ զխոմքն զպատուէրս գրոցն աստուածոցն ա-նարգել ուսուցանեն. և զաշխար-հըս ամենայն փոխեցին՝ ի պաշտա-մանէ գրոցն. մինչ զի և զկանայս անզգամ յարանց և զարս ՚ի կա-նանց կենդանութեան մեկնեալ հե-ռացուցանեն։ Թէպէտ և ազգի ազգի պատուհաս տանջանաց ՚ի վերայ եղաք, առաւել ևս տոչո-րեալ յորդագոյնս տարածեցաւ ազգանգն նոցա։ Թէպէտ և բիւրա-պատուիկ ինչ արհաւիրս աստանեց արկաք ՚ի վերայ նոցա, սաստկա-պէս հեղումն արեանն նոցա առա-ւել ևս բղխեաց յորդեաց զու-տուշմն նոցա։

Դէպ եղև տեսանել ինձ յա-

ղանդղոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս և գեղեցիկ, և կամեցայ առնուլ զնա ինձ կնութեան. սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն: Նա ոչ իբր 'ի Թագաւոր ցանկութեամբ փափաքեաց յիս, և ոչ 'ի սաստից սպառնալեաց իմոց երկեան նոքա. այլ առաւել ևս վասն աղանդոյն իւրեանց` աղտեղի և պիղծ և զարշ համարեցան զիս, և զսնուցիչ նորին դայեկան 'ի կողմանս ձերոյ տէրութեանդ փախուցեալս յուղարկեցին:

Արդ փոյթ լիցի քեզ, եղբայր մեր, զի ուր և իցեն զկողմամբք զայդողիւք` զհետս նոցա զտանել մարթասցես. և որ ընդ նմայն իցեն դայեկան հանդերձ` վրէժուց մահու արժանի արասցես. և զհրապուրեալն զչքնաղագեղն ինձ 'ի սոյն այսրէն յղարկեսցես. սակս թէ համոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա` այգրէն առ քեզ պահեսցես. զի ոչ երբէք գտաւ նման նմա 'ի մէջ Յունաց

աշխարհիս ։ Ուր էր դէյն պաշտամամբն անմեռայն պատուով։

ԺԵ. Եւ եղև երբև ընթերցան զԹուղթն հռովմայեցւոց հրովարտակին այնորիկ, հրաման տայր Թագաւորն մեծաւ ստատկութեամբ պատուիրանաւ, զի զամենայն տեղիս իշխանութեանն իւրոյ քըննայոյզ փութով խնդրեսցեն. Վաղվաղակի գեսպանս արձակէր ընդ կողմանս կողմանս, զի ուր և գտցեն՝ 'ի մէջ ածցեն վաղվաղակի. և որ գտցէ զնոսա՝ մեծամեծ պարգևս հատուցանել խոստանայր։

Մինչդեռ յայն յոյզ քննութեան էին յաշխարհին սահմանացն Հայոց, սուրբ վկայքն այնոքիկ եկեալ ցօղեալ էին յարքայական կայանսն՝ 'ի նմին Թագաւորաց 'ի Վաղարշապատ քաղաքի։ Եւ յետ սակաւ ինչ աւուրցն այնոցիկ վաղվաղակի 'ի մէջ եկեալ խուզիւք իրքն յայտնեցին։

Այլ ոչ էր պարտ իսկ Թաքչել Ճշմարտութեան վկայիցն առա-

քինութեան, և ոչ լուսոյ ճրագին ընդ գրուանաւ ծածկել, և ոչ 'ի ներքոյ ստուերաց կաթեդրացն աներևոյթ լինել. այլ 'ի վերայ ոսկւոյ աշտանակացն զարդարելոցն, և ոսկւոյք ճրագարանօք զիւղն պարարտութեան անուշութեան՝ զարդարութեան հաւատոցն վառեալ զլոյսն համապայծառ. որպէս և ինքեանք իսկ յառաջին աղօթս իւրեանց աղաչէին. որպէս Տէրն իսկ ասէր առ իւր աբեղիսն, թէ տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինս է:

Տեսանես զի վասն գործոցն բարութեան Ճշմարիտ Որդին Աստուծոյ ոչ գարշի տալ զիւր ժառանգութիւն իւրոց սիրելեացն ծառայիցն: Որ ինքն բնութք Որդի է՝ անմեհեր մատուցանէ զիւր պատուիրանապահն յիւր բնութիւնն. բայց միայն թէ ոք իցէ որ պահիցէ զբանս նորա՝ իբրև զմարգարիտ պատուական զգտեալ խնդութեամբ գնեալ և

զդաւշացեալ լինի, նա ամենայն զինչան պատուի զպսակին Թագաւորութեան և յաղթանականն մատուցանէ: Որպէս պատուականութիւն լուսոյս այսորիկ՝ երևեալ առաջի հեթանոսաց հայաստան աշխարհի ակամայ, իսկ փառաւորութիւնն առ աստուածութիւնն հնչիւք լցին զոսկեղէնս:

Այդ ղումեալ լինէին նոքա 'ի հնձանս չքնաւածոյն: Քանզի իսկ և եկին հասանէին հրամանի հրովարտակացն 'ի մեծ Թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց, ոչ սակաւ խաղաղութիւն ինչ եղև 'ի մէջ աշխարհին Հայոց. զի պահէին զամենայն անգամ ձեռնապարհաց պտղաբերայցն զամենայն զաւառաց, 'ի կողմանս կողմանս քննէին: Իսկ ուրումն տեսեալ պատմեաց զնոցանէ:

Իսկ իբրև իրքն հաշակեցան զնոցանէն, ապա յաւուրս երկուս ապարափակս արարեալ՝ առեալ պահել զնոսա անդէն ուր զտին լինէին հեռանակ զօրաւն, ապա

յետ երից աւուրց հանգստեան հռ-չակեալ պարկեշտութեան՝ զա-նազան գեղեցկութեանն համբե-րութեամբ ՚ի մէջ բազմամբոխ հրա-պարակացն, լինէր ամենայն այր առ այր, և մարդ առ մարդ զար-մացուցիչ յանձանձեաց:

Իսկ ՚ի տեսիլ գեղոյ նորա կու-տեալ և եկեալ զեղեալ խուռն կանանացն կուսատակէր. նա և նա-խարարք և մեծամեծք աւագա-նոյն ընթացեալք ՚ի տեսանել ըզ-միմեամբք եղանէին: Նա և արքա-տակոյան՝ խառնաճաղանճ ամբո-խիւն հանդերձ՝ զմիմեամբք գլխա-նէր ՚ի միմեանց վերայ, առ պակ-շատ յիմարութեան ցոփութեան բարոյիցն, այլանդակ մտացն զեղ-խութեան զխծութեանն հեթա-նոսաբար սովորութեանց:

Իսկ երանելիքն իբրև զխոստացին զանձին և զչղւաբարոյ մարդկանն յուռութին, կականաբարձ ար-տասուալից՝ զձեռս լի աղօթիւք յերկինս համբառնային, խնդրել զփրկութիւն յամենազօր յամե-

նախկալ Տեառնէն, որ յառաջին նուագին ամբոխեցոյց զմոստ յանձ-րեն. պղծութեանն չարութեան ղաղղութեան հեթանոսացն. զի նոյն ասացէ նոցա Աստուած զմար-տին յաղթութիւն, զհաւատոցն լուսաւորութիւն. և զերկաս իւ-րեանց պատուել զնէշին յերկիր, յամնեթոյ լկտեացն առեաղաց` որ ժողովեալքն էին 'ի տեսանել:

Եւ առաջ յետ այսորիկ զարմա-ցուցեալ զԹագաւորն թագուոյ տեսողացն` որ մեներիցք էին, և-կեալքն էին 'ի տեսիլ զերդոյ նորա և պատմեալ առաջին Թագաւորին: Իսկ 'ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն, և նա մաղաղաքոյն հրամանն եղեալ 'ի Թագաւորէ անտի, զի զերամանեալքն հախխախեն տանել յարքունիս, և զասուպին Գաղղիանէ անդրէն դարձուցանել` ապար-հեշտ ընծեռոք հանդերձ:

Անդէն արքունատառ փաղփա-ղանէր ոսկիապատ գահաւորակս ապասաւորք հանդերձ հասա-ցանեին առ դուրս հեծանեկին, ուր

էին վանքն նոցա արտաքոյ քաղա-
քին։ Նա և հանդերձ աղխիւս, պեղծեցինս, փախուցեալ, աղայծառ, և զարդարանօքն ևեթ մատուցա-
նեքին նմա յարքունատունս՝ զի զար-
գարեսցի, և շքով և պատուով մնացէ 'ի քաղաքն, և յանդիմանս լիցի Թագաւորին. քանզի չև էր տեսեալ զնա՝ խորհեցաւ կին առ-
նել զնա, վասն այնորիկ որ պատ-
մեցինն զնմանէ վասն վայելչու-
Թեան գեղոյն նորա։

Արդ երբև եկեալ սուրբն Գա-
յիանէ, խօսել սկսաւ ընդ սմանն իւր և ասէ այսպէս. Յիշեա, որ-
դեակ իմ, զի Թողեր լքեր զմեծա-
պատիւ շքեղաշուք ոսկեխակուռ զաթոռն քո հայրենի զծիրանեաց Թագաւորութեանն, և ցանկա-
ցար անանց Ճառագայթարձակ լուսոյ Թագաւորութեանն Քրիս-
տոսի, որ է արարիչ և կեցուցիչ և նորոգիչ, և խոստացեալ պահէ զանպատում բարիսն իւրոցն յու-
սացելոց։ Եւ դու, որդեակ, ա-
նարգեցեր զանցաւորս քոյոյ բը-

նութեանս ծերունւոյն· արդեօք տայցես դու զգաստութիւնս քո սրբութեանս կերակուր շանց, յայսմիկ 'ի բարբարոս աշխարհի· Քաւ քեզ, որդեակ, եթէ լինիցի այդ այդպէս· այլ ընկալցի զմեզ քև համբերել այն որ առաջնոր-դեաց մեզ 'ի մանկութենէ մերմէ մինչև յօրս յայս և 'ի ժամս յայս՝ յորում այժմիկ հասեալ կամք:

Արդ խորհեալ եւս սուրբն Հռիփ-սիմէ զայն ամենայն ամբոխս չա-րեաց, և զոր լուաւ 'ի դայեկէն իւրմէ, վառեցաւ խորհեւ զինու Հոգ-ւոյն զօրութեամբ Տեառն իւրոյ· զի զգեցեալ էր զհաստատուն մանկու-թեան տիոցն իբրև զսպառազէն զրահիւք· Ճչեաց մեծաձայն ու-ժով, և տարածեաց զբազուկս իւր 'ի նմանութիւն խաչին, և սկսաւ ասել մեծաձայն այսպէս·

Տէր ամենակալ, որ հաստատե-ցեր զարարածս քո 'ի ձեռն Որ-դւոյ քո միածնի և սիրելւոյ, և կազմեցեր յօրինուածս երևելիս և աներևոյթ արարածոց 'ի ձեռն

հոգւոյդ սրբոյ, զոր եւ որ յուշըն-
չէ զամենայն յիշուԹիւն յօրինե-
ցեր, եւ քոյով հրամանաւ վարքն
ամենայն զօրուԹիւնք երկնից եւ
աներեւոյԹք, որ են յերկինս եւ
յերկիր, 'ի ծովու եւ 'ի ցամաքի։
Քանզի զոր եւ ասէր, որ եռասուր յա-
ղող ջուրց զանօրէնն աղծանելեց մար-
դկան ուԹերորդ զարմուն, եւ փրկե-
ցեր զփրկելին քո զՆոյ, որ պա-
հեաց զհրամանս բանին քո, ապրե-
ցուցեր խաչանմանն փայտիւն 'ի
ջուրցն հեղեղէ։ Որ յայնժամ օրի-
նակաւ խաչին արտայայտեալ զփրկու-
Թիւն, եւ այժմ առաւ ճշմարտու-
Թեամբ խաչիւ քո՝ յոր եկեր եւ
հեղեր զարիւն քո 'ի բժշկուԹիւն
ցաւոց մերոց։

Որ պահեցեր զԱբրահամ 'ի
մէջ ամբարիշտ քանանացւոց. որ
յամօԹոյ նախատանաց ազատու-
Թենէ մահու ապրեցուցեր զսի-
րելին քո Սահակ, որ զԹագաւոր
յԻսահակ ծառայ քո, եւ պահե-
ցեր զազգականն քո զՌեբեկայ յա-
նօրէն փղշտացւոց անտի, մի Թո-

զօրուր զմեզ 'ի ձեռաց քոց փրկեա
անուանոյդ քո. որ ուսուցեր, փառ-
զապահեսցես ; և հատուր զբանս
քո 'ի բերան մեր, զի այնու սա-
րեալ մարթասցուք յորդորայթեց
թշնամւոյն. և ասեմ՝ անուան քո
'ի վերայ ձեր կոչեցեալ է, և զօրք
տաճար էք աստուածութեան ի-
մոյ ։ Եւ ասեմ՝ եթէ զանուան քո
սուրբ առնիցէք 'ի սիրտս ձեր. և
եղիր բանս 'ի մտի՝ խնդրել 'ի
քէն և ասել, սուրբ եղիցի անուան
քո 'ի վերայ մեր՝ զոր խնդրեմք 'ի
քէն ։ Եւ աստ ժողովեալք չարք
բազումք պղծել զանուան սուրբ քո
որ 'ի վերայ մեր է, և զտաճար
անուանեալ քոյ. զի թէպէտ և մեք
ակարք և անարժանեմք, սակայն
դու տէր պահեա զանձինս մեր
յանարժան խայտառակութեանց ։

Մարդասպանք և քաղցը, որ ար-
կեր զմեզ յայս փորձութիւն,
տուր մեզ յաղթել քո զօրու-
թեամբդ. զի քո է յաղթութիւն
և յաղթեցաւ քո անուանդ՝ պա-
հել զմեզ յուսով զգաստութե.

զի այսու մնացուք 'ի Թիւ մկրտա-կաց արդարոց քոց․ զի և տացուք զվարձս վաստակոց՝ զոր տայցես այնոցիկ, և հաստատեսցես իւրա-քանչիւր այնոցիկ որ կացեալ ի-ցեն յաջմէ քում, և պահեալ ի-ցեն զհրամանս քո։

Որ ապրեցուցեր զՆոյ 'ի Ջուրցն հեղեղէ, ապրեցո և զմեզ յանօ-րէնութեանցս հեղեղէ՝ որ շուրջ պատեալ է զմեօք։ Զի եթէ զգա-զանս և զանասունս ապրեցուցեր 'ի տապանին, որչափ ևս խնայես-ցես 'ի քո պատկերս, որ զքեզ փառաւորեմք։ Իսկ եթէ 'ի սո-ղունս և 'ի Թռչունս խնայեցեր, որչափ ևս խնայեսցես 'ի մեզ, զոր անուանեցեր տաճարկամաց քոց։

ԾԶ․ Արդ եւրև այս այսպէս եղև, ժողով ամբոխին 'ի վերայ կուտակէր․ բազմութիւն մարդ-կանն էին բազում սպասաւորքն արքունի՝ որ եկեալ էին զնմանէն տանել յարքունիս, և նախա-րարքն և մեծամեծք աւագանոյն, որ եկեալ էին շրջագիրք պատիւ

տանել զնա, և երԹալ ընդ նմա յարքունիս. զի տարցին զնա կնուԹեան Թագաւորին Տրդատայ և Հայոց տիկնուԹեան:

Իսկ նորա արտասուաթոր ողորմ ողորմ ձեռս համբարձեալ 'ի յերկինս՝ խնդրէին 'ի կամաւորար Տեառնէն ապրեցուցանել զնոսա յանօրէն յանարժան հարսանեացըն պղծուԹենէն: Զգուշիւն բարձեալ լալով մեծաձայն ճչէին և ասէին. Քաւ լիցի մեզ Թէ պարտեսցեն զմեզ մեծուԹիւնք, կամ խաղաղեսցեն զմեզ փափկուԹիւնք, կամ հրապուրեսցեն զմեզ ԹագաւորուԹիւնք, կամ նենգեսցեն զմեզ հալածանք, կամ վտանգեսցեն զմեզ տանջանք հարուածոց, Թէպէտ և ըստ ազգի ազգի տանջիցէք զմեզ, կամ երկիցուք մեք արդեօք յահագին մահուանէն՝ զոր ածելոց էք դուք 'ի վերայ մեր: Քաւ լիցի մեզ Թէ փոխանակեսցուք զանցաւոր կեանս ընդ յաւիտենական կենացն, որ ոչն անցանէ, որոյ տէրուԹիւնն յէու-

Թենէ հաստատեալ՝ անփոփոխ են բարիքն ամենայն, որ ոչ անցանեն: Այլ ոչ խորութիւնք և ոչ բարձրութիւնք, ոչ վիշտք, ոչ չարչարանք, ոչ կապանք, ոչ տանջանք, ոչ հուր, ոչ ջուր, ոչ սուր, ոչ զբօսանք, ոչ պատրանք և ոչ մեծութիւնք, ոչ աղքատութիւնք, ոչ այն աշխարհ, ոչ այս աշխարհըս, ոչ կեանք և ոչ մահ, և ոչ ոք կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի: Զի նմա նուիրեցաք զկուսութիւնս մեր, զի 'ի նմա աւանդեցաք զորբութիւնս մեր, զի 'ի նմա մեռաք, և սիրոյ նորա ցանկացեալ սպասեմք, մինչև կացցուք առաջի փառաց գովութեան նորա առանց ամօթոյ և պատկառանաց:

Եւ արդ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն, և ձայն՝ զի ասէր առ նոսա, Թէ զօրացարուք, պինդ կացէք, քաջալերեցարուք, զի ես ընդ ձեզ եմ, և պահեցի զձեզ յամենայն ճանապարհս ձեր, և ածի զձեզ պա-

հեալս անարատութեամբ, և հաստուցի զձեզ մինչև 'ի տեղիս յայս, զի և աստ փառաւորեսցի անուն իմ առաջի հեթանոսաց՝ կողմանց հիւսիսականաց: Մանաւանդ դու, Հռիփսիմէ, ըստ անուանդ քում արդարև ընկեցեալ եղեր Գայիանեաւդ և քոյովք սիրելեօք 'ի մահուանէ 'ի կեանս. և մի երկնչիք, այլ եկեսջիք 'ի տեղի յայն՝ զոր ես և հայր իմ պատրաստեցաք ձեզ՝ զանքննին ուրախութեան տեղին, ձեզ և որ միանգամ իբրև զձեզդ իցեն:

Եւ այնպէս յերկար որոտացեալ, զի թմբրեալ լինէին մարդիկըն յահէ անտի. և բազմաց ընդոտտուցեալ անկուշեալ բազում երիվարք հեծելոց յահէ անտի՝ ընդբազումս ընկեցեալ, և զբազումս սաստիւ հարեալ սատակէին: Եւ մարդկանն ընդ միմեանց ամբոխեալ, ընդկոտակեալ, բազումք զբազումս կոխեալ սատակէին. և բազմաց լինէր կոտորած, և ձայն աղաղակի և լալոյ. և ան-

Digitized by Google

հնարին չարիք և արհաւիրք 'ի վերայ մարդկան հասանէր . և բազումք մեռան, և բազմաց արիւնն հեղեալ զերկիրն ոռոգանէր : Արդ երբև այս չփոթ ամբոխի եղև 'ի նոցանէն 'ի մէջ կատարելոց մարդկան բազմութեան, ոմանք 'ի մեծամեծ ամբոխէ ապաստաւորացն արքունի` անդէն ընթացան պատմել Թագաւորին զամենայն բանս նոցա . քանզի զխղեցան անդ նշանաւորքն` որ գրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջի Թագաւորին :

Եւ ասէ Թագաւորն . Փախանակ զի ոչ կամեցաւ գալ պատուով շքեղութեամբ կամօք , բռնաբար ածցեն մինչև յապարանս, և մուծցեն զնա մինչև 'ի մենեակ արքունի :

Արդ առեալ զօրուրն Հռիփսիմէ ապաստաւորացն բռնաբար , մերթ վերամբարձ, մերթ 'ի քարշ, և նա աղաղակէր և ասէր . Տէր Յիսուս Քրիստոս օգնեա ինձ . և ամենայն ամբոխն զկնի նորա փո-

զեալ Թնդէր երկնից 'ի բազմու-
Թենէ անտի : Այդ ածին մաւծին
զնա մինչև յապարանս Թագա-
ւորին՝ 'ի սենեակն արքունի : Իսկ
Խորև արգելլին զնա 'ի սենեակն,
սկսաւ խնդրել 'ի Տեառնէ և
ասէ .

Տէր Աստուած զօրութեանց,
դու ես Աստուած Ճշմարիտ : Դու
ես որ հերձեր զծովն կարմիր, և
անցուցեր զքո ժողովուրդն : Դու
որ զամուլ վէմն դարձուցեր 'ի
ծննդականութիւն ջուրցն վտա-
կաց, և արբուցեր զժողովուրդն
ծարաւեալ : Դու ես որ իջուցեր
զծառայն քո զՅովնան յանդուն-
դըս խորոց ծովուն, և ետուր առ-
նուլ զչափ քո զօրութեանդ . և
արտաքսեցեր զնա 'ի դուրս քան
զմարդկայինն բնութիւնս, և մեռ-
անեալ այսրէն առանց ապա-
կանութեան ածեր ողջանդամ՝
կացուցեր 'ի կենդանութեան . զի
և մազ մի անգամ ոչ շարժեալ
լինէր 'ի վարսից նորա : Դու ես
Աստուած Ճշմարիտ, որ և զԴա-

Նոէի՛ հուր արկեալ դաղձանաց՝ ապրեցուցեր յահագին ժանտեացըն · և կացուցեր զզբօսարանաւն առաջի Նեղչացն փառաւորութեամբ ։ Դու և զերիս մանկունսն արկեալ յայրել վասն զքեզ պաշտելոյն , ողջ և անարատ 'ի հրոյն պահեցեր · զի փառաւորեցին զքեզ՝ որք ատեսին զսքանչելիս քո ։ Դու ետուր խոտաճարակ լինել խիստ և անօրէն Թագաւորին Բաբելացւոց · զի ոչ իմացաւ փառաւորել զքեզ 'ի վերայ սքանչելեացն քո զոր ցուցեր նորա · փոխեալ զնա 'ի կերպարանս անասնոցն՝ ընդ գազանս անապատի եդիր զբնակութիւն նորա , և ընդ ցիռս անապատի եդիր զարօտ նորա ։ Դու և զաղախին քո Շուշան կրկին ապրեցուցեր յերկուց մահուց փրկեալ , և խայտառակամահ սատակեցեր զանօրէն Թշնամին · և պսակ պարծանաց արդարութեան յուսացելոցն քոց շնորհեցեր և կանգնեցեր ։ Դու նոյն իսկն ես , և առք

քո ոչ անցանեն։ Դու տէր ըղփառս քո այլում ոչ տաս։ Դու ես որ փառաւորեալդ ես 'ի մերայ ամենայն ախեղերաց․ մի աղծեսցեն զանուն սուրբ քո հեթանոսք։ Դու կարող ես փրկել զիս 'ի աղծութենէս յայսմանէ․ զի վախճանեսցայց սրբութեամբ մեռանել վասն անուանդ քո մեծի։

ԾԷ․ Նա մինչդեռ սուրբն Հռիփսիմէ զամենայն աղօթս առ Աստուած մատուցանէր, եկն եմուտ թագաւորն Տրդատ 'ի ներքըս 'ի սենեակն՝ ուր էրն զնա արգելեալ։ Արդ իբրև եկն եմուտ նա 'ի ներքս, առ հասարակ մարդիկն՝ ոմանք արտաքոյ ապարանիցն, կէսքն 'ի փողոցս 'ի ներքսագոյնսն ; առհասարակ երգս առնել բարբառեցան․ կայթիւք վազելով ցուց բարձեալ մարդկանն․ կէսքն 'ի բերդամիջին, և կէսք զքաղաքամէջն լցին խնծոյիւք առ հասարակ, համարէին հարսանեացն զպալատն արարել և զկայքաւան յօրդորել։ Իսկ

տէր Աստուած նայեցաւ յիւր սիրելին Հռիփսիմեանց ապրեցուցանել զնա՝ զի մի կորիցէ առանձին որ պատահեալ զգուշացեալ էր , և լուսաւ աղօթից նորա զօրացուցանել զնա երկրէ զՅայեւն և երկրէւ զԴիւպտմակրայն · եւ զօրութեան նման՝ զի ապրեսցի 'ի սատանայական բռնաւորէն անօրէնութեանն ։

Արդ մնացեալ Թագաւորն՝ բռուռոյն հարկանէր զնմանէն կատարել զկամս ցանկութեանն ։ Իսկ նա զօրացեալ լինէր 'ի Հոգւոյն սրբոյ · գազանաբար ողորեալ , անհնարար մարտնչէր · երբեմն յերկք ժամուց սկսեալ մարտնչել մինչև 'ի տասն ժամն , պարտեալ լինէր Թագաւորն · և զայն՝ որ անհնարին համարեալ ուժով , որ մինչև 'ի Յունաց աշխարհին էր՝ բազում ըմբշ այնգութեան ոսկերացն ցուցեալ էր և զարմացուցեալ զամենեսեան , և 'ի Թագաւորութեանն իսկ՝ երբեմն 'ի հայրենի բնակութեանն դարձեալ էր , բազում գործս արութեանն

քաջութեանն և անդ ցուցեալ. և որ այնպէս հռչակեալ էր ամենայնիւ, արդ յաղջկանէ միօջէ պարտեալ վատթարանայր կամօք և զօրութեամբն Քրիստոսի:

Եւ իբրև պարտեցաւ, վաստակեցաւ, լքաւ, եւ նա արտաքս և ետ ածել զերանելին Գայիանէ՝ և արկանել խառան'ի պարանոցն նորա, և ածել ունել զնա առ դուրս սենեկին. և ինքն անդրէն մտանէր. և եդ բանս 'ի բերան սպասաւորացն՝ զի սանպեսցեն զանհրապոյրն Գայիանէ ասել 'ի դրաց անտի 'ի ներքս 'ի սենեակն առ Հռիփսիմէ՝ թէ արա զկամս դորա և կեցց դու և մեք:

Իսկ նա յանձին կալեալ խօսել ընդ սանուն իւրում, և մատուցեալ առէ 'ի դրաց անտի 'ի ներքս 'ի սենեակն առ Հռիփսիմէ. Որդեակ, պահեսցէ զքեզ Քրիստոս 'ի պղծութենէդ, և մի լիցի քեզ զօրավիգ. քաւ լիցի քեզ, որդեակ, եթէ լիցի քեզ եղանել 'ի ժառան-

գութենէ անտի կենդանոյն Աստուա-ծոյ, և ժառանգել քեզ զանցաւորն՝ որ ոչ ինչ իսկ է, այսօր է, և վաղիւ կորնչի:

Իբրև իմացան՝ թէ զոր խորամ յանձնախնդրեալ մատուցանել, ըն-դեալ քարոզին՝ հարկանէին զըն-թանսն մինչև թափել ատամանցն. և աղաղակէին ասել նմա՝ զի ուրա-ցէ զկրօնս Թագաւորին:

Նա ևս քան զևս այնոքիկ և ա-սէր. Քաջալերեալ աղօթք կայր, և այժմ տեսանեմ զՔրիստոս՝ առ որ անձկայցեալ եմ: Յուշ լիցի քեզ, որդեակ, հոգեխառն սնուն-դին, որով զքեզ սնուցի: Յուշ լիցի քեզ աստուածեղէն խրատն, որով զքեզ պարարեցի: Յուշ լիցին հալածանքն իմ, և քո 'ի միասին: Յուշ լիցի քեզ և բա-ժակ մահու, զոր 'ի միասին նոյնք ըմպելոց: Յուշ լիցի քեզ և յա-րութիւն ամենայն արդարոց: Յուշ լիցի քեզ և մեծատանն յան-դիմանութիւնն: Յուշ լիցի քեզ այրումն յաւիտենականն գեհենին

տանջանացն։ Յուշ լիցի քեզ անապատական պարգեւքն արդարոցն, զոր և մեզն է պատրաստեալ։ Յուշ լիցի քեզ տասնուածեղէն երկնաւոր թագաւորութիւն, զոր լուար իսկ դու քեզէն քոյովք ականջօք յայսմ աւուր․ քաջալերեաց և զօրացոյց զքեզ մեօք հանդերձ, նոյն և արժանիս արասցէ պսակին և հանդերձեալսն զոր խոստացաւ․ և զօրացուսցէ զքեզ մեօք հանդերձ, զի լիցուք բնակիչք Աստուծոյ լուսեղէն յարկացն յաւիտենականաց բնակութեանն։

Այլ Տէրն մեր և Թագաւորն մեր և Աստուածն մեր, որ վասն մեր խոնարհեցաւ յանարգութիւն, մի թողցէ զմեզ անտէրս, զի զօրութեամբ նորա ցանկացաք․ փրկիչն աշխարհաց օգնեսցէ մեզ, որ ոչ եթող ընդ վայր զմեզ զյուսացեալս իւր, և արժանիս համարեսցէ իւրոց բանիցն քաջալերութիւն տալոյ։ Զի նա անարգամեծար տէր է, և նա ինքնին պահեսցէ զմեզ զաղախնեայս իւր

յամենայն մեղաց. որպէս և այսօր խնկ լուաք, զի էր պահեալ զմեզ ամենազօր աջոյն, և պահեսցէ զմեզ մինչև յաւիտեան. բայց միայն 'ի սիրոյ նորա մի մեկնեսցուք: Այլ զարթուսցէ զզօրութիւնս իւր, և եկեսցէ կեցուսցէ զմեզ, և մեք զանուն Տեառն կարդասցուք. երևեցուսցէ զերեսս իւր 'ի մեզ, և կեցցուք. զի նա է Աստուած փրկիչ մեր. վասն նորա համբերեսցուք զօրհանապազ:

Ցոյց լիցի քեզ Տէրն, որ վասն զմեզ բարձրացուցանելոյ խոնարհեցաւ, և հեղ զարիւն իւր 'ի վերայ խաչին. վասն կենաց մերոց և փրկութեան մերոյ 'ի մահ վերաւորեցաւ: Դիր զնա 'ի մտի քում, և կարդա սրտիւ քով զնա. ահա հասեալ է քեզ յօգնականութիւն, և զօրացուսցէ զբազուկս քո՝ որպէս զմանկանն Դաւթայ 'ի վերայ արջոցն և առիւծուցն, որ խեղև զուլս այծեաց ձեղքեալ բեկանէր: Նա և որ զանարի հսկայն ջարդեաց 'ի

ձեռն ծառայի իւրոյ Դաւթի, խորտակեսցէ զչարութիւն անօրէնութեան գորա առաջի քո:

Դուստր մարգարէութեան հաւատոցն Դաւթի, և մնեալ յարդարութեան 'ի վերայ բազկաց իմոց, առաջի' սուրբ և փառաւորեալ սեղանոյն Աստուծոյ՝ մնար զու աղախին Քրիստոսի. այն՝ որ այսօր իսկ յայտնութեամբ գթութեամբ մարգասիրութեամբ իւրով յայտնեցաւ մեզ, որ իմաստութեամբն խնդրեցաք զնա, նոյն տացէ քեզ մեօք հանդերձ առաւելոց ամօթոյ տեսանել զնա դէմ յանդիման:

Արդ զայս ամենայն խօսեցաւ սուրբն Գայիանէ 'ի բարբառ հռոմայեցւոց ընդ իւրում անձն 'ի դրաց անձնելն, մինչդեռ թագաւորն ասորէր ընդ սրբոյն Հռիփսիմեայ: Բայց զոյժն անդ ոմանք 'ի սպասաւորացն արքունի՝ որ լուեալ զայն ամենայն 'ի բարբառ հռոմայեցւոց:

Եւ արդ իբրև լուան զայն ամե-

նոյն՝ զոր և խօսեցաւ Գայիանէ ընդ սանուած իւրում, 'ի բաց առնել զնա 'ի գրաց անտի : Զի թէպէտ և բազում հարբին զնա, և ծեծեցին քարամբք զերեսս նորա, և թափեցին զատամունս նորա, և ջարդեցին զմսուր բերանոյն լըն-դաց նորա, ոչ շրջեաց զբանս իւր՝ խօսել ընդ աղջկանն այլ ինչ, այլ զոր սկիզբն արարեալ էր բանից իւրոց առաջի նոցա, և զնոյն յաճախեալ բազմացուցանէր :

Իսկ նա մարտեաւ եւս ընդ նմա 'ի տասն ժամէ աւուրն մինչև 'ի պահ մի գիշերոյն, պարտեաց ըզթագաւորն : Եւ զօրացեալ լինէր 'ի Հոգւոյն սրբոյ աղջիկն․ հարեալ վանեալ պարտեալ՝ վաստակաբեկ առնելով զթագաւորն մեղկեալ ընկենոյր : Մերկ կողոպտեալ եւս 'ի հանդերձից զթագաւորն կացուցանէր․ և զպատմուճանն պատառեալ, և զնշան թագաւորին ցրուեալ կողոպտեալ ամօթալից թողոյր : Թէպէտ և զիւր զգեստին քրքրեալ պատառա-

տան 'ի նաւանէ 'ի դուրս բերէր , յաղթող պահէր զանձն իւր սըր-բութեամբ ։

Եւ բացեալ զդուրս տանն բանտապահն 'ի դուրս ելանէր , հեր-ձեալ զամենայն մարդկանն , և ոչ ուրուք կարացեալ յաղթահա-րել զնա ։ Եւ ընթացեալ ընդ քա-ղաքամիջն , ելանէր ընդ արև-լակոյս , ընդ արեգ դուռն քաղա-քին ։ Երթեալ առ հնձաւորքն՝ ուր էին խակ յառաւօտ մանկք իւրեանց , ձայն աւետեաց մատուցանէր ըն-կերացն ․ և ինքն անցանէր հա-րաւոտ մի 'ի քաղաքէն 'ի կողմն մի հիւսիսոյ՝ 'ի տեղի յարևելա-կոյս , 'ի սարաւանդակի 'ի բարձ-րաւանդակ յատաղին տեղի մի , մօտ 'ի բուն պաղպատոյն որ եր-թայր յԱրտաշատ քաղաք ։

Իբրև եհաս յայն տեղի՝ ծունր եդեալ կայր յաղօթս և ասէր ․ Տէր ամենայնի , ո՛ կարիցէ հա-տուցանել քեզ փոխանակ բա-րեացն՝ որ 'ի քէն շնորհեցաւ մեզ ․ զի պահեցեր զլոյս մեր հաստա-

տուն՝ որ ՚ի քեզ էր. և ապրեցուցեր զմեզ ՚ի պղծալից ժանտաց գազանին՝ որ ապականէին զմեզ։ Այլ զի՞նչ ևս կայցէ ՚ի մեզ կար՝ փոխարէնս հատուցանել քեզ. բայց անձինք մեր միայն փոխանակ փրկութեան քում. զի դու ինքն արժանիս արարեր զմեզ արբանեկութեան՝ կրել զանուն քո որով ապրեցուցեր զմեզ. զի բայց ՚ի քէն, Տէր, զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո անուանեմք զօրհանապազ։

Այլ մեզ լաւ է մեռանել ՚ի սրբութեան քում, քան թէ ձգեցեմք զձեռս մեր յաստուածս օտարս, որ չիցեն իսկ. այլ ոչ ինչ իսկ են ամենայն պաշտամունք հեթանոսաց. զի դու ես արարիչ, որ ամենայն ՚ի քէն և Որդւոյդ քո միածնաւ՝ առանց որոյ եղև և ոչ ինչ. և Հոգիդ քո բարի առաջնորդեսցէ մեզ ՚ի յերկիր ուղիղ, որ տանի զմեզ ՚ի բարութիւնն յաւիտենականն յերկնաւորս։

Որոյ յանդիման լինելոց եմք

առաւելի միամտնելով քոյ . զի առանց անձնիւ կարգեցեր 'ի կողմ աշխարհականն, յորժամ առաքեցեր զնա 'ի պատարագաւոր լուսոյ ընտանութեանց հայեալ յամենայն ընտանեաց երկրի : Որ առեալ խաչ զանըալս որդւոց մարդկան, որ 'ի մեռասնուն զամենայն գործս նոցա : Զի և մեք 'ի ժողովրդեանն քումմէ եմք և 'ի խաշինս արօտի քոյ . միացուք 'ի յարկեղ զոր պատարագատեցեր սիրելեաց քոց : Փութամք, Տէր, զի եկցուք 'ի մարմնոյս, զի խառնեսցուք 'ի գունդս միածնի Որդւոյդ քո սիրելւոյ . և 'ի Թիւ այնոցիկ` որ սիրեցին զօր երևելոյ զալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Ի պղծութենէս ևեթ ապրեսցուք . այլ եկեսցեն առաջնորդք 'ի մերոյ մեր վասն անուան քոյ` պատարագաւոր եմք : Զի ոչ զերկեսս զոր զմեզ . զի զոր կենդանին, Տէր, վկայես ինձ, զի վարուց երկրաւորաց կեանսս` ես ինչ ոչ ցանկացայ 'ի մարմնաւորութենէ իմմէ . վասն զի նայեցայ և հաւատացի

բանի քո զոր ասացեր, թէ վայ իցէ ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ մարդիկ. այլ երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար սուտ զձէնջ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք:

Արդարեւ իսկ, Տէր, ցնծացաք և ուրախ եղաք· ընդ այս պատերազմ որ եհաս մեզ, մարտնչել սիրով քով. զի յաղթեաց յաղթող զօրութիւնդ քո, և ետ մեզ յաղթել: Ուրախ եղաք ընդ այս փոխանակ աւուրցն՝ որ խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանսն: Հայեաց, Տէր, 'ի ժառանգութիւն քո և 'ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա մեզ 'ի վերինդ քո Երուսաղէմ՝ որ 'ի բարձունս, ուր ժողովելոցդ ես զամենայն արդարս զսուրբս և զսիրելիս անուան քո. եղիցի լոյս տեսանն Աստուծոյ 'ի վերայ մեր:

ԾԸ. Նա մինչդեռ երանելին սուրբն Հռիփսիմէ խօսէր զայս

ամենայն, անդէն 'ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի 'ի տեղի անդր իշխանք Թագաւորին, և դահճապետն դահճօքն հանդերձ ընդ նոսա, և ջահք լուցեալք առաջի նոցա: Եւ մտեալ վաղվաղակի կապեցին զնոսա ձեռս յետոյ, և խնդրէին զի հատցեն զլեզուն: Իսկ նա իւրովք կամօքն բացեալ զբերանն՝ հանեալ մատուցանէր զլեզուն:

Եւ անդէն զհանդերձիւն պատառատուն որ զնովաւն էր՝ 'ի բաց զերծուին 'ի նմանէ. և հարեալ չորս ցիցս 'ի գետնին՝ երկուս ոտիցն, երկուս ձեռացն, և պրկեցին զնա. և մատուցին զկանԹեղուխան ցինծ ժամս. այրէին և խորովէին զմարմինս նորա հրով կանԹեղացն: Եւ քարինս վարեցին ընդ գոգն նորա, և 'ի վայր վայԹեցին զաղիսն նորա. և մինչդեռ եա կայր կենդանի՝ փորեցին զաչս երանելւոյն: Այսպ անդամ անդամ յօշէին զնա և ասէին, եԹէ ամենեքեան որ իշխեսցեն անդրոմնել

և անարգել զհրամանս Թագաւո-րաց՝ ըստ նախնի օրինակի կարգեցին :

Իսկ եկին և այլ սուրբք արք և կանայք որ ընդ նոսա եկեալ էին՝ առաւելք քան զեւթանասուն մարդ. այլ որ 'ի ժամանակի անդ հասին 'ի տեղին յայն 'ի նոցանէն՝ որ խնդրէին ամփոփել և թաղել զմարմինս նոցա, յորոց մերայ աւուր եղեալ կատարեցին զնոսա իբրև երեսուն և երկու ոգիս :

Որոց աստուածեալ և նոցա զոյգս, Սերկեցուք զքեզ, Տէր, զի ընդունիս զձայն աղօթից մերոց. խոնարհե-ցուցեր զոսոխն քո բարերարաբ, և մեք կարդասցուք առ քեզ. քեզ փառք՝ որ ոչ զանկեցեր զմեր անար-ժանութիւնս 'ի քոց բարերարացդ, մարդասէր. որ պահեցեր զմեզ խը-րեւ զբիբ ականն, և 'ի հովանի թեւոց քոց ապրեցուցեր յանօրէնութեանցս բռնադատութենէ. և առ մեզ մեռուանելոց վասն փառաւորելոյ անուանդ քո : Եւ զայս միաբան աղաչեաց առ հաւատարիմ աստուածեալսն :

Եւ մի ոմն որ անդէն 'ի մերձքս

սպասեալքն 'ի հնձանին անդ՝ ուր եւ էին վանքըն նոցա. որ այսպէս ասէր 'ի ժամ հրամայութեանն իւրոյ. Գոհա_ նամ զքէն, բարերար, զի եւ զիս ոչ զրկեցեր. զի ես հիւանդ էի՝ եւ ոչ կարացի ընթանալ զհետ ընկե_ րացն ժամանել. առաքեցին զառ, Տէր մարդասէր քաղցր, ընկալ եւ խառ_ նեա եւ զիմ ոգիս 'ի դասուն քո սուրբ վկայիցն՝ ընկերացն իմոց եւ քերցն, առ քո աղաւթիւքն եւ մայրն մեր եւ գլխոյ Գայիանեայ, եւ զքեզ սիրելիէ եւ սրբազնեալ մեր Հռիփսիմեայ : Եւ առ այս օրհնեալսս խօսեալ՝ փոխեցաւ : Եւ քարշեալ 'ի բաց ընկեցըն զմարմինս նոցա՝ առ 'ի կեր լինել շանց քաղաքին, եւ գա_ զանաց երկրի, եւ թռչնոց երկնից :

ԺԹ. Իսկ թագաւորին Տրդատայ զիւր ամօթն կորուսանոյ որ պար_ տէր նմա, որ այնչափ անձնատուալ եղեալ քաղքութեանցն տուաւե_ լոյր 'ի մարդոս պատանեկութեանցն, նաւ եւ յաւ[illegible] Յունաց հակայարագոյ երկնեալ, բազդաւոր զօր_ ծըս արութեան եւ անդ ցուցեալ ,

և ոչ առնէին մերժեալ պատուիրապա-
մանց յայսմիկ. Եփրատայ գետոյ
'ի կողմանս Ցամձկաց, ուր և հա-
րեմէր խոցեալ եղանէր երկրա-
բան 'ի պատերազմէն. իսկ նորա
առնուլ զերիվարսն, և զապաստանէն
նորին և զինւոր զառնօրնակէնս առնուլ
կապել 'ի Թեկոսեան, 'ի վերայ
մկանանցն 'ի լեռ անցանէր ընդ.
գետն Եփրատայ. արդ որ այնչափ
հզօր զօրաւոր բռան ոսկերքն
էր, և յաղթական մեծէ յաղթա-
հարեալ լինէր կամօքն Աստու-
ծոյ։ Եւ զայն ոչ էր եղեալ 'ի մար
զամօթն նախատանացն, այլ 'ի
անուղ այսպէս նորա լինեալ,
արտաքսեալ ընդ մահ աղիկանն,
ախորժեցեալ պատանայր։

Տեսանէք, ասէ, զիարդ խոնարհաբար ա-
ղանդ ազգէր քրիստոնէից, զինւորդ
կարողութեանն զանձինս բաղդա-
մարդկան, հանել յաստուածոցն
պաշտամանէ. յերկրաւոր վայե-
լից կենացս խափանեն, և 'ի մա-
հուանէ ոչ զողան. մանաւանդ
վասն պաշտելոյն Հոփիփսիմեայ`

որ ոչ գոյր համեմատ յերկրին 'ի ծնունդս կանանց։ Վասն զի սէրս հաստատեալ ունէր՝ անմոռաց 'ի մը-տացս չանկանէր, մինչև կենդանին էր եւ Տրդատ արքայ։ Զի զՅու-նաց աշխարհն և զՀոռոմոց քաջ գիտեմ, և զմեր Պարթևաց կող-մանսն, վասն զի բնութեամբ իսկ է մեր, և զաստուածատուր և զառա-կատարեան և զՍպարապետականն։ Ես-զի մի ըստ միոջէ թուեմ, զի բա-զումք անեղէք այն են՝ որ իմ խա-ղաղութեամբ հասեալ է. և բա-զումք այն են՝ որ մարտիւ պա-տերազմաւ առաւել ստացա-կեալ։ Ոչ ուրեք ասացեալ է նման նմանութիւն այսր գեղջս՝ զոր էր կորուսեալ այս կախարդացն. զի այսպէս զօրացան կախարդքն՝ մինչև խիստ յաղթեցին։

Իսկ 'ի վաղվա անդր մատուցեալ առաջին հրամանն զաւհաւարեան վասն սրբոյն Գայիանեայ սպան-մանն։ Իսկ նա երկու լուսաւ, առ-ակերն յերդեալ զերդեալ յինքնիրեալ ափշեալ և ոչ յիշեալ, վասն որը-

բայն Հռովմայեցւոց համաձայնեցաւ. Ե-
թէ կենդանի էր : Մեծ աւագու-
թեան բարձի և պատուոյ պար-
գևս խոստանայոյր, եթէ յանձնառու
ոք Հռոմայեցւոց պատարագել հաւանել
զՊապն աստուածային զրոյն առ նա : Իսկ
նա ասէ, թէ Եւ յիմարես կործանել
անմեղ նորոյն Թշնամեաց քո, արդեօք, և
որ զաստուածածին անհնարինն, և ըղ-
հրամանաց ձեր Թագաւորութեան. այլ
կայ կախարդան այն, որ տապակա-
նել կարգս զիշխանութեանն, և
երկրու եւ ընկեր նորոյն.

Իսկ և լուաւ թէ մեռաւ սուրբն
Հռոփսիմէ, պատրաստել արքունու-
թեան ընկալաւ. Եղեալ նմանք 'ի
մերոյ զեւանոյ, և լոյր և 'ի սուրբ
մեռանելոյ։ Պատրաստել հրամանն տալոյ
վասն սուրբ ասպազինեալն Գայիանեայ,
թէ նախ զլեզուն ընդ ծնծղայսն
հանել, և ապա ապստամբել. վասն
զի եղելոց մեծամասնեար խորհուրդն
խաղաղ կորուսն զայնմանքեսն, որ ըղ-
զեղն զերեզմանն թեան ունէր 'ի մեջ
մեռանելեան : Իսկ զորքն խորհուրդ ան-
շնորհ ապարանսն զգեստն եղելոց,

որոց նմանայն զայն ընդունեալ էր զգե- ղեցկութիւն. վասն այնորիկ զնա կատարման սպանանելն ։

Արդ ելեալ զաւհաճարեան ապար- ծելով՝ չարաման առնել զնա, և եւ հանել զնոսա շղթայիւք 'ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային՝ որ հանէր 'ի Մեծամօրի կամուրջն, 'ի տեղին յայն՝ ուր ոտէր էին սպանանել զամենայն մահապարտս, 'ի ճաղ- ճախուտ տեղի մի մօտ 'ի պարկէն փոսին՝ որ շուրջ զայր զքաղա- քաւն ։ Եւ վարեցին չորս չորս ցիցս միում միում 'ի նոցանէն ։

Եւ մինչդեռ կազմէին, սկսաւ- ասել սուրբն Գայիանէ ընկերօքն հանդերձ այսպէս. Գոհանամք զքէն, Տէր, որ արժանի արարեր զմեզ մտանել վասն մեծի ա- նուանդ քո. և յարդարեցեր զհո- գեղէն բնութիւնս մեր, զի լիցուք արժանի աստուածութեան քում. և հաղորդեցեր զիս մահուան սր- բոց քոց վկայիցն՝ Հռիփսիմեայ և ընկերացն ։ Եւ արդ փութամ

և անձկացեալ եմ հասանել նո-
ցա, որ զչերզն սիրեցին . և ուրախ
եմ զի ժամանեցից զկնի զատերն
իմոյ և որդեկին իմոյ Հայրապետութեանս
և քերցն իմոց և ընկերացն : Այլ զ-
յիշեա զմեզ, Տէր, որ վասն ա-
նուան քո մեռանիմք զօրհանապա-
պազ . համարեցաք իբրև զոչխարս
'ի սպանումն . արի և մի մերժեր
զմեզ վասն անուանդ քո . և զա-
տաւր մեզ զյաղթութիւնդ քո,
և չարին զործակցացն հանդերձ
նկուն լիցի յաւէտ փառաց քոց :

Եւ յետ այսորիկ մատեան և
պատառատեցին զհանդերձս նոցա
յանդամանց խաչելոցն և արկեցին
զնոսա մի մի 'ի չորս ցեցս : Եւ ծա-
կեցին զմարմինս 'ի պնդղուածս նոցա,
եղջին փողս . և փչելով այնպէս
կենդանեայն մորթեցին զատուցին
երեսացն` 'ի նեղութեան 'ի վերայ մինչև
'ի սատակումն . և ծակեալ զծածու-
րակուն, և զլեզուսն ընդ այն հա-
նէին : Եւ վարեցին նա քարինս
ընդ զոգս նոցա, և ցրուեալ զա-
զիս նոցա յորսականնեցն ընդ զոգս

նոցա , և քանզի դեռ ևս կային կենդանիք , և ապա բարձին զգլու-խս նոցա սրով :

Արդ որք միաբանեալ եկեալ էին ընդ նոսա անուանեալ ՚ի Հռ-ոմոց աշխարհէն , որ միաբանեալ միաբանք եկեալ հասին յերկիր հայաստանեայց աշխարհին , ամենքին էին քան զեւթանասուն մարդ : Իսկ որ սպանեալն ընդ սուրբ ոսկեանսն՝ ընդ Գայիանեայ և ընդ Հռիփսի-մեայ , նոքիմբք հանդերձ որ թուե-ցան ՚ի թիւ վկայելոցն , ընդ ամե-նայն սպանելոցն՝ երեսուն և եւթն մարդ :

Արդ ՚ի քաղաքն և ՚ի մէջ ամենայն հոտին կատարեցաւ սուրբն Հռիփ-սիմէ՝ զատուցն սրով երեսուն և երեք նահատակակից ընկերօքն հանդերձ , և ՚ի քաղաքն և եւթն ամենայն հոտին՝ սուրբն Գայիանէ երկու խուռնք ընկերօքն · որք ընդ նմա պատերազմեալք պսա-կեցան , և առաքին զպսակին յաղ-թութեան :

Ի · Արդ աւուրս մէջ ՚ի խոր

տխրութեանն. յանհնարին աղբրա-
մութեան կայցեալ թագաւորին
առ. անձուկ սիրոյ գեղոյն Հռիփ-
սիմեայ, առաջս յետ այսորիկ ժամ
անուեալ որսոյ՝ անձնայն զօրաց
ածել կուտել զպատառականն, խու-
ձապականն տխուեալ, երագագ
առուեալ, թակարդ ձգեալ, կա-
մեցեալ որս առնել, երթեալ 'ի
դաշտն փառաւորականն շեմակաց:

Այն ինչ 'ի կառս ելեալ կա-
մէր թագաւորին ըստ քաղաքին ե-
լանել, անդէն վաղվաղակի պա-
տուհաս 'ի Տեառնէ 'ի վերայ հա-
սանէր. և հարեալ զթագաւորն
այսոյն պղծութեան՝ 'ի կառացն
'ի վայր կործանէր. և անդէն մո-
լեգնել սկսաւ, և իւրովի ուտել
զհեր մարմնին. նա և ըստ նմա-
նութեանն Նաբուգոդոնոսորայ
արքային բաբելոնացւոց, ելեալ
ըստ մարդկային բնութեան ար-
տաքս 'ի նմանութիւն վայրենի
խոզաց, երթէ գնալ՝ ընդ նոսա
'ի մէջ նոցա երթեալ բնակէր:
Եւ այնուհետև մնեալ յեղէգն

խոստաձարակ լեալ անհնարին անագայութեամբ , մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով : Զի թե֊ պէտ կամեցան արգելուլ անդէն 'ի քաղաքին՝ ոչ կարացին · մի՝ վասն բնական ուժոյն , և մի՝ վասն զի էր և ուժն գլխուց՝ որ 'ի նմայն հարեալ էին ,

Նա և ամենայն մարդիկն որ 'ի քաղաքին էին՝ նոյն օրինակ գե֊ ւարակք մոլեգնէին · և անհնա֊ րին կործանումն 'ի վերայ աշ֊ խարհին հասանէր : Եւ ամենայն ընտանիք թագաւորին՝ ծառայք և սպասաւորք առ հասարակ հա֊ րուածովք հարեալք լինէին · և անհնարին սուգ վասն հարուա֊ ծոցն լինէր :

Յայնմ ժամանակի տեսիլ Աս֊ տուծոյ երևեալ 'ի վերայ քեռ թագաւորին , որոյ անուն էր Խոսր֊ ովիդուխտ : Արդ եկեալ խօսէր ընդ մարդիկն , պատմէր տեսիլ և ասէր · Տեսիլ երևեցաւ ինձ յայսմ գիշերի · այր մի 'ի նմանութիւն լուսոյ եկեալ պատմեաց ինձ , և֊

թէ ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցն՝ որ եկին հասին 'ի վերայ ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք 'ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուսցէ զձեզ զդեղ ցաւուցդ բժշկութեան:

Արդ իբրեւ լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա և ասեն. Եւ դու ուրեմն մոլեգնեցար, դեւ ուրեմն հարաւ 'ի քեզ. զիա՞րդ է՝ զի այդ հնգետասան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկերացն իսկ ծուր լիցի. զի նոյն օրին իբրեւ ընկեցին զնա անդր՝ յօձիցն իսկ ամենեցն նոյնժամայն սատակեալ լիցի:

Իսկ կրկնեալ դարձեալ ևս կրկնոշին զնոյն սնոտիսն, և հեծեծկնեաց սպառնալեօք. զի եթէ ոչ պատմեսցէ սմանց սմանց, մեծամեծ տանջանս ընկալցի. և հարուածք մարդկան և թագաւորին ևս քան զեւս սաստկացին մահու և ոչէս-

պէս տանջանօք ։ Եւ մնացեալ անդ_րէն խոստովանողութեամբ՝ մեծաւ եր_կիւղիւ և զգուշութեամբ սասաց զհրամանն Հրեշտակին ։

Իսկ նոքա վարդապետականն յղէին անդր նախարար զոմն անուամբ՝ ո_րոյ անունն Օսսա կոչէր ։ Եւ գնաց նա 'ի քաղաքն Արտաշատ՝ հա_նել զնա 'ի խոր բանդակ վիրապայն ։ Արդ իբրև եկն եհաս Օսսայն 'ի քաղաքն յԱրտաշատ, ընդ ա_ռաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս գալոյն ։ Եւ նա ասէ ցնոսա, թէ վասն կա_պելոյն Գրիգորի եկեալ եմ հա_նել զնա ։ Իսկ նոքա զարմացեալ առ հասարակ ասէին ․ Ո՞ գիտէ թէ կայցէ, զի բազում ամք են զի ըն_կեցին զնա անդր ։ Իսկ նա պատ_մեաց զիրս անցելոցն և զգործն զինչ եղեն ։

Իսկ եկին բերին կարաս պարա_նաց երկայնս և ստուարս, և կցե_ցին իջուցին 'ի ներքս ։ Աղաղա_կեաց Օսսայն նախարար 'ի ձայն մեծ, և ասէ ․ Գրիգորիոս, եթէ

կայցես ուրեք՝ եկ 'ի դուրս զի տեր Աստուածն քո զոր պաշտես դու՝ նա հրամայեաց հանել ըզքեզ այտի : Եւ անդէն յոտն կացեալ փաղփաղանքն շարժեաց ըզպարանն , և բուռն հարկանէր :

Իսկ սորա զարթուցեալ՝ ձգեալ հանեին զնա 'ի վէր , և տեսին զի Թիւացեալ էր մարմին նորա իբրև զածուխ սևացեալ · և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա , և խնդութեամբ տարին զնայքն յԱրտաշատ քաղաքէ , տանել 'ի Վաղարշապատ քաղաք : Յայնմ ժամանակի առ. փառանդի տարակուսանաց ցաւոցն՝ եկեալ Թագաւորն , զինքն տանեալ ածէր ընդ առաջ նորա մերկ խայտառակ : Եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նմա :

Արդ իբրև տեսանէին զնոսա 'ի բացէ՝ զի գային Գրիգորիոս Օտայիւն հանդերձ , և այլ բազում մարդիկ՝ որ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ , ընդ առաջ խաղացեալ մաղթանելով և ուռե-

լով զմարմինս, զխուահարկելն և
փրփրելն սաստկին նորա ։

Իսկ նա վաղվաղակի ծունր ե-
դեալ յաղօթս կացեալ, իսկ նո-
քա անդրէն 'ի զգաստութիւն
դարձուցինս։ Եւ սա անդէն հրա-
մայեաց՝ զի արկցեն զանձամբք
խուրձերանց հանդերձ, և ծածկեսցեն
զամօթն խուրձերանց ։ Եւ մատու-
ցեալ թագաւորն և նախարարքն,
բռնան հարցեալ ամենեքին զոտիցն
սրբոյն Գրիգորի և ասէին . Խնդ-
րեմք 'ի քէն, թող մեզ զյանցուածս
մեր՝ զոր մեք ընդ քեզ արարաք ։

Իսկ նա մատուցեալ կանգնեաց
զնոսա 'ի գետնոյ անտի և ասէ .
Եւ մարդ եմ ես իբրև զձեզ, և մար-
մին ունիմ իբրև զձերդ . բայց
դուք ծանիջիք զձեր արարիչն
որոյ զերկինս և զերկիր արարեալ
է, զարեգակն և զլուսին և զաս-
տեղս, զծով և զցամաք . և նա կա-
րող է զձեզ բժշկել ։

Իսկ անդէն սկսաւ հարցանել
Գրիգորիոս՝ թէ ո՞ւր եդեալ են
մարմինք վկայիցն Աստուծոյ ։ Իսկ

նոքա ասեն՝ թէ որոց վկայից ա-
սեն ։ Եւ նա ասէ. Որ վասն Աս-
տուծոյ մեռան 'ի ձեռնք ։ Իսկ նո-
ցա ցուցեալ նմա զանեղելան, իսկ
նա ընթացեալ ժողովել և ամ-
փոփել զմարմինս նոցա 'ի տապան-
ման տեղեացն՝ զոր կային անդէն,
տեսանէին զի զօրութեամբն Աստուծոյ
պահեալ էր զմարմինս նոցա ։ Զի
այն ինն տիւ էր և ինն գիշեր՝ զի
արտաքոյ ընկեցեալ էին մարմինք
նոցա, զի ոչ գազանի էր մատու-
ցեալ և ոչ շան, քանզի անդէն
շուրջ զքաղաքաւն էին մօտ 'ի
քաղաքն. և ոչ հաւու մերձեցեալ
եւ էր նոցա, և ոչ էր հոտեալ
մարմինն նոցա ։

Իսկ նոքա ընդերին հանդերձս յու-
զուած պատանաց. իսկ երանելին
Գրիգորիոս ոչ արժանի համա-
րէր զպատանսն ընդերեալս թագա-
ւորին, կամ զայլոց մարդկանն.
այլ իւրաքանչիւր պատառատաւն
հանդերձիւն պատէր զսուրբսն.
Առ անգամ մի, ասէ, մինչև ընդ էք
դուք արժանի պատել զմարմինս

նոցա։ Եւ աշխարհիկաց առ զնայց ՚ի հնձանին՝ ուր վանքն իսկ լինել էին նոցա. և իւր իսկ վանս անդէն կառուցանել օթեվանս առնէր։ Եւ երանելին Գրիգորիոս զջայցն ամենայն առ Աստուած աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան, և խնդրուածս առնէր զի դարձցին և ապաշխարութեամբ հասարս զառանել մարթասցեն։

Եւ ՚ի վաղիւ անդր թագաւորն և նախարարքն և մեծամեծ աւագանիքն խառնամաղանճ ամբոխութեամբ եկեալ ՚ի ծունր իջեալ առաջի սրբոյն Գրիգորի և առաջի սուրբ ոսկերաց վկայիցն Աստուծոյ խնդրէին և ասէին. Թող մեզ զամենայն յանցուածս չարեացն զոր մեք ընդդէմ քեզ արարաք. և խնդրեա դու վասն մեր յԱստուծոյ քաւութիւն զի մի կորիցուք։

ԻԱ. Իսկ կատարեալն Գրիգորիոս անդէն սկսաւ խօսել և ասէ. Որ ասէքդ թէ Աստուած քո՝ Աստուած է և արարիչ ամենայնոյ կա-

մայրական բարերարութեանն, անուանակք ամենիշխանութեան: Զնիւթականն արարածս եւ իմականն զփոխա-ռութեանն իւրով յանուանեղխս իւիք ՚ի մի հրամանն հաստատեալ՝ զաշխարհս տպաւորութեանց յօրինէ. զամենայն ինչ արար Աստուած ամենակալ, ամենատեսն: Զնա ծանուցուք, զի բաշխեցին ձեր ցաւք յանցանաց ՚ի պատուհասէ այսոր: Որ վասն իւրոյ մարդասէր ողորմութեանն խրատեաց զձեզ, ըստ բանից աստուածականին խնամածութեանն. որպէս ասաց իսկ, Թէ զոր սիրէ Տէր խրատէ, և գա-նալից առնէ զորդի՝ զոր ՚ի յանձն առնու. իսկ նա բարերարութեամբ իւրով կոչեաց զձեզ յորդեգրութիւն:

Իսկ Հզօրագոյն Որդին Աստուծոյ ոչ ամօթ համարի զայնոսիկ իւր եղբարս անուանել, որք դարձցին յերկրպագութիւն նորա: Եւ Հոգին սուրբ շնորհեսցէ ձեզ զհաստատութեան սիրոյն իւրոյ, զհաւատ Հաւատացուցանել զափրատ ձեր յուսոյ

խուլութիւն որ ոչն անցանէ . բայց
միայն եթէ դարձջիք և ըստ կա-
մաց նորա գնասջիք , տացէ ձեզ
զանմահութիւն կենաց :

Այլ դու կոչեցեքդ Աստուած
քո , բարերար տացեք . քանզի
որ ճանաչեն զնա՝ նա նոցա Աս-
տուած է : Իսկ որ ոչն ճանաչէ ,
թիւրեալ և են նորա արարածք ,
օտար են 'ի խնամոց և 'ի սիրոյ
մարդասիրութենէ անտի նորա .
Իսկ երկիրպագուածք նորա մերձ են
առ նա , և այցելութիւն նորա
շուրջ է զնոքօք , և պահէ զնոսա :

Իսկ թերևս առասցես դու՝ թէ
ո՞ւր պահէ զերկրպագուածս իւր . զի
որ 'ի ձեռս մեր անկանին՝ մեռանին և
չարչարեցան , և մեք ըստ կամաց
մերոց դատեցաք զնոսա : Տես զի
կամեցաւ Աստուած զհանդերձեալ
մահու մարդկան , և 'ի մեռանե-
լոյն՝ զալստեան փառաւորին երևե-
ցուցանէ՝ առաւ զթագաւորին սիրե-
լեացն իւրոց և այնոցիկ որ ճա-
նաչեն և ամենեն զկամս նորա :

Այլ արդ դու զայս՝ թէ զի՞սուրդ

զօրութեանցն աստուածութեանն իւրոյ պահելոյ հաստատուն ըզ-սուրբ վկայսն սիրելիսն, և ոչ նեղութիւնք բազդուածք երկմտեցուցին զմեզ ոչ 'ի նոցանէն : Եւ առաքելոց զսուրբ զերանելիքն Հռիփսիմէ ընկերօքն հանդերձ 'ի ձերոց պղծութենէ և յանօրէնութենէ :

Արդ պատրանք մեքենայից թշնամւոյն, որ խորհրդանէր խոկ պատրեցին խաբեցին զմարդիկ, և կորստական ճանապարհացն ուղևոր հաստատեցին : Եւ կամ զիմ զանարժանութիւնս, զի որպէս բարերարութեանցն իւրոց արժանի արար պատրաստել զիս՝ չարչարել վասն անուան իւրոյ մեծի. և ետ ինձ համբերել, զի հասուսցէ զիս 'ի վիճակս երկնաւորս. և որպէս առաց իսկ մեծ առաքեալն Պաւղոս, զոր հասցէ ձեզ ճանաչել՝ և 'ի նմին իսկ և 'ի նորուն բանս վայելչական մարգարէութեանն Քրիստոսի, թէ օրհնեալ է Աստուած որ արժանիս արար զմեզ՝ հասանել 'ի մասն

ժառանգութեան որդւոցն 'ի լոյս ։ Եւ արդարեւ հաստաք պարծանօք, զի չարչարանօքն Քրիստոսի վայելեցուցեալք 'ի նորին վարդապետութեանն ։

Արդ զնա ծանիցուք որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն փառաց ․ մատիցուք առաջի աթոռոյ շնորհաց նորա, և գտցուք զողորմութիւն 'ի նմանէ ․ և 'ի բաց թօթափեսցուք զամենայն աղտ չարեաց անօրէնութեան ․ լուասցուք զանձինս մեր կենդանի ջրովն, և զփառաւորաց լուսոյ զպատմուճանն, արժանի լինիցուք զգենուլ յանձինս մեր ։

Այլ վասն այսորիկ որդւոյն Հռիփսիմեայ՝ զոր խակ ինքնին գիտէք, թէ որպէս պահեաց զնա Տէր, և ապրեցոյց 'ի ձեռաց մերոց՝ 'ի պղծութենէ անօրէնութեան ։ Եւ զոր ինքնին գիտեն ըղձալի քաջութեան ուժոյ անդութեան ոսկերաց քոց ․ զիա՞րդ եզեր ոսկերացեալ առաջի աղջկան միոյ ․ զի պահեաց զնա զօրութիւն

ամենատեսական Քրիստոսի: Իսկ վասն իմ դու իսկ գիտես, զի հն-գետասան ամ է իմ՝ զի կայի ես 'ի խաւարչուտ 'ի խոր յանդընդա-յին վիրապին. 'ի մէջ օձիցն էր բնակութեան իմ, և վասն ահին Տեառն ոչ երբէք մեղան ինձ. և ոչ զարհուրեցայ 'ի նոցանէ, և ոչ երկեաւ սիրտ իմ. զի յուսա-ցեալ էի 'ի տէր Աստուած արա-րիչ ամենայնի:

Այլ վասն այսորիկ գիտեմ՝ զի ողջմտութեամբ արարէք զոր ինչ արարէքն: Բայց արդ զար-ձարուք և ծաներուք զՏէր, զի ողորմեսցի և կեցուսցէ զձեզ. և զպականեալ կենդանիսն բարեխօս արարէք, զի կենդանիք են և չեն մեռեալք. և ծաներուք զԱս-տուած՝ զի նա ինքն է Տէր ամե-նայնի. և 'ի բաց թողէք այսու-հետև զպղծութեան պաշտամանն-սդ, զքարեղէն և զփայտեղէն, զարծաթեղէն և զոսկեղէն պղըն-ձաձոյլ պատկերացդ, զի սուտ են և անօգուտ:

Եւ ո՞չ զայդ իսկ ասացի ձեզ վաղագոյն վասն մոլորութեանն ձերոյ, թէ մատախուղ սառուերացն խաւարին թանձրութեան նստեալ է 'ի վերայ ձերոյ աչաց սրտին, ոչ կարացեալ հայել իմանալ ածել զմտաւ և զարարչին ճանաչել: Արդ՝ թէ 'ի ձէնջ ես ուղղութիւն ինչ անուանէի աստուածութիւնն պաշտամամբ մերձենալ, այլ վասն զի ոչ դադարեցէք զդայդ և զցերեկ աղաչել 'ի վերայ ձեր զի մի՛ կորիցէք. այլ վասն բազում մարդասիրութեան արարչին՝ որ անհնարին և անպատում է առ արարածս իւր. որ երկայնմտութեամբ ներէ թողու անդայ խնայէ, վասն բազում գթութեան իւրոյ:

Որ յաւուրցն առաջնոց թոյլ ետ մարդկան գնալ ըստ կամաց իւրեանց, որպէս և ասէն իսկ. Բարձի թողի զնոսա երթալ ըստ հետ կամաց որտից իւրեանց. և գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց: Այլ այժմիկ սկսեալ

կոչել զձեզ յիւր արքայութիւն և յանհեղծութիւն, լինել ձեզ ժառանգաւոր յաւէժ կենդանութեանն՝ որ ոչն անցանէ։

Վասն որոյ խակ զիւր վկայսն ընտրելան առաքեաց առ ձեզ, որք 'ի վկայելն իւրեանց՝ վկայեցին զմիասնական տէրութիւնն Երրորդական՝ ընդ. ամենայն 'ի վերայ ամենայնի զԱստուած, որ նա ինքն է յաւիտեանս յաւիտենից. արքայութիւն նորա արքայութիւն յաւիտենից, և տէրութեան նորա վախճան ոչ գոյ։ Եւ զմահ իւրեանց եդին կնիք հաւատարիմ հաստատականն՝ իւրեանց Ճշմարտութեան հաւատոց. որոց ահաւասիկ և Ճառք 'ի միջի ձերում պատմին. որք կենդանի են առ Աստուած և բարեխօս սատագաղացն՝ որ մաղթելք բարեխօս ունել զնոսա առ Աստուած։ Քանզի վասն Աստուծոյ մեռան, կարող են զմեռելութիւն բազմաց կենդանացուցանել։

Վասն այսորիկ նոցա հաւաք-

ցարուցք առ Աստուած, 'ի ձեռն մահուան Որդւոյն Աստուծոյ, վասն զի Որդին Աստուծոյ մեռաւ՝ զի զմեռելութիւն արարածոց կենդանացուսցէ. իսկ արդ մեռան՝ զի վկայք լիցին աստուածութեանն նորա: Եւ զի ոչ եթէ առանց իւրոյ մահուանն՝ կենդանութիւն առնել մեզ ոչ կարէր, այլ զի մեծացուսցէ զարարածս իւրով յանարգութեան խոնարհելովն. զի զանարգս բարձրացուսցէ իւրովն իւրև. զմեզ լինելովն:

Իսկ ոչ եթէ առանց սոցա մեկայութեան ոչ լինէր արդեօք հաւատարիմ, այլ զի մեծացին ստուգաւ՝ որ տեսին զնա: Եւ զմեր չարչարանս պատահեալ 'ի մարմնի մերում. զի թէպէտ և հատանին մեզ նեղութիւնք մարմնոց մեռելոց և անհնարին ցաւոց, սակայն տանջեալ յաղթեն զգայնական մարդկանն. զիա՞րդ հնար էր միօրեայ առնել մարդկային բնութեանս մարմնոց այնմ անհասանելին փառաւորելին չարչարանացն: Կամ թէ կեցցէ՞ արդեօք

միօրեայ մանուկ յանձնարկեն 'ի խորս վիրապի անդ յայնժամիկ, յորում թմալեալքն կային եւ 'ի մէջ օձիցն իբրեւ 'ի շիրիմն, եւ եռեալքն զմարմնովք իմովք. պատեալ կային շուրջ զինեւ, եւ կայտառացեալքն զանդամովք իմովք. սակայն մեծասքանչ ողորմութեանն Տեառն պահեաց զիս կենդանի: Եւ որում ոչ եւս էաք արժանի՝ զբանս մշակութեն բժշկութեան օգտի ոգւոց եւ մարմնոց մշակեսջիք ատաանի 'ի միջի ձերում. ոգւոց եւ մարմնոց ձերոց պատրաստեցայք զձեր օգուտն ձեզ մատուցանել:

Ցամաքածոյ 'ի բարերարութենէ անտի սկսցուք զպատրաստանս երկնաւորս ձեզ ջամբել. զի եթէ լուիջիք բանից խրատուանց քարոզութեան առաքելոյն անմեռանելի, փրկեալք սրբեալք լինիջիք 'ի փոքր պատուհասէդ, եւ 'ի յաւիտենական կեանսն վայելեսջիք. բանին աստուածութեան լուիջիք, եւ շնորհութիւն երկնից արքայութեանն յանձինս ձեր ընկալջիք:

Այսպէս եթէ յանկանիցս ապաշխարու-
թեանն մերձեցուք՝ 'ի քաւարանաւշան 'ի
փայլատակապաշտութենէդ արքեալ
լինիք, և զանձնաւ բարերան Աստուա-
ծոյ 'ի յանձինս ձեր. ընդունելով
մաքրութիւնք· այսպէս և առաւել մե-
կայքն Աստուածոյ՝ զոր գուշակէ չար-
չարեցէք, փոխան ձեր և նոքա բա-
րեխօսութիւն կարեն մատուցա-
նել· և մեր բանիքս և ձայնքս և
ջանիքս և վաստակս ձեր յօգուտ
անդամանեցի· բարեկենաց շատա-
կեաց կենաց ձեր յերկրի վայե-
լչացուցէ, և յերկինս համբեր-
ձեալ կենացն ձեր ժառանգորդս
արասցէ:

Այսպէս եթէ ոչ կամիցիք լսել
քաղցրութեան բանից կենաց,
ապաէն հարկեալ վերջուցին չարա-
շար հարուածովք զձեր սատա-
կեսցէ. և 'ի ձեռս օտար թշնա-
մեաց զձեր զաւակացի, և միան-
գամայն խակ զձեն վերջուցին հա-
նեալ՝ 'ի մահ զձեր մատնեսցէ:

ԻԲ. Եւ իբրև խօսեցաւ եղբա-
նեղէն Գրիգորիոս զայս ամենայն,

առ հասարակ ձեռն զգեստուց ար-
կեալ՝ զպատասխանատուութեան պատուա-
ւորին։ Թագաւորին նոյնժամայն կոչը
և նախարարացն, և այլ բազմու-
թեան մարդկանն ելեալ 'ի գետափն
ընդ մեծաւ թագաւորեալ, առնելն
առ հասարակ խորհ ընդ մի բե-
րան։ Այսպ. կոչեցաք ընդ մեզ յորս
թագաւորութեան յԱստուածոյ. զի մեզ
կարգաւորեալ էակ 'ի ազգաւորութեան
մերում և 'ի խաղաղութիւն ձանձնա-
պարհս. այսպ. կոչեմ Թէ Թագաւորին
մեզ այս մեր բազմաւոր։

Իսկ պատասխանատուքն Գրիգորիոս
և այլք. Մարդասէր Տէրն երկնից
նախմեա և բաղդաւորեալ է, զԹագա-
ւոր ամենաբարեացն՝ որ կարգեալ ար-
ներ, և որ ընտրեցին 'ի նմանէ՝ Թա-
գաւորեսցես։

Իսկ նորա առաքեն՝ Թէ ծառայ
մեր, և հաստատութեան զմիտս մեր,
զի մարթացուցեալ ապաւինել զերեսս
աստուածային մերոյ՝ զոր ուխտ զգեստուց,
եթէ զառյանել առաքաւորեա զարհեցի
և ընկալցիք զմեզ յաշտաւորու-
թեան. և կոչեցէք ետ առեալ զարքն,

և չկացեն արգելեալք հասանել յայս կեն-
ցաղս մերոց 'ի նմանէ ։ Այսոմ զօրու-
արգելեալք ոչ յիշեցեալս զչարաչարեան զոր
մեզ ընդ քեզ առբերելոց ․ և առաջ-
գիտս մեզ զօսղեպ մասնագիտութեա-
թիւն , և ոչ կարելեալ ընդ մեզ մեզ ...
չարչարանելովեցեալ զմեզ ․ և ոչ արդեա-
նեցելոյ զմեզ արգելելոյ յառաջեալ Սա-
նասարանին ։

Եւ առ հասարակ զոչխարն բանա-
ձեւել մարդկանն 'ի զոչխարն ընդդէմ
թագաւորութեան հանդերձ՝ առնե-
նոյն մարդիկ անհնարին թագաւորեալն
առաւօտն նորա ․ զի առակաւ ինչ մեզ ոչ
կարելի է մեկնել 'ի նմանէ , վասն
անհնարին հասարակաց բարեկամա-
թեանն զգուշանալ առանձնականացն ,
Զի թէ ընդերին երեկը ուրեք մեկ-
նել 'ի նմանէ , անհնարին զգուշացն 'ի
մերոյ հասանել զայլայլ բարեկամութեա-
նեցին , խրախուսեալ առանձնականացն առ-
նել մարդկանն զանազանեալս խրախուսանաց։
Արդ խորհել բանի արարածն Դաւթ-
գործեալ զայլն առանձնացն՝ զոր խրախու-
ցանն նորա առաւօտն նորա , խնդր նա
յառաջասացեալ հասանել առաջ գիտ- .

սա · Դուք ինքնին գիտէք զայն ա-
մենայն չարիսն՝ զոր դուքն ընդ իս
արարէք · զի՞նչ կարիցէ մարդ
առնել յայնչափ չարչարանաց մե-
րոյ, կամ զի՞նչ հնար առնել մար-
դոյ ժամ մի լռել, 'ի տեսանելն օձի
մերձ բացուստ 'ի բաց փախչելով
մարդկան, թող թէ 'ի բազմութեան
օձից լինել առն հնդկաստանեայն, և
ողջ մնալ և բնակել եւս համբա-
րապ 'ի մէջ նոցա :

Նախ յայսմ իսկ տեսէք զզօ-
րութիւն արարչին · զի որ զամե-
նայն արարար, զիարդ և կամի, յոր-
ժամ և կամի, կարող է զիւրա-
քանչիւր բարս փոփոխելոյ · զի և
զայն զմեծասքանչական թռչնաւոր
զագռաւն՝ որ յանհնարին զգէշ ան-
դընդայնին՝ ընդ անապատին իւ-
րում ծառայեաց քաղցրացուցա-
նէր : Զի թէպէտ և մեք անար-
ժանք եմք, սակայն վասն ձե-
րոյ օգտի զմեզ պահեալ՝ երեւե-
ցոյց զիւրոց սքանչելեացն զօրու-
թիւն · զի զմեզ պահեալ ածեալ,
և 'ի ձեր մխիթարութեան դարձոյց և-

կենալ, և զօգուտն զձեր ըմբռնել, Աստուծոյ մարդասիրութեանն մերձ առ ձեզ կատարեսցի ։

Իւ կամ էր արդեօք հնար ամբիծան միով մանկամարդոյ ունել զգեստ առանց սպասու, որպէս անսէք խաղ աչօք ձերոյոց · զիա՞րդ էր հնար այդամ լինել, եթէ ոչ յԱստուծոյ էր առնելով զհրաշալեաց յաղթութեանն, պահել զխոր մեծապես անհաւատութեանցն 'ի ձերոց յանցանաց յանօրէնութենէ ։ Արդ վասն մնաւուան այնոցիկ որոց երանելեացն, որոց արեան նոցա հեղեալ 'ի յերկիր ձերում, որք արժանի եղեն առաքելածութեանն շնորհացն պատուաւորազեցան, վասն որոյ և ձեզ այց և խնդիր եղեալ հայրապետն աշխարհիս, վասն նոցա արդար արեանն հեղլոյ և ձեզ քաւութիւն շնորհի առաքելն ձերոյ առաջնորդութէ յամենաբարձրեալ Աստուծոյ ։

Իսկ վասն իմ, արդեօք ես ոչ էի 'ի հրամանէ Աստուծոյ ձեզ քարոզ՝ այլ 'ի կամս մարդ խնդոյ ·

իսկ արդ զի՞նչ լինել արդեօք հնար իշխանութեան՝ բանս մի 'ի ձեռնց թաքուցանել, թող թէ քահանայի հրամանին առնել յԱստուծոյ: Զի և ես 'ի խոր վիրապի անդ զամենայն օր տեսանել աչօք բացօք զհրեշտակն Աստուծոյ՝ զի հանապազ քաջալերէր զիս. որպէս և այժմ իսկ զնոյնս տեսանեմ, որ ասէ ցիս՝ թէ քաջալերեաց պինդ կաց, զի տէր Աստուած պահեաց զքեզ և արժանի համարեցաւ արբանեկութեան իւրոյ. և նա քեզ զգործս մշակութեան իւրոյ, զի և դու ընդ այլ մշակսն մտեալ՝ վարձս առցես զանապականն պարգևացն Քրիստոսի:

Զի և ձեր իսկ արկեալ զիս 'ի խոր վիրապն, յանհնարին տեղւոյն մահուանէ ելեալ ողջանդամ կամօքն Աստուծոյ. իսկ և ոչ եթէ զայս առնելով անձինս պարծանս առամ, այլ զի ոչ հնար է թաքուցանել զսքանչելիսն Աստուծոյ. զի ոչ իսկ թաքչի՝ այլ պատմի: Վասն զի զիս ապրեցոյց 'ի մա-

հաւանիք, որ յաւէս ձեր մեռեալ համարեալ էի, որպէս և դուք իսկ վկայէք ինձ. և դուք զի մեռեալ էիք 'ի մեղս ձեր, ահաւադիկ մեռեալք 'ի ձեռն մեռելոյս կենդանանայք: Վասն զի տուաւ 'ի ձեռս իմ պատուիրել ձեզ զհրամանս Աստուծոյ, դարձուցանել զձեզ 'ի ճշմարտութիւն ճանապարհին. և 'ի բաց լինել ձեզ յանօրէնութեան պաշտամանց անաւի, 'ի քարեղէն 'ի փայտեղէն յարծաթագործ պղնձագործ 'ի պատկերաց այտի, որ ոչ ինչ իսկ են և ոչ ումեք օգտականացու, դառնալ առ Աստուած կենդանի որ արար զերկինս և զերկիր և զծով և զամենայն որ է 'ի նոսա, և 'ի Բանն նորա յՈրդին միածին, և 'ի Հոգին կենդանի և կենդանարար, սրբիչ և քաւիչ երկրպագուաց և փառաւորչաց իւրոց:

Իսկ եթէ զձեզ յորդոր յօժարութեամբ անսանիցեմք դարձեալ առ աստուածութիւն անդր, ապառեալ յօժարութեամբ ակնկալք

արտասուօք մեզ պատմելով վասն արարչութեանցն, թէ զիա՛րդ բարի աշխարհս ստեղծաւ ՚ի բարերարէ անտի, թէ զիա՛րդ վարեցան կարգաք աշխարհի, զի ամենայն ՚ի մարդկանէ զհաճութիւն բարեացն յիւրեանց կամաց կատարեցին առ Աստուած, թէ որ ըղձալին գործեցին՝ առաջին պատմեցան ՚ի յերկրի, թէ զիա՛րդ եկին որդին Աստուծոյ մարմնով յաշխարհ անապականութբ, թէ զիա՛րդ գալոց է ՚ի վախճանի ննջեցելոց մարմնով և փառօք Հօր, և վասն ընտրելոց բարեացն և հանդերձեալ դատաստանին, և թէ այժմ զիա՛րդ օրէնն է մեզ գնալ պատուիրանօք ըստ կամացն Աստուծոյ, և թէ զիա՛րդ ապաշխարութիւն դառնալ, ընդ նմին և զթողութիւն մեղաց, և թէ զիա՛րդ զմեղուցեալսն ողորմութեամբ քաւել, և ըստ կամացն Աստուծոյ փախչել ՚ի չարէ և զբարիս գործել, և խոստացելոց բարեացն հասանել, և թէ զիա՛րդ արժանի գնալ ՚ի ձա-

նաւապարհս Աստուծոյ ։ Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոջէ ուղղել պատուիրէր անխափան լինելոյ և անհամեմատ պետրանել. զի և Տէր ըստ խոստման մարգարէութեանն ընկալցի զձեր աղօթարարութիւնս ։ և դուք արժանի լինիջիք մտանել 'ի շնորհս մարգարէութեան 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Մեք 'ի սկզբանէն սկիզբն աբարելով՝ սկսցուք ցուցանել զաշխարհի զարմանալիութիւնս, բարերարութեան բարերացն 'ի բարերարէն, եթէ դուք կամիցիք արժանի մտօք ունկնդրել ընկալ և հաւատալ ։ Սակայն մեք անտուստ խոկ սկզբան արարածոց պատմելով ձեզ նախ վասն ամենայն միոյ միայնոյ բարերարին, և ապա՝ երկրորդ ամենեցուն 'ի նմանէ ։ Այլ զամենայն 'ի ձեր աշակերտութեանդ յօդուած գիտութեամբ կատարել ըստ հրամանի աստուածութեանն ։ կաթողիկոսական համեմատեցայք ընդ նորա և վասն նորին զկնակազագայն և

նմանագոյն բանիւք զխոստովանութիւն թելադրել. զի վասն աստուածութեանն են բանք. քանզի գիտեմք թէ նա է Ճշմարիտ Աստուած ։

Այլ ոչ եթէ զանհաս բնութեանն կարէցէ ոք ձայնել, և որպէս էն՝ զայն կարէցէ ոք պատմել. զի անհաս և անքնին և անբաւանդակ և անքննին անմատոյց անճառելի է յամենայն արարածոց, աներևոյթ՝ ի տեսողենէ և մտաց ամենեցուն իմաստմամբ տեսչութեանք զգութեանք չորրհաց մարմնաւորութեանք իւրով. ոչ առաւել երկինք ՚ի մանհկանացու մարմնաւորաց, նա և ոչ ՚ի հոգեղինաց և ՚ի հրեղինաց զուարթնոց ։ Միայն փառաւորել յամենայն արարածոց. քանզի ամենայն ինչ ՚ի նմանէ է, բայց նա միայն ինքնութեանք ։

Սակայն արք արդարք ՚ի մարդկանէ՝ որ արժանի եղեն ճանաչել զարարչութիւն նորա, յերկրպագութեան կամացն հնազան-

զնալ հրամանատարութեանը , միանգա-
մաւորականն և աստուածամերձ
կենացն վայելչութեամբ՝ մար-
զարէք անդրանկացան 'ի զարդս ա-
ռաքինեաց , աստուածապաշտ յազ-
գէն Եբրայեցւոց , յԱբրահա-
մեան զաւակէն , որ աստուած-
պաշտութեամբն ընտրեալ՝ ամե-
նայն ազգաց հայր անուանեալ .
զի իբրև գլուխ հաւատոց ար-
դարութեան ամենեցուն՝ եղեալ
նախնեացն յառաջահաւատն պատ-
ճանօք , արդարեւ իսկ հայր ա-
նուանեալ . որոյ զաւակին՝ ժողո-
վուրդ աստուծոյ սեպհական ա-
նուանեալ :

Յորոց միջի մարգարէքն իբրև
լուսաւորք աստուածապայծառ
պատգամօքն ծագեցին , որք հոգ-
ւոյ շնորհացն աստուածութեանն
արժանի եղեն՝ ուսուցանել ամե-
նեցուն զօրէնս Աստուծոյ և ըզ-
կամս և զխորհուրդս նորուն ուղղու-
թեան երկնաւոր հրամանացն՝ ա-
մենայն ուրեք առաջի դնելով .
որպէս նոցուն իսկ մատեանքն մար-

զարթեաւ թէին հաստատեաւ պատա-
մեն. որ յամենեցունց յօգնու-
մինչ 'ի վախճանն ընթացեալ, ըն
արարեալ զանխեղերս յօրինեալ,
ընթերցողականացն յանդգնեցան
կարգուցանել զարբունեան մարգա-
րեական աստուածեղէն բանիցն.
որպէս զի հանդերձեալ լիցի զերա-
նելիան խելք զդիտմնն յանդգնեան
առնուանել:

Արդ 'ի մէջ արարոցն աստուածա-
պաշտ զնդաց մարգարէիցն ոմն
յարուցեալ մեծ մարգարէ՝ ո-
րում անուն Մովսէս կարգաւորեալ,
արժանիք եղեալ աստուածութեն
շնորհացն. որ և սկիզբն արարեալ
ուսուցանելոյ ամենեցուն, ա-
ռնել զձեռնարկս գիտութեան՝
աշխարհահաշմար աշխարհագրու-
թեամբ մեծին մարգարէիցն. անուն
և մեր սկիզբն արարեալ՝ ամենա-
սուրբ շնորհօք հոգւոյն բանն 'ի գործ
արասցուք վարդապետել ձեզ,
փոյթ 'ի յանձին կալեալ և վասն
երկուց աշխարհաց հաստատե-
լոց 'ի բարերարէն Աստուծոյ, 'ի

սկզբան և կատարածի, վասն ան-
ցաւորիս և յաւիտենական մշտըն-
ջենաւորին : Մեզ տացեն բանք 'ի
բերան ցուցանել ձեզ զօգուտն.
իմ ասել և ձեզ լսել և ընդու-
նել և հաւատալ. և քակել 'ի
սատանայական գործոց չարու-
թենէդ, և աստուածամուխ կե-
նացն լինել ժառանգորդ :

Արդեօք սկսցուք շնորհօքն
Քրիստոսի պատմել մի ըստ միոջէ
մանրապատում նշանակօք, և
դուք ունկնդիր եղեալ սրտի մը-
տօք լուիջիք :



Digitized by Google

Digitized by Google

# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

# ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

## ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԻԳ. Տէր Աստուած՝ որ նա միայն ինքնութեամբ, և յառաջ քան զնա չէր ոք այլ, արարիչ ամենայնի որ երևի և որ ոչն երևի. բայց Որդին միածին որ 'ի Հօրէ ծնեալ, և Հոգին նորուն որ 'ի նորին յէութենէ. որով եղև աշխարհս 'ի սկզբանց անդ, արարեալ միասնական Երրորդութեանն միով զօրութեամբ կամացն ամենազօրաց, միախորհ, միակամ, միաբանն ինքնութեամբ. և ամենայն 'ի նմանէ եղեալ՝ երկինք և երկիր: Արարեալ զերկինս

խորամանդ հաստատայարկ, և զեր-
կիր թանձրայատակ ազխեալ
սեղմեալ. և զերկինս կախեալ
զոչընչէ, և զերկիրս 'ի վերայ ո-
չընչի կացուցեալ, և 'ի նմին զան-
գունդս համատարածս խաւա-
րազգածս աներևոյթս անկազմս
անտարազս և անյարդարս, ան-
պատրաստս ստուերամածս:

Եւ անդէն ընդ առաջին հօրն ա-
րարչութեան ցարարչակից Որդին
և ցհամագործ Հոգին որ 'ի վերայ
ջուրցն շրջէր, անդ' ի նորոգեալ ջուրցն
հրամայեաց լինել կազմածոյն լու-
սինաւորաց արարածոց: Առա-
ջեալ 'ի հօրէ առ խորհրդակցական
առ խորհրդակատարան համա-
գործս՝ լինել լոյս, և անդէն ե-
դեալ լոյսն համամտութեան խաւա-
րակուլ փարատեալ: Եւ յետ այսո-
րիկ հաստատութիւն ջրամած
ստորնեղէն ծովահերձ ջրապատնիւ.
որով երկնեալ ցամաքն անձրևածին
ծաղկաբերութիւն անկազմեալ: Եւ յետ
այսորիկ ստեղծեալ միասնակազմ
Երրորդութեանն զօրութեան՝ ըլ

նեղ [illegible] այն 'ի [illegible]
խորհրդածութեանն հաստատութեան
երկնից. [illegible], աշ-
խարհագրութիւնք, նշանագրութիւնք, ժա-
մանակագրութիւնք. և այլոց զանազան
[illegible] Թագաւորաց և [illegible] և
[illegible] կարգաւորաց:

Ցեղաց բազմաց [illegible] յերկ-
րէ [illegible] [illegible] այլք,
[illegible] ըստ [illegible] կար-
գէ, [illegible] հաստատեալ յա-
ռաջագոյն [illegible] կա-
մացն. [illegible] որ 'ի
[illegible] մարդկայն: Որ զվայելչա-
կանն [illegible] առնել [illegible]
չէին, այլ [illegible] կամացն առնել
անձինն զբարերարութիւն [illegible]
[illegible], առնել զբանաւոր զի-
[illegible] արարածն, 'ի
մէջ [illegible] անխոս [illegible] ա-
րարածոցն: Զի 'ի խնամոցն զի-
տասցէ [illegible] արարչին. խնա-
մելով [illegible] [illegible],
[illegible] [illegible] զի-
տասցէ [illegible] 'ի նմանէ
[illegible] [illegible]. և

ընդ նմին և 'ի ձեռն նորին՝ ամե-
նայն արարածք երևեալ գործ-
քըն մատուցեն զփառաւորու-
թիւն ։

ԻԴ. Իսկ 'ի մէջ ամենբարեւութեան
արարեալ ամենբարեգութ փառաւո-
րեցս՝ զօրս հրեշտակաց հոգեղէնս,
հրեղէնս, բազմութիւնս զուարթ-
նոց ։ Սոքա յօդս մեծերին բնակեալ
են 'ի վերայ հաստատութեան
Չքնաղայարկի. իսկ մասնաւորականս 'ի ներ-
քոյ 'ի հոգեղէն բնակութեան
երկրքիս ուրեմն մնձանկք ։ Զի Ամ-
ուածոյ բարերարի զամենայն ա-
րարեալս 'ի կարգիս ընտրութեան
հաստատեալ. իսկ չարին յանձնիշ-
խան կամաց մնալով՝ կործանեն իւ-
րաքանչիւր ոք ատամանձնին. այլ
յարաբերչէն բարի եղեալ ամենայնն
հաստատեցաւ ։

Որ յառաջնոյն զմարդն՝ սքանչե-
լագոյն կարգաւ զինչսանն 'ի մէջ
անցուցեալ, և անդէն տեսանել
զսքանչելիս և զարմանալիս, և ան-
հասանելն հրաշակերտս ։ Արար-
ցուք, ասէ, մարդ ըստ պատկերի

միջոցաւ և ըստ նմանութեան ։ Իսկ արդ՝ ըստ որո՞ւմ պատկերի արարեալ ասիցէ, և կամ ըստ որո՞ւմ նմանութեան զմարդն ասնել. քանզի անեղծական, անըս-տեղծական, անպարագրական, իմա-կական աստուածութիւնն Ճա-նաչի ։ Ո՞րպէս լինելոցն արդեօք էականին հանդոյն ամենայր լինել, կամ հողն սակաւուփի՝ ինքնաւորուն զօրութեանն Աստուծոյ. որ և անտանեղեք և անչափական վայրօք, անսկզբնական զօրութիւնն՝ ան-մատոյց յաւէրէ ունի միանձնեա-ւոր նոյն պարզական և անշար-ժական միապաղես ։

Իսկ արդ՝ ո՞րպէս սատեղծական-նոյն զինքն օրինակ գտնիցէ, և կամ զկաւն դգործեալ՝ Աստուծոյ պատ-կերաւն ձևիցէ. զոր և ասէն իսկ՝ թէ ըստ պատկերի Աստուծոյ ա-րարը զնա ։ Նախ աստոց բանիս յա-ռաջագայց պատասխանութեան հան-գերձելոցն, այսպէս անց յառաջա-կայսն, և 'ի լինելոցն նշմարեցու-ցանէ ։ Եւ եր որ անգէմն իսկ մա-

տպաւորեալ աստուծոյ՝ 'ի նոյն 'ի նախնին ժամանակին զեղեալ յանհնարինսն ցու-ցանել. զի ոչ ունէր ըստ պատահելոյն Աս-տուածոյ սորայ զնա։ Մի՝ միայն խոնարհութեամբն, բարեպաշտու-թեամբն խելամտութեամբն, կենդա-նութեամբն հոգևոր ճգնոյն. զոր շնորհեաց ստամբերութեան, զի-տելդ ձանձրացեալ խոնարհեալ և 'ի մերս ամենայն զամենայն շնորհաց զաս-տուածակերպ զաստուածատուր խոնարհութիւնն և զբարեպաշտու-թիւնն, զաստուածածանօթու-թիւնն և զպարկեշտութիւնն, և իշ-խել 'ի վերայ ամենայն երկրա-բուղխ երկրածնին ամենեղծուածո-ցն, և զգիտութիւն յառաւելագի-տութեամբն, և կարգաց զնա տէր ամենայնի։ Եւ սորայ Աստուած, թէ ամենայն քաղցրաբարուխ մեր-մանսից երկրի՝ ձեռն ընդ 'ի կերպա-կութ։ Եւ սորա զամենայն զգա-զանս և զանասունս և զթռչունս ածեալ առաջի մարդոյն հնազանդ դնէր։ Իսկ սորա աստուածակերպ խոնարհութեամբն խելամտեալ՝

Ճանաչել ըստ իւրաքանչիւր ըստ առանձնայինն կերպարանաց զա-նազան նշանակեցուցանել· զի գի-տութիւն Տեառն 'ի մէջ անցու-ցեալ՝ նորա զխոստովանութեանս զնորա արարածս Ճանաչել, նորա նմանն նմանեցաւ:

Եւ մի՝ վասն այսորիկ առէ նը-մանն, վասն անձնիշխանականին կա-մացն իշխանութեան: Զի յԱս-տուծոյ յամենագործութեանն և ամենակարողութեանն երկու արա-րածք պատուականք և որդւոյք ե-ղեալք 'ի բարերարէն հաստատե-ցան, մարդիկ և հրեշտակք: Արդ՝ զմարդիկ թողեալ 'ի կամս անձ-նիշխան կամաց, վասն զի իւրով կամօք անձնիշխանութեանն՝ զգի-տացեալ ընդ բարեացն գործոց՝ շնորհս գտանել 'ի բարերար Տեառնէն և յարարչէն· և ե-ղեալ առաջի նորա զգիտութիւն պատուիրանաց հաճոյիցն Աս-տուծոյ, զի գիտասցէ խոյս տալ 'ի չարէն՝ և զբարին ընտրել իւ-րոց կամացն լաւութեամբ՝ իբրեւ

յերկրեան քաղաքացութենէ. որով անձն նեղեալ. կամօք յարմարեսցէ ամենայն զհետ-րոց զկատարելոց առաւել զգլո-խաղեն պատուաւելոց է:

Իսկ վասն Նախանձաւորութեան խոնա-հութի է աղաղակել. զի ամենայն առ-բարբառ ընդ Հնազանդութեանն ծառայութեան նոյն հարկաւորք. զի մի այլ ուրեք իմիք խոնարհեցին զօր-ծել քան զայն՝ որչափ իմիք նոցա Հրամայեսցեն, համբերեն նոքա 'ի մեծ-րաց իւրաքանչիւր՝ կատարել ընդ-Հրամանին: Բայց Աստուած ընդ-մերձին միայն բաղձանաց ամենայն աստ-առաւօտեաց և մարդ մեծացուցեալ, Հոգեհանան Հրեշտակական Հա-նապազորդեան արարք:

Տեր զարեգակն և զլուսին և զաստեղս, մեծ ամենայն որչափ քան զմարդն լցեն. և 'ի նոցա կամացն կան պատկերաւ ընդ Հրամանաւ պատրաստութիւն նորա: Ոչ արեգակն յընթացից դադարէ, և ոչ լուսին կայ 'ի մնալ և 'ի լնուլ, և ոչ աստեղք զկարգ իւրեանց անցա-նեն. և ոչ լերինք ատեղագաղթեն ըն-

նոցին. եւ օդք 'ի շնչելոյ ոչ դադա-
րեին, եւ ոչ ծով 'ի սահմանս ծփա-
նաց անզեղեալքն մոլեգինն ալեացն
խռովելոց յուզելոցն սաստկու-
թեան անդադադար կոտորակելոցն,
եւ զեզերաւ սահմանին ոչ կարա-
ցեալ անցանել եւ ապականել զեր-
կիր. եւ ոչ երկիր բառնալ կրել
զանդադաղի զամենայն: Որպէս հրա-
մանաւ յօրինեալ է ամենայն, ա-
ռայ աւուրք եւ երկնաւոր զօրու-
թիւնքն կան յանդադադար փառաւո-
րանութեան: Որ արար զպայծ-
ռութիւն երկնից եւ զթիւս աս-
տեղաց, զջուրս ծովու եւ զաւազ
երկրի, զկշիռս լերանց: Որ հանէ
զամպս եւ արգելու զհողմս, եւ զար-
ձաւցանէ զերկին, եւ զալեկոծեա-
ցանէ զծով դառնացեալ, եւ ժողովէ
զանձրեւաշխիս: Վասն որոյ մեծա-
գործութեան հողմն պայմանէ, թէ
ո՞ չափելոց ափով իւրով զջուրս
ամենայն, եւ թզաւ զերկինս, եւ
զերկիր ամենայն քլաւ իւրով: ո՞վ
եդ զլերինս 'ի կշիռս, եւ զդաշտս
կշռորդովք եղաւարծ. ո՞ր եղէ սանդղն

որ զնա բարձեալ ունիցի , որոյ բանիւ արարածք ամենայն կախեալ կան ։ Որ գիտէ զանցս զնացից երկնաւոր գնացոյն որ 'ի մերայ օդոց շրջին և ոչ թիւրին . տարածին և ոչ ըստ արտաքի անկանին . եղանեն և մնան վարձկանք պարտատուութք տարւոյ . կասեն՝ արծարծեն 'ի տունջենէ 'ի գիշեր , և 'ի գիշերոյ 'ի տիւ , փոխարէնս արկեալ միմեանց փոխարինին՝ աննախանձ տան , անարգել դարձուցանեն 'ի չափ ժամանակաց , 'ի չորս որոշմունս փոփոխել տարւոյն՝ որպէս և Աստուած կարգեաց ։

Եւ զի՞արդ գնայցեն զօրութիւնք աստեղաց երկնից հաստատութեան՝ կշիռ կարգեալ 'ի գնացս իւրեանց անդադար , և ոչ անցանեն զչափով ։ Կամ ուստի՞ եղանեն օդաշունչ սիք հողմոցն բնութեան , և ու՞ր երթեալ դադարիցեն . և զի՞նչ որոշմունք իցեն միոյ միոյ 'ի նոցանէ . մինն քաղցրաշունչ սնուցանէ զբոյսս , մինն

սաստկացեալ զպատուհան բանիս, մինն զփքառոս կկէ, գունակ գունակ ծաղկօք զերկիր զարդարէ 'ի գոյնազգոյն երանգս. զմերկ ծառս պատուցանէ, զխարտաւոր զարդաթուխս զարդարէ:

Ուստի՞ ծնանեին օդք ամպածինք, և որ 'ի նոսին տղտաւքն, 'ի փայլատակմանց հողմոց, 'ի ձայնէ որոտմանն ծնանեին անձրևք. և ուր Տէր հրամայէ երթալ, երթեալ իջուցանեն և ոռոգանեն զերկիր. մնուցանեն զբոյսս, պարարեն զպտուղս մարմնապարարս. յոյր յորովայնէ եկանեն զետք աղբերօքն, և ոչ դադարեն յեկելն և ոչ լինին 'ի մնանելն:

Երկինք և երկիր, արեգակն և լուսին և զարդութիւնք աստեղաց և ծովք, գետք, դաշտք և անապատք, սողուն և թռչուն, ձկունք լողականք, լեռինք, լճակերպք, զիւրաքանչիւր կարգեալն լսեն իւրաքանչիւր հրամանացն մատուցանեն: Բայց միայն մարդոյն անձնիշխան թողան կամքն՝ զինչ

և կամեցաք · և այլ աւելի ևս ոչ
բռնադատեցաւ քան զայն որ ար-
գելուլ աստացաւ չհաշտակել նմա ՚ի
ծառայս անձին · զի այնու արժանի
արասցէ զնա փոխանակ ընդ փո-
քուն մեծամեծս ընդունել · վասն
իւր շնորհ ունելոյն վաստակոց՝
լիցի առնուլ նմա յարարչէն ըղ-
փոքունց փոխարէն զմեծամեծ
շնորհսն: Վասն այնորիկ և զանձ-
նիշխան կամաց նմա հրամայեաց
կամակար իշխանութիւն:

Կամ որպէս մարդ հողաբեր՝ ա-
բինակաւ արարչին յաշխարհ գալ-
ցէ առաժամագիտ մատուցական,
անմատոյց էականին նմանութե՛
առնուցու լինել զլինելն: Քանզի
անսահմանականն և անվայրափակ
և առանձնականն զօրութեամբ,
աստուածականն անուամբ միայն
արգելոք մեծարեաց՝ ըստ պատ-
կերին առնելով · այն չէ ինչ ՚ի դէպ:
Քանզի ասէ գիրն, թէ ըստ պատ-
կերի Աստուծոյ արար զնա · և
այլուր, եթէ Աստուած հաստա-
տեաց զմարդն յանեղծութիւն,

և ըստ պատուիրելոյն խորոց ընդելերա-
րութեան արարք գնա. և միայն
աստուածածանօթ խնամատարութեան
տայց. Թէ մարդ պատկեր Աս-
տուծոյ է: Այլ անդէն 'ի սկզբ-
բանն կարգելոց Աստուած մարդ-
կոյն՝ մերձաւոր և ծանօթ կեր-
պարանաց Աստուծոյ լինել. քանզի
զի ոչ 'ի հաստատութեան միայն; այլ
պատուել 'ի ծանօթ լինելն փառ-
թաց: Քանզի ներհանութեանց մարդ-
կոյ երկրաւոր Աստուծոյ 'ի ստեղ-
ծանել զմարդն հող յերկրէ, և
փչելոյ յերեսս նորա շունչ կեն-
դանի, և եղև մարդն յոգի կեն-
դանի: Ստեղծեալ զմարդն ձեռօք
իւրովք, և արկ 'ի նա զկենդա-
նութիւն 'ի փչել բերանոյ իւրոյ
զկենդանականն շունչն խնամատա-
կեր մտաւորութեան բանաւո-
րութեան ազդեցութեան. զի ան
զկէն զաւչան բացեալ արարածոյն՝
զարարչին ծանիցէ. և անդէն Աս-
տուծոյ բարերարութեան արար-
չութեանն ընտանի և մերձաւոր
զինքն և պատուակից լինելոյ:

Եւ թէ զխմորդ ամենայն արա-րածոց առնել հրաման լինել յանիւթութոյ 'ի չքաւոր յանկեր-պարանութոյ, որպէս ընդելա-կան կերպարանաց, և ձայնիւ հրամանաւ առանց յապաղանաց՝ ամենայն արարածք սպասաւո-րականք զհրամանս կատարեցին: Իսկ իմականն աստուածութիւնն 'ի ծածկութեանն 'ի վերոյ քան զատարրականն նմանութիւնս և ըղ-ձայնել զապացուցութիւնս, յորում յանձնականն յէութեանն զիւրն ունի: Այլ վասն երևելի արարա-ծոցս առնել նմանութիւն, վասն ժուժկալութեն արարածոցս խո-նարհեցի: Զի թէ ոչ այնպէս էր, ոչ ոք էր որ առնելեան բնու-թեանն կամ լինելեան ձայնին բար-բառոյ ժուժալ ոչ կարէր. այլ որպէս զի կարասցեն զնա տեսա-նել, վասն այնորիկ առնել նմա-նութիւնս երևելիս, բարբառել և զապացուցութիւնս:

Արդ եղեալ մարդն ըստ պատ-կերի Աստուծոյ՝ հանդերձ աղա-

տութեանցն, իմաստութեանցն
բանաւորութեանցն և իշխանա-
կան պատուոյն ըստ ազդեցու-
թեան արարչութեանն, ոչ եթէ
ըստ աստուածաբանն զօրութեն,
զոր միայն միածինն ունի ընկա-
լեալ էութեանն Հօր, այլ ա-
ծեալ Աստուծոյ զամենայն արա-
րածս արարչութեան իւրոյ առ
Ադամ, տեսանել զի՞նչ կոչեսցէ
անուանս նոցա: Որով յայտ է,
թէ զարարիչն անուան յառաջ քան
զայս ծանուցեալ Ադամայ. զի
նախ այն էր կարևորագոյն: Քան-
զի և միածին Որդին Աստուծոյ
զայս ասէր առ Հայր, թէ այս են
կեանքն իմ, զի ծանիցեն զքեզ մի-
այն ճշմարիտ Աստուած: Նա և
՚ի հարկէ իսկ նախ զարարիչն ա-
նուանէր Ադամ. զի յորոյ երևեաց
զկենդանութիւն ընկալեալ, նախ
քան զամենայն զնա ետես. քան-
զի և արարածքս առ ՚ի ծանօթ
առնելոյ նմա զարարիչն հաստա-
տեցան:

Արդ անուանէ զառաջին ածեալ-

ազգն յանձնիշխման արարչին , և զկինն եկեալըն՝ յառաւելադրութեանցն ծա-նօթականն լինին , որոց ոչ միայն անուանանելութիւն , այլ և իմաստու-թեամբ և իշխանութեամբ առ. հաւասարակ ունիցէ . մինչդեռ միայն սկիզբն և կատար է յինքեան՝ նման յամենայն արարից ինքն ինքեան միայն էր , և ոչ ոք զօրավիգ , և ոչ ընկեր ոք , և ոչ նման նմա :

Արդ Հօր արարչի խորհուրդ 'ի միջ առնել ընդ արարչակից Որդ-ւոյ և ընդ արարչակից Հոգւոյ , իբրև զխորհուրդն զառաւելին նա-խաստեղծին մարդոյն . զի որպէս անդրն ասաց , թէ արարացուք մարդ 'ի նմանութիւն պատկերի կեր-պարանաց մերոց , և անդէն ստեղ-ծեալ Ադամ 'ի կենդանութիւնն 'ի չքոյէն հաստատեցաւ , նոյն օ-րինակ և ասացեալ Հօր առ Որդին և առ Հոգին , ասէ՝ եկայք արա-ցուք Ադամայ օգնական նման նմա՝ ըստ նմանութեան պատկերի իւ-րոյ և կերպարանաց : Եւ անդէն առեալ նմա քուն զարմանալի ,

և անդէն հանեալ ոսկր 'ի կողից նորա, և շինեաց զայն 'ի պատուական կին, և կացոյց առաջի նորա: Եւ ծանուցեալ Ադամայ աստուածադրեալ խոստաւանութեամբն, թէ այս ոսկր յոսկերաց իմոց և մարմին 'ի մարմնոյ իմմէ, ասա կոչեսցի կին՝ զի յառնէ իւրմէ առաւ. վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և յարեսցի 'ի կին իւր, և եղիցին երկոքեան 'ի մարմին մի:

Ո՞չ տպաւորեն յանձնախնամն Աստուածոյ ասէր զայն, անդ՝ ուր ամենայն զօրք հրեշտակաց զփառս Տեառն բարձրացուցանէին, և մարդն 'ի հանդիսի անցեալ: Եւ զոր ասէն՝ ամենահաս գիտութեամբն մարգարէանայ, և քնով զպործեալն զարթնականն 'ի մէջ բերէ զպործն. զի որ յառնէ առեալ զկնոջ, նա և զայր յերկրէ գիտէ, և զերկիր՝ յոչընչէ, և զԱստուած՝ էական: Եւ ասելովն, եթէ թողեալ զհայր և զմայր և յարեալ 'ի կին, և եղիցին երկո-

գերանն ՚ի մնացածին մէ, զբազմօրինակն նաւորդաց աշխարհականս և զհրաշագործ զամենեցուն զինուոց :

ԻԵ. Ցետ այսորիկ առնէ Աստուծոյ յԱդէն զբանասիրաց փառաւորութեան զնոյն զամբոխն. որում յայտ արարեալ ծառա երկուս, զմինն կենաց և զմիւսն գիտութեան բարւոյ և չարի. որում և պատուէր պատուիրեաց՝ չճաշակել նոցա ՚ի ծառոյ անտի՝ մահու սպառնալեօք. զի Աստուծոյ պատուիրանապահութեամբն զմարմնաձեւն զպատուասիրութիւն ինքնաուժութիւն ապահովել, զպատուածականն իշխանութիւնն ապահովանութեամբ պատուիրանին յաւիտենաշնական փառաւ հաւատովքն ճշմարտնական եղեալ վայելեսցէ: Իսկ որպէս մերոցդ ծանօթ է ասացաք, եթէ զհրեշտակս և զմարդիկ յանձնիշխանութեան թողեալ, և զի բազմանեցեալ պատուէրս եղեալ ՚ի մերոյ. զի իւր բազմանեցեալ յօժարութեամբ կամացն՝ ընդդէմ արարչին հրամանացն հնազանդեսցեն. մանն

որոց և տեսանել փառաց արժա-
նի հասանել։ Այդ մարդոյն եղաւ
փոքր պատուէր՝ 'ի ծառոյն չճա-
շակել. զի այնու 'ի մեծ պատուի
ձգեալ հասցէ, որպէս վերագոյնն
ասացաք։ Իսկ զօրացն բազմու-
թեան Հրեշտակացն եղաւ պա-
տուէր, կալ յանդադար փառա-
ւորութեան խորհրդոց. արարչին.
'ի մեծ պատուի փառաց զնոսա
բնակեցուցանել՝ յաներեւոյթ
մեծութեանն վերին երկնաւոր
մշտնջենաւոր լուսոյն։

Այլ ոմն 'ի վերին զօրացն իշ-
խանութեանցն Հրեշտակացն իւ-
րեւ տեսանելք զպատուականն բարերա-
ցըն բարերարութեան արարչին՝
որ առ մարդ, և մարդոյն կալ 'ի
բանի արարչին իւրոյ, և զգուշա-
ցեալ պահել զպատուիրանն, իւ-
րովք կամօք չարացեալ չարին՝ չար
անուանեցաւ. ատեալ և յետս եր-
թալոյ՝ զհակառակաւորէր. զսատա-
նայ անուն ժառանգեաց։ Այդ
նախանձեալ չարին արկանէ ըզ-
մարդն 'ի մահ պատրանօք 'ի փա-

ռուայ անհուն. քանզի և ասէ իսկ իմաստուածն, թէ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ խաբէութեամբն ապականեալ:

Արդ եկեալ մատուցանէ զխաբէութիւն պատրանաց մարդոյն թշնամին: Եւ արդ դու տես զոր ասէն. Ընդէր, ասէ, պատուիրեաց ձեզ Աստուած չճաշակել ՚ի ծառոյն. որով յայտ իսկ է, թէ ունէր տգիտութիւն Ադամ և անձնիշխան կամս և իմաստութիւն յԱստուծոյ. զխաբելով զԱստուած պատուիրանադիր և զԱդամ պատուիրեալ. Թերևս խակաբանիչ պատուիրանին նենգութեամբ երևեալ. և անհնարինն չէր ՚ի ծառոյն, քանզի քննիչ է սրտի և երիկամանց:

Եւ արդ դու տես զինչ ասէր. Թէ ճաշակեսցէք, ասէ, Աստուածք լինիջիք: Զպատճառանն ՚ի նոսա, և ՚ի ներքս յինքն զիշխանութիւնն կորզել ջանայր. զի զնոսա վերակեցուցեալ՝ հանել ՚ի խոստմանցն հնարեցի. Թերևս հնար լիցի

նմա՝ զնորա տեղին ժառանգել։ Որպէս և առաքեալն Աստուծոյ՝ որ հմուտ և տեղեակն էր աստուածաբեր խորհրդոյն․ քանզի և ասէ իսկ, թէ Անօրէն իշխանն իբրև աստուածանալն կամեցաւ, ձեռան արկանէր և զամենայն մարդիկ մեղօք կապէր․ զի իբրև զնոսա հանեալ յայնմ՝ բարեաց, ապա նմա հնար լիցի զխոստացեալսն ընդունել։ Իսկ նորա վասն նորին պատճառի խաբեալք՝ ձաշակեցին․ և անկեալ զպատուիրանաւն՝ յաստուածակերպ փառացն մերկացան։

Սակայն և անդ իբրև 'ի վերայ որդւոց հաստուցելոց հայրաբար գթացեալ բարեգործէ․ զոր և ասէ իսկ գիրն, թէ լուան զձայն տեառն Աստուծոյ, զի շրջեալ գընայր 'ի դրախտին ընդ երեկս աւուրն։ Եւ նոքա փախուցեալ թաքուցեալ ծառախիտ տերևապատ լինէին․ զորոյ անցանել զամենայն երեսօքն անհնար է․ վասն որոյ և ասէ իսկ, թէ տէր

Աստուած մերձաւոր եմ ես, ա-
սէ Տէր, և ոչ Աստուած հեռա-
ւոր. միթէ մարթ ինչ իցէ մար-
դոյ փախչել յինէն 'ի ծածկութ-
իւն՝ զի ես ոչ տեսից զնա. ո՞չ լնու-
լի են երկինք և երկիր: Եւ մեծա-
ոմն հմուաս մեծութեան նորա 'ի
մարգարէիցն որոց՝ որ ասէ, թէ
յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ,
կամ յերեսաց քոց ես յո՞ փա-
խիցեմ. թէ ելանեմ յերկինս՝ դու
անդ ես. թէ իջանեմ 'ի դժոխս՝
և անդր մօտ ես. նայել կայ, թէ-
պէտ և թաքչել կարծեցին:

Սակայն բարերարին ձայն ար-
կեալ, թէ ո՞ւր ես Ադամ. և նա
ասէ. Լուայ զձայն քո և երկեայ,
զի զնայիր 'ի դրախտի աստ. քան-
զի մերկ էի և թաքեայ: Տեսանե՞ս
'որչափ մերձաւոր և ծանօթ էին
Աստուծոյ, մինչև ռանկաձայնին
անդամ լինէին անեղեալք: Քանզի
բարերարին յանդգնեաս պատմա-
ռեալ, նախ ռանկաձայն առնէ. զի
յառաջ քաւութիւնարկս հա-
նել մարդոյն, ինքնապատուամ

ընծելով պայծառացն՝ փրկու-թեան զատանիցէ :

Իսկ եթէ և այն չընծեր, սակայն չկամի ամբաստան ընծել և ապա-գինն 'ի գինի հարկանել, այլ հեշտականաւն զիջանէ, թէ ո՛ պատմեաց քեզ թէ մերկ ես դու. քանզի կամէր անզգոյշն ներբերոյն յինքն արկանել. զի քաղցրու-թեանն Աստուծոյ զնոսա յապաշ-խարութիւն ածցէ : Իսկ եթէ այ-նու ևս ոչ զգաստացան, այլ զմի-մեանս պատճառեալ թշուառա-ցան, ապա զդատաւորութիւնն 'ի մէջ անցուցեալ՝ վճիռ հատա-նէր, զոր հաստատեալ և 'ի հող դառնալոյն, զի Աստուծոյ դա-տաստանն ճշմարիտ է 'ի վերայ այնոցիկ՝ որ զչարն գործիցեն :

Յետ այսորիկ ապա զապաշխարհու-թիւնն 'ի մէջ բերեալ աւե-տիս, թէ ահա Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ՝ ճանաչել զբարի և զչար. հանցուք առ 'ի ծառոյն կենաց, զի մի՛ կերեալ կեցցէ յա-ւիտեան : Բայց եթէ զմի 'ի մէնջ,

ոչ եթէ նորա Աստուած եղեալ. քանզի չէ էականն լինելով, այլ զկարծեալն լինելոյ առնէ. զոր օրինակ սուտ աստուածք կարծեալք 'ի մարդկանէ՝ որ կարծեցան առ. անմաքրութեան առ. յիմարութեան պղծութեան մարդկան. որպէս և առ. ձերոց. իսկ անեսանելին զպարարարաբար զմիաւորաբար միջնորդութիւնովք, որ առ. տգիտութեան 'ի ձեզն նկարեցան. որ ոչ լսեն և ոչ խօսին, ոչ իմանան և ոչ շարժին և ոչ գոյ շունչ 'ի բերանս նոցա. և թողեալ ձեր զԱստուած Ճշմարիտ՝ զարարիչն երկնի և երկրի, անշունչ անմռունչ քարակոփից պաշտօն մատուցանելիք, որ ոչ լինէ իսկ են։

Վասն որոյ և աստուածատուր սրբոց մարգարէիցն հաւատացեալ՝ նորա խոստմանն բժշկոյ, զգեղ զարթմանեալն ըստ ցաւոց հիւանդին պատուաստեալ, բառնալ զնշել ըղ-ձալթակութիւնս 'ի բաց անցուցանել։ Որպէս և մի ոմն 'ի նոցանէ աստուածակատն զօրութեանն

Հոգւոյն լինել՝ պաշտեալ տանելով, Թէ աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերկրէ 'ի ներքոյ երկնից. այլ Տէր որ արար զերկիր զօրութեամբ իւրով, և ձգեաց զերկինս սքանչելի խորհրդով իւրով, և պատրաստեաց զանխեղերս ամենայն իմաստութեամբ իւրով. և որոտայ ձայնիւ, և լինի ջուր բազմութեամբ յերկինս, և հանէ զամպս 'ի ծագաց յերկրէ, զփայլատակունս իւր յանձրևս արար, և հանէ զհողմս 'ի շտեմարանաց իւրոց:

Ցիմարեցաւ ամենայն մարդ 'ի գիտութենէ՝ 'ի վերայ անձանց թշուառութեան յարուցանել. անօգուտ անձամբք յանձանց իւրեանց անօթալից առնել զերեսս իւրեանց, և մեծ 'ի բարկութեանն Աստուծոյ պատրաստեալն զանձինս. այլ այժմիկ կոչեալ է՝ յայսմ յանդիմանել զմոլութիւն ձեր, զի 'ի կարգի իւրում պատաշաձէ: Այլ այժմ որ 'ի կարգին

լոկ սկիզբն արարեալ պատմել ձեզ՝ ըստ իւրաքանչիւր կարգի պատմեսցուք։

Հանեալ այնուհետեւ զմարդն 'ի փափկութեան հանգստեան դրախտէն՝ արտաքոյ դրախտին բնակեցուցանէր. և փակեալ նովին զճանապարհ ծառոյն կենաց՝ զի մի՛ ականատես անզգամ լիցի վայելչութեան դրախտին։ Անդ և երկիր անիծեալ, փուշ և տատասկ, հաց ցաւոց, և Ադամայ մահկանացու մահ. և այս մարդասիրութեան նշանակ է. որպէս ասէն իսկ 'ի բերանոյ մարգարէին Աստուած, թէ խրատեսցէ զքեզ ապստամբութիւն քո, և չարեացն քո կշտամբեսցեն զքեզ. ապա գիտասցես դու, թէ չար և դառն եղև քեզ թողուլն զիս, ասէ Տէր Աստուած քո։ Եւ 'ի միւսումն ասէ, թէ յորժամ դարձջիք և հեծեծեսջիք, յայնժամ կեցջիք և գիտասջիք թէ ուր էիք։ Քանզի յորժամ դառն ճաշակեսցէ և կսկածանաց մահուն պաշա-

բեալ էղէ, անխթափ 'ի մնացն յիշեսցէ զպաշտաւն ծառայն կենաց, և հեծեծելով խնդրեսցէ զմուտս դրախտին վայելչութե. զի և յանդիման դրախտին բնակեցուցանել՝ ասացելոյդ վկայէ։

ԻԶ. Իսկ բարերարն ոչ միայն 'ի դրախտին, այլ և արտաքոյ նորին չհեռանայր 'ի նոցանէ, յորժամ յանդիման դրախտին բնակեցուցանէր։ Վասն իւրոյ բարերարութեանն հրամայեաց սերել յերկիր. ուր և անդէն ակնարկելով արարչին՝ ծնունդ արձակեալ յերկիր, սկսան բազմանալ ընդ ասելն, Աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր։

Որդւոցն Ադամայ անդրանկանն Կայէն անուն ճանաչէր, և միւսումն Հաբէլ. որք անդէն զիմաստութիւն տուողին 'ի մէջ անցուցեալ, նորին իմաստութեամբ՝ զնոյն արարիչ ճանաչել։ Արդ առեալ Կայէն երեք որդին ընծայս նուիրեաց յարմտեաց, որայ կապեալ ցորենոյ 'ի պատա-

բաղդս նման մատուցանէր ։ Ընդ-
այն հայեցեալ Հաբէլ, 'ի հօտիցն
զառաւօտքն ընծայեցուցեալ պա-
տուղ 'ի խաչանիցն մատուցանէր ։
Իսկ Աստուած իւրով մարդասէ-
րութեամբն խոնարհեալ յընծայս
յորդւոցն Ադամայ մերձաւոր Ճա-
նաչէր ։ Քանզի և անդէն իսկ ընտ-
րութիւն առնէ, զամն 'ի միամը-
տութեան զանեալ՝ ընդունի ըզ-
պատարագն ․ իսկ զոր ընդ եղ-
բօրն յերկմտութեան զանեալ,
անդրէն զատապարտեալ զար-
ձուցանէր վասն երկմտութեանն,
և նա անդէն վասն որոյ մահ խոր-
հեալ՝ սպան զեղբայրն ․ և անդէն
նզովեալ երկիր վասն նորա, և նա
ինքն անիծաւ զաւակաւն հան-
գերձ ։

Արդ՝ Ադամայ այլ որդի ստա-
ցեալ յԱստուծոյ փոխանակ ըս-
պանելոյն Հաբելի, որոյ անուն
Սէթ Ճանաչէր ։ Իսկ այն սպա-
նեալն՝ վասն արդարութեան իւ-
րոյ կենդանի է առ Աստուած․
զի որ յոչնչէն արար՝ նոյն կենդա-

նուացուցանէ զնա յորժամ և կա-
մի, զոր յայժմ պատուել զխորհն է
ձեզ. յորժամ զձեզ ընդմիաւորեալն
՚ի հաւատոյս անտեսանելեացն՝ ստա-
ցուք ձեզ, որոյ արդարութեան կայ
և պահել յաւիտենանս յաւիտենից։
Արդ՝ Կայէն նենգաւոր. մարդա-
սպան նախանձեալ անիծաւ. վասն այ-
սորիկ որոշեցաւ հրամանաւ Աս-
տուծոյ. զի օրհնեաց Աստուած
զՍէթ, և ետ նմա պատուական, զի մի
զաւակն օրհնեալ խառնակեսցի
յանիծեալ զաւակն մարդասպա-
նին Կայենի։ Արդ բաժանեցան մար-
դիկն առհասարակ ՚ի վերայ երկ-
րի կողմանց ցեղին երկոցունց։

Իսկ սեթեան ցեղին, որ կոչէին
նահապետք արդարք մինչ ՚ի զաւակն
ութերորդ. առ որս բարերարու-
թիւնն մերձաւոր եղեալ՝ միան-
ձնանայն իսկ առ ամենեքեանն
բարերարութեամբն յանձանձեալ,
զի մի մնասցեն ընդունայնութեամբն
ընկերցեն։ Վասն որոյ և երկայնա-
մտեաց իսկ սպասարեալ զհայրն, և
յերկնաւորականաց ծնունդ շնորհեաց.

զի գոնեայ վասն ցանկութեան որդւոցն եղանիցեն 'ի խնդիր Աստուծոյ. մանաւանդ զի կարեւորագոյն իսկ է գիւտ ծննդոց 'ի կեանս երկրածնաց:

Արդ նահապետք կարգեալք, Ադամն առաջին աստուածաստեղծ, այսինքն Ադամ. և Սէթ, և 'ի նմանէ Ենովս, և 'ի նմանէ Կայնան, և 'ի նմանէ Մաղաղիէլ, և 'ի նմանէ Յարէդ, և 'ի նմանէ Ենովք: Եւ եկաց Ենովք ամս հարիւր վաթսուն և հինգ, և ծնաւ զՄաթուսաղայ. և հաճոյ եղև Ենովք Աստուծոյ:

Նա և ամենայն նահապետացն շատակեաց եղեալ, իբրեւ 'ի բարերարութենէ անտի Աստուծոյ սերեալ բազմացան. նոյնպէս և յետ ծննդոցն յերկարակեացս արարեալ, զի որք Աստուծոյն ստացան՝ պատմեսցեն հարք որդւոց. զի իբրեւ պատուիրանք ըղձուշացուցիչք լինիցին՝ առ 'ի ծանօթ առնելոյ զնոսա Աստուծոյ. որպէս և ասացաւ իսկ, թէ հարց-

ձեր զու զՀարս քո և սպանանիցեն քեզ, և զծերս քո և աստասցեն քեզ. որով յայտ խսկ է՝ թէ վասն այնորիկ երկայնամտեացք, և ոչ վասն բազմութեան ծննդոց:

Զի թէպէտ և տայց Աստուած ցԱդամ, թէ աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, որպէս յառաջագոյն ըստ մարմնական բարուցն լինելոյն տայց. խսկ Աստուած ոչ 'ի բազմացուցանելն մարդոյն, այլ անդէն և անդ կամէր զի 'ի մշտնջենաւորաց անմահութեանն փոխեսցին: Որպէս և զԵնովք տեսանելով յետ վարուց երկրաւորաց կենաց, յետ ամուսնանալոյ և որդիս ծնանելոյ ուղղութեամբ վարուցն, մերացուցեալ զնա կենդանւոյն յանմահութեան մշակին: Որ ոչ վասն ատն մարդոյ, այլ զի երբ նորա՝ այլոց ճանապարհ գործեսցեն. և ոչ բռնադրօսութեամբ տանել 'ի կեանսն, այլ զպարտ հաճոյական վարուց հատուցեալ: Սոյն օգինակ կամեցեալ Աստուծոյ զա-

մեծնեանն յանմահութիւն փոխել, յետ սոսա վայելելոյ ամենեցուն:

Ամենայն մարդիկ ութերորդ դարուն հնազանդեալ մահու, մեղաց ծառայեալ՝ մոռացան զարարիչն յուսակորոյսք ՚ի կենաց անուր Աստուծոյ, և տղայականեալ զուղղական զիւրեանց ճանապարհն: Մատնեաց զնոսա Աստուած ՚ի կամս անձանց իւրեանց, տանել զոգի շնորհաց մարդասիրութեան իւրոյ ՚ի նոցանէ, զորոց և զանձինն սորջացեալ տանէ: Որ և սորջանայն Աստուծոյ՝ ահագին դժուարութեան նշանակ է, զի թերեւս այնու յուշ առնել մարթասցէ մոռացելոցն զարարչական զօրութիւնն, որ խառնակեցան յանխիծեալ զաւակն Կայենի, ՚ի պոռնկութիւնս, յայլանդակ վարս, ուտել մեռելոտի: Միանգամայն իսկ երկիր զազրացեալ ՚ի չարեաց մարդկան զարշեցեալ, որպէս ասէ իսկ թէ միանգամայն ամենեքեան յամպարշտութիւն

կործանեցան, և ամենայն մարգ-
պղծեաց զճանապարհս իւր՝ ի վե-
րայ երկրի։

ԻԷ. Ի ժամանակին յայնմիկ մի
միայն ունի արդար գտեալ յար-
դարացեալ առաջին, որոյ Նոյ ա-
նուն կարդացեալ, հաճոյ եղեալ
Աստուծոյ սիրեցաւ՝ ի նմանէ։ Որ
հրաման առեալ Նոյի յԱստուծոյ
առնել տապան արկղագործ փայ-
տիւ՝ բազում ամաց գործելով,
առ՝ ի հարկանելոյ ազգին Թշուա-
ռացելոյ։ Որոյ խոստացեալ այ-
նուհետև առնուլ զՆոյ ընտա-
նեօքն հանդերձ և ամենայն շըն-
չականօքն՝ ի տապանին, և ամենա-
պահ ձեռամբն փակել զտապանին։
Եւ ապա դարձուցեալ զանդուն-
դըս առատապէս ցամաքաւ՝ հան-
դերձ հոսանօք արձակելովք յերկ-
նից, հեղեղատատ ծովապատուժ
բարկութեամբ զառ՝ ի ներքոյ երկ-
նից ընջել, առհասարակ ողողեալ
սրբեաց։ Իսկ յետ սաստկոյն ան-
ցելոյ՝ զայլն արդար աշխարհա-
հայր երկրական՝ յաւիտենադիր

ուխտին կոչեցեալ · զոր և յետ-
կարգակեաց առաքելական, առ'ի պաշտա-
մելոյ ազգացն եկեղեց զհամաշխար-
հական բարեկութեամբն պայմանն :

Բայց առաջս միաբանեալ միաբանեցու-
ազգքեն բարեվաճարելոյ խորհուրդ ա-
ռնել համաձայնութեան՝ երկնաւորեալ
աշխարհական ձեռնելոյ, անհուանհակեր
առ'ի յերկրաւորակ մշակութեանց որ փո-
խանակ յաւիտենականին Աստուա-
ծոյ · որոյ պաշտամնե անուան յաւի-
տենից յաւիտենականն և յերկրաւորակ
ազգաց յարգս : Որոյ բարեկարա-
զոյն ազգեցութեանքն ցուցեալ
պատուասահմանողացն զխորհրդութեան
'ի խառնուածութեան, յանձնառութեան, և
զմիաւորութեան ազգին՝ բարեպաշտ ազգա
այլազգեաց օտարաբանական անհնաւ-
նոթս 'ի միջնորդեալ ընդ երկրաւոր երկ-
րի ազատ · զի մի կամայական
սահմանն անձնային արկածեցելն, այլ
յաւիտենականին առհամարեցն Աս-
տուածոյ հնազանդեալ զձայնեալն :
Որ'ի բարեխառնել ազգացն և'ի խառ-
նուածել լեզուացն, և'ի ցանել որդ-
ւոցն Աղամայ, կարգելով սահ-

մանես ամենայն ազգաց՝ ըստ Թովմայ
Հերձուածողաց Աստուածոյ :

ԻԸ. Եւ քանզի տարածելոց ազգացն աստուածամարտաց զխոստութեամբն իւրաքանչիւր ապաշխարանս 'ի սարբականն արարածոց ապաշէալ, խոստովանեցան յանդգնութեան դիւս մոլորութեան. նոյն այր մի աստուածածնեղէն աղաչեցութեամբն զարթուցեալ ամենեցուն երանելին՝ Աբրահամ անուն Ճանաչի : Ճշմարտին Աստուածոյ ուղղեկից լեալ՝ երթալ զհետ հրամանաց նորին Հնազանդեալ. առ որ բարբառ արձակեալ Աստուածոյ՝ երանել նմա 'ի հայրենեաց իւրոց. քանզի պատսպարանութեան զատանէ Աստուած խնդրականաց իւրոց :

Արդ. եղեալ Աբրահամեան 'ի հայրենեաց իւրոց, զհետ հրամանացն Աստուածոյ գնացեալ՝ հաւատարիմ վկայեցաւ. որ մեծ աւետեաց արժանի եղև Ճանաչել, զխնամս արարչին իւրոց կատարեալ. որ եղեալ՝ 'ի մէջ տասն ազգացն հեթանոսաց պանդխտեցաւ. ըստ

աստուածապաշտ առաքինութեանց բազում անգամ զհամբերութիւն յանձին իւր կրէր։

Այդ կերպ լցեալ նորա անձն խնդութեամբ և խնծ, երեւեալ Աստուած Աստուածահաճու և ուխտ նեզեալ խօսէր և վերանայր. զարձեալ հրեշտակօք երեւեալ 'ի Մամբրէ՝ զաղաբերգեալ զաւակին խոստացաւ. և զինքն որդին զալ մանել ընդ մարմնով, առնել մարմին 'ի զաւակէն Աբրահամու, և լինել որդի նորա, և ամենայն հաւատացելոց իւրոց լինել հայր արդարութեան, և նոյն հայեաց արդարոց զնա կացուցեալ։

Նա և մարմնաւորէս քակ զանձթիւ բազմութեանն զխոստումն զաւակին ընդունէր. որով Յանդապարհաւ խսկ միանգամայն ծանդագործ երկկին սոդոմայեցւոց խրատեալ կուրացելոցն, այս 'ի չհաւանելն՝ իջուցեալ կրակաբեր անձրեւս, և աստուածաստա բարկութեամբն համատօտ զատեալ։

Եւ յետ այսորիկ եղեալ կատարեալ Նմա խոստումն զաւակին, տուաւ Նմա որդի Իսահակ: Եւ դարձեալ երեւի Աստուած Աբրահամու, առ 'ի պատարագել զփորձական զողջն զԻսահակ, որով զաւետիս հանդերձելոցն ընկալաւ: Նոյն օրինակ և առ Իսահակ որդին Աբրահամու երեւեալ, զհայրենի զենքն Աստուած յուշ առնել:

Իսկ առ Յակոբ որդին Իսահակայ՝ եւս սքանչելագոյն սանդղաձև երկնաբերձ տեսլեամբ հանդերձ ամենայն Հրեշտակօք՝ Տէրն ծանուցեալ երեւի, երբեմն իբրև զայր մի տեսակագոյն, և երբեմն գիշերամարտ մենակախ․ բայց մարգարէն Հրեշտակ անէր: Զոր և կաղացուցեալ իսկ՝ աստուածասէս անուամբն Նշանակեալ մրձակէ, որ հանապազատես յեշատակ երեւեալ տեսան՝ յակոբեան զաւակին փայլեցէ:

Եւ այսպէս ընդելականն և մերձաւորագոյն յանձանէ զերեւելին,

մինչև հեթանոսաց թագաւորացն հնազանդեցի անօրէնացն՝ առ 'ի սպասաւորութիւն իւրոց ծառայութեան․ զորոց և պատմեսցէ իսկ, թէ կշտամբեաց զթագաւորս վասն նոցա՝ չմերձենալ յօծեալս․ յայս արարեալ թէ արդարև բանիւն Տեառն Յակոբ, և միջնորդ ժառանգութեան իւրոց Իսրայէլի ։

՚Որոց և զամենայն ժամանակս զհետ երթեալ օգնականութեան առնելով, որ հանել առնել բազմացուցանել զպատուէ նոցա ՚ի պաշտպանութեանն։ Զոր և յերկիրն եգիպտացւոց խնուցեալ զնոսա առ հօրն ՚ի բերանն սուրբն պատմասաւ, որ լինին ընդ հնոց նահապետաց յաբրահամեան զարքն՝ ամք իբրև չորեք հարիւր և երեսուն ։ Այլա անզգրէին անտանելին ըղբարձրացոյն զատուցելութեան նընոյ հաւ զմարգարէքն Աստուածոյ յերկիրն եգիպտացւոց․ զի գայր մի ՚ի բանտս արկանելոյ կողմանւոր հանելով մերացուցանել յայտնի արարեալ մարգարէականն ա-

րուեստին, տէր եպիսկոպոսացունց կացուցեալ։

ԻԹ. Յետ այսորիկ բազմացուցեալ ժողովուրդ իւր յերկրին եգիպտացւոց, և եւտես զնոսա նեղեալս 'ի նոցանէ։ Արդ եկեալ երեւեալ Տէր առ նա մորջ 'ի ժողովրդենէն եբրայեցւոց, ընդ որ կարգի համեալ և արժանի գտեալ աստուածայինն խորհրդոյն, որոյ անուն Մովսէս ճանաչէր։ Երեւեալ նմա 'ի Քորեբ լերինն բացանչան բորբոքեալ մորենոյն. ծանօթս առնեալ Մովսէսի 'ի հայրենեաց անուն, և զէական անունն իւր ճշմարտեալ՝ առաքել զնա յեգիպտոս. ընդ որում եդեալ ազդի ազդի հարուածովք տանջէր զեգիպտացիսն առ 'ի խրատ։

Եւ հանեալ զիսրայէլացիսն հովանացեալ ամպովն և սիւնաձեւ լուսովն և բոցագեղ հրոյն սպառնալեօք, հերձեալ զանդունդս զյս ծովախորս առաջանելով զեգիպտացիսն, և անցուցեալ զժողովուրդն հանէ յանապատ. զոր

և նշանաւորեալ վայելչացուցանէ ։ Տանի 'ի Քորեբ, և հանէ զնոսա 'ի լեառն Սինեայ . և անդ 'ի վեր 'ի սպիտակափառ լերինն ամպայարկ աստուածամուտ խորանն հարթեալ, յորում և գունդ սրբանմանձև ճառագայթաձևք, և մէգ և մառախուղ սրահամբաձև շուրջ զլերամբն պատանել . անդ բանակ բիւրաւոր Հրեշտակաց ։

Անդր այնուհետև կոչեցեալ զՄովսէս՝ յանդիմանն տանել աստուածակերպ տեսլեանն . որոյ և յատակագոյնս նկատեալ, յայտ առնէ պատուականագոյն ակն կապուտակագոյն ականակերպ ադամանդեան զուտ երկնագոյն չընջուն 'ի յայտնութեանն զպայծառ կապոյն և զծովային, և զլուսեղէն սփիւռ խառներանգ ճաճանչեղէնն . և 'ի փառաց անճառագայն շուրջ զնովաւ շուքն անէ լեռն զհուր բորբոքեալ ։

Արդ, որ անմահութիւն լոյս է, անմահութիւն լուր է, անմահութիւն տես է, անմահութիւն բան է, ամե-

նոյնպէս զօրութիւն է, ամենայնիւ իմաստութիւն է, հոգի կենդանի, հուր կիզելոյ, լոյս անմատոյց է, փառք անպատում, անճառելի աւետիք, անպատմելութիւն, երեւելի նոցա որոշակի նոցա կարապետն համբարձման նորա առաքելոցն: Յետ որոյ քահանայիցն հանդերձ ծերովքն ժողովեալս երեւէր. եւ ամենայն ժողովրդեանն երեւել յանդիմանն երեւէր 'ի տեսիլ 'ի հուր բորբոքեալ. 'ի չիփոր բարբառոյ տալ նոցա պատգամս պատուիրանաց՝ գրեալ 'ի քարեղէն տախտակս ձեռամբ Աստուծոյ. զի յօրինաց նորա երկիցեն, եւ զպատուիրանս նորա պահեսցեն: Եւ ասէ ցնա, Թէ զամ ես յամենայն յանդիմանն լինել իսրայէլացւոցն՝ խօսել ընդ քեզ, զի հաւատասցեն քեզ: Եւ երեւեցաւ կառօք քերովբէիւք, եւ սրբեն ամպովք եւ միգախառն հրով:

Իբրեւ ել նա երկեւցա անդամ կալտաւանն Տեառն, ասէր. Թէ զանի զխոսութիւնս 'ի քեն՝ երեւեցոյ ըղ-

քեզ ինձ, զի զխրատացիցս զանուանս քո-
քանզի ողորմութիւն զաւր ես 'ի
քեզ: Ասէ ցնա Տէր, Թէ ոչ կա-
րես տեսանել զերեսս իմ. զի ոչ
գոյ մարդ որ տեսանիցէ զիս, և
ապրի. բայց ահա զնեմ զքեզ 'ի
փապաղ վիմիդ, և անցուցանեմ առ-
քեւ զփառս իմ: Եւ եցոյց նմա,
զի գթած է և ողորմած. և երեւե-
ցաւ նմա խոնարհութեամբն, զի
նա մի մեռցի, և ապրեսցի և կեց-
ցէ: Որ և ամենայն ժողովրդեանն
երեւեալ յանդիմանն երեւէր. զորոց.
և զբարբառն առ հասարակ լը-
սեալ, մինչդեռ ընդ Մովսէսի բա-
նըս 'ի կիր արկեալ էր:

Եւ այսպէս երեկօթս առեալ
'ի լերինն աւուրս բազումս, և ա-
կանատես եղեալ, և զօրէն զհո-
գեմատեան գիւանին զնստանն ա-
ռարկեալ՝ ուսուցանէր զորդիսն
Իսրայէլի. որոց և պատուիրանս
իւրագիրս շնորհեալ, յորում և
զաշխարհապատուութեանն լինելն Մով-
սէսի տայր: Ցուցանէր և 'ի նմա-
նութիւնս ինչ անհասարակական խո-

բան. զոր ուսուցեալ Մովսէսի, և հանդերձ որդւովքն Իսրայէլի գործեաց խորան նիւթական ըստ օրինակի ցուցելոյն, որով բնակեսցէ Աստուած 'ի մէջ նոցա: Ցորում և հանապազախօս խոկ ընդ Մովսէսի եղեալ՝ բիւրապատմենկ օրինացն կարգելոց. և ընդ նոսին հանապազորդեալ յօթնեկամեայ անապատին, և ահաւորագոյն նշանագործութեամբք տարեալ հաւատացեալ 'ի խոստացեալն:

Եւ եղեալ ընդ նոսա յանապատի անդ, և շրջեցուցեալ զնոսա անդ ամս քառասուն. վասն զի մոռացուցէ նոցա զամբարշտութին զուցապաշտ քարապաշտութեանցն. զի թերևս կարասցեն ուսանել մի փարատել 'ի հեթանոսական սնոտի ուսմանցն՝ որ ներկեալ անմտութեամբ էին: Զի այսպէս ածեալ զմտաւ՝ թէ հանեալ զնոսա յերկրէն Եգիպտացւոց սովորութեամբ չարեացն, գուցէ ուսանիցի զնոսա՝ եւս լի չարեօքն զնոսա ուսուցեալ, առաւել ևս բազ-

բռնըլին 'ի չարիս • զոր օրինակ օգ-
զհուր մեսեսեալ՝ եւ չարաբաղդին հըր-
դեհ հաստատեցէ • այլ նախ քե-
րեացէ 'ի նոցանէ զազդն հնացեալ,
եւ ապա զնաւին խակ պղծալից աղ-
զայն քանանացւոց խլեա տա-
րեալ բարձցէ, եւ զնոսա անդ բնա-
կեցուսցէ :

Վասն այնորիկ ասեալ չըշե-
ցուցեալ զնոսա ընդ ամենայնան՝
թշնամանս 'ի լերինս լինելով, եւ
ազգի ազգի նշանօք եւ արուես-
տիւք 'ի ձեռն Մովսէսի զգաւազանին
արքայահաւատեան հրահանգէր : Երկ-
նաւոր հացիւն մանանայիւն քաղ-
ցրութեամբ զնոսա կերակրէր •
Ջուր 'ի վիմէ բղխեալ 'ի ծարաւուն
վտանգս հովացուցանէր • եւ լուսա-
մերդի անհղացեալ զժամանակօքն,
զփափաքմանն հարեալ լուցանէր :

Որ անդէն խակ բարկացուցեալ
եւ զայրացուցեալ զարարիչն որ-
նդենգեանք ստամբութեանք չարին,
փոխանակ բարերարին Աստու-
ծոյ՝ որթ կանգնեալ Աստուած
անուն եդեալ՝ եւ փրկիչ կարգա-

յմին. վասն որոյ բարկութեան 'ի վերայ նոցա եկեալ՝ սատակեաց անթիւ զօրս բազմութեան 'ի ժողովրդենէ անտի. վասն որոյ հրամայն եղանէր՝ չմտանել յերկիրն խոստացեալ: Արդ անկանն սատակեցանն ամենեքեան առ հասարակ յանապատի անդ, այղգն անօրէն դառնացողաց որդւոցն Իսրայէլի:

Եւ մեծ մարգարէն Մովսէս հրամանաւ Աստուծոյ ելեալ 'ի լեառն, և անդ մեռանէր. որ մինչև ցայսօր զգերեզմանն նորա ոչ ոք գիտել կարաց: Եւ սերնդեալքն բազմացեալն յանապատին, որ ոչ գիտէին ամենեւին զչարին զարնունգ ինչ մեղաց:

Ն. Արդ 'ի վերայ նոցա այր մի ընտրէր, 'ի ձեռանէ Մովսէսի հրամանաւ Աստուծոյ, զօրավար և առաջնորդ կացուցեալ, որոյ Յեսու անուն ձայնաչէր. որ առեալ յանապատէն զաբրահամեան զաւակն զորդիսն Իսրայէլի, խաղացցնեաց 'ի խոստացեալ երկիրն. խլեաց քակեաց ազգս եւթն յամէ

բարշառայն, և զնոսա ածեալ բնա-
կեցոյց: Ուր և անդի երեւեցու-
ցեալ՝ նախ յանուն Տեառն ստա-
ճար չքնեցին. և յայտ էր 'ի հրա-
մանէ Աստուծոյ, անդ միայն իշ-
խել մատուցանել նմա զողջա-
կէզսն պատարագաց, ուր բնա-
կեալ էր Աստուած 'ի մէջ մարդ-
կան: Եւ անդ յարուցեալ նոցա
դատաւորս, որք ըստ Աստուծոյ
կամացն դատէին զնոսա, որ և լի
էին հոգւովն մարգարէութեան.
և էր զի անամէջս արարեալ նո-
ցա, կերև մեռանէին դատաւորքն՝
դարձեալ ամբարշտեալ յԱստու-
ծոյ՝ դէց պաշտօն առնէին, և պատ-
կերաց երկիր պագանէին: Վասն
որոյ անդրէն մատնեալ զնոսա 'ի
ձեռս օտար ազգաց և հեթանոս
թագաւորաց, խրատէր զնոսա:

Յետ այսորիկ ինքեանք իսկ
խնդրեցին յԱստուծոյ թագաւո-
րըս, և ետ նոցա: Յորոց միջէ յա-
րոյց զԴաւիթ՝ որ լի էր հոգւով
սրբով, որում վկայեաց եւս, թէ
գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր

ըստ սրտի իմում, որ արասցէ և կատարեսցէ զամենայն զկամս իմ. և կանգնեսցէ նա զաթոռ նորա, և զաթոռ զաւակի նորա:

ԼԱ. Եւ ապա դարձեալ՝ էր տեսանել 'ի պարգեւական երկրին գունդս գունդս մարգարէականս. որք և տեսանողք կոչէին՝ վասն աստուածակերպ յայտնութեանցն պատահելոյ: Որք և բարձրագոյն պատմէին խորայեղականն առհմէն ըստ իւրաքանչիւր կարգի. որպէս և արքայն Դաւիթ զհամաշխարհական տէրութիւն երգեաց, թէ Տէր Տէր մեր՝ զի՛ սքանչելի է անուն քո յամենայն երկիր:

Զի որում կառօք տեսեալ՝ իբրև զօրավար պայծառագոյն, և որում իբրև զայր մի 'ի զատողական աթոռ զատաւոր, իբրև զորդի մարդոյ ընդ ամպս երկնից եկեալ զհին աւուրցն տեսանէ. իսկ այլ ումն իբրև զայր մի 'ի մերայ սեղանոյ. զոր և ասէր իսկ, թէ տեսի զՏէր՝ զի կայր 'ի վերայ

սեղանոյ ։ Տեսանեմս զի թէպէտ և այր տեսանի՝ Տէր ճանաչի ։

Եւ միւս ոմն ևս սքանչելակերպ, թէ տեսի զՏէր 'ի վերայ աթոռոյ բարձրացելոյ, և վեցթեւեանն սրովբէադասունք շուրջ ըզ-Տէրամբն. ուսանի և զամենայն աստուածեղէն իմանալ. որպէս և Աստուծոյ իսկ առ Աբրահամ անհամար և յաճախագոյն տեսիլս երեւեալ, և ամենայն զաւակին նորա ։ Զոր և ասէ իսկ մարգարէն 'ի Տեառնէ, թէ ես 'ի տեսիլս յաճախեցի, և 'ի ձեռն մարգարէից նմանեցայ ։

Որ 'ի բաժանեալն ազգացն և 'ի խառնակեալ լեզուացն և 'ի ցանկալ որդւոցն Ադամայ, կարգեաց սահմանս ըստ թուոյ Հրեշտակաց Աստուծոյ ։ Որպէս և Հրեշտակացն իսկ ինքնապատում արարեալ ցանկալւոյն Դանիէլի զիւրաքանչիւր սահմանաց. զոր և բարերարէն Աստուծոյ հարկանելով, 'ի բարկութեան զողորմութիւնս յիշել. զի 'ի պղծագործութեան այսացն և

'ի պատերազմական գիւտացն՝ աս-
տուածակարգ անսուշահոտ ողջ-
քըն՝ զօրզգս մարդկան աններկեալ
պահեսցեն, առ 'ի յարդարելոյ
'ի գիտութիւն աստուածամերձ։
Զոր և երանելոյն Դաւթայ զչափ
առնել պատմէր, թէ բանակք
Հրեշտակաց Տեառն շուրջ է զեր-
կիւղածովք իւրովք, և պահէ
զնոսա։ Եւ մեծն Յակոբ, թէ
Հրեշտակն որ պահէր զիս 'ի մանկ-
կութենէ իմմէ։ Եւ ամենատեսն,
թէ Հրեշտակ իմ երթիցէ առաջի
քոյ՝ պատրաստել զճանապարհս
քո։ Որոյ պահպանութիւն առ 'ի
ծանօթ առնելոյ աստուածամերձ
գիտութեանն զմտաւանական ազգ-
ացն բաժանելոյ՝ զանկելոյն յե-
րկնից Աստուծոյ, զի թերևս ե-
րևելի արարածովքս՝ ծանօթք
աներևոյթք Աստուծոյ լիցին։
Զի արար 'ի միոջէ արենէ զա-
մենայն ազգս մարդկան՝ բնա-
կել 'ի վերայ երեսաց երկրի. և
հաստատեաց կարգեալ ժամա-
նակս և սահմանադրութիւն բնա-

Digitized by Google

կութեան նորա՝ խոնարհել զԱս-
տուած . զի Թերեւս զմնացեալն զնոսա
և զառանձինսն . զի անհերքելի Թք նա-
րա 'ի սեղղանանէ աշխարհէն՝ յարա-
րածոցս խնայեսցէ անսասանելին . զի
Տէրն ապաշխարողաց խոցոց մեր-
ձաւոր է : Նոյն զօրինակ 'ի Տեառնէ
են անմեղացն պահպանութիւնք .
զի ուր Տէրն է , անդ անմեղացն բա-
նակք հրեշտակացն են . որպէս
և հայրապետացն Յակոբայ՝ ըստ
յայտնութեանցն երկրորդին առ նա՝
միջամտապահացն խնկ 'ի միջի լինելոյ
հրեշտակականխուռնբանակաց . քանզի
զի կարգեալ են Հրեշտակքն ըստ
նմանութեանցն առ 'ի պատարա-
գութեանն մարդկան կենաց
մարդկանիցն Աստուծոյ որ առա-
ջնորդութեանն սերովբէիւքն խնա-
մողքն է :

Քանզի ոչ եթէ մարդկայինս
Թուականք , այլ ըստ նմանու-
Թեան Թուականք . որք երկինք
բնաւ խակ ստորակարգոյն երկրէս զննա-
զննել Հրեշտակքն երկնաւորք : Քանզի
զի առ Աբրահամու և Ղովտայ

մարդկօրէն խակ զարմանալ. և
առ Դամասկիոս՝ խորհ զայր մի ե-
րևելեաւ. նոյնպէս առ Գէորգեանոս՝
Թաւմաքրաղութեան աւետարանի. խակ Զա-
քարիա՝ հեծեալ 'ի միջ լերանց
եռնեա, և Յեսու՝ քնաւ խորհե ըղ-
մարդ. յանկարծոյն, որում և յա-
նտրեկխուղա հարցանէր. Ի մէ՞նչ ի-
ցես, եթէ 'ի Թշնամեաց մերոց.
և ապա անդրեկացեալ եթէ զօրա-
վար է զօրացն Աստուծոյ, ան-
կեալ երկիր պագանէր: Եւ նոյն
օրինակ ամենայն հրեշտակաե-
ացն:

Ճշմարտագոյն համարիմք այ-
սուհետև զհոգեկան, աղգին զա-
մենայն մարդակերպ նմանութիւն
առ մարդկի եղեալ՝ առ 'ի պատա-
զամանութիւն տպաւորու-
թեան հրամանացն Աստուծոյ կա-
մաց մարդասիրին Աստուծոյ, առ
'ի պաշտօն ժամանակաց բառ ի-
րաց խրաց խնչ ընծայելոյ, և ոչ
համառապարականք զնոյն նմանու-
Թիւն յանձին պահելոյ: Զորոց
զանազանբրականն անձինս մարդա-

ընծայուածովն, թէ առաւել զհրեշ-
տակս իսկ հաղթես, և զպատշաճա-
նեայս իսկ 'ի բաց հերքեայ · զի հողեղէ-
են հարկաւորք՝ որք տառապին 'ի
ապաստանաւորութիւն ժառանգաւո-
րացն փրկութեան ։

Վասն այնորիկ և անհնարաւոր
եղելոյ Մովսէսի, զի մի ընդ անհրա-
զայ տարապանօք հողեղէն մտաւորք ·
և բանաւորք համարեսցին · այլ
ծառայական ապաստանաւորութիւն-
ինքեանք բարձեալ ընկեցցեն ըղ-
հրամանս մեծութեանց փառացն
Աստուծոյ ։ Բայց վասն առաքեալ
բնութեանն նոցա՝ անհպաւոր 'ի վե-
րուստ մարդարէքն բարձրագոյն-
գոյէքն, թէ առաւել զհրեշտակս
իսկ հաղթես ։ Եւ միւսն, թէ եւ-
եմ տէր Աստուած որ հաստա-
տեցի զերկինս և զերկիր, որոյ
ձեռք հաստատեցին զամենայն զօ-
րըս երկնից · բայց եթէ էին առա-
ջաւորք, առաջս երեւելիքն և ոչ ա-
ներեւոյթք · և առ հասարակ, և
ոչ՝ ումեք երեւեալ ։ Իսկ եթէ ա-
ռաքելոցն այսպիսիք, որոց ծրջանք եւ-

առաւել բարձրագոյն անարատ և անխառնոյց աներևոյթ բնութեան էականին Աստուծոյ իմանալեաց :

Որոյ ամենայն աստուածատես կատարելոցն միաբանես մարդահասակ նմանութեամբ. երեւեալ ըստ իւրաքանչիւր ժամանակի, որ 'ի բարբառոյն և 'ի հրամանացն ձայնալից՝ եթէ մարդակերպ երեւեալ: Քանզի և ընդ. մարդկան խօսէր, վասն հրաւիրելոյ 'ի տեսիլ բարեացն խոստացելոց, և ոչ մշտնջենաւոր գծոյն նմանութեան յանձին պահելոյ: Այլ նա բաւական է նմանութեամբն Ճշմարտութիւն ցուցանել, որում ամենայն դժուարինք դիւրինք են, և անհնարինքն հնարաւոր, կարող է ամենայնի, և ակնարկանաւ նման և ոչ ինչ: Զօրէ և անսանողքն բարձրաձայն հնչելին. զի 'ի չափաւոր յայտնութեցն զանչափականն աներեւոյթն ձայնաչելին. և ամենայն տեսլեանքն՝ դէմական զօրութեանն զիտելին ըստ կարի խորեանց :

Զօր և հայրապետին Աբրա-
համու՝ ունէր և զօրաւոր ամենայն
երկրին կոչէր. և մեծն Մովսէս՝
խօսեցան Աստուած և արարիչ ա-
մենեցուն. որում և ցանկացեալ
էր զերաւանն տեսանելոյ, զի ամե-
նայն իսկ մարդկութեան տեսանողք
էին: Որո՝ թէ Տէր Տէր առաքելոյ
զիս և Հոգի նորա. և թէ՝ ըստ բերան
Տեառն խօսեցաւ զայս: Ապաքէն
որ 'ի բերանոյն լսէր, և կերպա-
րանացն անկանանելս լինէր: Եւ
ոմն աղաղաքաանս 'մատուցեալ ա-
սէր. Տէր Տէր, ահաւասիկ խօ-
սել իսկ ոչ գիտեմ՝ զի մանուկ
եմ ես. տեսանեմս աւասիկ զպատ-
գամանն ցուցանէ: Եւ ամենայն
իսկ հրամանատարութեանն՝ երբեւ յերե-
ւաց Տեառն երեւեալ բարձրաբար-
բառ ընդհանուր աղաղակէին,
ոմն՝ թէ սաստ Տէր զօրութեանց,
և ոմն՝ թէ սաստ Տէր ամենակալ:
Իսկ ամենակալն բարբառոյն մի-
անգամայն իսկ ձայնեցին՝ որով ա-
սէին, թէ ոչ արարացէ Աստուած
երա ինչ, եթէ ոչ յայտնեսցէ ըղ-

Digitized by Google

խրատան ծառայից իւրոց մարգա-
րէից :

ԼԲ. Իսկ արդ յայտնի է այ-սուհետեւ առաջնորդելովքս, թէ եւ նա-խատակեցն մարգարէին զնոյն նմա-նութիւն երեւեալ ՚ի սկզբանն. որպէս եւ առ յառաջ ամենայն աստուածածանօթս կատարելոցն ըն-նոյն պատահեալ՝ զի մի օտարագոյն թուի եւ անծանօթ կերպարանաց զաւետաղան հարթութեանցն է : Մա-նաւանդ թէ առաւել լուսաւորագոյն, զի յաստուածածանօթս հօրէն՝ որդ-ւոյն տեղեկացեալ, զի բարձրագոյն պատարագաւորացն երկրէ ընդդիմակա-նի. եւ զլուսեալն ոսկեկամն, եւ ա-կամք եւս նկատեալ : Որպէս եւ ե-րանելոյն Յովբ՝ մերձելոյն Աստուա-ծոյ՝ առնէր ց Աստուած, թէ ՚ի լուր ականջաց լսէի զքեզ յառաջա-գոյն, բայց արդ եւ ակն իմ տեսանէ զքեզ. ցոր եւ առնէր խօսք Աստուած. Գնդեա իբրեւ այր զմէջ քո, եւ մի համարիցիր այլազգ քեզ երեւեալ-քեզ :

Քանզի եւ ՚ի սկզբանն ըստ արդե-

ցութեանն երեւելոյ Աստուած : զոր և ասեն, եթէ ըստ պատկերի Աստուածոյ արար զմարդն : Եւ ամենայն յաւիտենից ըստ նմին նմանութեան Աստուած փառաց երեւելոյ, զոր և ասեն վկայն Սամե- փոնա, թէ Աստուած փառաց երեւեցաւ Հօր մերում Աբրահամու . և ամենեկեան Տէր Սաբաւովթ, և Աստուած ամենակալ կոչեն :

Եւ արդ զերեւելին Աստուածոյ ըստ նմանութեան մարդկան, ապացէն ըստ կարողութեան անսողացն խոնարհեալ է . և ոչ եթէ անչափականութեան բնութիւնն Աստուածոյ՝ սահմանաւորութեայց և կողմնափակ լինի, և երբեք երբեք յաբնակայական սահմանաց յայլ սահմանս երեւելոյ գոյցէ, որով լի է ամենայն : Այլ զիմանալովն և հնարաւորութեամբ ընդելեցուցանէր նմանութեանն . զի մերձաւորս և աստուածանմանս և յանկզիմանանաւ Ճշմարիտ կերպարանացն պատարագանեցէ . քանզի

'ի նմանութեանն ապացուցէն ըմբռնի Ճշմարտութիւն խնդրելի։

Որում և մեծն Մովսէս ցանկացեալ հայէր. զի թէպէտ ձեռն 'ի ձեռն և բերան 'ի բերան յանդիմանախօս ընդ Աստուծոյ ճանաչէր Մովսէս, սակայն ճշմարիտ զերդոյն ցանկայր տեսանել տեսով զԱստուած՝ թէ ցոյց ինձ զանձն քո։ Եւ արդ տես զպատասխանին. թէ ոչ գոյ մարդ որ տեսանիցէ զԱստուած և կեցցէ. և այսպէս սակաւիկ ինչ նշանակաւ նուաճեալ զհայցուածն, և զընտանականն անհերեւոյթ պահեալ։

Տեսանեմք, զի անտեսականն և 'ի տեսողացն, և անքննականն 'ի քննողաց ըստ անձնականն կերպարանացն. քանզի ոչ եթէ կերպարանք ինչ սաբբրականք իցեն նմանութեանն, այլ սաստկագոյն տեսիլ. իսկ ճշմարտութեան՝ բնութեան գոյականն։ Քանզի և Մովսէսի նմանութեան օրինականն սարբականն խորանին ցուցաւ, ըստ որում կազմեաց խորանն նմանութ-

կան. և Եզեկիելի տաճար՝ օրի-նակ տաճարի: Նոյնպէս և առա-ջինն մարդոյն նմանութիւնն աննմանար-րականն մարդկակերպ երեւեալ Աստուծոյ, զի արարացէ մարդատար-րականն ՚ի նորութիւն՝ մերձաւոր ճըշ-մարտութեան: Քանզի Աստուած անհաղորդական բարերարութեամբ իւրով կարգեաց առաջինն մար-դոյն՝ մերձաւոր և աստուածա-մուխ լինել աստուածական վա-յելչութեան:

Եւ մի ըստ միոջէ առաստաղայն Հոգւոյն Աստուծոյ հեղեալ ՚ի մե-րոյ զաստատաղաս զուռնդազունդ սըր-բոց մարգարէիցն ՚ի մէջ խորայե-ճական առհմին, որք ըստ կամացն Աստուծոյ պատուիրեցին իւրեանց ազգացն՝ պահել զպաշտութիւն հրամանացն Աստուծոյ. որ ազգ-եսին ընտիր, և պատուէր առին չմերձենալ և չխառնակել յայ-լազգիս, ՚ի տոհմն հեթանոսաց, զի մի եւս ուսցին զմեղս նոցա:

Իսկ նոցա խառնակեալ թա-թաւեալ խնամութեամբ ընդ նո-

նա, առ ին ուսման զանաստուած-պաշտութիւնն նոցա. Թագաւո-րացն և իշխանացն խոստովանեցուցան: Վասն որոյ արտաքուստ եղեալ մտաւ-դարբէին զոչէր, թէ խոստովանեցուցան ընդ հեթանոսս և ուսման դպրու-թեան նոցա. ծառայեցին կռոց նո-ցա, և եղև նոցա 'ի գայթակղու-թիւն, և թէ զոհեցին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց, և հեղին արիւն անմեղ, արիւն ուս-տերաց և դստերաց նոցա զոր զո-հեցին կռոցն Քանանու:

ԼԳ. Արդ ածէր Աստուած 'ի ժամանակի զի հարկանէր զերկի-րըն եգիպտացւոց՝ զի հանցէ զնո-սա անտի, կոտորեաց զամենայն անդրանիկս եգիպտացւոց, և փըր-կեաց զնոսա անտի. վասն որոյ եղեալ ուխտ ընդ հարս նոցա՝ նուիրել զորդիս իւրեանց անդրա-նիկս առաջն Աստուծոյ իւրեանց: Փոխանակ այսորիկ առնել զոր-դիս և զդստերս իւրեանց՝ դիւացն հեթանոսաց զոհեցին, բազմիցս չի-նեալ յերկիրն՝ զոր ածէր Աս-

տուեալ իւր ամենատեսանելւոյն մեծանայ մատուցանողութեան. կոչէր. Նոցա պատուիրէր կանխագիտելով փոփոխմանէ Նոցա՝ քարոզեաց և փոխարկեաց երկիր պատուիրանէքն. և շողոքորթեալ երկիր յարկենէն, որ պարանոցելով 'ի գլխոյն՝ յաճախութեամբ և զօրութեանցն մարմնոյ. փոխան որոյ պարանոցելով 'ի գլխոյս իւրեանց:

Զի 'ի մտանելն Նոցա յերկիրն զոր ետ Նոցա, հրամայեաց ընկենուլ զանօրէնն զազգսն որ էին յերկրին. զոր ոչ սատակեցին, այլ զառնեա-ւոր եղեալ՝ ուսեալ հաստատեցաւ ընդ ազգսն անօրէնս, ընդ որում և միաբանեալ ծառայեցին զամսլ բարբարոսութեան: Զի Աստուած փոխան չարեաց իւրեանց եհան զնոսա ընտանեաց երկրէն 'ի ընդանա-թենէ անդ: Իսկ Նոցա մտեալ գնույն գործ միաբանութեամբ գործել սկսան իւրեանց Թագա-ւորացն և իշխանացն և քահանա-յիցն հանդերձ:

Վասն որոյ ասեալ Աստուծոյ յառաջագոյն զԹոյ մարգարէութեան

խորոյ՝ տուողեալ առ նոսա մարգարէս առաքանելեաց պատուիրանաց՝ զի դարձուսցեն յանօրէնութեան գործոց խորհրդոց, և պաշտեցուսցեն զԱստուած զարարիչն ամենայնի. որ վասն խորոյ մարդասիրութեանն զթացեալ ողորմէր ՚ի մերոյ չարութեան նոցա։ Որ մարգարէիւն սպառնայր զնոցանէ, թէ փոխարէն ատեցին հայր իմ՝ եւս զնա, և քարին ատեցին՝ թէ քո խօսք ծնեալ է զմեզ. և դարձուցին յիւ զթիկունս, և ոչ զերեսս խորհրդոց։

Այսպ. չար և անհնար ազգքն կուրացելոցն յարուցեալ ՚ի մերոյ մարգարէիցն՝ ՚ի քարկոծել և ՚ի սղոցահատանել. և այնչափ կատարելզնոսա, մինչև աղաղակել մարգարէին մեծի, թէ ես միայն մնացի։ Եւ առաքեալ զՄարգարէն առ սուրբս անուանն, կարդալ սուտ և ընդվզեալբանհայր քերթողն։

Նա և աստուածառաքս մարգարէքն Ճշմարիտքն, որք Ճշմարտութեամբ պատմեցին նոցա զգալուստ Ճշմարիտ որդւոյն Աստու-

ծոյ յաւիտենից՝ մարմնաւորութե-
թեամբ հանդերձ, որ զաստուածա-
ցող ազգին՝ և զայն չկամեցեալ
լսել: Վասն որոյ եւ աստուածն 'ի
վերայ նոցա զմահ զօրացուցեալ,
զի և մի ոք ոչ մնացեալ՝ զոր ոչ
ապականեաց ակնարկեալ առանձնանոք:

ԼԴ. Վասն որոյ բարկացեալ
առաւել Աստուածոյ 'ի վերայ ժո-
ղովրդեանն՝ պաշտէին առնէր ըն-
ժառանգութիւնն, մատնեալ ըն-
նոսա 'ի ձեռս հեթանոսաց. զի
զորոց սիրեցին պաշտել զգլխոն և
'ի նոսին պատժեսցէ, զնոսին
առանձինս և թշնամիս և զերէքս 'ի
վերայ յարուցեալ՝ մատնեաց 'ի
ձեռս նոցա. որպէս և ասէն, թէ
մատնեցից զնոսա 'ի ձեռս հրոմա-
նեաց իշխանաց հեթանոսաց; և
աւերել նոցա աստեղեացն, և թըշ-
նամեացն նեղել զնոսա, խոնար-
հեցուցեալ զնոսա 'ի ներքոյ ձե-
ռաց նոցա: Զի թէ և բազում
անգամ փրկեաց զնոսա 'ի ձեռաց
նեղչացն, սակայն յետ երանե-
լոյն 'ի ներգործութեանն՝ 'ի նոյն յա-

ճախեցին. զառանցացուցին զԱստուած 'ի խորհուրդս խուժանաց, և կուրացան յանօրէնութեան խուժանաց:

Յանկայն հայեցաւ Տէր 'ի նեղութիւնս նոցա՝ 'ի լսել զձայն աղօթից նոցա. յիշեաց զուխտն որ ընդ հարսն էր, և գթացեալ ըստ բազում ողորմութեանն իւրում, և ետ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա: Փրկեաց զնոսա Տէր Աստուած, և ժողովեաց 'ի հեթանոսաց. դարձուցեալ զնոսա 'ի գերութենէն յետ ամացն եւթանասնից, յերկրէն Բաբելոնի, 'ի կողմանցն ասորեստանի: Շինեաց զաւերակսն Երրուսաղէմի, և նորոգեաց զտաճարանուանն իւրոյ. ետ զմարգարէութիւն, և դարձոյց զքահանայութիւն, և նորոգեաց միւսանգամ վերստին զամենայն. և անդէն 'ի սկզբանն ընծայեցոյց, զոր յետ անցելոց յաւիտենից կատարեաց Միածնաւն իւրով:

Զի ոչ եթէ յետոյ խորհեցաւ

անմեղադրելին՝ զայս երևել Որդւոյն յաշխարհ, և բարձրացուցանել զմարդիկ 'ի փառս աստուածութեան, այլ ըստ յառաջադրութեան 'ի սկզբանն՝ կատարելոց 'ի վախճանին: Զի խորհրդական ծածկեալ առ Աստուած յաղագացն և յաւիտենանցն, այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց. քանզի նմանութեմբ երևեցաւ ամենայնիւ արդարացին՝ պաշտելոց Ճշմարտութեանն յաւիտենականին՝ որ պարգևն էր՝ լինելին:

ԼԶ. Զի բաղդատել մասնաւորս և բաղդատել օրինակաց՝ կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք. 'ի վախճանն աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանս արար. որ է լոյս փառաց և նկարագիր էութեան նորա. որ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ իւրով:

Տեսանեմս զմասունս և զօրէնակն և զմարգարէսն յանձախա-

դոյն, և Աստուած մի՝ որ վասն մեզ մարմնացելոյն խաչելոյ խոստանէր: Ասաց մարգարէն 'ի դիմաց Տեառն, թէ Ես եմ Աստուած, և չիք այլ ոք բաց յինէն, որ պատմեսցէ յառաջագոյն զվերջինսն մինչ չև եղեալ իցեն, և միանգամայն կատարեսցին. զի զխորհուրդն անցեալ 'ի ժամանակաց, և յառանեալ մարգարէականն գրովք, վասըն միայնոյն խնամատարոյն Աստուծոյ գիտակէր :

Իսկ յորժամ՝ լինէր եկեալ փրրկիչն Որդին Աստուծոյ՝ յայտնեաց առ աշակերտսն. զի երանի է, ասէ, աչաց ձերոց՝ զոր տեսանէքդ, և ականջաց ձերոց՝ զոր լսէքդ. զի բազում մարգարէք և արդարք և թագաւորք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան :

Տեսանես զի աղջեցուցիչք էին նմանութիւնք Աշխարհիս կերպարանացն Քրիստոսի. և վայրկենին նմանութիւնքն՝ 'ի մշտնջենաւորս կերպարանաց. փութային հաստա-

նել։ Զոր և օրէնքն մոլեխառնադրեալ ամենայն իրաց դհամեմատելով մեծերոյն նը-շանակեալ փոյթէին։

Քանզի իբրև եանես Աստուած զհամաշխարհահայրն զմեղջն ատա-րանձեալ, և որով մահն թագաւո-րեալ՝ առ համապարծ կլաներ յԱ-դամայ մինչև ՚ի Մովսէս, և ՚ի մտ-ռացօնս զարձմուցեալ զկենդա-ներ առևտրոն յառաջնայղեալ, որ-պէս հուր ինչ մոլեկան հրդեհի՝ որ աւերականեցէ զերկրինս և զդա-տըս; արձակեալ այնուհետև ՚ի նեղըքս զօրէնան իբրև զհեղեղատ սաստիկ՝ ընթացանել զայն համա-տարած։ Վասն որոյ և առէքն, թէ ամենայն որ արարացէ զայս՝ կեցցէ ՚ի սոսին. զի որպէս Ադամայ՝ զի թէ յանցանեցէ ՚ի ծառոյն՝ մահ ապառանեցաւ, ուստի թագաւո-րեաց մահ, նոյնպէս և զօրինացն ասաց, թէ որ արարացէ զայս՝ կեց-ցէ ՚ի սոսին, որով և շիջաւ մահ։

Քանզի և օրէնքն իսկ ստուե-րագիր յօրինակատարին Քրիս-տոսի՝ կրպուածին զմահ. որով և յայս

խոկ աղաղակեալ զծածկեալ զմեղ-
ացն, և 'ի համար արկեալ, և ըստ
իւրաքանչիւր յանցանաց մահաբե-
պատժեցեալ: Նա տկարացու-
ցեալ զամենեսին, և փակեալ
ընդ անիծիւք և ընդ մեղօք. զի
յորժամ եկեալ բանն Աստուծոյ ամե-
նափրկչէն Քրիստոս զմեղս անձ-
ծառայս և մահուածոյս, ասացեն
աղաւաղեալքն, թէ շնորհօք նմա՝ որ
յայնչափ մահուց փրկեաց զմեզ:
Որ յայս ասէ, թէ օրէնքն
Քրիստոսի միայքն. աւետիքն, թէ
օրէնքն յանցուածոց վասն յաւե-
լան, մինչև եկեսցէ զաւակն՝ ո-
րում խոստացեալ էր, կարգեալ
Հրեշտակօք 'ի ձեռն միջնորդի:
Քանզի ընդ օրինօքն ասէ փակեալ
պահէաք 'ի հանդերձեալն հայտե-
ցեալ. որում ոչ միայն ազգ երե-
բածնաց, այլ և աներևոյթ զօրք
Հրեշտակաց՝ հանդերձ ամենայն
անեղծայ արարածովքս սպասեալ
ձեռայքն. ըստ այնմ թէ Անեկա-
լութիւն արարածոց յայտնու-
թեան Որդւոյն Աստուծոյ սպաս-

Digitized by Google

նէ. զի ընդունայնութեան արա-
րածք հնազանդեցան, ոչ իւ-
րեանց կամաւ, այլ վասն այնորիկ
որ հնազանդեցոյցն յուսով. զի և
ինքեանք իսկ արարածքն ազա-
տեսցին 'ի ծառայութենէ ապա-
կանութեան՝ յազատութիւն փառ-
աց Որդւոյն Աստուծոյ:

Քանզի յորժամ Ադամ՝ որ ըստ
պատկերին Աստուծոյ արարաւ,
և ամենայն զաւակ նորա՝ որ որ-
դիք Աստուծոյ կոչեցան, կամեցան
իւրեանց զապականութիւն ժա-
ռանգեցին, ընդ նոսին և ամենայն
արարածք հնազանդեցան ապա-
կանեցան. ոչ իւրեանց կամաւ,
այլ վասն առաջնորդութեան կա-
մացն Աստուծոյ առ 'ի Քրիստոս
ազատելոյ: Քանզի և որ 'միան-
գամ՝ 'ի վայելչութիւն և 'ի փառս
մարդոյն հաստատեցան, ապա-
կանեալք և անարգեալք վասն նո-
րին բարկութեամբ: Քանզի եր-
կինք անիծեալ և փշաբեր, հեղե-
ղեալ և հրայրեաց, շարժահիմն
յողդողդեալ, եւ օդք ապականեալք,

ընդ ժամանակս ժամանակս. և լուսաւորք խաւարամած՝ և արիւնանշանք, և երկինք այլայլութեամբ. որպէս ՚ի գրոց մարգարէականաց զանցելոցն է նշանակեալ. զոր և նոյն իսկ մարգարէքն յազգականացն կրէին յանձինս իւրեանց: Զի թէպէտ և յԱստուծոյ պատուեալք առաքէին, սակայն ՚ի չընդունելեացն թշնամանեալք և քարկոծեալք. որպէս և ամենատեսն ասաց, թէ վասն ձեր կոտորեցին զմարգարէսն բանիւ բերանոյ իմոյ:

Նոյնպէս և Հրեշտակք պատգամաւորեալք առ ազգս մարդկան, անարգեալք և արտաքսեալք ՚ի չընդունելեացն զատանային. որպէս և առ Ղովտ եկելովքն Հրեշտակօքն պատեհագոյն է և զայլոցն իմանալ: Քանզի եթէ զարձելոյ մեղաւորի՝ ամենայն Հրեշտակաց ուրախութիւն բերէ, ո՞րչափ ապստամբութիւնն՝ ամենեցուն տրտմութիւն գործիցէ. որով և անունն Աստուծոյ հայհո-

յերայ տան, և հոգւոյն սուրբ արբա-
մեցուցեալ: Այլ թէպէտ և այն-
պէս նեղութիւնականք ամենայն
արարածքն ընդունայնութեան
ծառայէին, սակայն առաջի եղե-
լոյն ապաւինեցուցիչ յուսոյն ամե-
նեքեան սպասէին, հրճուանօք և
մարգարէք և ամենայն արա-
րածք: Զի ոմն ասէր. Ի պահու-
թեան կացից՝ և ելից ՚ի վերայ
վիմին և ակն կալայց. և միւսն՝
թէ ես Տեառն ակն կալայց և ըս-
պասեցից Աստուծոյ փրկչին ի-
մոյ. և ոմն՝ թէ ո՞ տացէ ՚ի Սիովնէ
զփրկութիւն Իսրայէլի:

ԼԶ. Իսկ ընդէ՞ր արդեօք յեր-
կարեալ Միածնին, այնչափ նե-
ղութիւն արարածոցն հասուցա-
նէր. եթէ ոչ՝ զի նախ արդ արա-
րեալ յառաջագոյն ընդունականս
առնիցէ. զի մի յանկարծ ե-
րեւեալ անծանօթն՝ անընկալ
լինիցի. այլ երբեմն հայցողաց և
սպասողաց՝ եկեալ ծանօթս տայ-
ցէ: Զի եթէ յայնչափ ժամա-
նակաց առ իւր արարեալսն ե-

կեալ՝ անպղծական եղեւ, որչափ եւս ոչ աղաղակեցելոցն . այլ կանոնաւորեալ խորհրդով ծանօթս առաքեալ ամենայն ազգացն եւ յաւիտենականացն :

Որպէս ասեն 'ի պատմագրութեաբանցն Աստուածոյ ասէ, թէ ինձ տուաւ շնորհքս այս՝ 'ի հեթանոսս աւետարանել զանքննելի մեծութիւնն Քրիստոսի . եւ լուսաւոր առնել զամենեսեան, թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյ՝ որ ծածկեալն էր յամենայն յաւիտենից առ Աստուածոյ՝ որ զամենայն ինչ արարող . զի յայտնեսցի այժմ իշխանութեանց եւ պետութեանց որ 'ի յերկինս են՝ 'ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Աստուածոյ, ըստ յառաջադրութեան յաւիտենիցն՝ զոր արար առաքելովք մերով Յիսուսիւ Քրիստոսիւ . որոյ եւ վկայեն նարենք յայտս առաքելեալ, թէ կոչեցեն զբազումս ժառանգակիցս :

Իսկ ո՞վ այն էր 'ի մարգարէականն՝ որ կարող էր այնպիսի մարգարէութեան զաստուածութեանն

Ճշգրտել խօսել․ այլ՝ որչափ ինքն կամեցաւ՝ առ ՚ի ծանօթ առնել զինքն, զի ծանիցեն զնա և կեցցեն։ Այլ ոչ բաւական արարածքս զարարչէն պատմել, որ բնաւ-նաւ կարէք ՚ի սակաւս պատահիցին՝ բաւ առնել արարողին․ այլ որչափ բաւ չափոյ ժուժալոյ տկարութեանս մերոյ՝ ինքն կամեցաւ պատմել մեզ․ քանզի ոչ ոք գիտէ զԱստուածոյ՝ եթէ ոչ Հոգին Աստուածոյ․ և Որդին եկն պատմեաց և յայտնեաց և եցոյց, թէ որ ետես զիս՝ ետես զՀայր իմ։

Բայց Աստուած Հոգի կենդանի է, հուր կիզելոյ, անթիւ և անփոփոխելի է, փառօք անպատմուամ, զօրութիւն անբաւ, գեղ աննմանն՝ զարմանալի, անհաս մտաց և խորհրդոց, անխօս լեզուաց, անհա-փոփ խորհրդոց, արարածոց քան զամենայն ձայնս, ոչ անկանոնաւորս և ոչ ունկամն լսելեաւ, և ոչ կարծիք սրտի կարեն հասանել։ Երկինք ամենայնիւ, աշխարհ ամենայնիւ և անիմանալիքն ամենայնիւ ՚ի վեր ու-

նել ոչ բաւէին. և բան նորա բար-
ձեալ 'ի վեր ունի զամենայն և 'ի
զօրութիւն հրամանի նորա կա-
խեալ սաւանց թևոց 'ի թռիչս 'ի
վերայ օդոյն իբրև թռուցեալ:
Ինքն պատեալ զամենայնիւ, 'ի
ներքոյ ամենայնի, 'ի վերոյ ամե-
նայնի, արտաքոյ ամենայնի, և ա-
մենայն 'ի նմանէ, և ամենայն 'ի
նմա, և ամենայն 'ի փառս նորա:

Եւ 'ի բազում նշանս և 'ի բազ-
մաւ արուեստս խօսեցաւ ընդ
հարս մեր մարգարէիւք 'ի ժաման-
նակս ժամանակս, 'ի տեսիլս ան-
պատումս, յանճառս փոփոխմու-
նս, 'ի լոյր զարմանալի, 'ի գեղ
գովելի, յաստուածատեղէն կերպա-
րանս: Ուսմամբ լուսաւորեղէն նմանու-
թեամբ` 'ի կերպարանս մարդոյ:
ուսմամբ իբրև հուր բորբոքեալ` 'ի
կերպարանս մարդոյ, և արդա-
րոց բազմաց երևեցաւ ըստ կա-
րել տեսանելեացն նոցա, և ըստ
հանդուրժել լսելեաց նոցա խօ-
սեցաւ ընդ նոսա: Զի անհնար է
մարդոյ տեսանել զԱստուած գո-

մեւ խաղաղ, երկրի մեծագոյն զհրաւր. զի եթէ ընդդիմեսցի ոչ կարիցէ անարատելով զնա, զի յարգեալ հալածեսցեալ ընդ նոսա՝ հալածեսցին :

Բայց երկրի ինքնակալական կառավարք քաղաքաքաղաքականութեանց խաղաղ զինչն ցուցանեն, ՚ի կերպարանս մարդկայ երկրակեր, ամենայն բաց, ամենայն հրաւր և ամենայն հայել և յատենից և ՚ի մեկ և ՚ի մեղաւ :

Իսկ եթէ ամբողջական՝ եթէ հաւր է, զոր ինչ անհատանականն անկախ. եթէ ամբողջ՝ բաց է, զինակամութեան բաղ ՚ի կարծիս ամենայն զմեր ընտանեկանն, ներհամութենայն զաւցանելութեան անեերականութիւն մարդոց մերրոյ ամենահատութեան : Այսպէս նաև ըստ մերոյ փոփոխականութեանն ևրևոյ, որպէս զի մի ասաղբանակաան աշխարհականց նեղացին յանհէ փառաւորեալ: Եւ զինորս զանհաւանն ոչ ոք զինաւոց. զի չէր նա անհղը քան զնա ոք՝ որ անհատ և այլոց անհասանելեացէ :

Եւ յերկնային խաղաղ ապաբոլշն՝ զաւհն իւր յինչն ամփոփել, և մեծացուցանելով և հրեշտակականն

երեւելիք մնացեալ բանս հանդերձու-
թեալ աշխարհ : Ոչ արարածք կա-
րեն քննել զարարիչն, եւ ոչ զան-
զուածն զգաստակերն զկեանն :

Բայց արարիչն զԹայս յիւր ա-
րարածս · զի Աստուած արարչ զա-
մենայն արարածս, եւ զարդարեաց
՚ի գեղ զամենայն եւ ՚ի փառս մայեղ-
չանկան : Ի հողոյ ստեղծ զհողե-
ղէն մարմինս եւ ՚ի լուսոյ զհրեղէ-
նակս, զարդարեալ ՚ի լուսոյ
մայրերուչ, եւ զգեցեալ զարդա-
րեաց զփառաց անԹոռն · մնացեալն
օրհնութիւնք հրեշտակաց, բար-
բառք արովբէից, փառաւորու-
թիւնք զուարթնոցն, ձողովք բա-
նակաց եւ զուարթք սրբոցն եւ զասք
զանգաց եւ օրհնութիւնք երկնա-
ւորացն, աղօթք արդարոցն եւ
պաշտօնք սրբոց, սրովբէքն եւ
քերովբէքն եւ զօրք մարմնականն
լուսոյն :

Է · Զայս միաւորութեան առա-
ջնոյ կարգեցաք ՚ի ձեր լսելիս՝
զուարթք հաւատոյ Տէրունականս, որ
յայս յանդիմանն մարդասպանե-

ցեն մեզ գիրք սուրբք՝ սուրբ Հոգւովն, վասն մեծանձնեաւոր արքայութեանն Աստուածութեանն. որ յայտնեցաւ խորհրդով արդարոց հարցն մերոց, և խօսեցաւ ընդ մեզ Որդւովն և սուրբ Հոգւովն. և աւետարանեցաւ սուրբ Առաքելովք և մարգարէիւք, և որպէս մեզ հաստատութիւն հաւատոց:

Զի հաւատով ճշմարտեսցուք ՚ի մի Աստուած հայր և տէր և արարիչ ամենայնի, և ՚ի միածին Որդին որ ՚ի Հօրէ և առ Հօր և ընդ Հօր, և ՚ի սուրբ Հոգին՝ որ ՚ի նորուն էութենէ, և նովաւ արար զամենայն արարածս: Որ է մի տէրութիւն, մի զօրութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի գիտութիւն, մի խորհուրդ, մի պետութիւն, մի անքննելական զօրութիւն, երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անպատում անքննին միութիւն Երրորդութեանն, մի բնութիւն, մի էութիւն, մի աստուածու-

թիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգին 'ի նոցունց 'ի նմանէն · իսկութեամբն էութեամբն աստուածութեամբն հարթ հաւասար հաւասարակ, 'ի խորութիւնս, 'ի բարձրութիւնս, 'ի լայնութիւնս, յերկայնութիւնս, մի էութիւն բնութեանն, մի պատիւ Երրորդութեան, և լի են երկինք և երկիր փառօք նորա :

Որպէս Սողոմոն արքայորդի մարգարէին ասէ յիւր աղօթսն, եթէ երկինք և երկիր չեն քեզ բաւական : Եւ մարգարէն ասէ իբրև յերեսաց Տեառն, թէ երկինք աթոռ իմ են, և երկիրս պատուանդան ոտից իմոց · որպիսի տուն շինիցէք ինձ, ասէ Տէր, կամ զինչ տեղի բնակութեան պատրաստիցէք ինձ · ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն · և ես յո՞ հանգեայց և դադարեցից, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և յայնոսիկ, որք դողան 'ի բանից իմոց · և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ : Իսկ ո-

բում՝ երկնիւք և երկիր չէին բաւա-
կան, որպիսին ամենեցուն զնա սերտ
մարդոյ. մի թէ մեծ ինչ լիցի մարդ
քան զերկինս և զերկիր: Այլ
յաստուածութենէն զինչ կամի՝
և լինի, զինչ կամեցաւ՝ և արար,
զինչ կամեցաւ՝ և եղև, որ ինչ
կամի՝ ոչ զանազանի. այլ ամենա-
փոխեցաւ, փոփոխեցաւ, և եղև զինչ
և կամեցաւ:

ԼԸ. Առաքեաց Աստուած զՈր-
դին իւր յաշխարհ, որ եկն և եղև
'ի կնոջէն. և 'ի մարդկեղէն մարմնի
պատուեցաւ, մարմնով խաչով դա-
մենայն մարմնին կենդանացոյց: Ո-
րով յաղթեաց արարչին աշխար-
հի. զի նորոգեսցէ զարարածս, և
զերծուսցէ 'ի մեղացածին ծննդե-
գոց. և հրեշտակակերպս արաս-
ցէ և աստուածորդիս կոչեսցէ. և
զմահկանացուս անմահացուսցէ
անմահ հոգւովն. պատուեսցէ
աստուածեղէն փառօքն: Վայե-
լուչ լուսովն զարդարելն, և յերկ-
րաւորութենէս յերկնաւորու-
թիւնս անցանելն, 'ի մահուէ թե-

նեա յանձնահաւանութեան , զանձանց լցեալ պղծութեան և զանձապականն զերդ կերպարանացն ։

Ո՞րչափ եւս եղէ անապատաւոր աստուածատուութեան՝ որ անձանցն բարութեամբ ազդեցիւր էին կամքն նորա , և ոչք անձանցն գործոց . և բանիւ քերթանց նորա հաստատեցան անձանցն արարածքս , և ՚ի նմանէ լոյս առին անձանցն լուսաւորք , և ՚ի զօրութենէ նորա հաստատեցաւ կամն անձանցն արարածք , միաբանութեամբ երկնից , և աշխարհք անձանցն որ ՚ի նմին , և ՚ի հողմ բերանոյ նորա անձանցն զօրութիւնք նոցա ։ Եւ երկնաւոր պաշտօնեայքն , և սրբոցն լուսեղէն բանականքն յաւանդ նորա կան կանխեալ , և ողորմութեամբ նորա կայտռին . և ՚ի նորա ամենաբերկելոյն՝ անձանցն արարածոց պէտքք պատրաստին . և ՚ի զօրութենէ նորա կեան անձնաւորեալքն , և աչքն անձնեցուցն ՚ի նա յուսան ։

Որ արարիչն և հաստատիչն է

և աստուածոյ է ամենայնի խնամա-
թեամբք ընտրութեամբքն • անեղական գո-
յութեան՝ որ 'ի նմանէ է՝ տա-
րածեալ արկեալ զամենայնիւք •
և աւասիկ կենդանութեան զօրութիւնքն
բաշխելին՝ որ ընդ ամենայն աշխա-
րհս անցանէ, ընդ երկնաւորս
և ընդ երկրաւորս, ընդ օդս և
ընդ հողմս, ընդ հուր և ընդ ջուր,
ընդ լոյս և ընդ խաւար, ընդ
անդնդաշունչս և ընդ բարձունս: Որ
անեղանելի զօրութիւնն թա-
փանցանէ լուսով խորով երկնէ •
որոյ զօրութիւն հոգւոյն անհաս
է, զամենայնիւ ամփոփեալ, ընդ ա-
մենայնիւ տարածեալ • և երկնէն
ծառայութեամբք զօրութեանց, ան-
ընկալնելի քննութեանց: Մի ասել
զերկին վերջին բարձանց, և մի զգա-
ցորինս անդնդոց. մի յաջ և մի
յահեակ ձգեալ, մի 'ի գլուխ և մի
'ի թիկունս: Այլ զօրութեանց
ծառայութիւնն, մեծ հաստատեան
զաւրքն. եօթներորդ զարդն՝ հանդ-
գիստ արարչութեանց:
Մեծագործութիւնն զԱստուած քա-

բարեկացուցէ, յ[illegible] [illegible]
զամենեսեան ՚ի հողոյ։ Իսկ [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] յանձնէն՝ ոչ ձեռնէ
հաստ՚ի գործ ընտելելոյ. ոչ ամենայն յանէ,
և ոչ ամենայն [illegible]. ոչ ընդդեմ
հաստատուն, և ոչ ձեռաց զինուն, և ոչ
[illegible] [illegible]։ Բերանն՝ խորա-
կաց, հաստատելովք՝ հաստոց, գիտելիք՝
Հնդկաց, մի մի յիւրաքանչիւր ընտրու-
թիւնն կառավարել կամի։

Բայց Քրիստոսիւ կամօք [illegible]
զամենակալեցոյց պաղատանս իւր,
կատարելութեան [illegible] հօր։ Աւաքե-
լոց Աստուածոյ յԱստուածոյ [illegible]
Որդին, հաւ[illegible] [illegible] ՚ի կուսէ՝
[illegible]՝ կատարելութեան ա-
[illegible]
թեան [illegible] յայտ [illegible],
և [illegible] [illegible] ցու-
ցանէ։ [illegible] երկ. [illegible]
[illegible] [illegible], և [illegible]
[illegible] ՚ի [illegible] [illegible]
[illegible]. Որով էր ՚ի [illegible], և
[illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի
[illegible]։ [illegible] հաղորդեցաւ,

և հալածեալ զաստուածայ և կա-
պեալ զմեզս ։

Զի որ 'ի մարմնին հաւատա-
ցին՝ ծանեայց նոցա զաստուածու-
թիւնն իւր ․ և որք 'ի մարմնոյն
գթեցին, ուրացան զբնութիւն՝
նորա ։ Քանզի միացաւ 'ի մարմնի
բնութեամբ, և խառնեալ զմար-
մինն ընդ իւր աստուածութիւնն ։
Որ հաւատացին 'ի նա՝ նոքա փայլե-
լեսցեն 'ի բարութիւնն անմա-
տուսն ․ և որ յայսց հաւատոց
վրիպեցան՝ զանկորուս և զանխաւ-
ղնացին և զարտաքուղի անկան ․ խաւա-
մատեցին իւրեանց յանձինս անկար-
կասու, և զրադրուն 'ի Ճշմարիտ
հաւատոյ թիւրեցին ։ Իբրև կար-
ծեցին թէ զանին ինչ՝ զանին զոչ-
ինչ ․ որպէս և գրեալ է՝ չոգան
զհետ ոչընչի, և զանին զոչինչ ։ Զի
զիւրեանց խնդիր՝ աշխատութիւն
է, իսկ անդիւտ աշխատութիւն՝
սուտ վարդապետութիւն կռա-
պաշտութեան հաւատացանէ ։

Զի անտուստ 'ի մերուստ զան-
ցելոց յափշտակելոցն՝ զինչ իսկ եկե-

լոյս մարգարէիւքն ամենեքումբք ծանօթս առայ. և առաջին օրէնակօքն՝ վերջնոցս բազում անգամ վարդապետեալ. մերթ ահաւասիկ սպառնացեալ կարգէ՝ յերաստակօք առաջին վրիժուցն խնդրելոյ, զի զանհաւատանզարհուրեցուցեալ՝ յուղղութիւն յորդորեցէ. որպէս զգուշանակ գուշանակ հարուածին եգիպտացւոցն, և զգառնագոյն հատուցումն նոցա վրիժուցն խնդրելոյն: Եւ կամ զանհաւանն անկելոցն յանկարծակին, և զամենայն խուկ զփորձ առելոցն բարկութեանն Աստուծոյ դիւրատակս առեալ բերէ:

Նա և Քրիստոսի խօսք՝ զերկրին սոդոմացւոց և գոմորայեցւոց յօրէնակ առեալ, զի մի՛ 'ի չհաւանելն ոմանց՝ ևս դժնդակագոյն զնոյն կրեսցեն: Եւ մերթ զբազմադիմի սքանչելագործութիւնս պայծառագոյնս և զհաստատունս արդարոցն պարգեւելոցն Աստուծոյ յիշեցուցանէ. կարգէ միանգամայն և զհաստատութեան արա-

բանտոցս արարչին, բառարձ անդրդուելի
առնելով Թէ գերիշխան ձգնեցի, և
գերիշխեր հաստատանեցին. և զծովն առ հա-
մանօք փակեցին. զի այսու անհե-
ղինքն հաւատարիմ զչարին ան-
խոստացեալն քաղցրացուցանեն:

ԼԹ. Իսկ իբրև եկեալ հասա-
րեաց փրկիչն ամենեցուն զերր-
ախտն խոստացեալն նման նորին. և
միաւորութեամբ զօրութեան Որդւոյն
նախասահմանեալ Տէրմարդանալ մարդասիրա-
կանոնքն յառաջասացելովք վասն
մարմնաւորին ծննդեանն աստուա-
ծորդւոյն, հոգեկրեան բանիւք
զատուածաբանեան մարմնոյն. զոր
յառաջագոյն Աստուած եցոյց
զնորոյ Որդւոյն զգալուստ՝ ար-
ժանաւոր իւրովք մարգարէիւքն
ձայնիւք:

Արդ առաքեաց Աստուած զոր-
դին իւր, որ եկն ծնաւ 'ի կնոջէ,
և եմուտ ընդ օրինօք. զի զորս ընդ
օրինօքն իցեն գնեսցէ, զի մեք զոր-
դեգրութիւն ընկալցուք: Համ-
գոյն սորա և կատարեալն Յովհան-
նէս ասէր. Ապաշխարեցէք զի մեր-

ձեռալ է առաքելութեանն երկնից. որոյ և յաւիտենականն Տէրն առաքա-յութիւնաւորեր՝ առաւելն զինէ առան-ցանն, թէ կատարեալ է ժամա-նակին, և հասեալ է առաքելութիւն Աստուծոյ:

Եւ արդ՝ նկատեալ զքանակելի խորհր-դակցին Որդին Աստուծոյ՝ կա-տարեալ զխորհուրդ նախախնամու-թեան յաւիտենականն, զոր և մարդասիրեն առնէ, նոյն՝ հաստատեալ զքահանայ ծա-ռայից խորաց, և զխորհուրդ Հրեշտակաց խորոց արդարացուա-ցանէ: Ունի և Հրեշտակն պատա-րագել նախ ճանապարհ. որոյ առաւելեալ ազգային կոչմին՝ առ. 'ի ըղ-մարդարէականն կատարելոյ, և թէ՝ կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմա-նուէլ. և ասէ, Ուրախ լեր, բերկ-րեալդ, Տէր ընդ քեզ:

Եւ անդէն նշանակէ՝ թէ զինչ օրհնեալ Տէրն ընդ. նախ ընդունելոց իցէ. ասէ՝ Հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բարձրե-լոյն հովանի լիցի 'ի վերայ քո.

քանզի որ՝ ծնանելոցն է, սուրբ է, և որդի Բարձրելոյ կոչեսցի։ Նոյնժամայն 'ի մարգարէականն հայեցեալ՝ ասէ, եթէ տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ յաւիտեան, և թագաւորութեանն նորա վախճան մի՛ լիցի։ Զորմէ և հայրապետն Յակոբ՝ Հոգւովն լցեալ ասէր, և փառաւոր զՅուդա գերացեալ 'ի մարգարէութեանն, ասէ. Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ այն՝ որոյ իւրն է թագաւորութիւն, և նա է յոյս հեթանոսաց։

Ահա տեսանեմք լցեալ կատարեալ զամենայն մարգարէութիւն լիով. ահա տեսանեմք զամենայն հեթանոսս ապաւինեալ նմա, որ կամին և որ ակամայ. ասէ, Կապեսցէ զգրաստ իւր զորթոյ, և զյաւանակ իշոյն զորթոյն գնդակէ. այսինքն՝ զգայլն խոնարհութեանն առ. մշակս այգւոյն,

որ ոչ կամեցան զայրացելոյ անէծն . որ չարաչարութեամբ խաչել կամեցան համբերութեամբ: Որ 'ի ժամանս խա-ւարման ապստամբեցուցանէք, որ զերծ վասն ծննդեանն նոյն բանիւ աստեղ ձեռ, զդատաստանաւն մեծարգապետեցին, զդա-րապետութեան աստուածութեան, զմիաւորու-թեան միջոցին :

Ի. Որ նոր ծնեալ է յերեւութեանն, որպէս եւ էին կանխ, ասելոցն յար-ժանի կամեցաւ՝ կոչել զմարդկային ճշմարտութիւն, եւ զգեցաւ մարմին, եւ եղ 'ի մեզ նմանութիւն. այլն որ անձառապէս էր եւ անմահ յաւի-տենից լուսաւորութեան աստուածութեանն եւ վասն մեր եղ 'ի չարչարանս մահու-թեան, եւ անմահութեամբ 'ի մարմ-նին. քաղցրութեամբ պահեցաւ Աստուածու-թեամբ 'ի մարմնին, եւ Աստուածային մարդ եղեւ. եւ եղ յանմահութիւն զմեզ զմեր պատուհասացուցանէ : Ամե-նայն խաչ աստուածութեանն յերկնի է եւ յերկրի՝ առ Հօր եւ ընդ Հօր. եւ ամենայն արարածք հրամանաւ նորա չարչարին բա-րեպաշտութեամբ կարդացանն կաղ-մածոյ :

Սակայն թէպէտ վասն մեր եղ յանարգութիւն, այլ կայ յիւրում բնութեանն. որպէս և ինքն ասէ, թէ ես նոյն եմ, և ոչ փոփոխեցայ: Զի թէպէտ զկերպարարանս էառ և զմարմին մարդկան, այլ խառնեալ միացոյց ընկղմեալ զմարմինն յաստուածութեանն իւրում: Եւ դարձեալ ասէ. Սա է Աստուած Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից: Եւ դարձեալ ասէ. Դու նոյն ես, և ամք քո ոչ անցանեն: Եկեալ այնուհետև բարբառ առ մեծն մարգարէից Մովսէս, թէ ես եմ որ խօսեցանէն էի. այսպէս ասասցես, թէ որ 'ի սկզբանէն Աստուած՝ առաքեաց զիս առ ձեզ: Զոր և Յովհաննէս ասէր 'ի թղթին իւրում, թէ որ էրն 'ի սկզբանէ՝ զորմէ լըւաք, որում ականատեսքն իսկ եղաք, ընդ որ հայեցաքն. և ձեռք մեր շօշափեցին զբանն կենաց. և կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք, զի նա ինքն է Աստուած Ճշմարիտ և կեանք յաւիտենականք:

Որ առ զմնացորդսն անկողմնականութեանցն , և շօշափեցաւ և ընդունեցաւ մարմնովին ․ և զամենայն անցս մարմնոյն յանձն առնուլ խորհրդով կամօք , յանձնառութեամբ եղեալ հաւանելոյ խոնարհութեանն ․ և ոչ ուրուք բռնադատութեամբ , բայց իւրովք անձնիշխանն կամօք կրեաց զայն ․ որպէս և ինքն ասէ ․ Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ իմովք կամօք , զի դարձեալ միւսանգամ առնուլ զնա ։

Եւ ինքն ծնաւ 'ի կուսէն , և իւրովք կամօք կատարեաց զկամսն առաքչին իւրոյ ․ ասէ , ես եկի 'ի կամս Հօր իմոյ ․ զի ցուցցէ զմիաւորականն անձնական անքակտելին ինքնութեանն միութիւն ։ Կամօք Հօր եմուտ յարգանդ կուսին՝ և ոչ զարշեցաւ ․ վասն զի ինքն է սրբիչ ամենայնի ։ Իւրովք կամօք պատեցաւ 'ի խանձարուրս և եդեալ 'ի մսուր անասնոց ․ զի ինքն է սնիչ և արարիչ ամենայնի մեծութեանց , և զարդիչ ամենայն բարութեանց ։

Հինաւուրցն փափկեալ մեր մանկա-

ցաւ. եւ սնա զկենդանարարութեան մարմ-
նոյ անկարողութեան մերոյ մարդ-
կութեան, զի զմեղս փոխեսցէ
յանմահականութիւնն իւր: Սակայն
թէպէտ եւ զգեցաւ մարմին, եւ էր
՚ի մէջ նմանութեան, այլ կայր ՚ի
հայրենի բնութեանն Աստուա-
ծութեան իւրոյ. որպէս եւ էր
իսկ, եւ է, եւ կայ յաւիտեան ընդ
Հօր իւրում ՚ի բարձունս յեր-
կնաւոր բնութեանն՝ հանդերձ մարմ-
նովն զոր ՚ի մէջն զգեցաւ. փառա-
ւորեալ ցանկալի. ՚ի հողեղէն
եւ ՚ի հրեղէն զօրութեանց:

Նա եկն եղեւ մարդ, զի մարմ-
նաւորացս անտեսանելի կարողասցին.
բայց զԱստուած գոյին ոչ անե-
ղեալ ուրուք, ոչ հրեշտակաց եւ
ոչ հրեշտակապետաց. ոչ սրովբ-
բէից եւ ոչ քերովբէից, ոչ աթոռա-
ւոր բանականաց երկնաւոր զօրութ-
եանց. բայց Որդին ծածկեալ մարմ-
նովն կատարելապէս խնամածութեան եւ
ցոյց եւ յայտնեաց աշխարհի, զի յա-
ղթեսցէ բանաւորաց մարդկանց բնութեամբ,
թէ որ եւտես զիս՝ եւտես զՀայր

րին : Նա եկեղեցւոյ զկատարապետացեալն կատարումնեաց 'ի սոցունց կարգին. և ծնունդեան աստուածային՝ 'ի Հօրէ յառաջ քան զամենայն յաւիտենականս, մշտնջենաւորականն և յաւիտենականն ծնունդեանն՝ 'ի մշտնջենաւորականն և յաւիտենականն Հօրէն յառաջ քան զամենայնս :

Այսպիսի ևեթ գիտնալ ուղղափառութեան պարգևեցաւ 'ի նմանէ, որ նոյն և Ամենակալին Հայր՝ մի է նա. աստուածութեան Հայրութեան աստուածականն կոչի երրորդութեան և երրորդութեան : Մի միայն Տէր, երրեքանձնականն զօրութեան. երեք անձինք, մի զօրութիւն, մի միաւորութիւն գիտութեան, զօրութիւն մի՝ միաւորականն փառաւոր, մի միայն լուսաւորութեամբ, մի միայն խաղաղութեամբ. որ ոչ ոք կարէ քննել թէ [illegible] կամ զինչ եղև :

Համաստուածութեան յԱստուածութեան Ամենակալեալ 'ի միաւորութեանն անճառ. [illegible] լուսաւորութեամբ, լոյս Հաստատեալ : Բայց զանձնոյն զանձնականն Հաստատելութեան 'ի Հօրոյ զամե-

զհաւլ զխաչըդ. քննել կարգեալքն և զխօսել զՔառաչափելոյն. և անդրանիկաւորքս զանկարելին զանհնարին զխաչըդ կարգեալքն քննել:

Հաւատք Ճշմարիտ այս են: Խոստովանեցաւ և խառնելոց զաստուածութիւն ընդ մարդկութեանս, և զանձնեան ընդ մարմնոյ. զի զամենայն մարդիկ անկեալ արարեալ յանմահութեան աստուածութեան իւրոյ, յորժամ մարմնովն առ Հօրն ընդ աջմէն նստաւ, և խառնելոց զմեզ յԱստուածութիւնն իւր միածնին աստուածորդւոյն հզօրականն. յորոյ 'ի ձեռն հաւատացելոց զհոգևորն երկիրս, և պատրաստեալ զպատրաստուածս երկնից: Վասն որոյ մարգարէն ասէ. Յայտնեաց Տէր զաջ իւր և զբազուկ իւր ամենայն հեթանոսաց, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Աջն Հօր և բազուկն, միածինն Քրիստոս. և նովաւ լուսաւորեցան ամենայն եզերաւքն. որ խաւարաբանեալ էր. Բանն, և Բանն էր առ

Աստուած, և Աստուած էր Բանն. որ ամենայն ինչ նովաւ եղև, և նովաւ հաստատեցան ամենայն ինչ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, հարկ էր զի նովաւ նորոգեսցին՝ որով եղեն և հաստատեցան, և նովաւ լուսաւորեսցին, և կամեցեալ Աստուծոյ՝ զի կեցցեն արարածք, և մի կորիցեն:

ԻԱ. Այդ առաքեաց Աստուած զՀոգին սուրբ 'ի կոյսն Մարիամ, և եղեւ աստուածորդին մարմին 'ի կուսէն. որով կորոյս չարին, նա-մին մարմնովն պարտաւորեաց զմեղսն աստուածախառն մարմնովն. 'ի բարձրախառն խոնարհութենէն զանսերեւոյթ. խառն տեսանելին՝ անեւտարանութեամբ հրեշտակացն առ հովիւսն՝ զաստուածեղէն փառացն գուշակէր: Մըսուրն և խանձարուրքն՝ զխոնարհաձիգ մարմնոյն զաղքատութիւն 'ի մէջ բերէին. առաջնորդ աստեղն՝ մոգուցն պատարագօք յայտնեալ անմիջամտեաւն տէրութիւն. երկրպագութեամբ զփառաւորութ

զմնացորդսն, և երկնաւորացն ծառա-
նեցուք զաստուածպաշտութիւնն :

Այսպէս ասէ զինչ սպասաւորն մեր
Մեթոդեայն ճառընտրին հայաստանեայ մատրապա-
րէտութեանն. Թէ՝ և զօր Բեթղեհե-
հեմ, ասէ, ոչ ինչ կրեաց մխիթա-
կաց հասակը. 'ի քէն ծառայեցի
ինձ սրբոյ և եղկեալն տաճարն Իսրայէ-
լի. և երկրպագութիւն խոնարհութեան առաւելագոյ
ասպնջականի: Ի սկզբանէ՝ զաստուածպաշտա-
ծութիւնն, 'ի Բեթղեհեմ՝ զմնացորդ
մինչև սպասաւորէ: Հրեշտակապետաց
ասէ. ծնցի և կոչեսցի անուան նա-
րա [illegible]. և [illegible]
երգեսցի՝ յաւանայ զգան զարքն զա-
նուան նորա. մինչ զմնացորդն ծր-
նեալքն սպասաւորէ, և մինչ զաստ-
ուածպաշտութիւնն ցուցանէ՝ զպա-
տւոյ զգան զարքուանէ 'ի Հոգւոյ
ծննդեան :

Մինչ զայս Տէրն ձեռնարկեալ հաւատա
ամենից 'ի սուրբ զգայ և յօրի-
նաց եկեղեցւոյ, առաջնորդ կե-
նաց Քրիստոնէութեան Աստուած,
և 'ի սուրբ գիրս վարդապետու-
թեանն հաւատացեալ: Եւ մի խոստո-

ընդ 'ի կարգաց խոնարհութեան, մի՛ յաջ և մի՛ յահեակ. զի ոչ է-թէ այնպիսիք իցեն սերմանիքն՝ ամուլք և ժանգառք, ապականք և ունեալք, բայց զոր սերմանեսցէ յանդաստանս սրտից լսելեաց: Զի որ և սերմանեսցէ զայնպիսին սերմանիսս 'ի լսելիս լսողաց՝ այնպիսիքն նզովեալ են. Թէ և հրեշտակ իցէ յերկնից, եւս և զօձ նըզովեալ հողակեր, որ սուտ և պատիր բանիւք զպատուիրանն արարչին փոխել կամեցաւ:

Բայց մեք ոչ այնպիսի պատարանքս ձեզ մատուցանեմք, և զայս վկայեմք առաջի Աստուծոյ. զի նա միայն գիտէ զսրտից խորհուրդըս, և ամենայն ծածկեալք նմա յայտնի են, զի յամենայն ժամ առաջի նորա եմք: Եւ այժմ առաջի նորա խօսիմք զնորա պատգամսն զքաջալերս և զստուգսն և զպատուիրանսն և զարգելեաանդն և զշայեկանսն և զխնայելեղին և զշտանեմարանեաղինսն. որ կարգեալ են պահպանել զձեզ, ապա

մարմնաւոր պատրուակօք , և անդ յար-
քայութեանն զձեզ վայելեցու-
ցանել յանմահից և յերկնաւոր ու-
րախութեանն : Նմա փառք ամե-
նատեսանողն , որ վասն մերոյ կե-
նաց մարդացաւ և մարդակերպ
ծնեցաւ , եկեր խերբ զմեզ և արբ .
տանջեցաւ , չարչարեցաւ , խաչե-
ցաւ , բևեռեցաւ , սպանաւ , թա-
ղեցաւ , կենդանացաւ , վերացաւ ,
և եղ նստաւ ընդ աջմէ ծնողին իւ-
րոյ Աստուածոյ և Հօր , և կենդա-
նացոյց զամենեսեան որ 'ի նոյն
հաւատացին :

ԻԲ . Բայց մեզ դեռ կայ պատա-
մել ձեզ՝ զծնունդ աստուածոր-
դւոյն որ 'ի կուսէն . Թէ զիարդ ե-
ղև , մի ըստ միոջէ պատմեսցուք :
Զի ոչ եթէ յորմէ հետէ ծնաւ նա
'ի կուսէն եղէ՝ յայնմ հետէ ըն-
կալաւ անսկզբնականն Բանին զոյա-
ցութեան . այլ յառաջ քան զա-
մենայն յաւիտեանս ծնաւ 'ի Հօ-
րէ , իսկ արդ վասն մեր էջ և մարմ-
նով ծնաւ 'ի կուսէն . այն ծննդոյ
Հայրն՝ որ զնոյն ծնաւ՝ նա միայն

գիտեն։ Իսկ երկրորդ ծնունդն շնոր-հիւ եղաւ 'ի մէջ մարդկան. վասն զի կեցուսցէ զմարդիկ, և օրհնես-ցէ յառաջին անիծից անտի զեր-կիր, խորհուրդ օրհնութիւնաբեր զարշապարացն եկեալ նորոգես-ցէ. զի նոյն կորուսեալ զմար-դիկ, ժողովեսցէ զցրուեալսն, և եգիտ զկորուսեալսն։

Եւ յղացեալ. այնուհետև 'ի Հոգւոյն սրբոյ շնորհազգեաց կու-սին յանապականն արգանդին զոր-դին Աստուծոյ, անհատականն պայ-մանաւ։ Եւ ըստ օրինին ծննդա-կանաց ծնաւ զանդրանիկն 'ի քա-ղաքի Դաւթի 'ի Բեթղեհէմ՝ առ 'ի կատարելոյ զմարգարէականն, թէ դու Բեթղեհէմ տուն Եփրա-թայ՝ սակաւաւոր, իցեն լինել 'ի հազարաւորս Յուդայ. 'ի քէն ել-ցէ ինձ պետ և իշխան Իսրայէլի. և ելք նորա իսկզբանէ աւուրց յաւիտենից աշխարհի։

Տեսանեմս զեկեալն յառաջինն ծայս։ Տեսանեմս և զաւետիս Հրեշտա-կացն յօթեւանս հովուացն, թէ

ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի: Ցնծանման որոյ ելք խնդրանանէ աշխարհէ, այսօր ծնաւ ասէին. պատմեն զծնելոյն՝ առ 'ի նշանակելոյ զմարգարէականն, թէ մ պատմէ 'ի մէջ մարդկան զծնեալ իւր: Եւ տուեալ նշան զծնելոյն, թէ գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր· այն իսկ էր յաւիտենականն խորհրդոյն ծածկեալ առ Աստուծոյ՝ որ յայտնեցաւ երկնակեաց իշխանացն:

Զորոյ անդէն զաստուածական փառացն զերգս ասեալ երկնաւոր զօրուն՝ հովուացն ուսուցանէին· զի մի 'ի մարդոյն և 'ի պատանացն արհամարհեալ կարծիցի: Եւ փութացեալ այնուհետև հովուացն՝ հասեալ գտանէին զմանուկն ըստ նշանակելոյ հրեշտակին· որ ոչ միայն մօտաւորացն, այլ և բացականացն արևելեաց աստղանշան պատեալ: Անդ էր այնուհետև քննելի հողեղատուամ

մատակարարութեանն մարգարէականքն, Թէ մանուկ ծնաւ մեզ և որդի տուաւ մեզ. որոյ իշխանութիւն է 'ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նորա Հրեշտակ մեծի խորհրդոյ. սքանչելի խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհին:

Տեսանեմք, զի և որդի և իշխան և Հրեշտակ և խորհրդակից և Աստուած հզօր և Հայր հանդերձելոյ աշխարհին զայսօրածին մանուկն նշանակէ: Քանզի և էր իսկ որդի. վասն զի զօրութիւն Աստուածոյ է, խորհրդակից և Աստուած հզօր, որով և յաւիտենականքն հաստատեցան: Եւ մանուկ, զի այսօր ծնաւ 'ի Բեթղեհէմ. որ յառաջապատմեցաւ իսկ է, Թէ Տէր ասաց ցիս Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ: Եւ Հայր հանդերձելոյ աշխարհին, զի զհնացեալ և զմահացեալ աշխարհս ըստ առաջին հողածին մարդոյն՝ երկրորդ մարդն կուսածին եկեալ յերկնից նորոգեսցէ:

Նա լինելոյն, քանզի զանուանն բողխեալ յարմատոյն Յեսսեայ, ասէ Եսայի, և ծաղիկ 'ի շառաւեղաց անտի զծնանելն զաւակին Դաւթայ. ասաց և յաթոռն Դաւթի նստցի, և զարքայութիւն նորա յաջողեսցէ,

ԺԳ. Որով եկեալ հասին աւուրքն, զոր մարգարէքն յառաջագոյն -սահմանեցին. Ահա աւուրք գան, ասէ Տէր, և հաստատեցից զբանս իմ 'ի բարին՝ զոր խօսեցայ 'ի վերայ տանն Իսրայէլի և 'ի վերայ տանն Յուդայ: Յաւուրսն յայնոսիկ և 'ի ժամանակին յայնմիկ՝ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն յերկրի: Վասն որոյ և անդէն ասէ. Դարձ Յակոբ, և բուռն հար զնմանէ, ընդ ծագումն առաջինն լուսոյ նորա. մի տար այլում զփառս քո. և մի զօգուտս քո ազգի օտարոտւոյ:

Իսկ այլ մարգարէ յայտնագոյն խօսի մեծաձայն, թէ յաւուրս յայն

մեկ կանգնեցից զխորանն Դաւ-
թի, զանկեալն կանգնեցից, և ըզ-
կործանեալսն նորա և զաւերեալս
նորա վերստին շինեցից. և կանգ-
նեցից զնա ըստ աւուրցն յաւի-
տենից. որպէս զի խնդրեսցեն զիս
մնացորդք մարդկան, և ամենայն
հեթանոսք յորոց վերայ կոչե-
ցեալ է անուն իմ, ասէ Տէր. որ
առնէ զայս, յայտնի է՛ի սկզբա-
նէ յաւիտենից: Քանզի յաւա-
ղոյն խոստացեալ Դաւթի՝ ա-
սէ, թէ՛ի պտղոյ որովայնի քում
մէ նստուցից յաթոռ քո՝ բարձ-
րացուցեալ քան զամենայն թա-
գաւորս երկրի. հաստատեալ զա-
թոռ նորա ըստ աւուրցն երկնից,
իբրև զարեգակն առաջի իմ, իբրև
զլուսին զի հաստատեալ է յօգս:

Նա եկեալ, որոյ իւրն է թա-
գաւորութիւն, և նա է յոյս հե-
թանոսաց, որպէս և պատմեացն
Մովսէս, և յարուցեալ թագա-
ւոր համաշխարհական, զամենայն
ազգս հնազանդելով, և զթագա-
ւորութիւն իւր ազգի այլում ոչ

Digitized by Google

փոխեալ՝ ըստ առաքելոյն Դիո-
նեսիի: Նա և Դաւիթ եւս, որոյ
որդի անուանեցաւ Քրիստոս,
բղխեալ 'ի սրտէ հոգեպատում
բարբառով մարգարէին, զհան-
դամանս թագաւորին յայտ արա-
րեալ. Նախ՝ թէ գեղեցիկ է քան
զամենայն որդիս մարդկան, և շը-
նորհս սփռէ 'ի շրթանց իւրոց. և
գեղեցիկ ոչ զկերպարանացն, այլ
զանզուգականն փառացն ասէ: Եւ
դարձեալ՝ թէ ած զսուր քո ընդ
մէջ քո հզօր, զի վայելէ ճշմար-
տութեան քում: Այսպէս յետ այ-
նորիկ միանգամայն վճիռ տայ,
թէ աթոռ քո Աստուած յաւի-
տեանս յաւիտենից, գաւազան
ուղղութեան՝ գաւազան արքա-
յութեան քոյ. և նշանակէ՝ թէ
օծեալն է այն, զոր և ինքն եւս
մարգարէն՝ զմուռս օծելոյն եր-
գէր ասելովն. թէ վասն այսորիկ
օծ զքեզ Աստուած՝ Աստուած
քո՝ իւղով ուրախութեան առա-
ւել քան զընկերս քո:

Տեսանեմս զի յառաջագոյն ծա-

նուցեալ տեառն մարգարէին Հոգ-ւոյն սրբոյն թէ միածին Որդին Աստուծոյ աթոռակից Հօր վերե-լին, եղև որդի Դաւթի, և բարձ-րացուցանել զաթոռ նորա յա-ւիտենականն: Որպէս և ասէն. Յա-ւաղագոյն տեսանէի զՏէրն ա-ռաջի իմ յամենայն ժամ, և ընդ-աջմէ իմմէ. զոր և գիտէ, զի երդմամբ երդուաւ նմա Աս-տուած 'ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա. ո-րում և օրինականքն իսկ վկայէին, թէ յազգէ Դաւթայ և 'ի Բեթ-ղահեմ գեղջէ գայ Քրիստոսն:

Եւ անդ նա ոչ միայն յառա-ջագոյն գուշակելոցն, այլ և առ ժամայն նշանաւ մոգուցն եկե-լոց, թագաւոր ճանաչէր: Որք և ասէին, ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. և տեղեկացեալ 'ի գալրա-ցըն՝ հասանէին ուր էր մանուկն. որում և երկրպագեալ, և պատա-րագս մատուցեալ, և միանգա-մայն տիրապէս և Հրեշտակածա-նօթ եղեալ դարձան:

ԽԴ. Եւ յորժամ լցան աւուրք ութ թլփատելոյ զնա. և կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալ էր 'ի հրեշտակէն, մինչ չև յղացեալ էր զնա յորովայնի: Զոր և ասէ մարգարէն, թէ մինչ չև ստեղծեալ էր զքեզ յորովայնէ՝ գիտէի զքեզ. և մինչ չև ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի ըզքեզ. և այս 'ի Տէրն իսկ թարգմանի՝ թէ զոր հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ: Իսկ այլ մարգարէ, թէ յարգանդէ կարդաց զիս Տէր, և յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ:

Եւ արդ դու ահա զճշմարիտ կերպարանս բերեալ 'ի սուրբ կուսէն, և ոչ առաջօք ինչ ասելով: Զի և սկիզբն էառ և անուանս անսկզբնականին. և աւուրք համարեալ ութ, թլփատի յառաջ քան զարուանակ որդին, աւետեօք խոստացեալ զաւակին Աբրահամու որով օրհնեսցին ամենայն ազգք երկրի. որպէս զի Քրիստոսի Յիսուսի թլփատելն առ 'ի կա-

տարերաց զաւետմանս հարցն. որով մնեալ առէ ընդ օրինօք, զի զորս նաւապետն փրկեսցէ, զի և մեզ զօր զեղջրութիւն ընկալցուք:

Արդ ընկալեալ այնուհետև սր- զինն Պաւլթայ հալածանաց՝ հալա- ծի յԵգիպտոս առ. ՚ի կատարե- լոյ զայն, թէ յերկրէն Եգիպտա- ցւոց կոչեցից զորդի իմ: Քանզի յառաջագոյն սահմանեալ Աս- տուծոյ անճառագիտակ հոգեկիր մարգարէիւքն իւրովք, թէ որպէս ակ համբերութեամբ մեծին Որ- դին իւր՝ ՚ի հրէատանեացն եկեալ կրեսցէ: Որպէս և Պետրոս յառա- ջելագործ մատնեսցին առէ, թէ Աստուած որպէս յառաջագոյն պատմեաց ՚ի բերանոյ ամենայն մարգարէիցն զչարչարանս Քրիս- տոսի իւրոյ, նոյնպէս և կատա- րեաց. զոր և Տէրն խակ ասէր՝ թէ եկի՝ ՚ի կատարել զօրէնսն և զմար- գարէս:

ԻԲ. Կոչեալ առաջ յԵգիպտո- սէ ՚ի Նազարէթ, ՚ի կարծեցեալ հայրենիսն իւր ընդ մարմնոյ, ա-

ձէ և զարգանայ հաստատեալ՝ ըստ օրինակի մարդկան որդին մարդոյ֊անայ և իսրայէլական ազգին՝ զի ինքնակամ զինւորեցին 'ի բացեալ աղբիւրն կենաց: Քանզի զնմանէ գուշակէ սաղմոսանուագն, թէ աղբիւրն կենաց 'ի քէն է: Զոր և Փրկիչն յայտ արարեալ սամարացի կնոջն ասելով. Թէ գիտէիր դու զպարգևսն Աստուծոյ և ով է որ ասէ ցքեզ, թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուրն կենդանի:

Որոյ առաջս 'ի լնուլ ամացն իւրոց երկոտասանից ելեալ յԵրուսաղէմ, և ընդ վարդապետս օրէնացն բանս 'ի կիր արկեալ և զարմացուցեալ զամենեսեան. առ 'ի կատարելոյ զմարգարէականն, թէ ահաւասիկ 'ի մէտ առցէ մանուկ իմ, վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ: Զի թէպէտ և խոնարհեցաւ աստուածութիւնն յերկնից, սակայն յերկրակեաց 'ի ներքնոցս բարձրա-

ցեալ Ճանաչել։ Ի միւս ասեալ՝ զի թէպէտ և խոնարհութեանց էր, առակայն ինքնաբուռն խորոց փառացն զօրութեանց մեռացեալ, ըստ յառաջագուշակ աստուածութեան մարգարէին, թէ մեռայցի և բարձրասցի և փառաւորեսցի։ Եւ զի ոչ ինչ է նա կարօտ փառաց, այլ յետ խոնարհ կամօք զիւր կամս կատարելոյ համբերատար խոնարհութեամբն, ոչ եկամուտ ինչ՝ այլ բնական փառօքն մեռացեալ Ճանաչէր երկնաւոր զօրութիւքն. ըստ այնմ որ ասէն, թէ համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Իսկ փոքր մի թէ եղջեւր ինչ գոչեցէ, փեղեցուցոյց ընդոմնք, թուալինք օգով փողեցն այամնամբ. այլ աստուածաբանէ աւետեացն զամենայն գոչել և ցուցանել, թէ ահա Աստուած, ահա Տէր։ Զի և Ճանապարհս քարոզութեն կենդանաբեր նորա մարդասիրութեանն արարեալ. և զնա 'ի միոյ

առնուլ ծանիցեն, թէ ահա Տէր որում սպասէաք սմա․ ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի փրկութեան նորում։ Որ նորին ճանապարհք քարոզութեան բացեալ խոստմանց կենացն լուսոյ բարեացն հանգստեան, և 'ի միա առնուլ ծանիցեն, թէ ընդ նմա յարքայութիւնն մերձեցեալ լուսեղէն յարկաց ընտանութեանն ընտանեկիցք՝ հաստատեսցին 'ի միա առնուլ, այսինքն է Ճանաչել զնա անեղերաց․ որպէս և սաղմոսարանն բանէ, թէ յիշեսցին և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի։

Եւ մերձանալն և բարձրանալն, որ էր 'ի խոնարհութիւն խոնարհ մարմնոյն․ վասն այնորիկ նորին խոնարհութեան մարմնոյն, կերպարանեալ բարձրանայ։ Նորին ընմարդ խոնարհ երևեալ, և առաւել քան զամենայն մարդիկ հեզ և խոնարհ, և հանդարտութիւն ցուցեալ՝ համբերութիւն մշտացն զոր էառ 'ի մարմինն․ վասն այսորիկ նորին մարմնոյն բարձրա-

ցեալ 'ի խոնարհութեանցն, մարդ-
կութեանքն մերացեալ և փա-
ռաւորեալ, և զմարդաստանեալ
կերպարանացն զոր էառ՝ բարձ-
րացուցանէր զբարեխօս խոնարհու-
թեան օրինակեալ առաքաւորէր :

142. Արդ լուեալ ամեն երկեւուն
զենքն յայս անձնելոյ, 'ի հասանել
մարմնոյն զարդարեցեալ՝ ըստ բնու-
թեան ամենայն մարմնոյն անդամոյ·
Նախ յառաջադրոյն կարապետ ա-
ռաջոյ արձակեալ զՅովհաննէս
մեծ մարգարէիցն՝ պատրաստել
ճանապարհ և ուղղել շաւիղս
յայտնութեան նորա : Անդ 'ի
տալ զմկրտութիւն ապաշխարու-
թեան . ոչ զմկրտութիւն աս-
տուածադրոշմ լուսաւորութեան
կենացն, այլ տալ զապաշխարու-
թեանն սրբութեան մկրտութեն·
որպէս առ մոխախոնեան ջրոյն,
յորժամ Աստուած երեւել նո-
ցա կամէր՝ հրամայէր նոցա լուա-
նալ և սրբել. զի արժանաւորք
լեալ աստուածատես փառացն
տեսանելոյ :

Digitized by Google

Սոյնպէս և Յովհաննէս եկեալ լուանայր զժողովուրդն ապաշխարութեամբ. զի յորժամ տատուածորդին երեւեսցի, պատրաստագոյնք ապաշխարութեամբ բըն նման նորին վարդապետութեանն զունկնդրութիւն մատուսցեն, 'ի սիրտն գործել զճանապարհ. 'ի հեղ և 'ի խոնարհ օթեվանս զամենատէրն ընդունել մարթասցեն:

Արդ եկեալ և ինքն մկրտէր 'ի Յովհաննէ. ձեռն արկեալ զըրեալ կտակ յաւիտենականն, և իւրով արեամբն կնքեալ, ամրել ամենեցուն լուսաբեր և կենսատու մկրտութեամբն, հրամայեաց ամենայն երկրածին մարդկան, ամենայն մնեղեաց; աստուածանման պատկերին փըրկութեան նմանել: Արդ եկեալ առ կնքաւորն Յովհաննէս մկըրտել 'ի նմանէ, որոյ զահի հարեալ ընդդէմ դնացեալ, թէ ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել: Որոյ լըւեալ պատասխանի, և առեալ

հրամանն համարձակ զնա մկրտե- լոյ, թէ թոյլ տուր այժմ, այս- պէս արժան է լինել, զի կատա- րեսցուք զարդարութիւնս ամե- նայն :

Եւ զի՞նչ են արդարութիւնքն, թէ ոչ զոր Հոգւովն սրբով նո- րան Յովհաննու հայրն գուշակեաց, թէ յիշեաց, ասէ, զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մե- րում, տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւնն՝ ի թշնամեաց մերոց և՝ ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց՝, պաշտել զնա սրբութե̃ և արդարութեամբ : Զի յիշեաց զուխտ իւր որ ընդ Աբրահամու, և զերդումն իւր ընդ Սահակայ· և հաստատեալ առ Յակոբ ըզ- հրամանն իւր և առ Իսրայէլ զուխտ իւր յաւիտենից, օրհնեաց հարցն հաւատովք զամենայն երկիր, օրհ- նեաց կատարեաց զխոստմունսն : Եւ վասն նորին էջ իջեալ՝ ի ջուրսն, և սրբէր և նորոգէր միանգամայն զջուրսն կացուցանէր :

Եւ վասն զի զերկիր զառաջին

'ի Ջուրցն փարատեցուցեալ, և հրամայեալ՝ Ջրոյն պարարեալ ամենայն բոյսք և զեռունք և զազանք և անասունք և թռչունք 'ի Ջուրցն զաւարութենէ բղխեցեն յերկիրէ: Այսն օրինակ զաւարեցոյց զարգանալ ծննդականութեան Ջուրցն մկրտութեան, որպէս Ջուրցըն և մկրտել զհնութիւն մաշուածոյ հողեղէն նիւթոյս. որ 'ի մեղացն էր մաշեալ հնացուցեալ մերկացուցեալ 'ի շնորհաց Հոգւոյն: Այդ միասանգամ բացեալ զարգանան աներևոյթ Հոգւոյն երևելի Ջրոյն՝ նոր ծնունդ նորափետուր զարգարեալ միասանգամ 'ի ծննդականութիւն աւազանին, զգեցուցանել զամենեսեան լուսաւոր պատմուճանաւք, որ վերատին ծնանիցին:

Քանզի 'ի սկզբանն արարչութեան ժամանակին՝ շրջէր Հոգին աստուածութեն 'ի վերայ Ջուրցըն. և անտի զկազմած արարածոցն յօրինէր. 'ի լինելութիւն արարածոցն հրամայէր հաստա-

նալ։ Նա և զհաստատութիւն երկ-
նի բնակութիւն հրեշտակաց հրե-
ղինաց, որ երևելիս մեզ չերևին,
հրամայեաց հաստատանալ։ Նոյնօ-
րինակ եկեղեցի կատարէ զուխտն՝
զոր եդ ընդ հարսն։ Եղ ինքն ՚ի
ջուրսն, որպէս զջուրս ներքինս
երկրիս՝ որ միջոցք մարդկան էր
պղծեալ։

Այդ խորոց դարձապարացն կո-
խելով զջուրսն որոնց, որպէս
առաք։ Եւ որպէս յառաջագոյն
շրջէր Հոգին ՚ի վերայ ջուրցն,
նոյնօրինակ բնակեսցէ ՚ի ջուրսն,
և զամենեսեան ընկալցի որ ծնա-
նին նովաւ։ Եւ ջուրքն վերինք
մեծացեալք բնակութիւն են հրեշ-
տակաց։ Այդ զայս ջուրս՝ երկ-
րային ջուրս արարեալ. վասն զի
ինքն էջ ՚ի ջուրսն, զի ամենեքեան
Հոգւոյն ՚ի ջուրցն նորոգեալ
հրեշտակացն։ Եւ նոյն Հոգին
մինչև յաւիտեան՝ ՚ի ջուրցն զա-
մենեսեան յորդեգրութիւն մա-
տուցանիցէ։ Վասն զի զգուշու թա-
ցեալ զջուրց ՚ի խորհուրդ, զի վեր-

նահուրցն դրամբք բազցյն երկնից, և զամենեսեան փառօք վերացուցացէ յորդեգրութիւն:

Զի Ճշմարիտ Որդին Աստուծոյ խոնարհեցաւ, և էջ 'ի ջուրսն մկրտութեան. զի զխոստմունսն կատարեսցէ զհարցն և զաւետիս: Ցուցանէ քան զայն և զթլփատութիւնն էառ յանձն. վասն զի և երկոցունց կողմանցն շնորհեսցէ շնորհս, և հաստատեսցէ զբարիս: Զի խորհրդն թլփատութեան կատարեսցէ զհաստատութիւն խոստմանցն, և 'ի խորախորհ հրաւիրմանց որդեգրութեան ժառանգութեն արժանաւորացն: Եւ 'ի մկրտելն՝ զամենայն մկրտեալս կեցուցանէ իւրով յանձն ամենեցուն զմերկութիւնն, և պատուականն աբարեալ իւրով խնամեցուն 'ի մեկերտութիւնն:

Եւ նախ անուն 'ի միտ առնել ճանաչէ Որդին Ճշմարիտ Աստուծոյ՝ բարբառովն Հօր իւրոյ, և իջանելով 'ի վերայ նորա Հոգւոյն: Զի անուն իսկ 'ի միտ առնել ճա-

նոցին՝ առ 'ի կատարելոյ զպատու-
ղաստացութիւնն հօր, Թէ ահա-
ւասիկ 'ի միտ առցէ մանուկ իմ,
մեծասցի և բարձրասցի և փառա-
ւորեսցի յոյժ։

Զամս երեսուն լռու և անհե-
րեւոյթ չքնեաւ 'ի մէջ նոցա, և
ապա եկեալ հասեալ 'ի մկրտու-
Թիւն, որդ. 'ի մկրտութեանն Յով-
հաննու ամենեցուն։ Յովհաննէս վը-
կայէ և ասէ. Սա է զորմէ ասէի,
որ զկնի իմ գայր՝ եղև առաջի
իմ եղև. զի նախ քան զիս առաջին
էր. զի 'ի լրութենէ անտի նորա
մեք ամենեքեան առաք շնորհս։

Իէ. Եւ Հոգին 'ի վերայ նորա
իջեալ 'ի նմանութիւն աղաւնոյ։
Իսկ ընդէ՞ր 'ի նմանութիւն աղաւ-
նոյ երևեցաւ Հոգին սուրբ Աս-
տուածոյ. վասն զի ուսուցանէ աւե-
տարանն, զի ոչ այլ ինչ է հնար
մատչել առ աստուածորդին՝ Թէ
ոչ անմեղութեամբ և արդարու-
Թեամբ և սրբութեամբ յաղաւ-
նակերպ միամտութեանն զկեր-
պարանս յանձին ունիցին։

Digitized by Google

Վասն զի քննիչ է սրտից և ծած-կագէտ, ամենայն զաղտնեաց յայտնիչ. զի զամենայն ինչ գի-տէ, և զամենայն ինչ զոր առնէ՝ կարող է կատարել, և անկարա-նայ նմա և ոչ ինչ. որպէս ասաց Գաբրիէլ. առ կոյսն սուրբ, ոչ անկարանայցէ առ 'ի յԱստուծոյ ա-մենայն բան: Որ և զորանից խոր-հուրդն 'ի վեր բերելով առ մարգա-րէսն յառաջգիտանէր. որ ասացեալ ա-ռանձինն զախորժս նոցա, որ 'ի միա-սնու զամենայն գործս նոցա, առ նա էին մատուցելոց:

Վասն այնորիկ՝ Հոգին ազգա-նակերպ իշխանէ. զի ուսուցանէ աս-տղացն՝ սրբամատուցին առ աս-տուածորդին մերձենալ, և զշնոր-հս բարերարութեան Հոգւոյն ընդունել, և հօր հաճոյ լինել: վասն այնորիկ Որդին Աստուծոյ եկն կատարելայ զուխտն հարցն՝ անուանելով նոցա որդի: Որդին Աստուծոյ վասն այսորիկ եկեալ մկրտի, հաստատել զմկրտութիւն ամենայնի՝ որ մկրտելոց իցեն. զի

անդ իսկ զայս աւանդելով, փր-
կութիւն ամենեցուն յայտնեալ
և 'ի միում աւուր ծանիցի. և բաց-
ցէ զամենակալեցոյց Հզօրութեան
վարդապետութիւնն իւր յայտ-
նել աշխարհի ։ Որպէս ասէ մար-
գարէն իբրև յերեսաց տեառնորդ-
ւոյն, Թէ մատերուք առ իս և
լուարուք զայս. ոչ ի սկզբանէ 'ի
ծածուկ խօսեցայ, և ոչ 'ի
տեղւոջ խաւարին երկրի. զի յոր-
ժամ լինէրն՝ ես անդ էի. և արդ
Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի
նորա ։ Տեառնեա զէական միաւո-
րութիւնն. յորժամ լինէրն՝ ես
անդ էի ասէ. յայտ արարեալ
զմիաբանն Երրորդական զօրու-
Թիւնն. Թէ և 'ի հաստատութեն միա-
գործ, և 'ի նորոգելն միաբան ։

Արդ բացեալ երկինք, և Հայր
աղաղակէ, Թէ դա է Որդի իմ սի-
րելի. և Հոգին իջեալ 'ի նմանու-
Թիւն աղաւնոյ. զի յայտ լիցի
միաբանն խորհուրդ զօրութեան
զալստեան Որդւոյն ։

Եւ զի՞նչ էջէ զոր ասէն, Թէ

Digitized by Google

խոնարհութեան խոստովանեալ. Թէ ոչ զառ-
աջնաձայն սրբոց մտածութեանցն,
որ ընդդէմն 'ի նոցա վասն իւր խոստա-
ցաւ. և խոնարհեցաւ միաւորութեամբն
Հօրն և Հոգւոյն՝ եկեալ երևեալ
'ի վախճանն ժամանակաց: Որ էրն
խոնարհութեան Բանն, և Բանն էր առ
Աստուած, և Աստուած էր Բանն,
սա էր խոնարհութեան առ Աստուած.
ամենայն ինչ նովաւ եղև, և ա-
ռանց նորա եղև և ոչ ինչ որ
ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, և
կեանքն էին լոյս մարդկան. և լոյս
'ի խաւարի անդ լուսաւորէր. և
խաւար նմա ոչ յաղթեաց: Եղև
այր մի առաքեալ յԱստուծոյ
Յովհաննէս. սա եկն 'ի վկայու-
թիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն
զի ամենեքեան հաւատասցեն նո-
վաւ:

Արդ լսեալ և կատարեալ ամե-
նայն, և լոյս որդւոյն Աստուծոյ
'ի մէջ անցեալ լուսաւորել զա-
մենայն մարդ՝ որ գալոց է յաշ-
խարհ. որում խաւարն ոչ կարա-
ցեալ համեմատել յաղթել. այլ

այսու լուսով եղև աշխարհս, և զնա ոչ ծանեաւ։ Այդ վասն այսորիկ եկեալ՝ 'ի միտ առցեն զայս նորա, և որդիք Աստուծոյ լիցին։ Եկն հաստատել զօրէնս և զմարգարէս, և զօրինակն անցուցեալ՝ և զճշմարտութիւնն հաստատեալ։

Եւ զինչ իցէ որ ասէ՝ Բանն․ մի թէ բարբառ՞ ինչ իցէ բախեալ լեզուաւ ընդ օդս․ որ յառաջ քան զասել ասողին չէր յայտ, և յետոյ անհետ՝ չէ 'ի միջի։ Այլ վասն այսորիկ անուանեցաւ Բանն, զի որպէս բանն 'ի բերան ասողին, նոյնպէս և ամենայն հրամանք Հօր կամաց եղանեն 'ի բերանոյ Որդւոյ։ Զի պատկեր է Հօր և կատարեալ կամաց նորա, որպէս և ինքն ասէ․ Ոչ որ գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի․ որպէս և զՈրդի ոչ որ գիտէ՝ եթէ ոչ Հայր։ Եւ դարձեալ ասէ, եթէ եկի կատարել զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Եւ դարձեալ՝ Յովհաննէս ասէ․ ԶԱստուած ոչ երբէք ոչ



Digitized by Google

եանս, բայց միածին Որդին որ 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց:

Եւ ինքն ևս Հայր ասէ, Թէ եհաս ժամ, Հայր, փառաւոր արա զՈրդի քո. և եկեալ բարբառ յերկնից ասէ, Փառաւոր արարի, և այլ փառաւորեցից: Իբրև զի ոչ Թէ 'ի խնդրել պատուոյ, և կամ կարօտ ինչ Հայրութեան փառացն, այլ զի լուիցեն արարածք և հաւատասցեն յՈրդին: Նոյն օրինակ և Որդին 'ի մէջի կացեալ՝ զՀայրն ցուցանէ աշխարհի և ըզՀոգին սուրբ. նոյնպէս և Հայր աղաղակէ վասն միածնին, Թէ դա է Որդին իմ միածին՝ հաւանեցուցիչ անձին իմոյ. եդի զոգի իմ 'ի վերայ դորա: Որ և յայտ լեալ յիջանելն 'ի վերայ և հանգչել, որպէս և ինքն ասէր զՀոգւոյն սրբոյ, Թէ նա զիս փառաւոր առնէ:

Եւ եկեալ կատարէ զկամս առաքչին իւրոյ. որ և աղաղակ իսկ եդեալ ասէր, եԹէ որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն՝ որ առա-

քեացն զիս. և որ ընդունէ զիս՝ զայն ընդունէ որ առաքեացն զիս: Եւ այսպէս զհայրական փառսն յինքեան ցուցանէ ամենեցուն յայտնական վարդապետութեան:

Եւ յառաջընթաց Կարապետն հրեշտակին առաքեալ Հօր, զայ առաջի և աղաղակէ, թէ սա է Որդին Աստուծոյ, սա է գառն Աստուծոյ, սա է որ զայ բառնալ զմեղս աշխարհի: Ելեալ 'ի վերայ լերինն բարձու՝ 'ի մեծութիւն զօրութեան աստուածութեան, որպէս յառաջասաց անսող մարգարէն ասէ 'ի Տեառնէ. Ի վերայ լերինն սրբոյ 'ի լերինն բարձու՝ անդ ծառայեսցեն ինձ ամենայն ազգք երկրի: Եւ զարձեալ միւս անսողն գոչէ. թէ ել 'ի լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիովնի. բարձրացո՛ զբարբառ քո, աւետարանիչդ Երուսաղեմի: Բարձրացայք, բարձրացուցէք զբարբառ ձեր, և մի՛ զանգիտէք. ասա՛ ցքաղաքսդ Յուդայ. Ահաւասիկ Աստուած մեր,

անհասանելիք Տէր Տէր զայս զօրու-
թեամբ իւրով, և բազուկն մեծու-
թեամբ իւրով, անհասանելիք մարդք
համբերութեան իւրոյ ընդ իւր, և
գործք իւրաքանչիւր առաջի նո-
րա : Իբրև հովիւ հովուեսցէ զխա-
շինս իւր և 'ի բազուկ իւր ժողո-
վեսցէ զգառինս իւր · և 'ի գիրկս
իւր ընկալցի զնոսա, և մխիթար
լիցի յղեաց ծանրացելոց : Ո՞ չա-
փեաց ափով իւրով զՋուրս ամե-
նայն · կամ ո՞վ չափեաց զերկինս
թզաւ իւրով, և զերկիրս ամե-
նայն քլաւ իւրով : Ո՞վ եդ զլե-
րինս 'ի կշիռս, և բարձ զդաշտս
կշռորդօք : Ո՞վ գիտաց զմիտս
Տեառն, կամ ո՞վ եղև նմա խոր-
հրդակից :

Եւ զի՞նչ լիցէ զոր ասէն ; թէ
ել 'ի վերայ լերին բարձու աւե-
տարանիչդ Սիոնի · այլ՝ իբրև զայն
որ ասէն՝ թէ Տէր ետ հրաման ·
զի՛ տէրունի հրամանքն՝ ամենե-
ցուն գեր 'ի վերոյ են, և 'ի բար-
ձանց են հրամանք Բարձրելոյն :
Եւ զի՞նչ բարձր և ստուար քան

զհրամանս աստուածութեան կայ-
ցէ․ 'ի նոյն խիղճ եղեալ աստուա-
ծութեանն քարոզք 'ի նոյն հրա-
մանաց ըստ բարձրութեան, ա-
ռանց զանդիմանելոյ և երկիւղի՝ ա-
մենեցուն առաջի անվեհեր քա-
րոզել։

ԽԸ․ Արդ եկն և մեծն Յով-
հաննէս՝ որդի քահանայապետին
Զաքարիայ, անդէն եւ ամենայա-
կիցն և ոչ օտար ոք․ անդէն ժա-
ռանգն և բնակիչն Սիոնի, նորուն
վախճանակէր քահանայութեանն,
խոյրաղիր պատուին պատմու-
ճանացն սրբութեան, աւանդա-
կիր պատուիրանացն․ և ոչ եկա-
մուտ ոք, այլ կամարարծու վայել-
չութեանն, շառաւեղն Մովսէսի,
և զաւակին Ահարոնի, և աւետա-
րանիչն Սիոնի, օծութեանն ան-
կու, տակաւ զպատիւ նախնեացն
քահանայութեանն։ Նա բովան-
դակեալ զմարգարէութիւն մար-
գարէիցն՝ եղեալ յանապատ 'ի
վերայ աստուածական հրամա-
նացն ըեռնացելոց, բարձրացու-

ցեալ զբարբառ իւր աւետարանիչն Երուսաղէմի, բարձրացեալ բարձրացուցանէր զբարբառ իւր, զի ձայն բարբառոյ էր նա յանապատի, և ասէ՝ ահա Աստուած մեր, ահա Տէր, և նա նոյն թագաւոր Իսրայէլի:

Արդ ամենայն շնորհք աւանդութեանն՝ մարգարէութիւն իսրայէլական ազգին, որ կրէր աւանդապահ օրհնութեանն աւետեացն և օծութեանն, 'ի ձեռն Ղեւեայ տոհմին էր յանձնեալ քահանայութեանն՝ թագաւորութեամբն հանդերձ:

Զի 'ի ժամանակի իբրև կոչեաց Տէր զՄովսէս 'ի մէջ հրոյն և ամպոյն՝ 'ի գլուխ սինէական լերինն, և տեսիլ փառաց Տեառն իբրև զհուր վառեալ էր. իբրև առնոյր զպատուիրանս օրհնացն Մովսէս 'ի ձեռացն Աստուծոյ, պարգեւախնդիր տեսանելով զԱստուած 'ի պատասխանւոյն նմա, զի ասէ զթած եմ և ողորմած, անդ առնոյր զաւանդութիւն իշխանու-

թեան քահանայութեան թագաւորութեան և մարգարէութեան 'ի ձեռաց Աստուծոյ ։ Անդ եւ նման զօրինակ օծութեանն Քրիստոսի . զի նախ առաւելքն լիցին, և ապա իբրև եկեսցէ ճշմարտութիւնն՝ որոյ են իսկ, և վասն որոյ են ։ Անդ տայր նմա առնել զերջինսն օծութեան, զխնկանոց խնկոցն ։

Որ երջինսն զօրինակ օծութեանն Քրիստոսի, և խնկանոցն զօրինակ սուրբ կուսին Մարիամու ունէր ։ Որպէս նայն լի էր խոստովանութեամբ, նոյնպէս և կոյսն Հոգւովն սրբով և զօրութեամբ Բարձրելոյն ։ Իսկ երջինսն ձիթոյն՝ ունէր զօծութիւն Քրիստոսի օրինացն . զի որ միանգամ յօրինակ նորա օծանէին՝ անտի օծանն ։ Ուստի և օծէր Ահարոնի 'ի քահանայութիւն Ցեառն, և առնոյր զքահանայութեան թագն օծանել ըստ նմին օրինակի, զնել նոցա արտախուրակս, և պաշտել 'ի սրբութիւն Ցեառն . և

կարգել զհանապազորդ հացն 'ի սեղանն՝ որ բերէր զօրհնեալ մարմնոյ աստուածորդւոյն :

Անդ արար Մովսէս զարծաթի եղջիւր օծանութեան իւղոյ, ուստի քահանայքն և մարգարէքն և թագաւորքն օծանէին : Անդուստ զայր կարգեալ օծութիւնն մի ըստ միոջէ ըստ հրամանի իշխանութեան պատուիրանին, որ կարգէր զայր առաջնորդութեամբ՝ յարքայական զաւակին պաշտէր խորհուրդն : Զի ամենապահք այլին ցանկեալ մինչև ցՅովհաննէս քահանայ, մարգարէ և մկրտիչ . և 'ի նա հանեալ՝ երեքն 'ի ժառանգ միացեալ : Զի 'ի նա հանեալ էր յառաջին նախնեացն, թագաւորացն, մարգարէիցն, և յօծելոց քահանայիցն՝ երեքն յաւանդապահ . և նա ետ զքահանայութիւնն զօծութիւնն և զմարգարէութիւնն և զթագաւորութիւնն ցՏէր մեր Յիսուս Քրիստոս :

Եւ կատարեցաւ մարգարէու-

Թիւն Յակովբայ՝ յաւելու որդիս ազգի իւրոյ, Թէ մի պակասեսցէ պետութիւն իշխանութեան, մինչև եկեսցէ այն՝ որոյ իւր է Թագաւորութիւնն. քանզի նա է յոյս հեթանոսաց:

Արդ առաջին հայրքն որ եղեն օրինակ նորա, յորս Աստուծոյ կերպարանքն նկարեալ կային. զի նոցա ամենայն արարածք հնազանդէին, քանզի զկերպարանս արարչին՝ի նոսա տեսանէին: Իսկ զիա՞րդ հնազանդէին անխօս անմռունչ և անշունչ արարածքն՝ մանկանացս մարդկան, Թէ ոչ զնշանս Աստուծոյ՝ի նոսա տեսանէին և զկերպարանս արարչին: Եւ այսպէս մի քան միոջէ վարեալ եկեալ աւանդութիւնքն մինչև ցՅովհաննէս, և Յովհաննէս եա զաւանդն պահեստին՝ Տեառն իւրոյ:

ԻԹ. Արդ այսուհետև Տէրն ինքնին ՚ի միջի կայ, և Յովհաննէս վկայէ՝ եԹէ չեմ ես Քրիստոսն, այլ առաքեալ եմ առաջի նորա:



Digitized by Google

Այլ որ հարսնն է՝ նա է փեսայ. և որ բարեկամ է փեսային՝ կայ առ նմա և հնազանդի նմա. և նա ուրախ առնի յուրախութեան նորա, զի զձայն լսէ փեսային: Իմ ուրախութիւնս լցեալ և կատարեալ, արդ նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ: Որ 'ի վերուստն գայ՝ 'ի վեր է քան զամենայն. որ 'ի յերկրէ է՝ յերկրէ աստի խօսի. որ յերկնից գայ՝ զոր լուաւն և տեսեալ վկայէ, և զվկայութիւն նորա ոք ոչ ընդունի. որ ընդունի զվկայութիւնն՝ ծրարեաց և կնքեաց, զի արդարեւ ճշմարիտ Աստուած է: Զի որ յԱստուծոյ առաքեցաւ, նա զպատգամս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տուաւ նմա հոգին. Հայր սիրէ զՈրդի՝ և զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա. որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենից. և որ թերահաւատ է յՈրդւոյ՝ ոչ տեսանէ զկեանս յաւիտենից. այլ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ նորա բնակեալ է:

Ահա եկեալ հրեշտակին Յովհան-
նէս՝ պատրաստել ճանապարհս
Տեառն իւրում: Զի որպէս ա-
ռաջին զաւետաւետեանն Գաբրիէլի եղե-
կարապետ, իսկ յայտնութեանս
սա առաջի եկեալ ասէ, Առաքեալ
եմ առաջի նորա. այլ որ հարսնն
է՝ նա է փեսայ:

Իսկ ո՞ է հարսն, կամ ո՞ փեսայն.
եթէ ոչ այն զօր մարգարէն ասէ,
Թէ՝ այսպէս ասէ Տէր, խօսեցայց
զքեզ ինձ յաւիտեան, և խօսե-
ցայց զքեզ ինձ արդարութեամբ
և գթութեամբ. և ծանիցես, զի
ես եմ Տէր Աստուած քո. և լքը-
ցես դու զհոմանիս քո, զփայտա-
ղէնս և զքարեղէնս, և ասասցես՝
եթէ երթայց դարձայց յայրն իմ
առաջին:

Քանզի թողին մարդիկ զպաշ-
տօն արարչին իւրեանց, և ամե-
նայն փայտի և քարի հնազանդե-
ցան. և թողին զայրն առաջին՝ որ
յոչընչէն արար զնոսա, և շնացան
ընդ ինչ տարրեղէն, ամենայն որ
առ ական զեղծեցան. և պոռնկե-

ցան զհետ մտօք պաշտամանցն արարածոցն ։ Վասն այսորիկ էջ աստուածորդին քակել յերկրէ զընդունայնութիւն պոռնկութեն չնութեան քարեղէն հոմանեացըն ։ դարձուցանել յերկրպագութիւն հօր, և տալ անուանել զայրն խուր` այր ։ Եւ առաջին, վարըն նախանձականին ինքնութեան ասէ ։ որպէս մեկնէ Պաւղոս առ հեթանոսս, ասէ` Հաստատեցի խօսեցայ զձեզ ինձ հարսնութեան իբրև կոյս մի սուրբ` յանդիման կացուցանել Քրիստոսի ։ և մարգարէն ասէ, Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ ։ Զամենայն տիեզերս իբրև զմի հարսն դարձուցեալ առ մի փեսայ, այնպէս նշանակէ այրն` որ 'ի յերկնիցն եկն Որդին Աստուծոյ ։ որպէս Յովհաննէս ասէ, Որ յր հարսնն է` նա է փեսայ ։ և մեք բարեկամք և ծառայք` ըստ հրամանացն ընթանամք ։ կամք առ նմա և հնազանդ եմք նմա, և ուրախ առնեմք յուրախութեան նորա, և զձայնն լսեմք փեսային ։

Այս այն է՝ զոր մարգարէն ասէ․ Լո՛ւր զուարթ և տես, խոնարհեցո՛ զունկն քո․ մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քոյ․ զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քում․ զի նա ինքն է Տէր քո՝ երկիր պագցես նմա։ Այս այն է որ ասէն․ Յարիցես զարթիցես մերձաւոր իմ, սիրելի իմ․ բացցես ինձ զդրունս տաճարին, և համբուրեսցես զիս ՚ի համբուրից բերանոյ քո․ զի առատ են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս անուշութեան։ Իւղ արկեալ է անուան քո; վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ․ զհետ իւղոց քոց ընթասցուք մեք․ տարաւ զիս արքայ ՚ի սենեակ իւր։

Իսկ ո՞վ հարսն, թէ ոչ եկեղեցի հեթանոսաց․ կամ ո՞վ փեսայն՝ եթէ ոչ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ․ որ էջ յերկնից և նուաճեաց զամենայն յերկրպագութիւն Հօր։ Իսկ զի՞նչ երկու աստեր ստինքն, եթէ ոչ կտակա-

բանիք Աստուծոյ, որ արտաքսա-նեն զամենայն աղէտս հոգեւոր կամ մարմնական պղտորութեանն: Եւ զի՞նչ է որ ասէն. Հաս խաղաղ քոյ՝ քան զամենայն խոստմունս անմոռացու-թեան. և եթէ՝ խաղ արկեալ է անուան քո: Զօծութիւնն Քրիս-տոսի, և զանուանն յայտ առնէ. և համբուրելն՝ սիրոյ նշանակ է զեկեղեցի Քրիստոսի, և Քրիս-տոսի Որդւոյ Աստուծոյ:

Արդ նոյն աշխարհ և խիստ մեղմա-նալ, այսպիսիքն զժամանակին առնէ մեղմանալոյ. զի մկրտութիւնն զոր առայր ժողովրդեանն՝ առաջնոր-դութեան մկրտութեան էր: Որ ասէ 'ի վերստացման եկն՝ 'ի վերոյ է քան զամենայն, յայտ առնելով զգալն 'ի ծոցոյ Հօր առ մեզ: Ա-սէ, Եւ յերկրէ խօսեցայ, յերկ-նից առնել զզօրութիւն. իսկ որ յերկնիցն եկն՝ զՀօր խօսի, և ըզ-Հօր գործ գործէ: Որպէս Ցերն խիզն ասէր առ Հրեայսն, Թէ ես 'ի Հայր և Հայր առ իս. զի՞նչ տե-սանեմ եթէ Հայր գործէ, զնոյն

և նա գործեսցէ · զի վասն ապստամբին նա եկն զի արարից զկամսն Հօր իմոյ , և կատարեսցէ զգործս նորա :

Այսպէս և վասն Հրէիցն , թէ զմկրտութիւն նորա գուշակ ոչ ընդունէին : Որ ընդունին զմկրտութիւնն նորա՝ ծառայեսցեն և կեցցեն , զի անկորուստ՝ ընդ ի արդարութեանն · և երկրպագեն՝ զի արդարև ճշմարիտ Աստուած է · զի անշուշան և անշարժ և անկորուստ ընդ ի արդարութեան հաւատոցն · և երգումն՝ կենաց որոշեալ առ Աբրահամու : Զի որ 'ի ծոցոյն Հօր եկն՝ նա է անեղծական խորհրդոց ծննդեան իւրոյ : Զի ոչ եթէ իբրև կարօտ ոք էառ նա զխորհս Հոգւոյն , այլ՝ ինքն միակամ, միաշնչական, միախոհ ընդ Հօր և ընդ Հոգւոյն · զի ինքն է բաշխիչ խորհրդոց Հոգւոյն սրբոյ : Զի Հայր օծէ զՈրդի իւր , և Հաստատութիւն Հօր՝ Որդւովն · և որ Հօրն՝ նոյն և Որդւոյ · և որպէս Հայրն , նոյնպէս և Որդի · և ամենայն շնորհք Հոգւոյն յՈրդւոյ բաշխին : Որ Հաւա-

տայ յՈրդի՝ ամենայն զիշխանութիւն յաւիտենականս. որ Թէպէտ հաւասար է յՈրդւոյ՝ ոչ ունելով զիշխանութիւն յաւիտենից :

Վկայէ Յովհաննէս, ասէ. Զորմէ ասէին, սա է միածին Որդին Աստուածոյ. Եւ ասէի և վկայեմ, Թէ սա է որ բառնայ զմեղս աշխարհի : Սա է ժառանգ այգւոյն, և Տէր գայ զօրութեանց և բազաւկին հզօր անէրութեանց իւրով. զի բազմաւ հզօր՝ Հօր սա է, և զանէրութիւն իւր առ իւր ունի, Թէպէտ և կամօք երեւեցաւ խոնարհութեամբ :

Եհաւասարել, ասէ, մարդկը հաւատուցմամբ իւրոյ ընդ իւր. և ամենայնի նա է հաստատութեան, և զործք իշխանութեանց սատանայի նորա. ըստ այնմ, Թէ ՚ի մէջ ասունու զամենայն զործս նորա : Իբրև հոգին մի հաղորդեցաւ զիսաշխեա իւր : Որ ՚ի մէջ իւրն անցեալ կենդարաբն ասէ, Թէ եւ եմ հոգիս քաղ. հոգիս քաղ զնե զանձն իւր ՚ի վերայ խաչին իւրոյ : Նւ ՚ի բա-

զուգս իւր ժողովեսցէ զպատճէնս իւր, և 'ի զերկս իւր ընկալցի ըզնոսա:

Որ կենարարն եկեալ յայս աշխարհ, ածնուլ ժողովել ըզմանկունս 'ի վերայ աստուածական բազկացն. և օրինակեալ ամենեցուն, թէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանուկս զայս, ոչ կարէք մտանել յարքայութիւնն Աստուծոյ: Նորոգել հրամայէ, և մերկանալ հրամայէ զհին մարդկութիւնն 'ի ձեռն մկրտութեան աւազանին: Զի թէպէտ կարի ոք թմբրեալ ծանրացեալ իցէ՝ ծանրակիր մեղօքն խաւարութեան յղացեալ, որպէս ասէ, Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն, յղացեալ զցաւս և ծնաւ զանիրաւութիւն, սակայն բացեալ զդրունս ապաշխարութեան՝ 'ի մէջ կայ կենարարն մեր, եկեալ աղաղակէ և ասէ. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և աշխատեալք և ոյք ունիք զբեռինս ծանունս, և ես հանգուցանեմ զձեզ. և առէք

զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն, զի հեզ եմ հանդարտ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի:

Իսկ հարցանէք դք, թէ ո՞վ իցէ որ այսպէս մխիթար լինի յղեացն ծանրացելոց, լուիցէ Եսայեայ մարգարէութեանն՝ ով այն իցէ. ասէ. Ո՞վ չափեաց ափով իւրով զջուրս ամենայն, կամ ո՞վ չափեաց զերկինս թզաւ իւրով և զերկիր ամենայն քլաւ իւրով. ո՞վ եդ զլերինս 'ի կշիռս, և եղարձ զդաշտս կշռորդաք. ո՞վ գիտաց ըզմիտս Տեառն, կամ ո՞վ եղև նմա խորհրդակից: Որ 'ի Հօրէ ուսաւ զվճիռս դատաստանին, նա եկեալ մարդ լեալ քարոզէ աշխարհի՝. խառնեալ սիրով իւրով զամենեսեան յաստուածութիւնն: Եւ այսուհետև եկեալ լոյսն 'ի մէջ անցեալ՝ լուսաւոր առնել զամենայն մարդ որ գալոց էր յաշխարհ, քարոզէր և ասէր. Ապաշխարհեցէք զի մերձեալ է արքայութիւնն

Աստուծոյ. կատարեալ են ժամանակք, հաստատեցէք յաւետարանն:

Ծ. Արդ լուրն անցանէր առ ծովեզերբ, ասեմ զՊետրոս և զԱնդրէաս, և զՅակովբոս և զՅովհաննէս, և կոչեաց զնոսա ՚ի ձկնորսութենէ անտի. որ անդէն վաղվաղակի թողին զհայրն իւրեանց նաւուն հանդերձ և երթեան զհետ նորա: Եւ զբազումս յայլոց ՚ի պէսպէս զբօսանաց կոչեաց՝ աշակերտս երկոտասանս և Առաքեալս անուանեաց. զորս ուսուցանէ ազատանալ յամենայն զբօսանաց. որ զհետ նորա շրջէին, արժանի եղեալ աստուածագործ աւանդութեանն խորհրդոյն:

Որ այնուհետև մարդասէրն Քրիստոս ՚ի մէջ անցուցեալ զամենակար բժշկարանն, բժշկել զախտս և զչարչարանս. և զյառաջաձայն սրբոց մարգարէիցն ՚ի մէջ ունել զբանն՝ որ գոչէ, Նա զհիւանդութիւնս մեր բարձցէ. և

զինուորին բանս արդարացուցեալ՝ որպէս ասէն, թէ արդարացուցանէ զբանս ծառայից իւրոց մարգարէից :

Եւ սկսանու այնուհետեւ զառակսն անցուցանել, թէ՝ ընդ ամենայն տեղիս 'ի ձեռն Հոգւոյն ճշմարտութեան երկիր պագցեն Հօր. զի Հայր զայնպիսի երկրպագուս խնդրէ. և թէ՝ զողորմութիւն կամիմ, քան զպատարագս : Եւ եթէ՝ ես եմ Հօր Որդին, զի Հայր ինձ վկայէ Հոգւովն հանդերձ ճշմարտութեամբ. և թէ՝ Մովսէս ձեզ յառաջագոյն վասն իմ գրեաց. և Յակոբ վասն իմ ասէր ցՅուդա, թէ մի պակասեսցէ իշխան Յուդայ և պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ այն՝ որոյ իւրն է թագաւորութիւնն. քանզի նա է յոյս հեթանոսաց :

Եւ թէ՝ մարգարէքն ամենայն վասն իմ գրեցին, առեալ յիմմէ առաքչէն զգիտութիւն. և յայս արարեալ նոցա, թէ իմ է այգիս, և դուք էք մշակքն. և ես եկի,

զի ես եմ ժառանգ այգւոյն. եւ խնդրելն զպտուղ այգւոյն. զի առից. որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես եկի կատարել զկամս Հօր իմոյ: Եւ թէ՝ եկի կատարել զխոստացեալ աւետիսն Աբրահամու, զի աւետեացն կեցցեն զաւակին աբրահամեան. և զաւակին Աբրահամու նոցա ծանօթ լինել: Իսկ նորա միանգամայն զճշմարտագոյնն առաջի եղեալ, եթէ յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես: Եւ անդէն 'ի մեր այնուհետեւ հայեցուցեալ՝ որպէս և էն իսկ, հարցանելով առ 'ի նոցանէ զմարդարէականն, թէ որպէս ասեմք զՔրիստոս որդի Դաւթայ. զորմէ Դաւիթ իսկ նշանակեաց Հոգւովն սրբով, թէ ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. և արդ զիա՞րդ իցէ որդի Դաւթի:

Նոյնպէս և ամենայն յայտնութեամբք և առակօք յանդիմանէր և խայտառակէր զկեղծաւորութիւն և զամբարշտութիւն և

զանօրէնութեան նոցա։ Իսկ նո-ցա խոլացելոց և կուրացելոց 'ի Ճշմարտութենէն՝ նախանձէին 'ի չարութեան դառնութեան իւ-րեանց, կորուսանել զանձինս իւ-րեանց։ Իսկ նա եկեալ՝ լինէր բ-ժիշկ մարդասիրութեամբն իւ-րով, զկոյրս լուսաւորել, զկաղս գնացուցանել, զբորոտս սրբել, փրկել զամենայն կորուսեալս 'ի սատանայէ. և զանդամալոյծս յա-րուցանել, և զխուլս բանալ, և համրոց տալ խօսել, և զմեռեալս յարուցանել. զսատանայ կոխան առ Տէր հաւատացելոց իւրոց, և խոստանայր երթալ պատրաստել օթեվանս յարքայութեանն երկ-նից. և զինքն արարեալ օրինակ ամենայնի, համբերել Ճգնու-թեանց առաքինութեամբն։

Որ դարձոյց զջուրսն 'ի գինի՝ զի յայանի լիցի աստուածութիւն նորա, թէ նոյն է որ յոչնչէն ա-րար զջուրն 'ի բնութիւն ջրոյ. նոյն զջուրն 'ի գինի դարձոյց, որ-պէս և կամեցաւ։ Իսկ այն որ վասն

մեղացն ցասս խառնելոց, նոյն ինքն նեխն զաստուածութիւն բառնել։ Եւ բազումք հաստատեցին յանուն նորա, եւ բերեւ սուտքն ընդշանեան զօր առնէր. այլ նա քանզի սրբազան էր, գիտէր զամենայն խորհուրդս մարդկան. քանզի ծածկագէտ է։

ԾԱ. Աղա յետ այսորիկ առեալ վճիռ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ եւ ՚ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ, եւ ոչ նորոգեսցի միւսանգամ. զի այս որ ՚ի մարմնոյ առաջ ծնեալ է՝ մարմին է։ Իսկ այն որ ՚ի Հոգւոյ անտի է՝ հոգի է. զի Հոգին ուր ուր կամի, բղխէ. զձայն նորա լսես, այլ ոչ գիտես՝ ուստի գայ կամ յով երթայ. Զի ոչ ոք ել յերկինս, բայց որ էջն յերկնից Որդին մարդոյ։

Եւ ասացեալ վասն յառաջագիր չարչարանացն իւրոց, թէ որպէս Մովսէս կախեաց զօձն յանապատին, այնպէս կախել պարտ է Որդւոյ մարդոյ. զի որ միան-

զասն հաւատայցէ 'ի նա՝ ընկալու-
ցի զկենդանին յաւիտենից: Զի
այնպէս սիրեաց Աստուած զաշ-
խարհ, զի զՈրդին իւր միածին ետ
'ի վերայ նորա. զի ամենայն որ
հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ, այլ
ընկալցի զկենդանին յաւիտենա-
կանն: Զի ոչ առաքեաց Աս-
տուած զՈրդի իւր յաշխարհ, զի
դատեսցէ զաշխարհ, այլ զի
փրկեսցէ նա զաշխարհ: Որ հա-
ւատայ 'ի նա՝ ոչ մտանէ 'ի պա-
տիժս դատապարտութեան. որ
ոչն հաւատայ 'ի նա՝ աստանօրէն
իսկ դատապարտեալ է. քանզի
ոչ հաւատացին նորա յանուան
միածնի Որդւոյն Աստուծոյ: Եկն
առ իւրսն, և իւրքն զնա ոչ ըն-
կալան. այն որ խնկզրանն է ժամա-
նակացն երախայրիքն եղեն, և խնա-
մակալութիւնք և պատուիրան-
քն. ուսուցի և մարգարէով իսկ ե-
րեւեցաւ, յանձանց իսկ մերժե-
ցին զնա:

Եւ այս են դատաստանքն, զի
լոյս եկն յաշխարհ, և մարդիկ

սիրեցին զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեամբ ։ Զի ամենայն որ որ զչար գործէ, և չար գոյցէ . և ատեայ նա զլոյսն, և ոչ գայ 'ի լոյսըն, զի մի յանդիմանեսցին գործք նորա ։ Իսկ որ առնէ և գործէ զճշմարտութիւնն՝ գայ նա 'ի լոյսըն, զի յայտնի լինիցին գործք նորա զի Աստուծով գործեցան ։ Եւ աստուածորդին ուսուցեալ ամենեցուն զճանապարհս արդարութեան . իսկ խաւարասէրք գործոց մարդկան անօրինաց Հրէից սկսեալ կեղծաւորել, և խնդրեալ սպանանել զնա մեղակաց այգւոյն, և ոչ համարեալք արժանի զանձինս իւրեանց կենացն յաւիտենից, այնուհետև զգեհեանն խոստացաւ առնելով, վա՜յ վա՜յ 'ի վերայ նոցա ։

ԾԲ . Իսկ բարերարն Յեսուսն ժողովեալ զաշակերտսն երկոտասանս, զորս Առաքեալս անուանեաց, և զարձեալ՝ եւթանասունս և երկուս . խրատեալ և վարժեալ

զնոսա աստուածածնութեան խորա-
սուն, և վկայ կացուցեալ և ա-
սացեալ ցնոսա, և սիրելիս և բա-
րեկամս անուանեալ, թէ ես ձեզ
ասեմ սիրելեաց իմոց, մի երկնչի-
ջիք յայնմանէ որ զմարմին սպա-
նանեն, և զոգի ոչ կարեն սպա-
նանել: Եւ եթէ՝ ես ինձ զձեզ
բարեկամս գիտեմ· և թէ՝ զոր
միանգամայն ասաց ինձ Հայր իմ,
ես ձեզ ցուցի: Եւ յայտնեալ
նոցա զելեալն առ՚ի Հօրէ և զգալուստն
՚ի նոյն աստելումն, թէ ելի ՚ի Հօրէ
և եկի յաշխարհ, և դարձեալ
թողում զաշխարհ և երթամ առ
Հայր:

Ցուցեալ նոցա և զաւետիս Հոգ-
ւոյն սրբոյ առաքելոյն ՚ի Հօրէ,
թէ երթամ և առաքեմ զմխիթա-
րիչն, որ եկեալ մխիթարեսցէ
զտրտմեալսդ վասն իմ: Տես զդա-
գականութիւնն, տես զմիաւորու-
թիւն զօրութիւնն, տես զմխիթական
լիութեանն կատարելութիւնն · զի
եկեալ՝ ասէ՝ զիմ առեալն լցէ, և
նովին [illegible] առաջ-

նորոգեսցէ զձեզ, և յանդիմանեսցէ զաշխարհս զի ոչ հաւատայցեն յիս. դատանեսցի և զիշխարծեալ եղխանն աշխարհիս այսորիկ։ Ճշմարտեսցէ միանգամայն զձեզ վասըն իմ, զի 'ի Հօրէ առաքի. որոյ պաշտաման՝ զերթայցն խնդոյ առ Հայր մեկայէ. Նա եկեալ առաջնորդեսցէ զձեզ ամենայն ճշմարտութեամբ։

ԾԴ. Այլա առնու այնուհետև զյառաջաջեղիր խորհուրդ չարչարանացն Յիսուս կատարել յԵրուսաղէմ. վասն որոյ բազում անգամ զուշակեաց, թէ մատնելոց է և յերեքն աւուր յառնելոց։

Եւ վասն որո՞յ արդեօք զայսցէ 'ի մահն. զի թէ պատրաստական էր մահու. այլ մարգարէքն ասէ, թէ անօրէնութեան ինչ ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա. զոր և ինքն ասէր, թէ ով 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց։ Իսկ ըստ օրինաց ինչ պատրաստական մահու. այլ

ասէ՝ կատարել նմին զօրէնս. ա-
րամս և Աստուծոյն միայն է, թէ
կատարած օրինացն Քրիստոս է։
Իսկ 'ի քննութեանց արդեօք 'ի
հարկէ մեռանելոյ. այլ ասէ՝ թէ
անձամբ իմով դնեմ զանձն իմ,
և ոչ ոք հանէ յինէն. Անձամբ,
ասէ, զանձն դնեմ, զի միւսան-
գամ առից զնա։

Իսկ ընդէ՞ր կամիցի զանձն դը-
նել անպատրաստականն մահու։ Ես
եմ, ասէ, հովիւ քաջ՝ որ 'ի վե-
րայ խաշանց իմոց մեռանիմ։ Յո-
րո՞ց խաշանց արդեօք. 'ի հարթու-
ցելոցն, 'ի փախուցելոցն, 'ի գա-
զանակերաց եղելոցն. զոր յառա-
ջագոյն մարգարէն ասաց, թէ
ամենեքին իբրև ոչխարք մոլո-
րեցայք, և այր ամենայն 'ի ճանա-
պարհի իւրում մոլորեցաւ. և
Տէր մատնեաց զնա 'ի մեղս մեր,
և յանօրէնութեանց ժողովրդեանն
իմոյ 'ի մահ վարեցաւ։

Վասն որոյ քահանայապետ
ազգին տնօրինականաց՝ ակամայ
մարգարէացաւ, թէ լաւ է մեզ

զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժո֊ղովրդեանս, և մի ամենայն ազգս կորիցէ ։ Բայց նա ոչ 'ի վերայ ազ֊գին միայն, այլ զի և զամենայն որ֊դիսն Աստուծոյ զցրուեալսն ժո֊ղովեսցէ 'ի մի ։ Վկայէ և Պաւղոս թէ յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի մեզ ․ զի մինչդեռ մեղա֊ւորքն էաք՝ Քրիստոս վասն մեր մեռաւ ․ և 'ի ժամանակի 'ի վերայ ամբարշտաց մեռաւ ։

Եւ արդ՝ եկեալ աշակերտացն 'ի լեառն Ձիթենեաց, զի կատա֊րեսցէ զմարգարէին որ ասէ, թէ երեւեսցէ տէր Աստուած մեր և ա֊մենայն սուրբք ընդ նմա ․ և կայ֊ցեն ոտք նորա յաւուր յայնմիկ 'ի լերին Ձիթենեաց հանդէպ Ե֊րուսաղէմի, յարեւելից կուսէ ։

Եւ 'ի տօնական աւուրն օրհնա֊կաց զայս աշակերտացն կատարել զօրհնեան, և յայտնել զխորհուր֊դս հոգեւորական տօնին ․ և յա֊ռաջ քան զչարչարանսն զփրկու֊թենագործ զմարմինն իւր և զա֊րիւնն պարգեւէ աշակերտացն ։

Յետ զի կամօքն 'ւ ոչ 'ի բռնութե-
նէ չարչարի Որդին Աստուածոյ՝ որ յառաջագոյն քան զչարչարելն ճաշակեալ լինի :

Յետ այսորիկ աղօթս առնէ խորհրդով 'ի լերինն առ Հայր · ոչ վասն իւր ինչ զանգիտելոյ , այլ զի ցուցցէ թէ միաբան ընդ Հօր զառաջին եղելոյն գործէ : Վասն որոյ բազում անգամ ասացեալ է յառաջագոյն , թէ ոչ յանձնէ ինչ խօսիմ և յանձնէ գործեմ , այլ Հայրն որ ընդկեալն է յիս՝ նա գործէ : Մանաւանդ ընդ զմարդարէականն , թէ փոխանակ սորայ խնդոյ մատնեցին զիս , այլ ես յաղօթս կայի :

Եւ յայս արարեալ աշակերտացն զմիաբանութիւնն Հօր , և տալոց իջանէ 'ի լեռնէն , փութացեալ վասն անհաւատիցն զինել զանձն . Մանաւանդ յորժամ 'ի տօնն եկեղեց Հեթանոսացն ապաչեւ զաշակերտսն՝ երթալ ընդ նոսա առ Յիսուս : Որովք և կատարարէ և մարգարէականն , թէ այս-

պէս ասէ Տէր ամենակալ, յաւուրսն յայնմիկ բուռն հարցեն արք տասն յամենայն ազգաց ըզգրօշակէ առն հրէի և ասասցեն, երթիցուք մեք ընդ քեզ. զի լըւաք՝ եթէ Աստուած ընդ քեզ է։ Եւ Յիսուսի լուեալ ասէ. Եհաս ժամ՝ զի փառաւորեսցի որդի մարդոյ։ Յեաանէս, զի զչարչարանացն փառս կոչէ։

ԾԴ. Արդ ճշմարիտ աշակերտացն երրակցին ժողովեալ առ Ճըշմարիտ վարդապետն առ տէրն և փրկիչ և բարերար և Որդի Աստուծոյ և օծեալ. զորս հարցանէր, թէ զո՞ ասասցեն ասեն մարդիկն զորդւոյ մարդոյ՝ թէ իցէ։ Որոց ուսուցեալ պատասխանի. Դուք զո՞ ասասցէք ասէք, թէ իցեմ։ Որոց առաջինն Պետրոս ասէ, թէ դու ես Քրիստոս Որդի Աստուածոյ կենդանւոյ։ Վասն որոյ և զերանութիւնն ընկալաւ. ասէ. Երանի է քեզ, Պետրոս որդի Յովնանու, զի ոչ յերկրէ տոհմականաց քոց՝ ՚ի մարմնոյ և յա-

ընծէ ազգի քոյ՝ 'ի մարդկանէ ա-
ռնէր զու զայդ զխոստումն, այլ
Հայր 'ի յերկնից եւ 'ի սիրտ քո
և յայտնեաց քեզ։ Եւ արդար զնա
վկեմ հաստատութեան անմնայն
Եկեղեցեաց։

Եւ եղեն հիմունք Առաքելա-
քըն, և առին զնորհս քահանա-
յութեան և մարգարէութեան և
առաքելութեան երկնաւոր խոր-
հրդոցն զխոսութեան; որ վարէր
զայլը յաբրահամեան զաւակին•
զոր եւ ցՏէր 'ի ժառանգու-
թեանն աւանդապահն Յովհան-
նէս, և Տէր եւ Առաքելոցն։
Զփականս արքայութեանն եւ 'ի
ձեռս նոցա, զի լինէն խակ ա-
տուածորդին էր զոլոն մտողա-
ցըն• վասն որոյ և մարգարէն ա-
զաղակէ• Այս դուռն Տեառն է,
և արդարք մտանեն ընդ սա։ Արդ
եւ Յովհաննէս զքահանայու-
թիւնն և զօծութիւնն և զմար-
գարէութիւն և զթագաւորու-
թիւն ցՓրկիչն մեր Քրիստոս• և
Քրիստոս եւ Առաքելոցն, և Ա-

առաքելական եկեղեցւոյ մանկան-ցըն ։

Համարձակութիւն հարցանե-լոյ զՏէրն 'ի ձիթաստանեաց լե-րինն, յորժամ վասն քակելոյ զե-ղեցիկ տաճարին մերձիւ էր ։ Ասա՛ մեզ, ասեն, երբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն եւ վախճանի աշխարհիս ։ Իսկ նա թէպէտ եւ հրաժարէր, թէ վասն աւուրն այնորիկ ոչ ոք գիտէ, ոչ Հրեշտակք եւ ոչ Որդի, բայց մի-այն Հայր, յառաջաբերագործ մա-նաւանդ առաւել մեկնէր ։ Ոչ է ձեզ՝ ասէ՝ գիտել 'ի ժամանակս եւ 'ի ժամս զոր Հայր եդ յիւրում իշխանութեանն ։ Իսկ ո՞ իշխանու-թիւն Հօր՝ եթէ ոչ ինքն Որդի ։ Սակայն առաւել մանրապատմութեամբ նշանօք վասն ահաւոր եւ ամպա-խառնոց գալստեանն իւրոյ, աշա-կերտացն ուսուցանէր ։

Տեսանեմս զի գիտակ էր Որդի ոչ միայն աւուրն՝ այլ եւ ժամուն, եւ կերպարանացն իւրոց եւ գալըս-տեանն իւրում ոչ իւիք անգիտ-

ղեակ ․ բայց վասն թերահաւատ
լսողացն ըստ ժամանակին զիջա-
նելով խօսէր: Այլ թէպէտ խոստ-
նապատասխան շարժեաց վասն հար-
ցողացն զաւերն Երուսաղեմի և
զհամաշխարհական կատարածն ,
ոչ ինչ դժուարագոյն է հասանել
'ի վերայ , եթէ կամեսցի ոք հա-
ւատարեաւ զհետաքննչութեան ընթե-
րել:

Եւ առաւել զպայծառն մեծամեծ
Հ. Արդ սորոցն մարգարէիցն գիրացն գեղեցկաց զատուակին յաճախ-խառգոյնս 'ի մէջ բերելով , Թերևս եղեւլովքն առ արկելով՝ զնոսա յիւ-րաքանչիւր. անձնաւորութեանց փրկել կարասցեն : Վասն այսո-րիկ յաճախապոյնս երբեմն զսո-գոմայեցւոցն հրեղէնեալս , երբեմն զհեղեղատանց մարդկեն Ջրհեղե-ղոյց զարկն՝ յօրինակ առեալ , երբեմն զհարուածս Եգիպտոսի և զայլոց բազմաց . և զանօրէնու-թեանն ծովացեալս կործ , և փարա-տել յերկրէ խստասանեայ : Եւ զար-ձեալ զարդարութեան յերկրի խստասանեայ գնել . և քան զՋրհե-ղեղն ևս յորդագոյնս բազմացու-ցանել , և զերասանս ծաղկեցու-ցանել :

Վասն այսորիկ անցանել մարդ-կան ընդ յանցութեան ծովն , զոր չէ մարգարէն և առէ . անցցեն ընդ ծովն յաղթ , և հերձցեն զա-լիս ծովուն , - այսինքն է զանձա-

բըշխտութիւնս. եւ թէ՝ ցամաքեսցեն պտուղոյք գետոց, այսինքն մեղացն յորդութիւնքն։ Վասն որոյ միւս մարգարէն ասէ, թէ 'ի վերայ գետոց բարկացար, Տէր, կամ սրտմտութիւն քո 'ի վերայ ծովուց. եւ կամ բարկութիւն քո 'ի վերայ գետոց։

Զի ածցէ զյորդութեան անձրեւն, որ ջուրքն սուրբք՝ կենդանութեան հասանիք՝ մերժեսցեն զջուրս անհաւատութեան, եւ ծածկեսցեն յերկրի զղստանութիւն չարութեան ապականութեան անհաւատութեան մարդկան։ Որպէս ասէ մարգարէն, թէ լցցի երկիր գիտութեամբ Տեառն՝ իբրեւ ջուրք բազումք զի ծածկեն զծովս. յայնժամ 'ի կորստական ջուրցն ասէ՝ 'ի կորուսից եւ 'ի հեղձուցիչ, թէ զայն ջուրս ծածկէ՝ որ աղբեայց զերկիրս 'ի հրապոյրս պղտորս. որ առաւելեցուցին եւ վասն հրաւիրանացն՝ 'ի կռապաշտութիւնն որ յորդեն՝ մոլեգնեալ էին յաշխարհի։ Զի

հանճէք զատանելն հոգեբընկալ՝ որ մարդասիրաբարն Եղեւհեթեալ ի ձեռն եւ ցուցա-նէ նոյն ամենայն առաջնորդեսցէ ՚ի մար-դկան չնորհս գիտութեան. եւ նոյն զանազանութեամբ ուսուցանէ եւ զշարադրութիւնն ՚ի բարս շնորհեսցէ։

Իսկ զգաստացուցանողն որ ՚ի հա-ւատոյ Թիւն զայլ ոչ կամեցին՝ սովոր-ութեացն զանձինս հաւատոյ մարդասիրա-կանաց կեցուցեալ, յօգուտ եւ ՚ի փրկու-թեան, մատուցանէ զանկեալ զպա-տանն։ Արդ ՚ի սասանելաբանութեան ստորագութեան նուաստ աշխատելոյն, թէ առաջնորդէ ՚ի մեծայն մեծագոյ-նայ սրբագոյն, հաւր եւ ծծումբ, այս մերձիկ է բաժինն բաժանելի նա-ցա։

Զի Տէր սրբագոյ է եւ զօրագործու-թիւն սիրէ, եւ սրբագործութեամբ կամի առ ինքն կոչել զմեզ յոր-դեգրութիւն. զի հոգեբընկալ ամ-եայն աստուածակիր ծննդարանու-թեան սովոր է առնել յորդոր մարդկան զգեստաւորութեան ուսու-ցութիւն. անկեալ ՚ի սիրոյ մարդ-կան զերկինս աստուածայայտ

տութեան, և մատուցանելով ըզ-
սէրն Քրիստոսի արարչին առ ա-
րարածս. և Նորուն կամօքն ամ-
բառնալ 'ի բարձրութենէն սիրոյն
աստուածութեանն, զոր ձեզ
պարտ է ընդունել:

ՀԱ. Զի և ամենայն առաքինութիւնք,
տեսեալ զհրամանն 'ի Տեառնէ, 'ի-
ջեալ 'ի բարձանց 'ի խորութիւն
անդնդականի ծովուցն խոնարհ՝
առ եղերացն առընթեր լցեալ
ուռուցեալ, ամփոփեցան զբազ-
մութիւն ջուրցն, խառնեցան վե-
րացեալք՝ տարածեցան ծած-
կեալ զերեսս երկնից լի առա-
տանս, ցօղացեալ առատութեամբ
զարարչին հրամանաւ կատարեն,
առ 'ի Նորոգոյս մատուցանելն: Ո՞ր-
չափ ևս առաւել այս միայնքս,
որք վերացեալ 'ի սէր աստուածու-
թեանն՝ առ որս Աստուած խո-
նարհեցաւ, եւ տուաւելագոյն ա-
ռին զշնորհս Հոգւոյն, եւ տուա-
ւել լցան պարգեւօքն: Որ զմար-
մինս իւրեանց եղեալն 'ի զանձն
տէրունի, զի միաւանդամ առցեն

անդրէն, նորոգեալ զհնացեալսն: Եւ լցեալ աստուածային պատգամօքն, զուն եղեալ և ճգնութեամբ քարոզեցին. և տեղացին 'ի ձեզ զանեղ երկնաւոր շնորհացըն. և փայլատակեցին 'ի ձեզ զլոյս և զհուր միանձնականացն, և զաստուածընկալ զամենայն և զօգուտն 'ի ձեզ հոսեցին: Փոխանակ ամփոփաշուքի տեղակի որոտացուն ահաւորութեան՝ Աստուած որոտաց առ ձեզ եւ ահաւորագոյնս, և կամեցեալ զձեր կեանս և զփրկութիւն:

Եւ արդ որ առաքեցին զերկիրս և զամենայն խնչ որ 'ի սմա, և անբարեցին զերկինս և զպատուիրանս Թագաւորին տէրութեանն՝ որ նստին 'ի վերայ նորա, որ ընկալաւ զնոսա և զարգիւ նոցա, 'ի լուսեղէն և յերկնաւոր յարկին յամփշտանակեցան նոքա, որ զուարթնակից երկնաւորացն եղեն կենդանանիք, որ փոխեցան 'ի անկարութենէն 'ի զօրութիւն, յապականութենէն յանապականութիւն, 'ի մահուա-

նէս յանմահութիւն․ զի յաղթե_
ցին մարմնեղէն ցանկութեանն,
և հաղորդեցան աստուածեղէն
փառացն․ որ նորոգեցան 'ի փա_
ռըս անապականս, և զերծան յան_
պիտոյիցն․ և ոսկերք նոցա տա_
ճար են աստուածութեանն հո_
գւոյ․ քանզի և առ Տէրն իւրեանց
կենդանիք են, և սուրբ հոգիք նո_
ցա զգուշանալ պահէին կենդանիք ։

Իսկ մարմինք նոցա և ոսկերք
նոցա Աստուծոյ տաճարք են 'ի
մէջի ձերում․ զի ոչ այլ ինչ կա_
րէք դուք զԱստուած ընդ ձեզ
հաշտեցուցանել և մերձենալ առ
Աստուած, եթէ ոչ բարեխօսու_
թեամբ աղօթից նոցա․ և հաւա_
նել ձեզ հաւատոցն, այնց՝ որով
նոքայն վերացան, և արժանի ե_
ղեն եղանել 'ի ծոցն կենդանիք, և
անուն հանել 'ի ձեզ զվնասկս քա_
րոզութե աստուածական պատա_
գամացն, և պաշտել ձեզ զպա_
ժանին արքայական սիրոյն՝ Թէ
ընդունել մարթասջիք ։ Զի ոչ
զոք Թողուցու ըստ անձանց կամս

գնալ. այլ եԹէ կամիք, և եԹէ
ոչ, սակայն զոր Աստուածն կա-
մի՝ զայն էք կատարելոց ։

ՃԲ. Քանզի իբրև ետես Աս-
տուած զազգս մարդկան ակա-
րացեալ և եղծեալ հիւանդու-
Թեան մեղօքն, եկն իբրև զբժիշկ
բժշկել. զի մի՛ 'ի հիւանդուԹենէ
մեղացն մեռանիցին. որում և մր-
կայէ մարգարէն և ասէ, զի Թէ-
պէտ և հիւանդացաք՝ սակայն
դու հաստատեցեր զնա ։ Արդ
այն զԹածն և մարգարէքն՝ որ
իսկզբանէ էր յաւիտենից հաս-
տէր՝ արարիչն ամենայնի, որ նոյն
ինքն բժիշկ իւրոց արարածոցն
ծագի՝ որպէս ասէ մարգարէու-
Թիւնն. Ծագեսցէ ձեզ երկիւղա-
ծաց անուան իմոյ արեգակն ար-
դարուԹեան, և բժշկուԹիւն 'ի
Թեւս իւր ։

Ո՞վ իցէ արեգակն արդարու-
Թեան, Թէ ոչ որ խոնարհեցաւն
և ծագեաց զիւր ճառագայԹսն ա-
մենայն հիւանդացելոցն և յախտ
անկելոցն մեղօքն, նոյն է որ 'ի

Digitized by Google

Հօրէն ծագեալ. զի նա միայն է,
որ կարէ լուսաւորել զոգիս խա-
ւարեալս մարդկան. և զուարճա-
ցուցանել զանձինս տառապելո-
ւոց անկելոցն: Եւ նա ինքն է՝ որ
յայց ել կորուսելոյն ձեռամբ. ո-
րոյ ճառագայթիւք նորա կենդանի
արարածք եղեալք ՚ի նմանէ ամե-
նայնք: Նա և զարդն երկնից, այ-
սինքն են լուսաւորքն, զի ընկալեալ
լոյսն յանձնարկել ճառագայթից
նորա ՚ի մէջ արարածոց նորա ճա-
հագուցանեն՝ առ ՚ի տալ լոյս երկ-
րի. և լի են լուսով նորա երկինք
և աշխարհ: Եւ Հոգի նորա՝ նշ-
ողք ճառագայթից նորին հա-
թեանն. որ խոնարհեցաւ կամօք
զթութեամբ իւրով, կամօք եկն
՚ի լուսաւորել զարարածս. զի
եկն խաւարեալ՝ եկն ՚ի տալ ծա-
գել զլոյս իւր:

Իսկ եթէ ոչ կամիցին ընդունել
զանիրաւս իւրեանց նորա ճառա-
գայթիցն մասնաւորութեանն, այ-
րեացէ մինչև խաւարս. որպէս և
ասէն, թէ հուր բորբոքեցաւ ՚ի

բարկութենէ իմմէ · այրեսցէ և
ելցէ մինչև 'ի դժոխս ներքինս ·
կերիցէ զերկիր և զամենայն բոյս
երկրի նոցա ․ վառեսցին հրով
բորբոքեսցին հիմունքն լերանց նո-
ցա ։ Զի , կամ ընդէր , կամ որ-
պէս զհիմունսն ամրացեալ հեր-
ձեսցէ · այլ քանզի հիմնացեալ
էին մտացն յերկրի զօրացեալքն ,
վասն այսորիկ հիմնամիջք և այրմա-
մբքն հանդերձեալ դժոխոցն կործա-
նեսցէ , և խլեսցէ զմոլորութիւնն
յերկրէ · առհասարակ և զմոլո-
րութիւն կռապաշտութեան ընդ-
դէմ և 'ի բաց կորուսանելոյ որպէս
սկիզբն աստուածգիտութեան առ մեզ ցու-
ցաւ ։

Զի յորժամ ծագեաց զնմանու-
թիւն , զմեղացն քաւիչ և յայ-
տնեցելոյ Քրիստոս երեւէր 'ի մէջ , զի
զպղծագործականն հեղձուցանէր աղանդոցն
բաց չհաւատութեանն նմանութեան
խաւարապատութեան ընդդիմամար-
տութեան այլայլեցին' աստուածա-
սան աստուածաբանականն փառաւո-
րեան զօրութեան վարանացեալ զնո-

քըն, և բազմացեալ կառօքն, և սպառազինեալքն տանձնաձիոյն նեբալակօք, և անթիւ երիվարացն փառաւորութք 'ի ջուրսն կորնչէին: Զի 'ի չափաւոր ժամանակին՝ տասնամենուէք կարի ողկոյց էն առ ամենայն բոյս սերմանն. իսկ յորդն և անչափքն՝ նմին տապականէր և կորուսանէր. իսկ որ կարքն բազմամբոյ, ողորմէ անկերչաստակ ընդէ: Մոյնորքնակ և լցեան ցանկալիք է յաչս մեր, որ յորժամ ջերմանկին տանէ՝ միանէ. ըստ երբայականն բանակին՝ որ հակառակ կացեալ ընդ Մովսէսի, այրեցան 'ի բարկութենէն Աստուծոյ:

Իսկ ցամաք երկիրս բնակութիւն է մեր. և ամենայն օգուտք և պատուհասականք կենաց մերոց 'ի սմանէ և 'ի վերայ սորա, և դայեկութեան զարմանք ըստ նըմանութեան կանթեղն 'ի մօրէ մեզ յայտնեսանէ: Վասն որոյ նոյն խնամակալ մեզ երկիրս. պայթեալ պատուականեցաւ, երանց զխու թանձրութիւնն, և եկող միանգա-

մնայն, կենդանւոյն 'ի գծագս յաւ-ղարկելոց զզինուորացն՝ որ խըխե-ցին յընչաց քերել և արհամար-հել զընտրեալն և զսիրելին Աս-տուծոյ զՄովսէս:

ՀԳ. Յայնժամ ժամանակի այս ե-ղև, իսկ արդ զի առաքելոց Աս-տուած զՈրդին իւր առ մարդիկ, որ եկին և շրջեցաւ ընդ աշխարհս, և առաքելոց զիւր Առաքեալսն ընդ երկիր ամենայն. և այսք ե-րանելիք որ առ ձեզ հասին, ոչ միայն զլուր բանին՝ այլ և զնշանս արուեստից ցուցին ձեզ ձերով պատուհասիւքդ:

Արդ որք անգոսնեցին զծա-ռայն Աստուծոյ զՄովսէս, այն-պիսի պատուհասի եղեն արժա-նի: Իսկ որք խըխեցին ընդդէմ Աս-տուածորդւոյն խաւսանել, որպի-սի լինիցին պատժոց պատուհա-սից արժանի: Զի նոքա որ յերկ-րաւոր հրամանատուէն հրաժա-րեցին՝ այնչափ բարկութեան ե-ղեն պատուհասելոյք, իսկ որք յերկ-նաւորէն հրաժարեցին՝ այնչափ.

եւ լինին գիտակայք աստուածայնոցն։ Քանզի Տէր աստուածորդին առաքեալ 'ի Հօրէ, յորժամ զիւր Առաքելականն զաշակերտսն առաքէր ընդ ամենայն երկիր, այսպէս եհատ պատուիրան եւ հրամայեաց. ասէ, Որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի. եւ որ զիսն ընդունի՝ ընդունի զՀայրն իմ։

Արդ թէպէտ երէց սպասնէք դուք զնոսա, Աստուածոյն նոքա կենդանիք են, եւ յաւիտեան նոքա կենդանիք են լինելոց։ Արդ նոցին բարեխօսութեամբ հաճեցարուք ընդ Աստուածոյ ըստ խրատու առաքելականին ձերոց Առաքելոցն՝ մեծին Պաւղոսի. որ ասէն, թէ մեք հաճեցարուք ընդ Աստուածոյ՝ 'ի ձեռն մահու Որդւոյ նորա. զի Որդին Աստուածոյ մեռաւ եւ եկաց։ Այնպէս եւ մըկայքն նորա սիրելիքն կենդանիք են, եւ ձեր բարեխօս։

Զի Որդին Աստուածոյ նա փրկնին ձեր քարոզ աւետարանաց. եւ փրկչին ձեր մատուցանակ ուղա-

խաւարար պատարագամատուցացն ։ Նա ինքնին ձեռն հրաւիրակ յայտնութեանն, Նա ինքնին պաշտօնեայ խորոց բարերացն, Նա ինքնին բաղձալի 'ի վերայ հարկաւոր 'ի մէջ զետեղեն ան-ցեալ պատարագաւորաւ լինի խորոցն արժանեացն ։ Նա ինքնին ահար-կու լինի և դարձուցիչ 'ի վերայ այնոցիկ՝ որ ոչն Ջանանչեն զնա- Նա ինքնին զատակ է՝ որ կորու-սեալքն են 'ի նորա բարերացն ։ Նա ինքնին առաջնորդ լինի մոլորե-լոցն, որք մոլորեալ են 'ի նորա Ջանապարհացն ։ Նա ինքնին նա-ւահանգիստ լինի այնոցիկ՝ զոր ա-լեօք ամբարշտութեան մեղացն պա-շարեցին խորն զձեռն ։ Նա ինքնին լինի դարձուցիչ զերութեան՝ որք երեն զերեալք 'ի մեղս խորն ըղ-ձեղք ։ Նա ինքնին լինի բժիշկ վի-րաւորելոց՝ որ ամբարշտութեամբ բղն են վիրաւորեալք խորն ըղ-ձեղք ։ Նա ինքնին լինի օգնական՝ որք թափեալ են յօգնականու-թեանցն զնայն Ջանանչելոյ ։ Նա ինքնին լինի ապաւէն յուսացե-

լոյս 'ի նա , 'ի մշտնջենաւորին յանձ-
կեալ յանհասապատ , յանհասապատում
յանփոփոխելիական անդրանցութեան : Որ
նայցի գործողութեամբ յարաբերա-
ծութ իւր , և զթուլութեամբն իւրով
կերպարանէ զբարս և զբարոյս . այլ
և խորհրդէ զամենակատարն' զի յոր-
դեցուցութիւն կարգաւորն աստուա-
ծութեանն մերձենալ արժանիս
արասցէ :

Այլ ձեռք յայտնի լինիցի' զի
այս ապացուցեալ է . զի Աստուած մարդ-
կանէր կամի' զի ժառանգորդ արքայու-
թեան ձեռք լինիցին : Այլ յայսմ իմ
մինչ ոչ գիտէին զուրք զԱստուած,
ծառայէին զուրս այնոցիկ' որք ոչ
էին 'ի բնէ աստուածք . այլ այժ-
միկ ծանուցաւ զուրս զԱստուած ,
մանաւանդ թէ Աստուած ինք
ծանեաւ զձեզ . զի եկեք զուրս մա-
քրեալք յարարչածս ակներն և 'ի
պաշտաման սնոտի , և 'ի լաւ ծա-
ռայութեան մերձեցին եկեք հեռացան
զնեալ . այլ այժմ ապաստանեցայք
յայնմանէ յանմոռաց կամացն լու-
ծեալ ծառայութեանն 'ի ստրկու-

Digitized by Google

Թէնէ անօտի, 'ի Քրիստոս Յիսուս
'ի Տէր մեր յԱրքայն Աստուծոյ։

Զգոյշ լերուք զուցէ հրաժա-
րիցէք 'ի խոստելեաց ատօտի. զի թէ
այնքը ոչ կարացին ապրել՝ որ յերկ-
րաւոր հրամանատուէն խրնեցին
հրաժարել, որչափ ևս առաւել
մեք եթէ յերկնաւորէն թիկունս
դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն զեր-
կիր շարժեաց յայնժամ, դար-
ձեալ այժմիկ խոստացեալ է և
ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ
միայն զերկիր, այլ և զերկինս.
այլ զոր ասէն միւսանգամ ևս,
յայտնէ զշարժելոցն խորև զերկե-
լոցն փոփոխումն. զի այն հաս-
տատունն կայցէ՝ որ անշարժն իցէ։

Վասն այսորիկ հնազանդեցէք
դուք 'ի սիրտս ձեր անշարժ թա-
գաւորութեանն ընդունեցէք շնոր-
հորհան, որով պաշտիցէք սրտա-
գիւրութեամբ առ Աստուած։
Զի Աստուած հուր այրեչ է, զի
այրեսցէ զմեղս ձեր, և սրբեսցէ
զանձինս ձեր՝ խորև 'ի հաւրգա
փորձութեան Համբերութեան

Digitized by Google

արուեստաւորքն՝ կռապաշտական ար-
ծաթագործացն, ընդդէմ գժանեին
'ի սրբոյ առաքելոյն ։ Իսկ որ ընտանին էր՝
սրբոյն և պատուասիրականութեան ։ Իսկ
որ ոչն, այլոյն և հրդեհի ։ որպէս
գիտողն ասէ, թէ եղիցի լոյսն Իս-
րայելի 'ի հուր, և սրբեսցէ զնա
'ի բոց բորբոքեալ ։ Եւ զանօրէ-
նութիւնն խոտոյ նմանեցուցա-
նէ ։ ասէ այսպէս, թէ վառեսցի
զնմանս, և կերիցէ զնա իբրև զխո-
տոտ ։ յաւուր յայնմիկ շիջցին լե-
րինք և բլուրք և անտառք, և կե-
րիցէ 'ի շնչոյ մինչև 'ի մարմին ։ և
որ ապրեսցին՝ եղիցին որպէս ոք որ
ապրէ 'ի բորբոքեալ բոցոյ ։ և որ
մնասցեն լիցի 'ի նոցանէ, ասէ,
թուով լիցին ։

ՀԴ. Արդ 'ի ժամանակին յայ-
նմիկ յառաջագոյն յետ Ջրհեղե-
ղին, իբրև բազմացան մարդիկ 'ի
վերայ երկրի՝ վայելէին 'ի պարարա-
տութեան խնամոցն Աստուծոյ ։ և
ճարտարք եղեալ զանգանակս՝ յայլայ-
լութիւն մտաբերեցին, անօգտա-
ցեալք յիմարութեան ։ Եկեալ 'ի մի

վայր, խորհուրդ առեալ՝ մնաց-
մանց խորհրդով, չիշխել 'ի պաշտօն
մեհենիցն աշխարհական իշխն բարձր
ամենահնարին: Կոթողեցին 'ի դաշտա-
վայրն Սենեքայ՝ յերկիրին ատրպա-
տականայց: Արդ չիշխել չիշխեին 'ի
պաշտօն դիւաց, անձանց անուն
մեհենապաշտին կոչել, առ իւրեանց
որդւոց թողուլ: Պարծեցեալ հը-
պատակացեալ՝ զանձինս 'ի գործ
կացուցեալ կառավարութեանն
վաստակաւորք անօրէնութեանն՝
աշխատեալ իւրոց պաշտօնոյ խնդ-
րեալանաց չարութեան զառա-
կաց աղգացն, զկնի իւրեանց ե-
կեղոցն թողուլ խնդրեցին այն ան-
ձեռ աղգն առաջինն:

Յետ Աստուածահայեցեալ 'ի նո-
ցա պատկառութիւնն, խառնեալ
աղբերց նոցա զխառնակութիւն
ընդունայն բարձրանալեան. անդէն 'ի
նմին առեալ զնոսա ընդ միաբանս
խառնակեալ, ուսաւ և նոյն ան-
դէն խառնակութեան զքաղել ա-
նուն ծառայութեան: Եւ նոքա
ցրուեալք 'ի միաբանից մեհենիցն,

չքնաղեալ այնուհետեւ այր ընկերի բարեպաշտաց, այսպիսի յաւելեալք ՚ի միաբանութեանց անխզելեացն. եւ լնու զգործ այն՝ զոր առաջին արկեալ միաբանութիւնք սահմանեցին: Եւ արդեօք խորհրդածութիւնք ընդ որ՝ ունելով յամենայն հասարակ արարչութեան, խառնեալ կեցեալք եւ շնորհեալք բաժանեցան ՚ի միաբանութեանց:

Եւ հրամ առհասարակին հայրապետական շարժի հրաշալին Աստուածոյ, որ առնէր ի զմտագրգռեալ յաւագութեանն Ճառնա-պարզին հաստատեալ, եւ ՚ի զուգորդմատեանն Ճառնասարաց հայոց խառնեանել, ունելով յարդարութիւն, եւ հաստատեալ զամենեսեան, այսն հոգւոյ անկեալ ՚ի մերոյ կրօնեալ զաշխարհականն՝ մերոյ ՚ի մաքրեալ վերադառնալ հասեալ, առապարէն զաշխարհին ցանն եւ ցեր կացուցանէր: Այլ խորհուրդ այս Ճառա-Ճառացուցեալ ամենաշնորհութեանն խառնեալ գիտեն, շնորհեալք ընդ մի-Ճաւէս՝ խորհրդածութեանն բազում կատարեալ Աստուածոյ ՚ի մերում երկրի ասխարհն. եւ յետնաւորութեան եւ երկիր նաւ-

հասպերտք լեզուաց կոչեցան՝ քա-
ժանեցան ընդ երկիրս, հաստատու-
եալք յեւրոպացւոցն աստ հիմնեալս.

Բայց մի ազն՝ որ նեստորական հերձուա-
ծական աղանդոյն, ոչ 'ի խորհուրդ-
դըն նեստեալ չքննել զդաւանութիւնն, և
ոչ կցեցաւ յաղագս աղանդոյն՝ վասն
որոյ էր խորհուրդն. վասն այսո-
րիկ զերդ լեզուն ապահովեալ: Որ նոսա
ապաւինէին խաւարելոց զաւանակաց հան-
դերձ ծանօթ երկրին, այսպէս 'ի
սկզբանն ներսաստանեցոյց, զառաւուած-
պաշտութիւնն 'ի յանձն առնել՝
ժողովուրդք Ղեւոնդեան անուանեա-
ցան Աստուածոյ. ասաւք և մարգա-
րէք աստուածածնովաք, ասաւք և
Քրիստոս ըստ մարմնոյ՝ որ է 'ի
վերայ ամենեցունի Աստուած օրհ-
նեալ յաւիտեանս. ասաւք և ա-
շակերտքն առաքելականացն՝ նոյնպա-
տուութեան կաթողիկոսութեանցն չնորհե-
լոյ, որք և միւսք նոցա պարսա-
թեանն զարդնոց նշանաւորացն ապաշխարու-
թեան՝ որ զործեցան 'ի նոցա՝ զաւ-
րավեանն: Որք և մնասաւորապա-
րեցին զմնացորդն, որք և դհաւքն

կենդանութեանն հօտայն 'ի բե-
րան առեալ հրդեհեալ սրբեցին
զաղտն աղխեղերաց, որք և յա-
րուցին 'ի պղծութենէ զանձկութիւն ա-
մենայն երկրի, որք զանօրէնու-
թիւնս աղխեղերաց փլուզեալ այ-
րեալ մաշեցին ըստ օրինակի աշ-
տարակին զորմէ պատմեցաքն:

Այլ փոխանակ բարձրաբերձ
և վայելուչ աշտարակին՝ խաչն
Քրիստոնէութեան կանգնեցաւ. ո-
րոյ զօրութիւնն մշտնջենաւոր է,
և փառքն նորա Աստուած. որ-
պէս և ասէ գիրն, ասէ. Ի քեզ
Տէր յայտնեսցի՝ և փառք նորա
զքեզ ծածկեսցեն. գնասցեն թա-
գաւորք 'ի լոյս քո, և հեթանոսք
'ի ծագել լուսոյ քո:

ՀԵ. Այս թագաւորեալքն՝ որք
պայծառացան 'ի խաչելեալ փրկչէն.
որք և վկայք են նորա աստուա-
ծութեանն: Որք մեռան ընդ
Քրիստոսի, ընդ նմին և թագա-
ւորեն. զի մեռանիցին 'ի մահ փա-
ռաց անմահութեան Աստուծոյ, զի և
կեանքն Յիսուսի յայտնի լինիցին

ահաւասիկ 'ի մանկանացու մարմինս սիրելեացն Քրիստոսի ։ Որք և յայտնի մեռեալք և 'ի ծածուկ կենդանիք, որք քարոզեինն յայտնի զկենդանութիւնն իւրեանց, և տան զկենդանութիւն ըմպել ձեզ՝ որ մեռեալ էք 'ի մեղս ձեր ։

Որ Աստուած յայտնեցաւ ձեզ յոսկերս նոցա · վասն զի առին նոքա յանձինս իւրեանց զլոյս չարչարանաց խաչին · և նովին Քրիստոսի չարչարանօքն օրինակեալ զհամբերութիւն Փրկչին յանձինս իւրեանց, լուսաւորել ըզխաւարն՝ որ մածեալ էր յոգիս ձեր · որպէս ասէ զիտողն մարգարէն, Թէ խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ մածեալ է զհեթանոսօք ։ Այս արդարև խաւար և մառախուղ մածեալ է զհեթանոսութեամբ ոգւովք ձերովք՝ անճանաչական սովորութեամբքն · որպէս և աշխարակն մոլորութեանն, որ յղացան ազգ մարդկան զանօրէնութեան պաշտամունսն, անշնչոց և

ընծայաւոր առաքելածոյն պաշտամունս մատուցանել փոխանակ առաքելչեն ։

Զի թէպէտ և յղացեալ խորհրդովք անօրէնութեան յառաջակարգործ կորուսին պաշտամանն, վասն որոյ և ցրուեցան ընդ երկիր խառնակեալ ընդ ազգս օտարս, տակայն ոչ թողին զնոյնն. որպէս ասէին զխոստովն՝ ի նոյն սաղմոսարանին, թէ ահաւասիկ երկնեցին զանօրէնութիւն, յղացան ցաւս, և ծնան զանօրէնութիւն ։ Զի յետ քակելոյն յաշտարակէն՝ յիւրաքանչիւր գործս անօրէնութեան գործեցին ձեռագործս, որում երկիր պագանէին. որպէս և մեզ զխոստովն ասէ. Փայտին ասացին՝ հայր իմ ես դու, և քարին ասացին՝ եթէ քո խակ ծնեալ է զմեզ, և դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց ։ Վասն այսորիկ փոխանակ փայտին որում երկիր պագանէին՝ կանգնեաց զխաչն իւր. ուսուսի և զլոյս Աստուածգիտութեան

արձակեցէք ամենայն արարա-ծոց՝ որ նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. իսկ զամբարշ-տացն այրեսցէ, որպէս ըստ զի-տողական բանին ասէ. Եղիցի լո-յսն Իսրայէլի հուր, և այրեսցէ զնա 'ի բոց բորբոքեալ:

Իսկ աշտարակին յուղեաց ըն-դ ապստամբութեան բարկութեանն բարոզէին՝ 'ցրել զնոսա և խառնա-կել զլեզուս նոցա: Իսկ 'ի խառնէին զողորմութիւնք յուղեցան, ժա-ռանգել զբրութեան ազգացն որդ-ւոցն Ադամայ: Եւ փոխանակ քա-րապաշտութեանն հեթանոսն մնտա-ւոյ, միաբանեցոյց զհաւատս խորոց վկայեցին, զի անշարժ լինիցին և հաստատունք:

Եւ շինեցաւ մեզ ձեռք հան-դերձ 'ի մերոյ հաստատութեան հաւատոցն Առաքելոցն և մարգարէ-իցն. ընծայեցուք զշնորհացն հօր հոգւոյն՝ որ այրեաց և փրկաց զաշտարակն մոլորութեան: Նոյն շինեսցէ զմեզ հիմամբք հաստա-տութեամբն հաւատոյ, և ածցէ

զմեզ 'ի միաբանութիւն խաչին իւրոյ։ Եւ տացէ մեզ զհուր Հոգւոյն՝ որով մեղքն այրեսցին, և արդարութիւնն լուսաւորեսցի 'ի խաչին, ուստի Տէրն յայտնեցաւ, ուստի Տէրն կախեցաւ, ուստի փառք նորա ծագեսցին և լցին զերկիր։ Իսկ վկայքն Թագաւորքն և Թագաւորեալքն ընդ Քրիստոսի, որով և հաշտիք դուք ընդ Աստուծոյ՝ 'ի ձեռն մահուորդւոյ նորա։

Վասն որոյ և աստուածորդին խոնարհեցաւ՝ զի տացէ զմարմին մարդկան, և խոնարհեսցի յանարգութիւն մահու՝ մինչև 'ի Թաղումն անգամ· զի զարժանացեալսն արասցէ նմանակիցս պատկերի աստուածութեանն մարդասիրութեամբն իւրով, որք եղբարքն անուանեցան վասն անդրանկան սիրոյն՝ որ սիրեաց զմարդիկ· զի լինիցի ինքն անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց։ Վասն իւրոյ մարդասիրութեանն եհաս այսպիսի զղաստանանձնութեան· ասէ ինքն

աստուածորդին, թէ որքա՞ն են իմ քոյրք և եղբարք՝ որ առնեն զկամս Հօր իմոյ որ յերկինս է. զի Որդին եկեալ կատարեաց զկամս Հօր:

Եւ զինչ իցեն կամք Հօր, եթէ ոչ՝ զի զօրդիս մարդկան զմերժեալսն ընկալցի միւսանգամ յարքայութիւնն, և զանկեալսն 'ի ներքոյ մահու՝ կանգնեսցէ 'ի կենդանութիւն. և զկամարարսն Հօր՝ որ ինքն բնութեամբ Որդի է միածին, արասցէ որդիս շնորհօք: Եւ վասն այնորիկ եղ ինքն Տէրն զօրութեանց 'ի տկարութիւն մարդկութեան կարգացն, զի նովին տկարութեամբ ըմբռնեսցէ զտկարացեալսն 'ի զօրութիւն աստուածութեան կարգացն, և տացէ արժանի լինել որդէգրութեան շնորհին:

Արդ ինքն իջեալ կամօք՝ զի զախորժեալսն խառնեսցէ յաստուածութիւնն: Որք ըստ արժանական սիրոյն իցեն տպաւորեալ աստուածական սիրոյն, ըզնոսա եղբարս անուանեաց. և

զինուորական անձին իւրոյ հայրապետական
իմաստասիրութեանն ուսուցչ Տեառն . և
զուարթ իմաստնոյ հօրն զգրաստնոյ յորդ-
որդւոց ըմպողաց զճաշակ . և նա իշ-
խանութիւն որբոցն որդւոյ Աս-
տուծոյ լինել՝ որք հաւատասցեն
յանուն նորա : Եղբարց նորա հայր
ընտրեցաւ՝ զծնողն իւր . և նա յանձն
'ի կերպարանս՝ հայր կոչել զնա ամե-
նայնց , և եղբայրս զհաստատութիւն
հօր իւրոյ՝ նորա . զի հօրհաստապէս
բարերարութեանն ընկալեալ ար-
ժանի՝ Ճշմարտիւ Որդւոյն եղբարք
անուանեցան : Զայս առնելով Որդւոյն՝
առ Հայր միաւորեցաւ մեզ , թէ ա-
հաւասարապէս ես և միաբանութեամբ իմ՝ զոր
ես ինձ Հայր : Եւ զարդարեալ առ
Հայր իւրոյ և առնէ , թէ ապաւինե-
ցիք զանձանց ձեր եղբարց իմոց , և
'ի մէջ ժողովրդոց օրհնեսցից ըզ-
քեզ : Որպէս և առ աշակերտսն
ասէր , զի զամենայն զոր առաջ
յինէ Հայր իմ , ես ձեզ ցուցի . զի
ես զձեզ ինձ բարեկամս գիտեմ :
Ճշմարտիւ Որդին Աստուծոյ
Ճշմարտիւ մեկնիչ և խորհրդականս

արար էր զկատարածս տառապա-
ծութեանն իւրոյ, որք մնացին 'ի սէր Նորա՝ զպատուիրանս Նորա պահել. զայս և այնչափ վերացոյց բարձրացոյց զնոսա յիւր աս-
տուածութիւնն: Վասն որոյ և առ Հայր գոչէր, թէ այսուհետև սոքա չեն յաշխարհէ աստի, որ-
պէս և ես չեմ յաշխարհէս: Եւ ես աղաչեցից զՀայրն, զի Հոգին սուրբ զբարեխօսն առաքեսցէ առ ձեզ զառհաւատչեայն, որ խառ-
նեսցէ զձեզ յաստուածութիւնն, որ 'ի ձեզ իսկ բնակեսցէ մինչև յաւիտեանս. զոր ոչ տեսանէ, ասէ, և ոչ ճանաչէ այս աշխարհ:
Արդ զնոսա արար նախ տաճար աստուածութեանն յերկիրս, և տուն օթևանաց Հոգւոյն սրբոյ. ես և Հայր իմ, ասէ, եկեսցուք, և օթևանս առ ձեզ կալցուք: Գան-
ձանակ սիրոյ զօրութեան մեծու-
թեան խորհրդոյ Հօր՝ պատարագա-
ւորաց զնոսա, և յառաջ քան զաշ-
խարհ ծանուցանէ նոցա:

ՀԶ. Եւ քանզի ոչ կարացեալ

մարդկան բառնալով զլուծ պա-
տուհրանաց արդարութեանն,
վասն այսորիկ անկան ընդ կա-
րեօք մահու մեղացն: Եւ խորհեւ ոչ
ոք ուսեալ ’ի մարդկանէ կարաց
ցանկել զխորամանկութիւնն, ’ի
ծառայատուհամ ազգացն ոչ հնա-
րեցաւ այս լինել, որ ’ի ձեռն Ա-
դամայն յանցաւորութեան զօ-
րացաւ մահ և եկուլ, որպէս ա-
սացաւն, թէ յԱդամայ ամենե-
քեան մեռանէին, խաւ Որդին Աս-
տուծոյ էառ զվերադարձան Ադա-
մայ ’ի նմանութիւն ծառայի, և
եղև խորհեւ զմի ’ի մարդկանէ, և
եկն ’ի ցանկել զխորամանկեալն, զի
շինեսցէ զաւերեալն. որպէս ա-
սէ մարգարէն, թէ շինեսցին ա-
ւերակքն յաւիտենից: Զի առ-
ցէ զմարմինն արդարոյն խուրոց կեր-
պարանաց, և նովին մարմնովն
կատարեսցէ զարդարութիւնն
ամենայն. որպէս առ Յովհաննէս
խօսի, թէ այժմ այսպէս վայել
է լինել, զի կատարեսցուք զար-
դարութիւնն ամենայն:

Digitized by Google

Վասն զի խնդրէ Տէրն ծառայա-կան մարմնովն զամենայն արդա-րութիւնսն կատարեսցէ. զի մարմ-նոյն՝ զոր խոստացաւ և միացոյց յաստուածութիւնն, նախ մարմ-նոյն տացէ զկատարելութիւնն: Զի բարեպէս ընդ միոյ ադամական մարմ-նոյն պարտաւորեցան, ընդ միոյ աներևութական մարմնոյն ազատես-ցին 'ի ծառայութենէ մեղացն, այնու ազատութեամբն՝ որ 'ի վեր է քան զամենայն ազատու-թիւնս:

Որ վասն զնոսա ազատելոյ եկն 'ի ծառայութիւն, զի իւրով մարմ-նովն լցէ և կատարեսցէ զամե-նայն չափս կարգացն հանդերձ ար-դարութեամբն. զի միանգամայն բարձցէ զհարկս անիրաւութեան մարմնոյ մեղացն. և միանգամայն խնդրն խնդրեան քահանայացի Հօր իւրում: Եւ միանգամայն ին-քեամբք հանձնեսցէ մատուսցէ զխնդրն պատարագ հաշտութեան Հօր իւ-րում. և նոյնքն պատարագաւն մատուսցէ ընդ նմին զհաւատս



Digitized by Google

խոստովանութեան մերոյ: Զի յորժամ ինքն էր որ յաղթեացն և կատարեացն, և եհաս ընկեցոյց զզգայարանսն մահու, զի անշօշափ և անտեսն և անմերձենալ լոյսին կենացն ամենայնի. զի 'ի Քրիստոս Յիսուս անմեկնելեան կենդանանացուք:

Եւ զի՞նչ այն էր զոր ասէն, թէ կատարեաց զկամս Հօր իւրոյ, եթէ ոչ՝ զի իւրով մարմնովն բարձրացուցանէ զանձն յաղթութեան կատարման արդարութեան: Ընդ ամենայն մարմնաւորաց առեալ զնախապատակն յաղթութեանն՝ բարձցէ զնախատինս յորդւոցն Ադամայ, և թափեսցէ զԹոյնս մահու, և ջնջեսցէ ըզխայթոցս դժոխոց. որպէս համարձակ լեցուք յասելն՝, թէ ո՞ւր է յաղթութիւն քո՝ մահ, կամ ո՞ւր են խայթոցք քո՝ դժոխք: Զի հաստցէ միանգամայն զամենայն արարածս յամենայն երկրաւոց. և բարձցէ զսուգ ախտականն և տացէ զուարթութիւն զանսպառութիւն:

Եւ որպէս ինքն խոնարհեցաւ 'ի բարձրութեանն, այնպէս բարձրացուցէ զորս եղիտն արժանաւորս իւրում աստուածութեանն. և արար զնոսա զանձանակս սիրոյ իւրոյ կամացն, և տաճար բնակութեան Հոգւոյն սրբոյ. զի լիցին նոքա ընկղմեալ յաստուածութիւնն. զի իւրովն ազգակից մարմնովն ձգեաց զնոսա առ իւր նախ, իսկ նոքօք զամենեսեան ձգեսցէ 'ի նոյա ուրախութիւնն: Որպէս յառաջագիտող մարգարէն՝ յայս հիացեալ խօսէր, թէ ուրախ լիցուք յուրախութեան ազգի քոյ, և գովեսցուք մեք 'ի ժառանգութեան քում. զի ժառանգութիւն Հօր՝ Որդին միածին է. իսկ ազգք ուրախակիցք՝ արդարքն մարմնակիցքն տէրունական մարմնոյն: Զի զգօնութիւն արդարութեանն ինքն բարձրացոյց ընդ ամենայն մարմնոյն մարդկան, որ ժառանգն էր Հօր, և ժառանգակից ամենայն արարածոց: Իսկ զիւր վկայեցեալն արար ու-

բախականաց, զի առհմանակիցք էին մարմնոյ նորա. իսկ ամենայն առհ- մանակիցք մարդկեղինկցն ու բախականաց առհմանակցաց իւրեանց վկայիցն :

Եւ Տէրն նախ զնոսա զատոյց 'ի յերկրէս կարգաց, և հրեշտա- կակրօն և աստուածախառն կար- գօքն բարձրացոյց յերկրէս. զի ինքեանք վերացեալք յաստուա- ծութիւն, զամենեսեան զառհ- մանակիցս իւրեանց վերացուսցեն 'ի նոյն սէր աստուածութեանն՝ յոր ինքեանք հասին: Զի և ըղ- խորհուրդն. աստուածութեանն նախ նոքա արժանացան գիտել, և նոքօք ամենայն արարածք գի- տացին. զի աշխարհ, ասէ, ոչ տե- սանէ և ոչ ճանաչէ: Զի նոքա նախ զատան մեկնեցան յաշխար- հէս, և ապա հասեալ սիրովն Տեառն իւրեանց 'ի զօրութիւն Հոգւոյ նորա. դուք, ասէ, ճա- նաչէք, զի 'ի ձեզ բնակեսցէ մին- չև յաւիտեան:

ՀԷ. Տեսանես զզանազանութիւն, զի ասաց թէ մինչև յաւիտեան 'ի

ձեզ բնակեսցէ. զի որպէս 'ի կեն-
դանութեան սորա, սոյնպէս և
այժմս և յաւիտեան բնակեալ է
յոսկերս սորա բարեխօս Հոգին՝
որդեգրութեան արժանի եղե-
լոց. որով հաշտեցիք դուք ընդ
Աստուած 'ի ձեռն մահու Որդւոյ
Նորա: Զի սուրբ վկայքս այսո-
քիկ Հոգւոյն՝ որում եղեն ար-
ժանի, նովին լցյին ձեզ բարե-
խօս, զի և ձեզ անդրանկաց զան-
ցուցելոց լիցի թողութիւն: Զի
Որդւոյն Աստուծոյ՝ որ ննջեցելոցն
եցոյց զօրինակ կենդանութեան
իւրոց վկայիցն սիրելեաց, ասէ
ցնոսա, թէ ես կենդանի եմ, և
դուք յիս կենդանանայցէք. զի ես
ընդ Հօր և դուք ընդ իս և ես ընդ
ձեզ: Զի և որ ընդունի զպա-
տուիրանս իմ և պահէ զնոսա,
նա է որ սիրէ զիս, և սիրեսցի 'ի
Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա,
և երեւեցուցից նմա զիս:

Արդարեւ սիրեցին զՏէրն ա-
ռաւել քան զկեանս իւրեանց. սա-
սիրեն զՏէրն՝ զի եդ զանձն իւր 'ի

վերայ նոցա, իսկ նոքա ետուն զանձինս իւրեանց 'ի մահ փոխանակ մահուն նորա. և խառնեցան 'ի սէր աստուածութեան նորա, և եղեն օթեվանք մեծութեան նորա: Տեսին զՏէր՝ զի մատոյց զանձն իւր Հօր պատարագ, վասն այսորիկ և սոքա իբրև զառինքս մատուցան 'ի մահ, զի լիցին պատարագ աստուածորդւոյն: Զի Որդին կատարեաց ըզկամս Հօր իւրոյ, և սոքա կատարեցին զկամս աստուածորդւոյն: Աստուածորդին ձգեաց զնոսա առ ինքն, և նոքօք զամենայն տիեզերս:

Առին նոքա հրաման 'ի Տեառնէ՝ արհամարհել զաշխարհս, և զամենայն զոր ինչ յաշխարհի է. զի արհամարհեսցեն զայս կեանս յաշխարհի՝ զի անցաւորք են: Արհամարհեցին և զնեղութիւնն որ 'ի սմա՝ վասն արդարութեանն որ գայցէ, զի երանութիւնք են և սքանչելիք մշտնջենաւոր արքայութեանն: Զի խոստացեն

պացեն թողցեն զխաւարաձանչխ ըղձոր- ծըլն ունայնութեան կարդացն , զի աղքատացին յաւիտենից տան- ջանացն ։

Առէ․ Մի երկնչիք յայնմանէ որ զմարմինն սպանանէ և զոգին ոչ կարէ սպանանել․ այլ երկե- րուք զուք յայնմանէ՝ որ զոգին և զմարմինն արկանիցէ ՚ի գեհենն հրոյ ։ Զի թողուլ զչարն և ընտ- րել զբարին լեցին , զի փափաքելա- ցեն ընթացին ՚ի սրբութիւնն , զերկնաւոր լոյսն և զյաւիտենա- կանն ժառանգել , և ժառանգա- կից անմահութեանն լինել աս- տուածական յաւիտենական փա- ռացն ։

Առաց Որդւոյն Աստուծոյ․ Մը- տէք ընդ նեղ դուռն , զի նեղ է ասաւ դուռն որ հանէ ՚ի բարըխ․ և անձուկ է ճանապարհն՝ որ տա- նի ՚ի կեանսն յաւիտենից ։ Զի նեղութեամբ և վշտօք հասանեն յանապատ արքայութիւնն անդր՝ որ պատրաստեալն է նոցա , յորժամ Քրիստոսն յայտնեսցի փառան-

զանձ յաւիտենականն պարգեւացն յարքայութեամբն, և անմահութեան ընծայելով և ըստ գործոց հատուցանելով. որպէս և անդր եւս յիշ-րում անդուածն պատմեցուցաք ձեզ:

ՀԸ. Եւ եղբարք դուք, ասէ, խորագէտք իբրև զօձս: Եւ զի՞նչ իցէ խորագիտութիւն օձին. եթէ ոչ՝ իբրև ծեծանասցի նա և անսնէ ապականեալ զմարմինն իւր, զխորհրդաւորս խորագիտութեամբն իւրոյ 'ի մէջ բերէ: Զի զիմէ նա ընդ անեղծ ինչ նեղամածեալ վայրաց, և ընդ կրթելն կեղևէ զապականեալ մորթն. ծերացեալ մարմնոյն, 'ի բաց մերկանայ, և միւսանգամ 'ի մանկութիւն դառնայ, և նորոգեալ զծերութիւնն իւր զարդարէ: Այսպէս և արդարացելոցն՝ զանցաւոր մարմնոյս խոշտանգմունս 'ի յանձանց 'ի բաց մերկանան. զի մտցեն ընդ նեղ դուռնն, զի ընկալցեն զանմահ թագաւորութիւնն: Զի որ զՏէրն սիրեն՝ կենդանիք են յաւիտեան. քանզի այսպէս ասաց

Digitized by Google

Որդին Աստուծոյ՝ Որ հաւատայ յիս՝ թէպէտ և մեռանիցի, կենդանի է. զի ես իսկ եմ յարութիւն և կեանք, ասաց Որդին Աստուծոյ։ Որ կամօքն Հօր՝ որպէս մերագոյնն ասացաք, ճաշակեաց ըզմահ վասն մեր, զի փրկեսցէ յապականութենէ զամենայն ազգեան Իսկ այժմ՝ զի նստի ընդ աջմէ Հօր, զամենայն ինչ պատրաստէ և շնորհէ յաւատացելոց իւրոց։

Եղբարք, ասէ, միամիտք լերուք զգաստացեք։ Մի՝ վասն զի մարդասէր է և մարդընկեր, և 'ի մարդամտաց ևեթ կամի կեալ աղանդի. որպէս զի Աստուած մարդասէր է, և կամի հանապազ 'ի մէջ որդւոց իւրոց բնակել։ Եւ միւս՝ թէ բարկութեամբ անդամ բարձցէ զը զձուկամ զձայն աղանդոյ, ոչ երբէք երկմտեալ թողու զաւերեբունին իւրոյ։ Այն օրինակ, թէպէտ բարկութեամբ և անձնապատ իցեն չարիք մարդկան հանապազ առ. ապարջութիւնն՝ ուսանի ինքնամբ դաղմեանոցն մտատակարարին՝ որք զնա ոչ

ծանուցէին, սակայն ոչ թողու և հեռանայոյ յարաբերմանց իւրոց. այլ հանապազ յայց ելեալ՝ խնդրէ զհոգեւորականսն զի զարգէ. և ասէ՝ այսօր եթէ ձայնին խնամ լուիցէք. և կամի՝ զի վասն որոյ զՈրդին իւր առաքեաց, արասցէ ժառանգս շնորհաց զամենեսեան : Զի ուսցին զհոգեւորականութիւն օծին, և մերկանալ զհնութիւն մարմնականութեան տգիտութեանց անհաւատութեանց յանձնանց, և առցեն զմիաբանութիւն զանձինս և սուրբ աղաւնոյն, որ զբարս աստուածութեանն յինքեան բերէ : Զի հոգին Աստուծոյ՝ յարժամ յայտնեցաւ աշխարհի՝ զոր 'ի մերն պատասխանը, 'ի կերպարանս մարմնաւոր աղաւնոյ երեւեցաւ, զի ցուցցէ զբարեխառնութիւն միամտական ուղղոյն :

Զի որք կամիցին աստուածայնականն Հոգւոյն աստուածութեանն լինել, առցեն 'ի սնուցանելն զբարս զանձինս և զանմեղականութիւն աղաւնոյն : Որպէս և Տէրն ասէ ցա-

շահեկանութեան, Թէ եղերուք զուգ բարերարութեան առ չարս և առ Թշնամիս, և յամենայնեցունց հալածեալս վասն արդարութեան. զի Հայրն ձեր բարերար է, ծագէ զարեգակն 'ի վերայ բարեաց և չարաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց. զի լինիք զաւակք արդիւք բարերարութեան Հօրն ձերոյ բարերարի.

ՀԹ. Այդ որք 'ի յայս միաբանութեան արդարութեանն ապաստաւորեալ կացեալ իցեն` առաջին զկերպարանս արդարութեան աղօթանոյ, և Թողցեն 'ի Թեւս Հոգւոյն սրբոյ հասանել յերկնից արքայութիւնն, որոց վայելեսցեն անմահ սաւառնք յերկիրէ. Յոր մարդարէքն կայծակին անհնարին ցուցեալ-րա. ւորմանէ առաւելութիւն, Թէ` առաջի որ խնձ Թեւս որպէս զաղաւնոյ` զի Թռչէի վերականիցի. Զոր երանելին Պաւղոս` առաքելականն ձերոց Աստուածոց, մեկնելով 'ի Թղթին միսիԹարականի, որով և զԹեւս զանխիկեցեալն տեսանէր. Թէ մեք որ

կենդանարարս միացելոյ ընծայեսցէ , հանգուցելոցն հանգերձ յա-փըրշատակելիս ընդ առմանս՝ ընդառաջ ելանել Տեառնն 'ի մերում օդոյ , և այսպէս յամենայն ժամ ընդ Տեառ-նըն լինելոցեաց՝ խառնեալ 'ի դասա-դըն Քրիստոսի , Թագաւորել 'ի Թակիչս արդարութեան լուսաւորե-աուր ամփոփեալ երկրամի աղաւնեաց· որք առաջին յանձինս զկերպարանս Որդւոյն Աստուծոյ՝ որ երևեցաւ նոցա. և զնոյնս պատուիրեաց յանձինս մատուցանել , զի բա-սուացէ նոցա Թեւս հոգեւորս՝ խառնել 'ի դասուցն աստուածա-կանն :

Արդ զարմացեալք հայրապետի-ցեն և զօրք վերինք լուսեղէնք՝ յորժամ տեսանիցեն զնորընծա-յուեդա սրբոյ մարմնականաց , զի առ Տէրն 'ի ներքուստ մերձեցեալ դայցեն , Թէ՝ ո՞վ են սոքա խորք զամենայն Թագաւորել , և խորոց զա-զաւանեսս ձայնականն երամակներն Թագաւորեալ : Այնպէս լուսիցեն յետք-նեին Տեառնէ պատասխանի , Թէ

սոքա յիս յուսացեալ են. սա բայց զնոսա 'ի լեառն սրբութեան իմոյ, և ուրախ արարից զնոսա 'ի տաճարի իմում. և ամենեքեան որ տեսանիցեն զնոսա՝ ճանաչիցեն, թէ սոքա են զաւակ օրհնեալ յԱստուծոյ, և ուրախութեամբ ցնծասցեն 'ի Տէր: Անդէն առնիցէ Տէրն, թէ եղիցիք ինձ որդիք և դստերք. անդ ապա զութք խնամոցն յուղիցին արարչական սիրոյն ըստ բանին մարգարէին, թէ որպէս զթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, գթասցի Տէր յերկիւղածս իւր:

Զի այժմ յուսով նայելովն՝ զայս ամենայն իբրև ընդ հայելի տեսանեմք, բայց ապա դէմ յանդիման. և 'ի նոյն նորոգութեան նորոգիմք փառաց 'ի փառս իբրև զՏեառն Հոգւոյն, որ փորձէն և ընդրէ զամենեսեան, և նորոգէ զոր և զաւանէ արժանացեալս: Արդ 'ի բազս փորձութեան հալոցաց ընտրութեան հրոյ կացուցանէր զեկեղու Առաքելոցն, զի

նոքօք ամենայն անխղճերաց ըմբռ-
նութիւն արարեալ է. զի և տառապանք
աստուածատուութեանն և բանք երկ-
րի և օծեալքն արարչութեանն
եղեն:

Զոր և յառաջագոյն յառաջաձայնակատարակ մեծա-
կացն մարգարէիցն՝ զնմին գուշակեա
գուշանսնեալ զոյս զլննելոցս ամե-
նայն ազգաց, նախ խաւսեցաւ
հրեշտակաւն աղգըն ծանուցանելո-
վըն, և ապա ամենայն անխղճերաց
ազգ. տանել զնին, թէ՝ ժողովել
ժողովրդոց 'ի միասին, և թագա-
ւորաց ծառայել Տեառն:

Եւ դարձեալ 'ի յանձինս հայե-
ցեալքն, և զաւ 'ի յաւուրց զա-
ւոյս զորդիս՝ զԱստուածային նախա-
տեալս. և առ Տէր զօրէղ իւրեւ
զանձանց և զորդւոցն՝ որ աղաւե-
լոցն էին ընդ երկիր, թէ՝ փախստա-
նակ հարց քոց՝ եղիցին որդիք
քո. և կացուսցես զնոսա իշխանս
ընդ ամենայն երկիր, դարձուցա-
նել զամենեսեան՝ միում իշխա-
նութեանն հնազանդել 'ի ծառա-
յութիւն աստուածութեանն անձ-

նիշխանն կատարեցն. զի մեզին ամե-
նեքեան ժառանգք արքայու-
թեանն, յինքնագործ բարութե-
նէն Հանդերձ իշխանօք :

Որպէս և ինքն Տէրն խօսի ըղ-
Հանդերձելոցն բախտաւորք մար-
գարէիցն, թէ արդարոց զիշխանս
քո 'ի խաղաղութիւն, և զայցե-
լուս քո յարդարութիւն. որով
Աստուածաբանեալ արքային զպատճառն այ-
ցելութեան, և արդարացելոցն ամե-
նեցուն զպատճառն խաղաղութեան :
Վասն որոյ յառաջագոյն կան-
խեալ մարգարէիցն առաջնորդութեամբ
բերն զլինելոցն. թէ այսպէս ասէ
ցիս Տէր, թէ արկ զու զարծաթն
'ի բովս և քննեա եթէ առ որ ի-
ցէ, որպէս և ես քննեցայց 'ի մե-
րայ նոցա. և առաք եռ զարծաթն
և արկի 'ի տուն Տեառն 'ի բովս :

Այլ զի զայլոց իշխանաց էր
աստուածորդին, և զամենայն աղ-
գիս մերոյ ցուցանելոց էր յաս-
տուածութիւն, վասն այսորիկ
եղեալ քննութիւն 'ի մերայ ա-
մենայն մարգարէն՝ ըստ նմանու-

թեան ծառայն պատուիրանաց՝ 'ի
պատուոյն չճանաչանելովն. զի արժանի
լինիցին զանձնահաւութիւնն առնուլ
չնորհապարտութեան ։ Նոյնպէս և
մարմնոյն խոնարհութեամբ և ա-
նարգն երևելովն՝ փորձով քըն-
նեսցէ զարժանաւորսն, որք 'ի
գծուծ կերպարանս տեսին և ըն-
կալն՝ եթէ Աստուած է. եթէ որ-
պէս և զխարդ հաւատասցեն քննու-
թեան բարձրութեանն. վասն այ-
սորիկ ած և ասաց, թէ որպէս և
ես քննեցայց 'ի վերայ նոցա ։ Արդ
արարեալ զնոսա միաբանականս միա-
բանութեամբ՝ երբև զմի տուն ե-
րևեցուցեալ, միախառն միահա-
ւասար ճշմարտութեամբն, միաբա-
րոզ, յօգնապատիկ անզգամօքն, միա-
տաճար աստուածութեանն. ո-
րով և զամենայն տիեզերս քննեա-
ցէ վասն իւրոյ զալստեանն հա-
ւատոյ ։

2. Արդ քանզի եկեր հուր մե-
ղացն և վախճանեաց առ հասա-
րակ զմարդկութեանն բնութիւնն.
զի բորբոքեալ մեղքն 'ի նմանու-

թիւն հրոյ տօչորեցան, և բար֊
կութիւնքն և սրտմտութիւնքն
աստուածութեանն։ Արդարեւ
թուով մնացեալքն, որպէս ա֊
սացն՝ թէ և որ մնացեալքն իցեն՝
թուով լիցին։ Արդ նախ ընդ թը֊
ւով մտանէր, և յայտնէ զերկո֊
տասանեան հաստատեալս մշակս
կացուցեալս ըստ ազգաց խորայէ֊
լականն տոհմին։ Որ և ըստ առա֊
ջին լեզուացն բաժանելոց անե֊
նայն ազգաց, երեւեցուցեալ եւ֊
թանասուն և երկուս. որպէս
վասն լեզուացն բաժանելոցն յա֊
ռաջագոյն ասացաք. զի նոքօք 'ի
միաբանութիւն զառաջին պատա֊
ռումն ազգացն լեզուացն ժողո֊
վեսցէ։

Իսկ սոքա զառաջինն՝ թուով
մնացորդք սակաւք։ Վասն որոյ
և ինքն եկն Որդին Աստուծոյ ու֊
սուցանել՝ միաբանական հաւա֊
տովքն ընտրել զմին և զնոյն ժո֊
ղովս. վասն որոյ եկն խօսք և ասէ.
Հունձս բազումս են և մշակս սա֊
կաւս. արդ աղաչեցէք զտէր հըն֊



Digitized by Google

ձայն՝ զի հանիցէ մշակ 'ի գործ ար-
դեանց խոտոց : Եւ նոյն ինքն այ-
տուփիկ պահանջեաց 'ի նոցանէ ըղ-
ձեր առ միմեանս, և միացուցեալ
զնոսա՝ իւր տաճար հաստատեաց
յերկրի, և նոքօք փորձեաց զա-
մենայն ափեզերս :

Եւ այս էր որ երեւեցաւ հուր
հոգւոյն յաւուրս պենտեկոստէի-
ցին, որ եկեալ հանգեաւ 'ի լե-
զուս Առաքելոցն. որ արկեալ
ժողովեաց զցրուեալսն, և սկը-
սեալ խօսել լեզուս առ լեզուսն
տառապելոյն առ ցրուեալսն : Վասն
զի անկաւ ստորին անօրէնութեանց
յարդարանք միայն անձին մարդ-
կանն տառապելոյ, վասն այսորիկ և
սաղմն ամպարշտութեան ընկա-
լեալ՝ ձեռն զկշռոյ արկեալ յղա-
ցան զկռապաշտութեան ծնուն-
դըն 'ի մէջ բերել : Իսկ պտուղն
այսորիկ՝ քակտումն էր այլափոխ
այլաձայն, այլ ընդ այլ 'ի մի-
մեանց մոլորեալք, այր յեղբօրէ
իւրմէ անջատեալ ցրուեցան :

Իսկ առցա զմիաւորող ժողովն

մտանէին խնդրել 'ի միմեանց : Վասն այսորիկ հրամայէ, զի նախ ընկերանք խուրեանց մտօքն առ միմեանս ժողովեսցին, զի ուսցին զամենայն ազգացն ժողովս ածել 'ի մի միաբանութիւն : Զի նախ զնոսա արասցէ օթեվանս պատրաստեալ, և ապա առաքեսցէ առ նոսա զհոգին աստուածութեանն, որ զսէրն Հօր և զՈրդւոյ առեալ՝ խաղացեալ գայր առ նոսա. զի նախ 'ի նոսա բնակեսցէ, և նոքօք յամենայն արարածս : Ես և Հայր իմ, ասէ, եկեսցուք և օթեվանս առ նմա արասցուք : Եւ սիրոյն առ միմեանս զօր ուսոյց նոցա, ասէ. Աղաչեսցէք զՏէր հնձոցն՝ զի հանցէ մշակս 'ի գործս արդեանցն իւրոց :

Մի թէ ինքն ո՞չ կարէր առանց աղաչանաց զայն առնել, որ ակնարկելովն արար զամենայն արարածս. այլ վասն զի քան զամենայն՝ ընկերասիրութիւն պատուական է առ աստուածսիրութիւն անգր. զի որպէս աստուածսի-

րութիւնն մարդասէր է, նոյն-
պէս կամի՝ զի զմիմեանս սիրելու-
թեամբն արժանի լիցին աստուա-
ծութեանն առ միմեանս անմիջա-
սութեամբն։

Զի 'ի միջէ երկրէ հող և
հողմք, և բայս հողոյ 'ի միմեանցն
բաժանելով ծնունդք, և միոյ ա-
րարչէ սահմանեալ, սիրեսցեն
նախ զարարչութիւնն, և սիրե-
ցեն 'ի նմանէ. և նորա հաճոյիւքն
կալ կարասցեն՝ ըմբռնելով զար-
քայութիւնն երկնից։ Զի անձն-
սիրութիւն՝ ընկերասիրութիւն ոչ
լինի, այլ ինքնասիրութիւն, որ
ոչ է հաճոյ կամաց՝ արարչու-
թեանն. վասն որոյ և մեղքն 'ի
սկզբանն մտին յաշխարհ։ Իսկ զի
աստուածութիւնն մարդասէր է,
վասն այսորիկ իւրոց կամացն ա-
րար զնոսա խորհրդակիցս. զի
նոքա սիրեսցեն զմիմեանս, և եղ-
ցեն հրաւիրակ ախեղերաց և ա-
ղաչեսցեն և հանեսցեն զմշակս 'ի
գործս արդեանց Տեառն իւրեանց։

ԶԱ. Զի առաջին յղութիւն

անձնակամ՝ մարդկանն գնալոյ ; ծնաւ զխառնածնումն խառնակութեանն լեզուաց ։ Որպէս և վասն հրէական ժողովրդեանն ասեմանի 'ի մարգարէականացն պատմութենէ . զի ասէ . Աղէ հարցէք և տեսէք , եթէ երբէք լուեալ , թէ արուք յղեցան և ծնան , ձեռն արկեալ ղընդերօք և գարման խնդրեսցեն ։ Զի տեսանեմ աւասիկ զամենայն այր՝ և ձեռն իւր 'ի վերայ կշտի իւրոյ . հայիմ ընդ մարդ , և երեսք ամենայն իբրև 'ի գոյն դալկան և դեղնացեալ շրջին։

Արդարեւ իսկ յղացեալ էին յամբարշտութիւնս կռապաշտութեան բազմաստէր բարոյիցն . և ձեռն յընդերս եդեալ էր , անձն ունէին շահապատակ գտանել անձանց 'ի նմանապատակ գործոցըն ։ Ուստի և զեղուն զգոյն ախտի դուռնոյն ծննդեանն անձանց , 'ի հատուցմանէն յանդիմանութեանն գալեալ նոցա լինէր՝ զդերութիւնն ծնանելով և զքայքայումն աւերածոյ ցրմանն ։ Փոխա-

Digitized by Google

նակ պտղոյ որովայնին՝ իբրև զմա-
նուկ 'ի գիրկս առեալ տանէին ,
և յաղագս օտարս պանդխտեալք ։
Փոխանակ սիրոյ ամուսնութեան
սենեկակցին՝ Թագաւորական զաւակ
լինէին ։ Փոխանակ սրբութեանն
վիճակաւորութեանն՝ զկործանու-
մին յարարչէն իւրեանց 'ի մեր-
ձաւոր Տեառնէն ընդունէին ։

Այն օրինակ և ազգն առաջին ,
փոխանակ զի խնկեցին 'ի բուն յիւ-
րեանց Տեառնէն Թիկունս դար-
ձուցանել , որ զնոսայն յոչընչէն
ինչ արար , և 'ի խեցակոյս և 'ի
խեցակարկառ 'ի կալրաշաղախ աշ-
տարակին ապաւինեալք՝ նովին
ախտիւն անօրէն պաշտամամբքն
յղացան , ցրուեալք պատառեալք
քակտեալք 'ի միմեանց բաժա-
նեալք , ծնանէին ընդ երեսս երկ-
րի , իւրաքանչիւր ոք առանձինն
մի մի 'ի նոցանէ զմիութիւն չկե-
ցութեանն յանձինս իւրեանց՝
իբրև զպտուղ որովայնի , 'ի գիրկս
ըստ նմանութեան մանկամօր՝ ա-
ռեալ ընդգրկեալ բերէին ։

Եւ հայեցեալ 'ի պատուհասն յառաջին եկեալ ջրհեղեղին, սկը-սան գործել զաշտարակն · իբրև ակն ունել նմին, և նովին շինելովն ապրել՝ յորժամ եկեսցէ: Եւ ոչ հայեցան յարարիչն, և ոչ կար-ձել յիւրեանց անօրէնութեան-ցըն, և նովին հաճել 'ի գործն և ապրել, և 'ի նմանէն որ ինչ կա-մութիւն լինելութեան, թէ յետոյ թէ յառաջ · զայս ինչ ոչ ածին ընդ միտ, որ իսկզբանէ արարչին է· և 'ի մի ժողով եկեալ ամենե-քեան, և ոչ եւս զգայլին միմեանց յղութեանն որով և ծանրացեալքն էին:

Վասն այսորիկ և ամենագէտն իբրև ետես զանհաճոյս կամացն իւրոց 'ի նոսա՝ զխակութիւնն զան-հաւատութիւնն, խորհուրդ արկեալ աստուածութեանն զյղութեանն նոցա բերել 'ի մէջ զծնունդսն: Եւ ասաց Աստուած · Եկայք իջցուք և պղտորեսցուք զլեզուս նոցա · և ոչ ասաց՝ թէ գնացէք իջէք և պղտորեցէք զլեզուս նոցա · որ-

պէս և կարգ հրամանին պատշաճէր աստուածութեանն․ այլ եկայք, ասէ, իջցուք և պղտորեսցուք․ իբրև առ հաւասարութիւնն գործոյն՝ ի պղտորեսցուքն ասել, յիրաւի առ մարդոյն արարչութեամբն և լեզուացն բաժանմամբ օրինակեաց զայս ։

Քանզի զմարդկութիւնն վասն մերոյ փրկութեան յանձն առնըլոց էր աստուածութիւնն, զթիւ Երրորդութեան երեւսացն ուսուցանել Առաքելոցն․ զի ըստ այնմ օրինակի աշակերտեսցեն, որ ընդ ամենայն տիեզերս մարդկութեանն՝ յայտնեալ երեքանձնական միասնական զօրութեանն խոնարհեալ ծունր կրկնեսցի ։ Իսկ յղութիւն նոցա՝ ծնոյց զանլուր միմեանց ձայնիցն շփոթութիւն ։

Արդ զի՞նչ ասացին ազգքն այնոքիկ առաջինք ՚ի շինել զաշտարակն․ Եկայք շինեսցուք աշտարակ, զի իցէ գլուխ նորա մինչև ՚ի վեր ՚ի յերկինս ։ Որ ոչ կարացին հաստուցանել ՚ի բարձրութիւնն

խոստացեալ անձանց պարծանա-
ցըն՝ զոր պանծացան. այլ աւե-
րեցին քանդեցին զմիաբանական
միաւորելու միաբանութեանն իւ-
րեանց շինութիւն միասնութեանն։
Ոչ հաստացին զանշարժականն ըստ
սահմանելոյն՝ յերկինս. զի յերկիրն էր,
և աստուած էր շինուածն. այլ
անուանի լինելոյն՝ի կործանումն բա-
ժանման ցրուելոյն. յղացան զա-
նօրէնութիւն, ծնան զբազմա-
ձայն լեզուաբաժանութիւն, զի
մի լուիցէ այր ընկերի բարբա-
ռոյ, 'ի միմեանց մեկնելով ցրուե-
ցան։

Իսկ աստուածութիւնն երեւե-
ցաւ յայնժամ խորհրդով, և յայտ-
նեցաւ այժմ յայս ժամանակս
յայտնապէս. մեկնեցաւ ար-
գեամբք, զի ծանիցեն ամենե-
քեան, տեսցեն և հաւատասցեն։
Արդ սերմանեաց 'ի յանձինս մար-
գարէիցն զշնորհս յառաջագի-
տութեան Հոգւոյն սրբոյ. զի
յղացցէ զճշմարտութեանն աւե-
տիս աստուածութեանն զալըս-

տեսան ամենայն արարածոց • և նոքա սերմանեսցեն ընդ ամենայն տիեզերս, զի յղասցին զխորհուրդըն կենդանութեան ակնկալութեան անմահութեանն բերել զծնունդս։ Ցղասցին զլոյս և զսէր նախ առ աստուածութիւն արարչութեանն, և ապա զսէր ընկերսիրութեանն աննենգ կեղծաւորութեամբ՝ հաւատարութեամբ պահել առ միմեանս։

Զոր և ինքն իսկ եկեալ մեկնեաց Որդին Աստուծոյ, թէ յայս երկուս պատուիրանս՝ ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։ Նախ սիրել զաստուածութիւնն յամենայն սրտէ և յամենայն անձնէ և ամենայն զօրութեամբ հանդերձ, որ է առաջինն։ Եւ երկրորդ՝ սիրել զընկերն իբրև զանձըն։ Իսկ երրորդ՝ լսել աստուածութեան բանին և հաւատալ այսմիկ։ Այսու իսկ յղացեալ զուրախութիւն պանծալոյս՝ պտուղ ծնեան 'ի թռչուս 'ի թեւս Հոգւոյն սրբոյ, զի խառնեսցին 'ի գունդսն Քրիս-

տոսի․ յղանալ զայնս հաւատոցն, և ծնանել յարքայութիւն միանգամայն զընծայեալսն: Որպէս ընդ ամենայն արարածոց գոչէ մարգարէն առ Հայր՝ իբրև յամենեցունց բերանոց, իբրև ընդ ամենեցունց առաքեալ զորդեգրութիւն շնորհէ՝ որ կատարելոցն էր առ միոջ, ասէ․ Իբրև երկուցեալ յղոյ, զի հասանել լիցին 'ի ժամանակս ծննդեանն, և առ ցաւս իւր ճչիցէ:

Եւ զի՞նչ լիցեն երկուանք հասեալք՝ որ զցաւսն ճչելոյ սաստկիցեն․ այլ զզմբռնումն և զխոստովանութիւն առաքաչխարութեանցն յղեցեալք, որպէս և ասէն՝ թէ այսպէս եղաք սիրելոյ քում: Եւ զորմէ՞ սիրելւոյն արդեօք խօսեցի մարգարէն, թէ ոչ վասն Որդւոյն նորա ասիցէ՝ որ գալոցն էր, որում միայր ակնկալութիւն ամենայն արարածոց․ որ եկն կատարեաց ընթեամբ զամենայն․ որպէս և ասէն իսկ առ նա բազուքեալ, թէ Տէր յահ և յերկիւղ

քո յղացաք և ծնաք զհոգի փրկու-
թեան քո:

ԶԲ. Արդ փոփոխման աշխարհա-
կին ինքն Տէրն կանոնադրեաց զխաչա-
փայտն՝ ըստ յառաջնումն մար-
գարէութեան՝ որպէս ասէ թէ
ահաւասիկ կանգնեմ նշան 'ի վե-
րայ հեթանոսաց, այսինքն զխաչն
փրկական. յորոյ վերայ ինքնին
Տէրն, ուսոյց և զկեանս գործէ
աշխարհի:

Բայց եկայք, ասացին, շինեա-
ցուք զաշխարհականն, զի եղէ զլուխն
մինչև 'ի վեր 'ի յերկինս. և այս
ըստ նոյն քան նորա կարծիսն ան-
ցեալ. և այն ոչ այսպէս: Նախ խաչ
աշխարհական՝ յորոյ վերայ աստուա-
ծորդին բազմեցաւ, խաչն յերկիր՝
և մարմինն 'ի վերայ նորա. իսկ
աստուածութիւնն մինչև 'ի վեր
քան զերկինս; և քան զամենայն
քանն զանսահմանն բնութիւնն արար-
չեղէն արարածոց. բարձրացա-
կեալ և ընդունեալ 'ի խաչին փայ-
տի, եղեալ և տարածեալ 'ի սա-
րերս և յանապատս, այնպիսին՝

որ և 'ի սիրտս Առաքելոց և ամե֊
նայն սրբոց բնակեալ էր համ֊
դերձ Հարբն և Սուրբ Հոգւովն
խորով ։ Որ և լեզուաւ՝ փոխանակ
լեզուացն խափանելոցն շարժեաց.
զի յառաջինն աշտարակէն ցրուեալ
եղև , իսկ 'ի խօսքս՝ ժողով . ան֊
տի մերժումն 'ի տանջանս , և աս֊
տի մերձումն յարքայութիւնն ։

29 . Ցղացան՝ Առաքեալքն ըղ֊
ձերն առ մարմնաւորականաց խորհրդոց ,
և ծնան զամենայն արարածս՝
խառնել յաստուածութիւնն ։
Մաքրեցին զանձինս խորհրդոց՝ ըն֊
կերացն թողութեամբ զի Աստուած
ասացին . վասն այսորիկ եղեն ըղ֊
թշնամիս չարաչարանաց եղեալ 'ի մե֊
րայ երախտաւորացն , չար փոխանակ
ընդ բարւոյ ընդունելովն հրաւի֊
րանաց , որ եկին կոչել զամենե֊
սեան 'ի հարսանիս աստուածու֊
թեան սիրոյն ։ Մահ ընկալեալ
տանջանօքն համդերձ , փոխանակ
ընդ դրուատն և պատուն զատանե֊
լոյ 'ի նոցանէ , որպէս գրեալ իսկ
առ ձեռս տարաբէք . զի ապախտու֊

թեանց առաքեալք, զի ոչ եթէ հասեալ յերկրաւ 'ի լուսաւորութեանցն վերայ ։

Իսկ յառաւօտին աշտարակէն ցրուեալ լեզուաց եղև . արդ իմքն Տէրն ժողովեաց զցրուեալս ազգացն, և բնակեալ ընդ մարմնոյ խոնարհ զոր առ 'ի մէնջ՝ 'ի փրկութիւն յոր և կանխեցաւ . զի անգակութիւն առաքեսցէ 'ի մի հաւատս միաբանական պաշտամանն ։ Իսկ նոքա առին հրաման սփռել ըզՏէրն, և զկամս նորա առնել . զի զանձինս առհամարեցաւ իւրեանց, այսուհետև ամենայն մարդկան, առարեցուցեն յաւիտենից մահուանէն ։ Զի Տէր ինքնին եկն մեռաւ վասն ամենեցուն, զի զամենեսեան ձգեսցէ յանմահութիւնն ։ Իսկ սոքա նորին կամացն քարոզք առաքեցան, զի տացեն զփրկութիւն և զերախտիս աստուածութեանն առնուլ 'ի միա ամենեցուն՝ որ առ նոսայն եղև ։

Վասն այսորիկ յղեցան Առաքեալքն 'ի հողւոյն սրբոյ, ծնեան

լեզուաւ՝ խօսս ամենեցուն անմա-
հութեան : Զի ինքն եկն Հոգի
աստուածութեանն՝ փորձել և
քննել զամենեսեան իբրև զար-
ծաթս 'ի բովս լեզուաց Առաքե-
լոցն • որպէս ասէն՝ ընդ ամենե-
ցուն ընդ երկրէ բերան առեալ՝
իբրև զփող Նորին զօրութեանց
զոչէ մարգարէն, Թէ փորձեցեր
զմեզ Աստուած և քննեցեր՝ որ-
պէս և քննի արծաթ :

Արդարեւ իսկ փորձեցան առ-
աքեալքն իբրև 'ի բովս 'ի Հոգւոյն
սուրբ • զի նախ զնոսա փորձեաց
'ի փչել Հոգւոյն զօրութեան •
փչեաց 'ի նոսա և ասէ, առէք
զՀոգին սուրբ : Զի ընտրեսցէ
նախ զնոսա իբրև զարծաթ՝ զի
ազգն այրեսցի • զի առն Տեառն
ինքն աստուածախառն մարմինն
էր • որ և ոսկեզօծերաց էին բովք
սրբելոց : Անկան Առաքեալքն ա-
ռաքինիք 'ի բովսն նախ Թուով եր-
կոտասանքն • այրեցաւ կարեաւ մի
'ի նոցանէ որդին կորստեան Յու-
դա • իբրև զանագ 'ի մէջ հրոյ
ծախեալ սպառեցաւ :

Digitized by Google

Սրբեցան մտաւորականքն եւ ընտարեցան հերձ զարծաւթ 'ի բանս. եւ եղին անօթք ընտիրք ճարտարութեան պիտոյից արարչին: Փառձեցան պէսպէս նեղութեամբք եւ տանջանօք՝ զոր կրեցին 'ի մարդկանէ, յայնցանէ՝ որոց զօգուտն խօսեալք, հաստատեալ սիրոյն տայլին մարտիրոսակցացն: Ընդունէին տանջանս, զի զՏեառն առաքելին հրամանս կատարեսցեն՝ սէր օգտի ընկերացն բերեալ. համբերել նեղութեանց, զի զանցաւորսն արհամարհեսցեն: Զի յորժամ արարիչն աշխարհի յայտնեսցի միւսանգամ, նոքա ընդ նմին թագաւորեսցեն յաւիտենականն մըշտընջենաւորութեամբն. որպէս ասէն յիրաւի 'ի դէմս նոցա նոյն երգողին մարգարէութիւն, թէ փորձեցեր զմեզ Աստուած, եւ քննեցեր որպէս եւ քննի արծաթ. խլուցեր զմեզ յորոգայթ եւ եդեր նեղութիւն 'ի թիկունս մեր, եւ անցուցեր զմարդիկ 'ի վերայ գըխոց մերոց:

Զի քննեալ զնոսա հրամէր Հոգ-ւոյն, և ետ 'ի ձեռս մարդկան. զի հանդիստ փորձութիւնքն ե-րեւեսցին նեղութեամբն վասն արդարութեանցն. որպէս դուք յայնցանէ, որ և 'ի ձերում աշ-խարհիս առաջի ձեր աստուա-ծութեանն վկայք դառան, զերանէք զփորձն. զի սիրեսցին զայսյան խոս-տացեալ աստուածորդւոյն 'ի միւսանգամ զալստեան : Այլին զհուր Հոգւոյն կենդանւոյ յան-ձինս իւրեանց, և զվտակս բղխ-ման անմահութեանն բաւական եղեն ընդունել : Վասն այսորիկ կարասցեն զփսեալ անցանել, արհա-մարհել զհրոյն տանջանացն և ըղ-պատղեալ ատուամանեօք մեղացն : Արդարեւ արհամարհեալ զմե-ղաց և ընդ նմին զնեղութեանցն ե-կեալոց, գոհանայցեն զառաւաղէն շնոր-հաց, թէ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հան-գիստ :

Զի նախ անցեն ընդ հուրն և ընդ ջուրն և ընդ սուրն մեղաց.

Digitized by Google

և արհամարհեցին զհուրն և ըզջուրն և զսուրն ամենայն փորձանացն։ և ընկալան զլուսաւորիչ հուրն կենդանութեան, և զջուրն նորոգութեան, և զսուրն՝ այսինքն՝ զբանն Աստուծոյ, որ սուր է քան զամենայն սուր երկսայրի և պողովատիկ։ և կարող է հատանել հատանել թափ անցանել մինչև յորոշումն ոգւոյ և մարմնոյ և շնչոյ։

Վասն այսորիկ և մարգարէն յառաջաբերեալ զլինելոցս՝ յառաջագոյն ընծայեցուցանէ զայս, թէ սուր երկսայրի եա 'ի ձեռս նոցա. որով և կորեցեն հատանեցեն միանգամայն զանօրէնութիւնս ամպարշտութեանցն, խլեացեն յերկրէ։ Եւ զհնձեալսն և զհատեալսն զի՞նչ արասցեն. ասէ. Հողմք առցեն, և ամպք բաժանեսցեն, և փոթորիկ իբրև խուխ կուտեսցէ զնոսա։ Իսկ կուտեալքն 'ի հուրն անշէջ մատնեսցին։ Զի արդարև իսկ Ճշմարիտ մշակաց գործ այն է, զպիտանի

արդիւնան զչայեկանոն 'ի շտեմարանն ժողովեսցեն, և զփուշն և զժանիկն առաջ ձարանի հրոյ:

ԶԴ. Արդ որքա՞ն նախ զանձինս փորձեսցեն, և ապա աշխարհի եղեն բովք: Ընկալան զհուրն կենդանութեան. միւսանգամ մաքրին 'ի բովս խորև զարծաթ զտեալք և պարզեալք և ձուլեալք 'ի սէր արարչին. զատան 'ի հնոցէն հալոցաց փողք կռածոյք 'ի սպաս Տեառն հրամանացն, գոչեցին լցին զտիեզերս. փողք առ փողս գոչեցին. ասեն ընկեր ցընկեր, թէ աւետարանեցէք օր ըստ օրէ ըզփրկութիւն նորա. պատմեցէք 'ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա. զի մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, ահաւորն է նա 'ի վերայ ամենայն կռոց: Եւ թէ ամենայն կուռք հեթանոսաց ոչինչք. այլ Տէր զերկինս արար:

Իսկ փոխանակ պատուէրացն կռելոյ՝ Առաքեալք. խորև զի փողք կռածոյք անուանեցան, զի

զամենայն աշխարհս ընդհանուր լցեն. որպէս ասէն՝ թէ ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհաց են խօսք նոցա։

Արդ և ինքեանք հնոց տիեզերաց, և հուր կենդանութեան 'ի լեզուս նոցա՝ Հոգւոյն սրբոյ, և զամենայն աշխարհս փորձեցին։ Եւ զի զուշեցին ևս 'ի Տեառնէն զՃշմարիտ բնութեան աստուածութեանն յայտնութիւնն, թէ տեսէք տեսէք զի ես եմ, և ոչ գոյ այլ Աստուած բաց յինէն. Թէ՝ ես սպանանեմ և ես կեցուցանեմ. թէ՝ և ես հարկանեմ և ես բժշկեմ, և ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ 'ի ձեռաց իմոց։ Եւ եթէ՝ սրեցից որպէս փայլակն ըզսուսեր իմ, և 'ի խնդիր վրիժուց արձակեցից զաղ իմ. հատուցից զհատուցումն թշնամեաց իմոց։

Յղեցան լեզուք Առաքելոցն զանչափութիւն հաւատոցն իւրեանց, և ծնան զլեզուս զոր ոչ գիտէին։ Գուշեցին նորև զփող՝

զմիահեծան տէրութեանն իշխանութիւն. և ծնեան զանթիւ բազմութիւն մարդկան՝ ի կարգս հրեշտակաց՝՝ ի պաշտաւորութիւն աստուածորդւոյն: Զի փոխանակ հրեշտակացն անկելոց՝ որք կործանեցան՝ յաստուածակիր լուսեղէն՝ ի պաշտաւորութենէն, որգիք մարդկան հրեշտակացին, և կայցեն զանեղխ նոցա: Զի թիւք կարգեալք փառաւորութեանցն նոյն կան՝ անխախտութ միացեալ լրութեամբն անպակասեցին. զի ՚ի հասարակ փառաւորութեանն զօրէսաղքն ածեցեալ զօրացին. ուսոի ՚ի հասարակաց համեմատութենէ՝ փառք ՚ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն:

ՁԵ. Եղեն փողք Առաքեալքն ժամանուք տիեզերացն. զի զգեցեն ՚ի սիրտս ամենայն երկրի ակընկալութիւն ժամանակալութն, պատմել տեառնագալուստ փողոյն: Զի նովքին ձայնիւք եկեալ հասեալ ՚ի ժամանակին, ծանու-

ցեալ զինչ ձայն փողոյն, 'ի մահահամեղխոտ քնոյն յարուցեալք 'ի գարունս, զի և բուսոյն իւրաքանչիւր հասակոյն երեւեալ լիցին : Զի այնու հետեւ յայն հաստեալ գարունն, զիւրաքանչիւր սերմանեաց յարմարոց անուն ըղձալիս կերպարանաց բերիցեն :

Ուրեմն զարմանալի քաղցրահամ գեղեցկատեսն. որպէս ասէ յառաջընծայ մարգարէութիւնն, թէ արդարըն իբրև զարմաւենիս ծաղկեսցեն, և իբրև ըղմայրսն Լիբանանու բազումք եղիցին. տնկեալ եղիցին 'ի տան Տեառն, և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին : Եւ դարձեալ՝ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս յաւետարանացն և 'ի կենդանարար աւետարանին իւրում ամենեցուն տայ զխոստումն յայտնապէս, թէ 'ի Թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստըն կակղասցին և տերեւեսցին, գիտասջիք, ասէ, թէ մերձ է գարունն :

Զի կարի նմանութիւնք և օրինակք են ամենայն ծառատունկք. զի զիւրաքանչիւր կերպարանաց անսխալ բերիցեն, և ոչ երբէք փոխեն զգոյնս գոյնս ծաղկանցն, համոցն և հոտոցն և տերևացն: Զի արմատն զիւր զանեսխլն և զգոյնն և զհամն և զարարն բերիցէ՝ ըղընտական զարմատոց ծննդեան բուսոցն: Նոյնպէս և թուզն զանեսխլ իւրոյ տերևոյն և զարար կեղևոյն և զատուր մրգոյն 'ի նմանէ ուրէշ. և այլքն 'ի նմանէ ուրոյնք: Զի կարմրախնձորն զիւր զօրհնակն, և կարմրատանձն զիւրըն, և կարմրադեղձն զիւրն: Նոյնա նոյնք 'ի նորին բնութենէ՝ որ այլադոյնք են. զի և զհամն անգամ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ առանձինն արձակեսցէ:

Որպէս կերպարանն և ապաքաւսամանն և դափնեն և ձիթենին զերդեցին և տերևովն և մուրտն և ընկուզին և նուշն և քնարուկն և հաճարուկն և թութն և նռանն և հոյնն: Նոյ. ամենայն ծառք մրգա-

բերք և ծաղկաբերք և անդրեւա-բերք և հաստակաբերք, բարձրաւնք և մեծամեծք. որպէս մայրին և նոճն և շոճն և թեղօշն և սարզն և սարոյն և սօսն և յակրին և գին և կաղամախին և ուռատխին:

Սոյնպէս զունդակ զունդակ և երփն երփն ծաղկանցն. որպէս մանդրագորն և վարդն և շուշանն և աստղապայծն և յասմիկն, անխիարն և սմբուլն, ներգիսն և շամամաղի-տակն և մեղրուկն, հօրօտն և մու-րօտն և մանուշակն. և այլն ամե-նայն համաստապրամն ծաղկանցն, և ծառոցն բոյսք բողբոջոցն գար-նանայն երեւեսցի յետ ձմերա-նոյն:

Սոյն օրինակ և յարութիւն մե-ռելոց: Զի յորժամ հեռանէ ստեղ-ծաւ աշխարհ, ոչ ոք 'ի նոցանէ յաշունն կամ 'ի գարունն փոխ էառ յընկերէն, և կամ զիւրն ետ զկերպարանն բուսոյն ծննդեանն նմանութեանն իւրոյ: Այլ 'ի սկզբ-բանն արարչութեանցն 'ի ստեղ-ծուածագործ ժամանակէն՝ մին-

չէ 'ի վախճանելոյ ժամանակին, Թէպէտ ստէպ յաշունն ունին բոյսք ամռունք, չորացեալ տե-րեւընկէց լինին, և պարարեալք ձմերասունք լինին, սառնապատք, ձիւնաթաղք, եղեամնախառնք խըս-տութեամբ հարեալք, գձձին ար-մատքն ծաղկանցն, և կամ բազ-մակոյտք իմն իմն գարաստանա-ցըն, և անտառք բարձրաբերձ մայրիցն մայրեացն աճեցելոց՝ ըս-տուարապատ յոլորացելովքն հան-դերձ շառաւեղօքն, սակայն 'ի ժամանակս գարնայնոյն հասեալք, ամպաշողք, որոտընդոստք, անձ-րեւաբախք, ցօղահարք, առատա-բուխք, ամարասունք, 'ի վեր բե-րեն զիւրաքանչիւր օրինակ բու-սոյ տերեւոցն: Ըստ իւրոյ բնու-թեանն գայ տեսիլն յիւր կեր-պարանն. և ոչ փոխի 'ի նմանէ յընկերն, կամ յընկերէն 'ի նորա նմանութիւն, այլ ըստ հաստա-տել կարգողին՝ նոյնպէս կայ յիւ-րում բնութեանն. անխափանա անխափան պատրաստեալ ըստ

արարչին հրամանելն՝ բուսանելեն փթթին :

Նա և մանրախոտքն զարդարեն , խառն խառն և այլևայլք և որպէս նմա-նութեամբք 'ի միմեանց . որպէս լոռն և վարսակն և կնիւթն , և որ ինչ նման է նոցա : Նա և սերմա-նիքն օգտակարք մարդկան . որ-պէս ցորեանն և հաճարն և գա-րին և կորեակն , դաւարան և ոսպ-նըն , սիսեռն , ոլոռն և գալարուղն , ոխանում , և այլ ևս բազում սեր-մանիք՝ զոր 'ի թիւ ոչ ոք կարասա-ցէ արկանել : Որք իւրաքանչիւր յիւրում ժամու 'ի գարունն ցուցանեն զպայծառութիւն իւրեանց բուսոյքն և հասմիկք և հոտոյքն , բողբոջոյքն , ծաղկոյքն և ընդոյ-քն . և ամեներեւոյթք զիւրեանց մերկութիւնն ըստ իւրաքանչիւրոց նմանութեանն զարդուցանեն :

Որպէս տունքն , և մարմինքն մարդկան պատուականն ցուցին 'ի մեծ գարունն պարարեալք 'ի դեղերագնիտակացն բուսանելեաց : Զի մանանդամայն կաղամբն զոաեկեցքն

չարաչարեալք մեղօք և ջերմք և աղճատա-
քըն, նեարդքն՝ մորթովքն պղե-
ցեալք, և մազովքն զարդարեալք:
Եւ ի բերանոյ հոգւոյն ՚ի նորին զար-
ձեալք, և ի բերանոյ նմանութիւնք
յինքեանս, զի զիւրաքանչիւր զօր-
ծոցն տեսակս ՚ի գլուխս բերանոյ
առեալ ըներիցեն, երրե զկերպս
քաղցրութեան և զանուշութեան
պտղոյն, համովքն և իւղովքն և
ծաղկովքն և հոտովքն, ամենայն
բաղկարձակ տերեւալից ջրասուն
ակնկալութեամբքն: Զոր և սաղ-
մոսարանն մարգարէութեան նը-
ւագեաց, թէ եղիցի նա որպէս
զծառն որ տնկեալն է ՚ի գնացս
ջուրցն, և որ զպտուղ իւր տացէ
՚ի ժամու, և տերեւն նորա մի՛
թափեսցի. և զամենայն ինչ զոր
և առնիցէ՝ յաջողեսցէ նմա: Եւ
դարձեալ՝ եթէ ծաղկեսցին ՚ի քա-
ղաքի Տեառն՝ երրե զխոտ երկրի.
և եթէ՝ եղիցին օրհնեալ յաւի-
տեանս:

ՁՁ. Եւ արդարև իսկ զարմանքն
բուսաբեր՝ զօրինակ մարդկան յա-

բուսութեան մետաղացն ուսուցանէ ։ Եւ զի ծաղիկքն և ծառատունկքն զարդարեն, նա և փթթուշքն բուսանին . որպէս զծնեփն և տատասկն, եղինձն և պատատեղինձն, խայթահարսն, ժանտափուշն, տատափափուշն, սրափուշն, որոմնն ; կայծուռն, զաղձն մեծատակար, և որ ինչ նման է սոցա . և ազգս այլնեքեան յիւրաքանչիւր նմանութեան բնութեանն բուսանին ։ Իսկ օգտակար ծաղկեկքն և կամ ջրասուսերք ծառոցն զարդատունաց՝ յիւրեանց բնութեանն հասանեն զարմանալիոյն ։

Իսկ մեծաք մարդկան, որ են տունկք բուրաստանաց կամ ծաղեկք ծաղկոցացն սատասածութեանն, ունին ինքեանք յինքեանքս լուս կամաց իւրեանց բերել զնմանութիւն և զօրինակս սերմերոյն և ծաղկանցն և հոտոցն և մրգոցն ։ Զի թէպէտ և զանձաբերքն լինին և թէպէտ քաղցրաբերք, թէպէտ մրգաբերք լինին և թէպէտ փշաբերք, թէպէտ առ-

զօրութիւնաւորերք լինելն և թէ-
պէտ մեղաւորերք, թէպէտ ծա-
ռայք լինելն, զի 'ի սկսանեալ պա-
տուականս թագաւորին եղանի-
ցին, և պատիւ զօրդու ուրա-
խութեան ախտայից պատարագատու-
ցին, ըստ աւետեացն գուշակութեան
Հոգւոյն սրբոյ 'ի բերանոյ խօսե-
ցեալ Եսայեայ մարգարէին, թէ.
յայնժամ եղիցին զու պտակ մա-
յերկրութեան 'ի ձեռին Ցեսանն, և
թագ. արքայութեան 'ի ձեռին
Աստուծոյ. և քեզ անուն կոչես-
ցին կամք իմ, և երկիրին քում շի-
նութիւն բնակութեան:

Անդ լինելոց է շինութիւն՝ յաւ-
տուածականին և յանուստուէր և
յանհկարօտ և յանեփոփոխ քաղա-
քին: Զի այժմ ամենայն բոլորք՝
յիւրաքանչիւր բնութեան կան
կառավարք. բայց միայն մարդա-
տուանկքն կարող են զիւրաքան-
չիւր զկամսն զուռնակ զուռնակ կեր-
պարանացն շըլշըլել. որպէս կա-
մին՝ զայն բայս թագէն 'ի յանձին
իւրեանց. և նոքին թագէն 'ի զե-

բեղմանեան, այսինքն է մահճն. ա-
շունն, ոչ խառնոցն՝ այլ մարդկան
որ ժողովին 'ի շտեմարանսն, իսկ
գարունն՝ ոչ խառնոցն կամ փթթոյ-
ակցն, այլ մարդկան զայն կեր-
պարանս բերէ՝ զոր ընդ քեզ Թա-
ղեցեր 'ի գերեզմանսն: Զի եԹէ
ծաղկաձև կամ անուշահոտ անու-
շահամ արդարուԹեամբքն ննջեա-
ցես 'ի գերեզմանսն, ընդ քեզ
կանխեալ բուսանին 'ի յարու-
Թեանն քո արդարուԹիւնքն: Ա-
պա եԹէ մեղօք Թաղեցար 'ի քո
անուն գերեզմանսն, ընդ քեզ
բուսանալք 'ի գարունն փուշքն 'ի
յարուԹեանն շուրջ զքև բուսա-
նիցեն:

Ձե. Ասէ լուր մեծին Յովհան-
նու, որպէս բողոքէ առ հրէա-
կան ազգն աբրահամեան. Արա-
րէք ձեզ այսուհետև պտուղս ար-
ժանիս ապաշխարուԹեան. և մի
ձեռն յանձին հարկանէք և ա-
սէք, եԹէ ունիմք մեք հայր զԱբ-
րահամ. ասեմ ձեզ՝ զի կարող է
Աստուած 'ի քարանցս յայսցա-

նէ յարուցանել որդիս Աբրա-համու : Զի ոչ եթէ զԱբրահամ ինչ զեղջոյ ՚ի հայրապետութե-նէն, այլ զի արժանիքն ՚իցեն նո-րա որդիք, և ոչ անարժանիքն : Արդ զօղատակարան զարթմանէ․ իսկ վասն անշայեկան խոտոցն և փշո-ցըն զի՞նչ կամիցի առնել արդեօք․ ցամաքեցուցանէ նախ և զօսա-ցուցանէ՝ յորում ոչ գտցէ զպը-տուղն :

Այլ նայեաց յառաջ Թղենւոյն և տես : Եկն Տէրն ՚ի Թղենին՝ զի գտցէ ՚ի նմա զպտուղն, և ոչ ե-գիտ, զի չև էր ժամանակն պըտ-ղոյ բերելոյ, և անէծ զնա՝ Թէ յաւիտենանէ ՚ի քէն պտուղ ոք մի կերիցէ : Քանզի ամենայն բուսա-բերք և տերեւաբերք և ծաղկա-բերք ժամանակաւ ունին բերել զպտուղն, իսկ սա զի՞ անիծաւ՝ զի չէր ժամանակ պտղոյն : Արդեօք՝ Թէ պախարոյ ինչ էր, ո՞չ կարէր առ-նել, որ բանիւն միայն հրամայեաց երկրի՝ բերել զծառն, և զբաղ-մութիւն մայրեացն խուռնաքան-

չէուր պտղաբերին, և ամենայն բու-
սոցն իւրաքանչիւր սերմամբք ըստ
ազգի իւրում 'ի վերայ երկրի,
պատրաստեալ և ծառոյն զկերա-
կուր ախտոյից յայնմ հասանել
ժամանակի:

Արդ ոչ զբազում ինչ զայն զօ-
րութիւն ծառոյն հասուցանէր.
այլ կանխեաց ինքն և ասէ. ի
թզենւոյ անտի ուսարուք զա-
ռակն: Իսկ թզենին բարձեալ
ունէր զօրինակ անպտուղ մարդ-
կան. զի զանպտուղն արդարու-
թեան ցամաքեցուցանէ զփուշան:
Այլ լուր մեծի մարգարէին յա-
ռաջընթաց կարապետին Յովհան-
նու, որպէս ասէ՝ թէ այսուհետև
տապար առ արմին ծառոյ կայ.
ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտ-
ուղ բարի, հարկանիցեն և 'ի
նիւթ հրոյ պատրաստիցեն: Եւ
մարգարէն Եսայի ասէ, թէ եղի-
ցին մեղաւորք իբրև փուշք այրե-
ցեալք և ընկեցեալք: Իսկ զդա-
լարովքն խնամարկեալ կենդանի
ջրոյն՝ յարքայութեանն յայն զա-

բուռնն նորոգելոյ պատուիրաստանե֊ցէ · որ տայցեն զպատուար ընդ միոյ հարիւր, և ընդ միոյ երկերիւր, և ընդ միոյ երեքհարիւր · այսոքիւ֊քըն՝ զվաստակոցն զհատուցմունս պատրաստելոյն խոստմամբքն իւր հա֊ւատոցն լուսաւորութեան :

ՁԸ · Այլ 'ի պատրուակս բուսա֊բերս և ծաղկաբերս՝ որ զբոլո֊րութիւն զերեւելութեանն պար֊նայնոյն՝ յետ հնութեան ձմե֊րայնոյն բերիցէ, և Թռչնոցն հա֊ւուցն ծանուցեալ զեղանակաց ժա֊մանակ զգալստեանն : Որպէս յայտ հայեցեալ մարգարէն Երեմիաս ասէ, զնորոյ ժամանակին զգենու 'ի նմանութիւն օրինակաց յանձիկ֊մանութիւն բերէ, և զհանդերձե֊լոցն ակնարկէ յառաջ, Թէ ար֊զարև ծիծառն և տատրակն և խորդ, հաւքն վայրի, ծանեան ըզ֊ժամանակ գալստեանն իւրեանց : Զի ժամանակաւ զարմնայնոյն և իւրեանց գալստեանն ցուցանեն զժամանակ վերջոյ կենաց անու֊խութեան մարդկան, 'ի ձայն առ֊

նեղ, 'ի Հնդիկս, 'ի Չինաստանս, 'ի Խիստ-
նեղ բանտոցն։

Ողորմած մարդասէր է. յար-
ժամ տեսանել մարդկան՝ նուաղա-
ճանաչելեն զկեանս աղքատութեան հայրենեաց
զարհուրեցուցանելոյն աւձանոնն։ Իսկ սորա
բանկն առնուանուակք երբեմն, ըղ-
ձերանաւորեայն քաղցրաձայնին 'ի բաւ-
ըլս մարդկան ընա. 'ի գործ ար-
կեալ զիմաստութիւնն զկերկանս-
կերպան զգուշութեամբ փոյթառնելեր
ոփկն երկաթեւեան ձուոցն խորոց՝
աղքատեկն ծննդոցն խորոց պատա-
րաստէ։

Նա և զատուցանել խորհրդոյն Հա-
ւոց ելեալք 'ի զարմանելոյն ժա-
մանակս՝ երասմացեալք հայրօրա-
նան։ Եղեալք Թառացեալք բարձ-
րացեալ 'ի բարձրութիւն բար-
ձանց օգնականութեանն զար-
շապարաց կոխեան անձնել զան-
հատատանն։ Փոյթ եղեալք զիմաստ-
աձայնն զարդարեաւ բարձեալ, ըղ-
գործս մշակացն արդարութեան
վաստակոցն օգտութեան մարդ-
կան զարթուցանելեն 'ի քնոյ, ըղ-

կանոնաւոր եղանակին փութացուցա-
նեն ։

Իսկ թռչունքն փոքրք են երկ-
րագործութեան, հողագործու-
թեան, յառասպքինութեանն յոր-
դորելոյ. որպէս մեղուն և մրջիւնն
փառաց վարդապետ լինիցին, և
կամ նախատորդք կայցեն ։ Նոյն
օրինակ նմանեալ թռչունքս մե-
ծաձայն մեծապէս փողոյն տեսա-
նապալուաս ադդուլն առնել ա-
մենեցուն 'ի մեռելոց յարութեան.
որպէս ասաց յաստուածապա-
տուամ իմաստութեանն նուագան
սաղմոսներան երգոյն, թէ զարթի-
ցեն 'ի ձայն հաւուն պահպա-
նեալքն ։ Իսկ ով՞լ իցեն պահպա-
նեալքն, եթէ ոչ՝ ոգիքն ժողո-
վեալք պահպանեալք ընդ հրա-
մանաւն. որ զիւրեանց մարմինսն
իւրաքանչիւր զգենլոց են. և ըստ
գործոցն ընդունել զիւրաքանչիւր
պատուասատութիւն վաստակոցն
զսերմանեացն պտուղն, որպէս
'ի վեր անդր պատմեցաք ձեզ ։

ԶԹ. Իսկ երանելիք Առաքեալ-

քըն փոքր են պատրաստականու-
թեան. որ պատրաստեսցեն զա-
մենայն ըսելիս՝ աստուածականն
փորձոյն զալստեանն պատրաստա-
կան առաքաւել. որ անխափանականք
խառնեսցին յայն զուարթ թռչնոց,
ուսանի և ձայն աղջոյ փորձոյն յա-
րութեանն հարկանեցի. որ և ա-
քա արժանասցին իւրեանց թեւս
ստանալ և բարձրանալ 'ի բար-
ձունս՝ և զՏէրն բարձանց առաւելոյ
ամօթոյ անեսանել. զայն Տէր՝ որ
'ի հեռաստանէ ճանաչէ. և զգնա-
ցեալսն 'ի նեղութեան՝ կեցուսցէ
զնոսա, որք վասն արդարութեան
զխստամբերութեանցն զփորձու-
թիւնսն վասն սիրոյն Աստուծոյ
տարան 'ի յանձինս իւրեանց։

Արդ սոքա կատարեսցեն զկամս
Տեառն իւրեանց, զի սիրեսցեն ըղ-
միմեանս. զի և նա սիրեաց զնո-
սա, այնչափ՝ մինչև եդ զանձն
իւր 'ի վերայ բարեկամաց իւրոց։
Իսկ նոքա առաւել հրամանն սիրել
զմիմեանս, զի այնու ընկալցին
յանձինս իւրեանց զշնորհսն խոս-
տացեալ։

Վասն այսորիկ զանէրն սրբոցն ծածկելոց և կերպարանօքն ցուցանէին 'ի ժողովելոյն միով հաւանութեամբ 'ի վերնատունն . ուր եկեալ Հոգին սուրբ եգիտ զնոսա , և օթեվանս կալեալ 'ի նոսա բնակեաց : Զի 'ի զանձնուլ նոցա որ առ Տէրն ունէին լսեալ՝ միաբանամբն կատարեսցէ զխոստացեալսն . զի ասէ , ես երթամ և զմխիթարիչն ես առաքեմ առ ձեզ . որ եկեալ մխիթարեսցէ զախտս ձեր . զի նա զիս փառաւորէ ասէ , զի յինէն առնու և պատմէ ձեզ : Որ և զերրորդութեանն սէր միաբանութեանն 'ի նոցա միաբանութեանն լցցէ . որ 'ի Տեառնէն առին հրաման , թէ երթայք ընդ ամենայն աշխարհս , և աշակերտեցէք զամենայն լեզուս , և մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . և ուսուցէք զամենայն պահել զոր խօսեցայ ընդ ձեզ . և ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս կենաց ձերոց՝ մինչ 'ի վախճան աշխարհի :

Digitized by Google

Զճշմարտութիւն զԵրրորդու-
թեանն զմիաբանն տէրութեանն
երկրպագանմնելեան զօրութեանն եւ
նոցա զգիտութիւն . զի ըստ այնմ
օրինակի աշակերտեսցեն զամենայն
ազգս, եւ մկրտեսցեն յանուն Հօր
եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Այլ զի զՀոգւոյն սրբոյ առաքեն
զզօրութիւն, եւ զամենայն ազգա-
յին լեզուացն բաժանելոյ ընկա-
լան զգիտութիւն, զի ամենայն
աշխարհաց որ ընդ ամենայն աշխե-
զերս մարդկան լեցեն, բաւականն լի-
ցեն ուսուցանելոյ զհրամանս աս-
տուածութեանն, եւ զաւետրն արքա-
յին առ խաղ աստուածս եւ զխոնարհ-
հութեան վասն մերոյ բարձրութեան,
եւ զպայման անմահութեան յետ մե-
ռելոց յարութեանն: Եւ թէ՝ սոյն
իմն մշտնջենաւորութիւնն զօ-
րութիւն եւ աստուածութիւն
Որդւոյն՝ վասն մերոյ փրկութեան
եկն զգեցաւ զմարդկութիւնն.
մանաւանդ թէ առաւել վասն նո-
րոգման ամենայն արարածոց իւ-
րոց. զի առցեն ամենեքեան զզգայն

գիտութիւնն, որ նոցա մեծամեծքն շնորհեցան ։

Անդ կատարեցաւ յառաջասաց ընծայութիւնքն մարգարէութեանցն նորա, թէ յաւուր յայնմիկ տացեն հաղորդապետքն Յուդայ 'ի սիրտս իւրեանց, թէ եկայցէք գտցուք մեզ զբնակիչս Երուսաղէմի, և Տէր ամենակալ Աստուած նոցա ։ Զի նախ անդէն իւրեանց ազգին ետուն զգիտութիւն, և անդուստ յԵրուսաղէմէ բաշխեցին ընդ ամենայն աշխարհս զաստուածպաշտութիւնն ։

Եւ քանզի Տէրն ամենայնի յազգէն Յուդայ ծագեաց, վասն այսորիկ և սոքա հաղորդապետք տանն Յուդայ կոչին ։ զոր և մեկնեաց Պաւղոս Առաքեալ, ած թափեաց և ասէ ։ Մեք հաղորդապետք եմք խորհրդոցն Աստուծոյ ։ Ապա յիրաւի ուրեմն ասէ նոյն Հոգի 'ի բերանոյ մարգարէին յառաջագոյն, թէ յաւուր յայնմիկ, ասէ Տէր, եդի զհաղորդապետսն տանն Յուդայ՝ իբրև զջահս մա-

ուեալս 'ի մէջ փայլակաց, և խաւարն զմամբարս Հրոյ յեղեղան, և կերիցէ յաղջ և յանհետ ձեր զամենայն ժողովուրդս շուրջանակի։ Եւ խոնարհհաղոյն ևս ասէ, թէ հեղից 'ի վերայ տանն Դաւթի և 'ի վերայ տանն Երուսաղէմի զհոգի շնորհաց և գթութեան, և դարձցին յիս։ Զոր եկն կատարեաց ինքն սուրբ Հոգին՝ որ առաքեցաւ 'ի Հօրէ և յՈրդւոյ։ Զի որպէս Որդի առաքեցաւ և եկն Հայրն և Հոգւովն, սոյնպէս և Հոգին առաքեցաւ Հայրն և Որդւովն, զի երեւեսցի միաբանական միաբանութեան զօրութիւն։

Դ. Սակայն եկն յԵրուսաղէմ 'ի քաղաքն, գտեալ զնոսա 'ի միասին՝ ելից [illegible] միով զօրութեամբ. զի կատարեսցին ասացեալքն յառաջախօսութեանն [illegible] Հոգւոյն 'ի բերանոյ մարգարէութեանն Յովելեայ։ Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, սփռեցից ես յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմ-

նոյ. և մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, և ծերոց ձերոց երազք յայտնեսցին. և 'ի վերայ ծառայից իմոց և աղախնեաց իմոց սփռեսցից յոգւոյ իմմէ և մարգարէասցին. և տաց նշանս յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի 'ի խաւար և լուսինն յարիւն՝ մինչև եկեալ իցէ օր Տեառն մեծն և երևելին. և եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ:

Եւ զի՞նչ իցէ զոր ասէն՝ եթէ յաւուրս յետինս. քանզի յորժամ արար Աստուած զարարածս, յառաջին աւուրն սկսեալ՝ 'ի վեցերորդին կատարեալ զամենայն ինչ, վասն ամենակարող և անջան, անաշխատ և անզանգաղ զօրութեանն, հանգեաւ յամենայն գործոց իւրոց. և զօրն եւթներորդ կոչեաց հանգիստ:

Իսկ խորհ. եւթնեն աստուածու-

թիւնն այլայլեալ անկեալ ընդ-
մարդն 'ի պատուականութենապատահու-
թենէ անտի, զի ոչ եկաց մնաց
'ի լաւութեան անդ՝ որպէս և
նոյն կամէր, այլ ընդ պատուածովք
պատուահասութիւք անկեալ՝ յարդա-
րութեան պատասխանատուութիւն գրաւե-
ցաւ 'ի ներքոյ մահուն, մեղաւո-
րեալ խոցեցաւ 'ի հոգի, 'ի ծա-
մնա, յաշխատութիւնս, 'ի քըր-
տունս ցաւոց, յանհանգիստ ե-
րերմնունս տառապանաց. ընկղմե-
ցաւ, ոչ դարձոյց զդաման զոր ա-
ռաց, այսինքն՝ զմահն զոր եդ 'ի
վերայ. այլ զաբարշտութեան ժա-
ռանգականն զոր էառ ընդ վերջօրեայն
թուովն, զի յայտնի լիցի մեծու-
թիւնն իւր:

Սոյն օրինակ կշռեաց վերջհա-
ղորդեան ժառանգականի, ցաւոց
քրտանց աշխատութեանց երկրին
մի մի հազար ամաց՝ առ օր մի
կշռեալ ըստ մեզ աւուրն առաջ-
նոյ, յորում լեցին ծնունդք և
սերունդք բազմացուցիչք լնելու-
թեան: Յորում և փորձութիւնք

Digitized by Google

հանդիսի լաւացն՝ գործեսցէ զընդ-րութիւն հատուցմանցն, պար-գեւատու խոստմանցն անքննակալու-թեանցն ժուժկալութեանց ար-դարոցն զնեղութեանց, որ և բովք 'ի չարաթեան ամացն աշխատու-թեանցն. զոր և մարգարէն գո-չեաց յամենեսեան և ազդեցոյց, ա-սէ. Հազար ամ յաչս Տեառն իբ-րեւ զօր մի զի անցանէ։

Զի յառաջնումն՝ սկիզբն, և 'ի միջերորդումն՝ նորոգումն, զոր արար իւրով գալստեամբն, և զէ-ջըս Հոգւոյն պարգեւեաց. և 'ի վերջին հազարի՝ վախճան, վասն ո-րոյ և յետին կոչի, յորում մի-անգամ գալոց է. և զեւթներորդ-աւուր խորհուրդ ժամանակի զա-ռանց թուոյն և զառանց չափոյն զհանգիստն և զպարգեւսն ընդ-նմին բերելով 'ի սկզբանն. զի ինքն իբրու յիշխանութեանս այսմիկ զօրն եւթներորդ հանգիստ կո-չէ. վասն այսորիկ սուրբ և փառ-փուկ ունել պատուիրէ, զի ամե-նայն որ ծանուցեալ զօրն փառ-

կութեան համեղխառն սքանչելին՝ պատուեսցեն ։ Զի ընդ այսորիկ յեւթներորդ դարերն հանդուացէ զաշխատասիրեալսն, որ աշխատեցան 'ի վերջադարեան իւրեանց ժամանակին ․ իբրեւ այն եթէ ընդ նմին աշխատեցան յիւրեանց ժամանակին, այնպէս և ընդ նմին հանգիցեն յայն երկայն ամին յանչափութեանն, և ընդ նմին ուրախ լիցին ։

ՂԱ․ Այլ Հոգւոյն Աստուծոյ 'ի վերջերորդիս երեւեցաւ ընդ զառաջաձայն խոստմամբն իւր՝ զասացեալս բերանովք մարգարէին ․ որ հեղան շնորհք Հոգւոյն սրբոյ յետին ժամանակիս ․ սփռեցան 'ի վերայ բազմախուռն զուարութեան ժողովոյն, հասեալ իբրեւ զյորդագէմ բազմութիւն բանութեամբն Ջուրցն բազմութեանց ։

Մարգարէացան զխորհուրդս ծածկեալս, խօսեցան յանկարծակի զամենայն լեզուս, ամենայն ազգաց ետուն վերանալ առ Հա-

տարած յարքայութիւնն։ Ընկա-
լան զյայտնութիւնս տեսլեանց,
պատմեցին ամենեցուն. յայտնե-
ցին զխորհուրդն հարսանեաց
մշտնջենաւորաց աստուածորդ-
ւոյն, այսինքն յորդեգրութիւնս
վերանալ. և նովին Որդւովն և
Հոգւովն՝ ընդ Հօր ուրախ լինել։
Եղեն կոչնականք կոչել զամենե-
սեան յաւազանս մկրտութեան,
լուանալ ՚ի յաղտոյն ՚ի սատանա-
յական ծխոյն. զի զգեցցին ըզ-
պատմուճանս լուսեղէնս, և մըտ-
ցեն յուրախութիւնն հարսա-
նեացն, ուր փեսայն Քրիստոս
ուրախ լինի առ հարսինն, այսին-
քըն՝ առ մարմնակիցսն արդար-
սըն. որ ընդ Քրիստոսին չարչա-
րեցան, ընդ նմին և թագաւորես-
ցեն։

Արդ յայտնեցան հասեալն
շնորհք Հոգւոյն յամենեսին. զի
զամենեսեան արժանիս արասցէ
նորապայծառ նորատուր նորաբեր
շնորհի աստուածութեանն։ Ուս-
տերաց և դստերաց, ծերոց և ե-

ըմտասարդաց, ծառայից և աղախնաց, առ հասարակ շնորհեաց զշնորհս Հոգւոյն սրբոյ։ Զի 'ի միջոյ 'ի բաց բարձեալ զխտրոցն, և մի լեալ խտիր, ոչ Հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արու և ոչ իգոյ. զի ամենեքեան միապէս արժանի լիցին Քրիստոսի։ Նա ոչ միայն այսպէս, այլ և չարագործացն եւս զզուռն ողորմութեանն. զի մաքսաւորք և պոռնիկք և մարդասպան աւազակք, և որ ինչ իսկ խաչահանուկքն լիցին նմա աւետարանիչք զփրկութիւնն առնելոյ, և զթողութիւնս ածելոյ, և զարքայութիւնն ամենեցուն շնորհելոյ։

Արդ լցան ամենեքին հասանօք Հոգւոյն սրբոյ. ելին ընդունելոց` զի առցեն զշնորհութիւն պանծալեաց աստուածութեանն, բազմազգեան լեզուացն առնուլ 'ի միտ զնշանսն, զոր եա յերկնից 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ։ Երկնաւորացն այն նշան է, զի ասեալն

զՈրդին Աստուծոյ մարդացեալ 'ի վեր յերկինս, և ընդ նմին զկամարար զմարմնականացն, զի եղեն ընդ նմին Թագաւորեալք և միահամեալք և միապատիւք 'ի գաւնդս Հրեշտակացն: Իսկ 'ի յերկիր 'ի խոնարհ՝ այն նշան է, զի անեալն մարդիկ յերկրէ զմին զնոյն. Որդին Աստուծոյ խոնարհեալ մարդացեալ՝ 'ի վերայ խաչին, զի հեղուցու զիւր արիւնն, ուստի և հուրն վառեսցի յԱռաքեալսն, և գայցեն 'ի լեզուս նոցա վառեալք· զի զմեղս ամենայն մարդկան այրեսցեն բարձցեն 'ի միջոյ: Զի ինքն Որդին Աստուծոյ եղև զատն, և մատուաւ Հօր խնդում պատարագ հաշտութեան 'ի վերայ խաչին, և միահաղոյն եբարձ զմեղս աշխարհի:

Հուր, ասէ, և արիւն և մրրիկ ծխոյ. հուր սրբէ որ սրբեացն և սրբէ զամենեսին Հոգին առ ոք. և արեամբն Քրիստոսի սրբէ: Իսկ որք ոչն կամին սրբել զծուխն ծառայութեան, որ ասէին զօրինակ

յաղթանակութեանն զմերկութիւն աշխարհացածքն, և զարիւնն իւր՝ զոր տուաւ նոցա փրկութիւն՝ զնոյն արիւն արտասուէ նոցա 'ի կորուստ, որ են 'ի Թագաւորութիւն առժանեացն : Արեգակն դարձցի 'ի խաւար, և լուսին յարիւն, յորում ժամանակի տեսին զՏէրն խաչիւն չարչարեալ : Զի այն էր օր երեւելի որ գալոցն է՝ օր դատելոյն և արդարացուցանելոյն ամենեցուն դատաստանօք · այլ որ փրկութեան արդարացուցանելոյ զամենեսեան 'ի շնորհաց անտի :

Զի արեգակն և լուսին եղեն քարոզք յայտնի ժամանակի : Զի արեգակն իւրովքն խաւարելովն բողոքեաց՝ ցուցանել ամենեցուն զՏէրն 'ի խաչին, և ոչ կարացեալ տեսանել զայն տեսիլ՝ խաւարեցաւ · զի ոչ կարաց տեսանել ըզՏեառն զանարգանսն : Իսկ լուսինն եւս մեծամեծս ցուցանէր · զի ըստ նմանութեան հայելոյ զարիւնն յինքեան 'ի վերուստ ամենեցուն

ցուցանէք արարածոց զմերկու-
Թիւն ամենայն աշխարհաց, որք
առնէիցեն ինքեան մասն զայն ա-
րիւն՝ իւրեանց արդարութեան։
Իսկ որ զայս արհամարհիցեն և
ոչ դարձցեն յապաշխարութ պարգևա-
բաշխութիւն, լուսոյն ցուցանի-
ցէ զմշտնջենաւոր արեանն 'ի նոցին
մարմնոց, որ զհամօրէն զամենայն-
նացն կորստեանն զանխնահ որ-
դուման զԺողոցն բաղխեցէ։

Վասն այսորիկ ասէ, թէ ցնո-
շանս յերկինս 'ի վերոյ և յերկիր 'ի
խոնարհ։ Տէր 'ի խոնարհ յերկիր
'ի վերայ խաչին, իսկ լուսաւորք
'ի բարձանց քարոզէ, ազդ ա-
նել ընդ աշխարհս ամենայն։ Ա-
րիւն և հուր և մրրիկ ծխոյ։ Եր-
կու երկք ապաշխարեցան. մին կենաց
աւետիք, և մի արհաւիրք սաստ-
կանալեաց պատուհասից։ Արեգակն
դարձցի 'ի խաւար, և լուսին յա-
րիւն, մինչ չև եկեալ օր Տեառն
մեծն և երեւելի. այսինքն՝ զօր դա-
տաստանին հատուցման նշանակէ,
զի նա ինքն է օր մեծ և երեւելի։

Իսկ մինչ չև այն եկեալ, որ կարգադրեալ է զանուն Տեառն՝ կեցցէ 'ի շնորհացն։ Զի Աստուած յերկիր խոնարհեցաւ, և զմարդիկ յերկինս վերացոյց, և խառնեաց զհողեղէնս ընդ հրեղէնսն։ Նորոգեաց և մանկացոյց զարարածս միանգամայն. եբաց զարգանդ ատաղանին, զի նորոգեսցին և ծնցին վերստին մանկունք արքայութեան 'ի մկրտութենէ անտի։ Զի առին Առաքեալքն զարգանդ ատաղանին, ծնան զամենայն տիեզերս վերստին. զարձուցին յանմեղութեան մանկութեան անխարդախ կաթինն՝ առնել զամենեսեան որդիս Աստուծոյ, և ժառանգաւորս փրկութեանն Քրիստոսի. որպէս և երանելին Պաւղոս ասաց. Որդեակք իմ՝ զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի Քրիստոս 'ի ձեզ։

ՂԲ. Արդ մանկացուցին զամենայն տիեզերս, վասն այսորիկ զի տուին զզօրութիւն այնորիկ՝ որ

հիմնաւորդյն մանկացաւ. որպէս աստուածախօսն իմաստութիւնըն երգեաց յառաջագոյն. ասէ, դարձցի Թագաւոր 'ի մանկութիւն, զի տեսին զՏէրն մանկացեալ: Անդ նոր ծնեալն Առաքեալքըն զաշխարհս ամենայն 'ի Ջրոյ և 'ի Հոգւոյ. յաղեցին հուրք զամենայն որք, զի առաքին հրամանն՝ Թէ ամենայն որք հուրբ յաղեացի: Նաւանեցան անկապկութեամբ յաւատուածութիւն և լուսաւորեցան. զանազանեցուցին և ըլին զարեզերս աշխարհաւոք: Զի որ մեանդամ 'ի Քրիստոս մկրտեցան՝ զՔրիստոս զգեցան, և զհոգի նորին լուսոյ յանկանեծն արքին զինորհան, և նորին ահազգոյց նշանօքն հրաշէզ զօրութեամբքն յաղել անդել 'ի նախուԹենէ մեղացն աղծութեան հեԹանոսութեանն՝ յառաջնուԹիւն բժշկութեան:

Եւ ցօղալից առաւօտութեամբն բանաւոր անձրևաւն՝ պարարեցին զօրոնց երկիրս մահղենս անպտղատացեալս մարդկան: Եւ ածին

կարէ զծով զպատրանօք՝ զհաւաստա-
տութիւն, և կարէ զգետ յաղթե-
ղինաց՝ զխրխտութիւն. կարէ զաղքատս
մշտնջենաւորութեան՝ զողջոյն և զհա-
ւատս. կարէ զպատժակս ուղղափառու-
թեան՝ զանկրն աստուածութեան.
կարէ զհօտը՝ զահ և զերկիւղ արկա-
նել 'ի սիրտս մարդկան: Զի զոր
օրինակ զերկաթն ծարաւարբաւորե-
ալըն զաւրերաց սաստեալ, ընկեցեալ
'ի բովս հրոյ և ջեռուցեալ հրա-
գոյն շողացուցանէ, այլն օրինակ
և արդարքըն մխեցան 'ի փոյթս
հնոցի արդարութեան, և ներքեան
'ի շողիւնս և 'ի գոյնս ճոխագոյն արդա-
րոյ. զՔրիստոս ինքն զգեցեալ զզե-
ցան. կարէ զոյս մաքրեցին զանկրն
աստուածութեանն յանձինս իւ-
րեանց. առեալ զզօրութիւն 'ի բազ-
մանց, կարէ զգալ մշակս ընթա-
ցան ընդ սերմանիւք աստուած-
պաշտութեանց զամենայն ըն-
դուս:

Եղեն Ծրագրանք լուցեալք՝ կա-
րև 'ի վերայ աշտանակի, այսինքն
'ի վերայ խաչին. և նորոյն զօրու-

Լերամբ ճառագայթիցն լուսաւորեցին զաշխարհս, հալածեցին զմըթութիւն խաւարին յամենայն մարդկանէ, զի արասցեն զնոսա ընդունակս աստուածականն սիրոյն։ Սփռեցան ընդ աշխարհս՝ լինել քարոզք Ճշմարտութեանն. զի ոչ գոյ արգել և ոչ խտիր, ոչ Հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ առն և ոչ կնոջ. զի ամենեքեան մի իցեն 'ի Քրիստոս։

Ու բազումք 'ի հրէական ազգէն, նոքին իսկ բուն Առաքելաքըն՝ սիւնքն հաստատութիւնք, և բազումք 'ի հեթանոսաց, զնոցին օրինակն յանձինս իւրեանց առեալ բարձեալ բերէին։ Բազումք ազատք, և բազումք ծառայք. ազատքն յազատութենէ 'ի թագաւորութիւն ընթացան, այսինքն՝ որ թագաւորն վասն նոցա խոնարհեցաւ 'ի բարձրութենէն։ Իսկ ծառայքն 'ի ծառայութենէ յազատութիւն, այսինքն՝ որ էառ զկերպարանս ծառայի, և ազա-

ներաց զամենեսեան 'ի ծառայու-
թեան խաւարի : Իսկ հրեշտակականքն
հայրքն և մարգարէքն՝ առաջնորդե-
ցին իւրեանց ազգին զխորհուրդն
յառաջասացութեան : Իսկ խորքն եկին խաւա-
րութիւն առաքելոցն, և ծառայեաց
յայտնապէս 'ի մէջ նոցա արքե-
զանկին արդարութեան, որ է Քրիստո-
սոսն, իսկ որոց պատուիրեալ էին
կերակուր յաւիտենից՝ հաստատա-
ցեալ 'ի նա, եղեն 'ի նոցանէ քա-
րոզք և առաքեալքն աշխարհաց,
առաքինի վկայք . և յարուցին 'ի
հեթանոսաց՝ յորդորեցին զանազան
զանազան հաւատացելոց, և զառաւ
զատաս վկայից, և զամենայն եր-
կիր լցին : Զի ոչ միայն 'ի ձեռն
առաքելոց, այլ և 'ի ձեռն կանանց
որոց քարոզեցաւ աւետարանն
կենդանութեան ընդ աշխարհս ա-
մենայն . զի և կանայք օրհնեցան
վասն կուսածին ծննդեանն որ 'ի
նոցանէն :

Արդ քանզի Առաքեալքն՝ սուրբքն՝
ամոլքն, որ խօսեցան զամենայն
լեզուս, եղին ընդ աշխարհս, մի-

Digitized by Google

Ճանկեցան, բաժանեցին զարգս ամենայն. զորս առաքեաց և ետ նոցա իշխանութիւն՝ առնել նշանս և զօրութիւնս արուեստից, զմեռեալս յարուցանել, զհիւանդս բժշկել, զախտաժէտս ողջացուցանել, զկաղս գնացուցանել, ըղկոյրս բանալ, զխուլս 'ի բան զարձուցանել, և տալ համերց խօսել, և զբորոտս սրբել, և զամենայն ցաւ և զլկութիւն հալածել. զդեւս թշնամիս մարդկութեանս փախուցանել, և զսատանայ ապահակ մեղաց մոլորութեան մարդկութեան կործան առնել. և զամենայն որ սատանայծապաշտութեան ծանօթս կացուցանել և խափանել զմոլորութիւնն. հաստատել զարգս ամենայն հաւատալ արարչութեանն հրամանացն։

ՂԳ. Արդ քրիստոսադունդ և խաչակիր Առաքելոցն, որոց գըլխաւորն Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթուղիմէոս, Թովմաս և Մատթէոս, Յակովբոս, Սիմոն,

Թադէոս և Բարթողոմէոս, Մատա-
թիաս, Մարկոս, Ղուկաս և Գա-
ղոս և Բառնաբաս, և այլք ևս որ
նմանեցին սոցա, որք և եւթա-
նասնիցն ևս, որք առաջին իշխա-
նութիւն 'ի Տեառնէ՝ գնալ 'ի վե-
րայ իժի և քարբի և կոխել զզօ-
րութիւն թշնամւոյն, լինել լոյս
երկրի, և համարձակել յաղել զան-
կարգութիւն չարութեան անօրի-
նութեան մարդկան ազգին աս-
տուածութեան Հոգւոյն սրբոյ,
իբրև զքաջ ախոյեանս, իբրև զպա-
տերազմասէր նահատակս զան-
ձինս 'ի կիրթ առաքինութեան
մղէլին, և եղեալ զնեղութիւնս
չարչարանացն առաջի, զի ընդ-
վաստակոցն ճգնութեանցն, ոչ
ձրի այլ վարձուցն փոխանակ,
բանութեամբ համբերութեամբ
ընկալանեցին յանձինս խորեանց
զարքայութիւնն Աստուծոյ մար-
տիրս պատերազմաց իբրև զքաջ
նահատակաց, զգեցեալ յանձի-
նըս խորանց զհաւատոյն և զսէր
իբրև զզրահ արդարութեան, յո-

րում՝ ոչ կարեն փրկել նենգու-
թեան նորա բանսարկու թշնամ-
ւոյն. եղեալ զլոյս փրկութեան
իւրն զառագաստ անմխիթար. և
գխմեալք ընդ անկեղերս՝ բռնաւո-
րեցին զազգս անձնայն:

Առաւել եւ զօրինակս առաւել-
համբերութեանցն, և այլոցն եւ
առաջին թղթովք՝ զառաջնոցն մար-
տին իւրեանց կարդացոյց արկանելին,
թէ՝ օրինակ առէք, եղբարք, զեր-
կայնմտութեան մարգարէիցն, որք
խօսեցան յանուն Տեառն. թէ՝
զհամբերութիւն Յոբայ լուա-
րուք, և զկատարումն Տեառն
տեսէք:

Զի և Տէրն զնոյն եցոյց նոցա
զհամբերութիւնն, թէ երանի ի-
ցէ ձեզ յորժամ նախատեսցեն և
հալածիցեն և սպանանիցեն զձեզ
վասն իմ. ցնծացէք և ուրախ լե-
րուք, զի ձեր վարձք բազում են
յերկինս. և զկատարածն առա-
նէր՝ թէ այսպէս հալածեցին ըզ-
մարգարէսն՝ որ յառաջ քան ըզ-
ձեզ: Դուք էք աղ երկրի, և լոյս

աշխարհէ։ Եւ պիտոյքն օրինակ առ-
ւեալ նոցա, որ խնդրեսցեն կատա-
րելոց զամենայն. որպէս և նորայն
այլոց ուսուցանէին, թէ և զՏէրն
խնդրեսցեն զխոստմնքն տեսայք։

ՂԴ. Այսր սփռեալ ընդ ամե-
նայն տեղիս՝ առ ողջախոհութիւն
աստուածպաշտութեան, ծանօ-
թիւ աստուածութեանն կացու-
ցանել զամենեսեան։ Որպէս մար-
գարէն յառաջագոյն երգեաց եր-
բեւ ՚ի նոցանէն յառաջխօսու-
թեամբ՝ գուշակութեամբ հոգ-
ւոյն սրբոյ. թէ լուարուք զայս
ամենայն ազգք, ունկնդիր լերուք
ամենեքեան որ բնակեալ էք
յաշխարհի. ծնունդք երկրի և
որդիք մարդկան, ՚ի միասին մե-
ծամեծք և տնանկք։ Եւ այսպէս
սփռեալ ընդ տիեզերս՝ բաժանե-
ցան յամենայն լեզուս. որոց վկ-
այեալ եկեալքն Հրեայքն յամե-
նայն կողմանց, թէ լսեմք մեք յիւ-
րաքանչիւր բարբառս. որք ժո-
ղովեալ առեալն զԱռաքեալսն ՚ի
միոջ վայրի, յառաջ քան զսփռել
նոցա ընդ ամենայն տիեզերս։

Այդ. անձինք զեղբարանց հրէա-կանն կողմն ունէալ մարդասպանե-ցին, իսկ այլք սփռուեցան ընդ աշխա-րհս. ոմանք ՚ի Մարս և ոմանք ՚ի Պարթևս, ոմանք ՚ի Խուժաս-տան և ոմանք ՚ի Միջագետս. ոմն ՚ի կողմանս Գամրաց, ոմն ՚ի Պոնտոս, ոմն յԱսիա, ոմն ՚ի Փռիւգիայ, ոմն ՚ի Պամփիւլիայ, ոմն յԵգիպտոս և ոմն յաշխարհն Հնդկաց. ոմն ՚ի կողմն լիբէացւոց, ոմն ՚ի կողմն կիւրենացւոց, ոմն ՚ի կողմն գաղմատացւոց, ոմն ՚ի կողմն սպանիացւոց, ոմն ՚ի կող-մըն Ազովտայ, ոմն ՚ի կողմն Թրա-կայ, ոմն ՚ի կողմն Լակոնիայ, ոմն ՚ի Կապադովկիայ, ոմն ՚ի Բիւ-թանիայ: Եւ ոչ ոք կարէ բաւել, թուել, հասու լինել. այլ ընդ ա-մենայն երկիր ել բարբառ նոցա և մինչ ՚ի ծագս տիեզերաց են խօսք նոցա:

Այսպէս քարոզեցին ընդ աշխա-րհս՝ առ. ՚ի լուսաւոր առնելոյ զամենայն մարդ. որ գալոցն է յաշ-խարհ: Տալ զապաշխարութիւն

փրկութեան, ամենեցունն ընծա-
նալ, զամենեսեան արժանիս 'ի
կապանաց խաւարին մկրտու-
թեամբն, և 'ի քրիստոսադաւանութեանն
դրօշմել զամենայն ազգս : Տալ
զոգի Աստուծոյ 'ի սիրտս մարդ-
կան. միաբանել խառնել 'ի սէր
աստուածորդւոյն, զի 'ի նորին
ամենեցունն բերան մի աղաղակ լիցի,
և ամենայն աշխարհ միաբանել
ասել՝ Թէ Աբբա՝ հայր : Զի բարձ-
ցի անուն ծառայութեան, և դի-
ցի անուն որդեգրութեանն շնոր-
հեսցի Քրիստոսիւ : Ուսանել զմարդ-
կին աստուածորդւոյն, և ընկալել
զաւրինսն կենդանարար · զի այսու-
միանգամ ամենայն աշխարհ 'ի ժա-
ռանգութիւնն Քրիստոսի, լինել
ժառանգորդ Աստուծոյ, և ժա-
ռանգակից Քրիստոսի :

Այսպէս զօրացուցեալ զմարդ
'ի խորհուրդս կամաց իւրոց՝ յու-
սովն նոցա 'ի Քրիստոս · զոր և
զօրք լուսաւորք և հաւատարմիք
փրկութեան աւետարանին ճշ-
մարտութեամբ ձեռօք, յոր հա-

ւսուցեալքն և մկրտեալքն 'ի Հոգին աւետեաց արդարութեան · որ է ինքն զօրաւորական ժառանգութեն մերոյ, 'ի փրկութիւն նուաճութեան 'ի գովեստ փառաց նորա ։

Այսպէս ընթացան ընդ. աշխարհս ամենայն մինչև 'ի ծագս երկրի, ընդունել զճշմարտութիւն բանին կենաց ։ Անդ և զօրք Հրեշտակացն և հոգեղինացն և հրեղինացն առ 'ի մխիթարութիւն Առաքելոցն գումարեալ, և բանից ընդել և Ճանապարհաց և բանտամուտ կապանացն, ուստի և շնորհօք Աստուծոյ կորզեալ զԱռաքեալսն, Ճանաչէին ։ Եւ առաջնորդեալ հրամանականք Հոգւոյն սրբոյ քաղաքէ քաղաք, և աշխարհէ աշխարհէ, և զհաւատացեալս Քրիստոսի ընդհանուր ծանօթս առնել · զոր և մեք աւանդաւորքս զառաքելաւանդութեանցն Ճշմարտութիւն ընկալեալք, վասն ինքնահրամանին առաջնորդութեան Հոգւոյն սրբոյ ։

Քանզի այսպէս հրամանն առ-

ւնեալ աշակերտել զազգս ամե֊
նայն, տարածանելոյ ընդ տիեզերս
'ի հնազանդեցել հաւատոյն ամե֊
նայն հեթանոսաց, հրաւիրել ըն֊
նոսա 'ի համագործակցութիւն քա֊
րոզութեանն առաքելոց զանազանե֊
ցս ։ Եւ միանգամայնոյն ընդ ամե֊
նայն տիեզերս առաջնորդութե֊
Հռովմայն սրբոյ համագործակեալք,
որ քարոզեսցեն զարքայութիւնն
Աստուծոյ, և ուսուցանիցեն վասն
Տեառն Յիսուսի Քրիստոսի ա֊
նարգել և անխափան ամենայն
համարձակութեամբ ։

ՂԵ. Եւ յետ այսորիկ քրիս֊
տոսապաշտունք Առաքելոցն՝ չնոր֊
հակալութեամբ Հռովմայն սրբոյ
զուարճացելոց ընդ ամենայն կող֊
մանս որ 'ի նմանոյ եղելոց, ամե֊
նայն նշանաց և արտաքինաւոքս և
չնորհապարտ զօրութեամբ, ապաշ֊
խարեալ ըստ խոստովանչէութ մա֊
սին, և զգամբն կենաց Հեշեցու֊
ցեալ, և միանգամայնոյն քրիստոսա֊
ծանօթս և յաջողութիւնական յու֊
սոյն ծաղկեցուցեալ․ քանզի սո֊

ցուն 'ի շնորհաշաւորդ բանիցն և 'ի գործոցն յայտնի է իւրաքանչիւր սահմանադրութիւն հրամանաւ Հոգւոյն սրբոյ միաձայնեալ ։ Զոր և Պաւղոսի իսկ նշանակեալ, թէ յԵրուսաղեմէ մինչև 'ի Իլիւրի-կեայ լնուլ եհաս լի աւետել զաւե-տարանն Աստուծոյ ․ և դարձեալ՝ թէ որ կարգեաց զՊետրոս 'ի թլ-փատութիւնն, զօրացոյց և զիս 'ի հեթանոսս ։

Որով և առաքելածագեալ ժա-մանակին մերձեալ կայր ամենայն ուրեք գլխաւորութեամբ փրկու-թեանն հասանել, որպէս և Պաւ-ղոս 'ի յԱթէնս պատասխանա-տու եղեալ, թէ զժամանակն անգիտութեանն անտես արարեալ Աստուած, արդ. զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ուրեք ապաշ-խարել ։ Համանգոյն ասէ նշանակէ և Պետրոս 'ի կաթողիկէական թղթին իւրում, թէ բաւական է անցեալ ժամանակին կա-մացն հեթանոսաց, արդ. այսու-հետև ըստ կամացն Աստուծոյ կեցցէն ։

Բայց ոչ անդէն և անդ յան-
կարծութեամբ ըստ հոգւոյն զօ-
րութեան՝ զինուորեալծայոյն յանդըն-
գելական մեծամեծամբ ձգտեցու-
ցանէին . այլ՝ նախ թեթեւագոյն
ըստ աշխարհահոգւոյն կարգաց առա-
կարգաւորելով և արտաքնապահութեամբ :
Վասն որոյ և յայտնի արդարելով
Պաւղոս ասէ, թէ կամ թէ ըստ մարմնոյ ձեռ
՚ի Քրիստոս, և ոչ հաստատուն
կերակուր . քանզի չէին բաւա-
կան : Որպէս և յառաջագոյն կար-
գեալ ամենիմաստութեան Աստուածոյ
մանկականութեանն օրինակին, նախ զո-
հէլքն և շարաթութեանն և անմահացու-
ման կարգացն :

Յորում յետ այսորիկ հրամա-
ընտանի մարգարէիցն յառաջագոյ-
ցոլց զաստուածաբանական հայեցեր . ո-
րով ասէ, եթէ յառաջեալ են առաջ
զոհիւք ձեռամբ . և թէ՝ ոչ կարան
պատարագաց քոց կշռադատելով ըն-
գեր . այլ մաքրեն Առաքելոյ պա-
տուիրանն օրհնութեան : Եւ թէ՝
զի՞նչ խնդրէք ՚ի քէն Տէր, ո՜ մարդ,
բայց առնել իրաւունս և արդա-

Digitized by Google

բութիւն, և պատրաստել զինի Ցեսուն երթայցէ:

Նոյն կանոն և Առաքելոցն պաշտեցան. քանզի միոյն Աստուծոյ օրէնք և օրինապատուէք՝ առաջին և երկրորդն Ճանաչէր: Զոր օրինակ Ցեսուն յայտ առարեալ ասելովն. Ցայսմիկ է բանն Ճշմարիտ, զի այլ է որ սերմանէ, և այլ է որ հնձէ. Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր դուք ոչ վաստակեցէք. այլք վաստակեցին, և դուք՝ ի վաստակս նոցա մտէք. զի որ սերմանեն և որ հնձեն, առ հասարակ ցնծասցեն:

Այլ նոքա տեղեկացեալ էին առաւելոյն քաղցրութեան յամենափրկչին Քրիստոսէ, որ սկսաւ առնել և ուսուցանել: Քանզի և ինքն Քրիստոս ոչ անցանէ՛ ի սկզբբանն զբարձրագոյնն և զանհասականն ուսուցանէ, այլ նախ խոնարհագոյն և ուսուցանէր բանիւք և ախտահալած բժշկութեամբ մերձաւորս առնելով և խնամատարուցեալ, ցորս և ասէր,

Թէ զերկրաւորս ասացի ձեզ և ոչ հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասասցից ձեզ՝ հաւատասջիք. ապա յետ այնորիկ երկրէ կատարելոց՝ համամբարձականացյն և բարձրագոյն զՀոգեւորականն վարդապետեալ. նորին կանոնաւ և Առաքելայքն ՚ի քարոզագործականն կոչմանանն գործէին։

ՂԶ. Վասն որոյ և աւետահաղորդականն հրամանաւ Առաքելոցն, նախախնամութիւն մատուցելոցն հեթանոսացն զթեթեւագոյնն աւանդել, և որոշել նախ ՚ի կերակրոց կռոց և ՚ի պոռնկութենէ և ՚ի մեռելոտւոյ և յարենէ։ Իսկ յորժամ առաջին եղեւ ամենայն ումեք, և վկայեալ Հոգւոյն սրբոյ Հրէից և հեթանոսաց փրկան յուսականն հաւատոյն որ ՚ի Տէր Յիսուս Քրիստոս է. որպէս և Պետրոս յառաջագոյն հրէաստանեայցն ասէր, թէ մեք եւս նորա վկայք, և Հոգւոյն սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց նորաց. իսկ Պաւղոսի ահագին զգու-

շարժեալքն 'ի Մխիթարայ աստուծոյ համաշխարհիկ ժողովրդոցն յուշ առաքելոյ զաւանդելոցն հրամանս և ուսուցանել, եթէ ոչ զանձնիշխանեցի յօգտակարացն հրապարակաւ և ատենիւն սուտ վկայութեան հրէից և հեթանոսաց զապաշխարութեանն որ առ Աստուած և զհաւատոյն որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որով և մինչ ուսեալ վկայութեան դնել ձեզ յաւուր յայսմիկ, ասէ, զի սուրբ եմ յարենէ ամենեցուն. քանզի ոչ խորշեցայ 'ի չպատմելոյ ձեզ զամենայն կամսն Աստուծոյ. զայն այսուհետև երանութեանն հաւատացն 'ի խորհրդոցն Հոգւոյն սրբոյ յիշատակել զաստուածախօս զաստուածապատուամ զաւետարանաւորդապետութիւն միածնին Աստուծոյ. զի զորով կարգեալ հաստատեցելն ամենայն ազգաց և յաւիտենից եկեղեց 'ի ներքոյ երկնից, առ 'ի լուսաւոր առնելոյ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ: Մանաւանդ թէ ազգե-

ցութեամբք հոգւոյն շարժեալք՝ յառաւելն եղեալքն յաճախեցելոցն: Վասն որոյ յառաջագունիցն խաւ ն-շանակեաց աշակերտացն որոց գիրկիցն ամենեցուն ասելով, Թէ եւ բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք համբառնալ այժ-միկ. յորժամ եկեսցէ հոգին ճշ-մարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբք:

Ակնարկեաց եւ վասն կենդա-նատուր աւետարանին խորոյ, Թէ քարոզեսցի աւետարանս արքա-յութեան ընդ ամենայն տիեզե-րս, 'ի վկայութիւն ամենայն հե-թանոսաց, եւ ապա եկեսցէ կա-տարած: Քանզի եւ Առաքելոցն վկայեցին նորին ճշմարտութեան՝ ասեալ 'ի սուրբ աւետարանէ եւ 'ի մարգարէական գրոց՝ Թուղթս հոգեշպատումն առաքելախօսս ծագկեցուցեալ, զի կանոնք մշտն-ջենականք աշակերտելոյն պա-հեսցեն. մանաւանդ հայեցեալ եւ 'ի կատարումն Եկեղեցեացն՝ յա-ճախեալն այնու հետեւ զառաքելա-

գոյինն բարբառեսցուք : Որպէս և Պաւղոսի յայտ առնելով ասէ . Չիմաստութիւնն խօսիմք ընդ կատարեալս , զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ , և ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելոցն , այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով , զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած 'ի փառս մեր . զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ . զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց . 'ի խաչ հանէին : Իմաստութեամբն լուսաւորեալք և զարդարեալք էին , առեալ զնա , թէ մեզ ոչ զոգի աշխարհիս այսորիկ առաք , այլ զՀոգին որ յԱստուծոյն . զի զնովաւ ծանիցուք զայն՝ որ յԱստուծոյ շնորհեցաւ մեզ :

Նա որք առաւել հոգևորք և հոգեմտաւք աստուածատեսացն զաստուածատուր աւետարանն , և զբոլոր հաստատեալ , և զմի աստուածութիւն՝ չորս աւետարանաւ սահմանեալ . ոչ ծառայաբարացիս 'ի միմեանց

արտաքնատախօսեալ. այլ ամենա-պէտս Հոգւոյն Աստուծոյ՝ զմտա-ւոր ճշմարտութեան հրամանացն Քրիստոսի պատուիրել. զոր յառա-ջակարգ մարգարէքն է ուսուցանել: Զի զոր մեծին Մովսէսի յառա-ջագոյն շնորհօքն Հոգւոյն զլինե-լոցն առաջախօսեալ, զնոյն Հո-գեպատում բարբառովն և զինչ եկեղեցն մարգարէիցն երկրոր-դեալ. որոնք երեւեալ ամենա-պայծառ Հոգւոյն զօրութեամբ:

ՂԷ. Համբարձեալ այնուհետեւ թեւովք Հոգւոյն աստուածաբանա-զեր առաքելոցն քրիստոսատարելոց, և անցեալ ընդ երկինս և բարձրա-ցեալ 'ի վերայ խորանացն երկ-նից, անդ 'ի վեր յաստուածա-կան յաթոռն, և անդրեկացեալ Հոգւովն սրբով խորոցն Աստու-ծոյ, և ծանուցեալ զմիածին Որ-դին անեղէն 'ի ծոց Հօր իւրոյ. և այնպէս ճշմարտագոյնս հաստա-տեալ նորին զխոստութեամբ, որ-պէս և զխօսէ Հայր զմիածինն իւր: Որով լուսաւորեալ և առեալ

զանազանութիւն 'ի պատմել, թէ՝ ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. Նա էր ի սկզբանէ առ Աստուած. ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ։ Ցեսանեմս զի չեթող ինչ 'ի միջինզաստուածայէտ իմաստութեանն ըղղայլման. այլ միանգամայնոյն ըզսժամանակին ըսէրէ ասելովն, թէ էր ի սկզբանէ, և առ Աստուած էր, և Աստուած էր. և ամենայն ինչ նովաւ եղև. առ ժամայն իսկ ծանօթ եղեալ էական անձինն Որդւոյ, և միաբանն և աստուածակից պատուոյն, և ամենակար զօրութեան նորին։

Քանզի յառաջագոյն իսկ աստուածաբանեաց յարգարելոց ընթացապատրին պզանձելեոցն ամենաւէրն Քրիստոսադաւանելն աշխարհկերացըն իւր. զի և զերդոյս և կերպարանաց և միաբանական ընութեանն երից անձանցն կատարելոց մերձաւորք և ծանօթք եղեն։ Զի ոչ եթէ ի սրբեանց կարճանայս իմաս-

տութեանցն հասանելոյ չքնաղ գիտութեանն Աստուծոյ, այլ նորին իսկ մարգարէքն Աստուծոյ յայտ առաքելոյ յերկնից, թէ դա է որդի իմ սիրելի՝ դմա լուարուք : Զոր և Պետրոսի մեկնեալ 'ի կաթուղիկեայն թղթումն, թէ ոչ պաճուճեալ ինչ առասպելելոց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն և զգալուստն, այլ տեղեկն եղեալ ականատեսք նորա մեծութեանն : Քանզի առեալ յԱստուծոյ և 'ի Հօրէ զպատիւ և զփառս, եկեալ այնպիսի բարբառոյ 'ի մեծավայելչութեանն փառաց անտի, թէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ . և զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որք ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինն :

Նոյնպէս և Որդին եկեալ մատուցանէ առ Հօրն զխոստովանութիւն, թէ եկի՝ ոչ զիմ կամս կատարել, այլ զկամս Հօր իմոյ որ առաքեացն զիս : Եւ յարդարագոյն նշա-

նակերպով 'ի վարդապետականին իւրում, զփառս Հօրն բարձրացուցանէ․ յայտ արարեալ զմիաբանական կամացն, թէ զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ՝ ոչ եթէ յանձնէ իմմէ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործն։ Նոյնպէս և վասն Հոգւոյն սրբոյ ասէ, թէ Հոգին ճշմարտութեան առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ․ զի ոչ եթէ յանձնէ իւրմէ խօսեսցի, այլ զոր լուիցէ՝ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ․ նա զիս փառաւորեսցէ՝ զի յիմմէ անտի առնուցու, և պատմեսցէ ձեզ․ զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է․ վասն այնորիկ ասացի, թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ։

Տես զմիաբանութիւնն զմիակամութիւնն զմիաւորականն ճշմարտութեանն․ և տես զկարգ լուսաւորեաց զգոյութիւնն երից անձանցն հաւասարի․ ասէ, եթէ ոչ յանձնէ իւրմէ խօսեսցի Հոգին սուրբ․ քանզի յիմմէ անտի առ-



Digitized by Google

նուացու, և պատմեսցէ ձեզ. զի զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է։ Տես զՀայրն կատարեալ, և զՈրդին ճշմարիտ, և զՀոգին Հաւատարիմ։ Նշանակեսցի և զանձնաւորականն և զմիաւորումն աստուածական զօրութեանն այսպիսեան ասելովն, ելեալ 'ի Հօրէ և եկի յաշխարհ։ Նոյնպէս և վասն Ճշմարիտ Հոգւոյն, թէ Հոգին ճշմարտութեան՝ որ 'ի Հօրէ ելանէ։

Տայ զՃին և վասն միաւորութեան միասնականն Երրորդութեանն ասելովն, թէ հոգի է Աստուած. ցուցանել վասն իւր և վասն Ճշմարիտ Հոգւոյն՝ անմերձականն 'ի Հօրէ։ Թէպէտ և աստուածք անուանեցան յաստուծէն Հօրէ, այլ ընդ Նմին միաւորումն և առանց մեկնելոյ զմիասնականն գործս կատարելոցն. ասելովն՝ թէ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ՝ որ էջ յերկինս։ Տեսանես զի և իջանել յերկիր, և է յերկինս։ Յուրոյ մերոյ և աւետարանիչն Յու-

հաննէս տեսանել վկայեաց, թէ զԱստուած ոչ ոք ետես երբէք. բայց միածին որդին որ է 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց։ Եւ արդ զու 'ի միտ առ զոր ասէն, թէ որ էն 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց. զի զոր առ խուրեանան տեսանէին, 'ի ծոց Հօր զնոյն գիտէին։ Ո՛ զարմանալի պարգեւելոցն, եւ աստուածագէտ վիճակելոցն. որպէսո՞ւմ մեծ վայելչութեան առ ժամայն հասին։

ՂԸ. Նոյնպէս եւ վասն Ճշմարիտ Հոգւոյն է իմանալ յասելոյն, թէ Հոգին Ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ. ելանէ եւ ոչ բաժանի, եւ բղխէ եւ ոչ սպառի։ Եւ միանգամայն զՃշմարտադոյնս զմիապէս զմիականչելոյն ասէ, թէ ես 'ի Հայր, եւ Հայր յիս. եւ որ ետես զիս՝ ետես զՀայր իմ։ Քանզի ոչ եթէ սահմանօք ինչ զատուածականն բովանդակեցեն, թէ Հայր յերկինս եւ միածին Որդին եւ Ճըշմարիտ Հոգին յերկրի. որով զի է ամենայն, եւ է յամենայնի եւ 'ի վերայ ամենայնի։

Վասն այսր ամենայնի աստուա-
ծախօսեալ և վարդապետեալ ա-
շակերտացն իւրոց, հրաւիրէ յա-
ռաքինութիւն Հոգւոյն սրբոյ՝
յորս և աւետր իսկ, թէ ես բա-
զում ինչ ունիմ ասել ձեզ, այլ
ոչ կարէք համբառնալ այժմիկ․
բայց յորժամ եկեսցէ Հոգին Ճըշ-
մարտութեան՝ յիշեցուսցէ ձեզ,
և առաջնորդեսցէ ձեզ ամենայն
Ճշմարտութեամբ։ Վասն որոյ և
Պետրոս իսկ նշանակեաց առնուլ
զՀոգին սուրբ, թէ յիշեցի ես ըզ-
բանն Տեառն՝ զոր ասէր, թէ Յո-
վհաննէս մկրտեաց ջրով, բայց դուք
մկրտեսջիք Հոգւովն սրբով․ և ոչ
միայն նոցա, այլ և մատուցելոցն
նոքօք առ Աստուած։

Որպէս երանելոյն Ղուկայ 'ի
սկզբան աւետարանին յայտ ա-
րարեալ, թէ բազումք յօժարե-
ցին վերստին կարգել զպատմու-
թիւնն վասն իրացն հաստատելոց
'ի մեզ․ որպէս աւանդեցին մեզ՝
որք իսկզբանէ ականատեսք և ըս-
պասաւորք եղեն բանին․ յորոց

և զաւետարանին Տեառն կար-
դեսցէ։ Իսկ առ Գաւաչոսի եւս ըս-
քանչելագոյն և ահաւորագոյն
ազդողութեամբ երեւեալ. վասն
որոյ և ինքն զարմացեալ պատմէ
ասելովն՝ թէ մարմնով և եթէ ա-
ռանց մարմնոյ՝ ոչ գիտեմ. բայց
համբարձեալ յերրորդ մասն երկ-
նից և ՚ի դրախտն և լուեալ բանս
անճառականս գիտեմ։ Վասն ո-
րոյ և ասէն, թէ ես ոչ ՚ի մարդոյ
առի և ոչ ուսայ յումեքէ, այլ
՚ի յայտնութենէն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի. զոր և ակա-
նատես եղեալ պարծի՝ թէ զՏէր
Յիսուս Քրիստոս տեսի աչօք ի-
մովք։

Բայց թէպէտ և այսպէս բարձ-
րապատիւ և պայծառանշան ա-
ռաքեցաւ ՚ի Քրիստոսէ, սայ հնա-
զանդութիւն և երկոտասանիցն.
դրեալ կարնթացուցն, զի ես ձեզ
զայն նախ աւանդեցի՝ զոր և ես
ընկալայ։ Նոյնպէս և եբրայակա-
նացն, թէ մեք զիա՞րդ ապրեսցուք
հեղգացեալքս յայնպիսի փրկու-

Digitized by Google

թենէին, որ սկիզբըն առ խօսելոյ 'ի Տեառնէ, և 'ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ 'ի մեզ հաստատեցաւ ։ Արդ՝ք յայտնի է եթէ մեր գորութեանն շնորհքն զամենեսեան լուսաւորեալ՝ առ 'ի վկայութիւն մերոյ ճշմարտութեանն զարթուցանէին . քանզի և ասէ Պաւղոս, թէ ամենեքին մեք զմի հոգի արբաք ։

Որով բարձրապատուամս և երկնաբարձրագոյնս սկսան հաշակեցուցանել զպատիւ խակական փառաց մեծանեին՝ հանդերձ կանխաստց մարգարէական բարբառովքըն . զոր և ասաց աստուածապատումն, թէ . իսկզբանէ էր Բանն, և առ Աստուած էր, և Աստուած էր, և ամենայն ինչ նովաւ եղև ։ Ասէ և Ղուկաս զԱռաքելոյն, իսկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն Բանին ։ Դարձեալ և զսոյն Յովհաննէս ասէ 'ի կաթուղիկէին իւրում, թէ որ էրն իսկզբանէ, զորմէ լուաքն, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր

շօշափեցին 'ի վերայ Բանին կենաց. և առ Աստուած էր, ասէ, Բանն: Աւագերեցն Տեառն վկայեաց, թէ Հայր տուր ինձ ըզփառսն՝ զոր ունէի առ քեզ յառաջ քան զլինելն աշխարհի:

Բերէ 'ի սոյն և Պաւղոս, թէ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զէանալըն հաւասար Աստուծոյ: Նոյնպէս և Յովհաննէս յառաջեբլականին իւրում, թէ որ էրն առ Հօրն՝ երեւեցաւ մեզ. և Աստուած էր Բանն: Որպէս և Քրիստոս ասաց, թէ զոր ունի Հայր՝ ունիմ ես: Դարձեալ և Յովհաննէս 'ի թղթին իւրում ասէ, թէ նա է ճշմարիտ Աստուած: Նոյնպէս և Պաւղոս, թէ յերեւել փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ետ զանձն իւր վասն մեր:

Արդ միով միաբանութեամբ և ինքնայօժար մերովք իսկ կամօք հաւացուք մեք հաւատոյ և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայս կատարեալ 'ի չափ հասակի կա-

տարըմանեն Քրիստոսի ։ Քանզի առ_ աւել վարդապետութիւնն Քրիս_ տոսի՝ առ ՚ի բազմաց ունկնդրու_ թեան հասցէ ․ որով հրամանաւ զա_ մենայն ազգս երկրի՝ ընդ․ անդրդա_ կան վարդապետութեամբն նուի_ րեաց առաքելոցն , թէ երթայք ընդ ա_ մենայն հեթանոսս՝ աշակերտե_ ցէք եւ մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ ։

Առաւել առ ՚ի բազմաց ակըն_ կալութեամբն կամի երեւեցու_ ցանել զփառաւոր գալուստն իւր ․ որպէս թէ վասն երկայնմտու_ թեան համբերողացն եւ յուսա_ լից սպասելոցն գայցէ երեւել ։ Այսպիսի ինչ է իմանալ եւ զա_ ռաջին գալուստն Քրիստոսի , եւ զէջն աստուածեղէն Հոգւոյն ՚ի տասներորդում աւուրն ՚ի պէն_ տակոստէից տօնին ։ Քանզի ոչ ե_ թէ օթեվանք ինչ պիտոյ էին ծա_ խել միածնի Որդւոյն Աստուծոյ յելս բարձրութեանն երկնից , եւ կամ սուրբ Հոգւոյն՝ իջանելով ՚ի ժողովս Առաքելոցն , որով եր_

կինք և երկիր լի են, այլ՝ այնպէս կամեցաւ մարդասէրն Աստուած, որպէս թէ տամն աւուրց ակնկալութիւն Առաքելոցն 'ի վերնատանն կոչեսցէ զպարգեւաբեր Հոգին՝ զմխիթարիչն ամենեցուն։

Եւ ամենայն ուրեք պատճառս խնչ 'ի մարդիկ հարկանէ զիւրոյ բարերարութեանն. զի վասն փոքըր պատճառանաց՝ տայ 'ի մեր ընծայելոց՝ անչափ բարեաց պատրաստական հատուցանող գտանիցի։ Եւ զի՞նչ իսկ առաւելեւ անչափ և անհատական քան զայն կայցէ, յորժամ յերկնից փառօք հօր գայցէ, և առաջի ամենայն հրեշտակազունդ զօրուն զձեռանէ առնուլ զիւրոցն սիրելեացն՝ առ ինքն համբառնալ տանիցի. յորում աստուածեղէն բնութեանն զանպատուական զկենդանին՝ միաւորական վայելեցուցանէ։

Քանզի ամենիմաստն Աստուած մայրանկեաց բնակութեանն և կայեանաւոր ամենահմանացն բնակութիւն աստուածամուտ սքանչելի



Digitized by Google

վասն խուրացն սրբելեաց զարքայու-
թեան յարդարէ. յորում մշտա-
կեաց վայելչութեան ամենայն ար-
ժանաւոր բանաւորացն, հոգեղէ-
նացն և մարմնականացն, առ ին-
քեան պատրաստեալ զետեղեա-
ցէ: Վասն որոյ Ամենափրկիչն
այլ առաւել աշակերտացն և
քաջալերէր, թէ ուր եսն իցեմ,
և դուք անդ իցէք, և յամենայն
ժամ զիմ զփառսն տեսանիցէք:
Բայց միւս ևս բարձրագոյն. Ցայնմ
աւուր ծանիջիք, ասէ, թէ ես 'ի
Հայր, և դուք յիս, և ես 'ի ձեզ:
Ի նոյն խոկ առնուլ զասացեալն
պատուհասագոյն է, զոր ակն ոչ ե-
տես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ՝ զոր պատրաս-
տեաց Աստուած սիրելեաց իւ-
րոց. ասել և ընդ երանելւոյն Պաւ-
ղոսի, թէ շնորհք Քրիստոսի 'ի
վերայ անպատում պարգևաց
նորա:

Կատարեցաւ վարդապետու-
թիւն սրբոյն Գրիգորի, որ Ճոր-

հեցաւ նմա յԱստուծոյ՝ լուսաւորել զմոլորս խաւարեալս հայաստանեայն աշխարհին՝ հաւատովք և մկրտութեամբ: Եւ զամենեսեան քրիստոսածանօթս առնէր և հաստատէր, փառաւորել ըզսուրբ անուանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

---

Digitized by Google

# ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

## ԴԱՐՁ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԴ ՁԵՌՆ ԱՌՆ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԻ

ՂԹ. Արդ եկայք, եղբարք, զօգուտն վասն հասարակաց շինութեանն փութասցուք. զի և 'ի ձէնջ պատուհասքդ մերժեսցին, և լիցի 'ի խաւարութենէդ հանելոյ վաղվաղակի խաղաղութիւն, և 'ի գերեալ մոլորութեանցն՝ դարձ փրկութեան։ Այլ եւ զամենայն պատարագամս աստուածութեանն կարգեսցի և եղի 'ի լսելիս ձեր առ հասարակ, ոչ թագուցի զօգուտն. 'ի սկզբանցն մինչև վասն վախճանին՝ զամենայն պատմեցաք ձեզ։

Digitized by Google

Արդ եկայք ամփոփեսցուք ըզ-գանձն աստուածութեանն, զի յայսմանէ պարգեւեսցի ձեզ ըն-ժըշկութիւն ամենեցուն : Մա-տուսցուք զձեռս 'ի հանդիստ, և չքնեսցուք վկայաբանս 'ի վերայ դոցա` տաճարս աղօթից միաբա-նութեան. համառօտ խնդրել յԱստուծոյ նախ զհաշտութիւն և զխաղաղութիւն և զողորմութիւն հաստատուն և յուսով և սիրով, ընդ նմին զկեանսն և զարքայու-թիւն Աստուծոյ :

Զի դուք աղաւնեսջիք 'ի ծա-ռայութեանցն անձնականութե-ան գործոցն խաւարին. և զփառս ըն-ծեղէնս աստուածութեանն ըմ-բռնեսջիք, աղօթիւք և բարեխօ-սութեամբք սոցա առ Աստուած. զի և սոքա հանդուրցեն զանձինս ձեր 'ի աստիճանաց պատուահասեցը-եկեղեց, և սոքօք հաստատեսջիք առ Աստուած : Զի աստուածու-թիւնն որ բնակեալն է 'ի նոսա, զԹագի 'ի ձեզ ձերով ապաշխա-րութեամբն, խոստովանութեամբ

բըն , խոնարհութեամբն , հնազանդութեամբն հաւատոյ. և կըրնաւորել ձեզ պահօքն, անկել 'ի սիրոս և առնուլ 'ի միտ. սփռել զկամնացն խորհուրդս , և արժանի լինել լուսացման մկրտութեան սրբութեանն . և սրբոցդ մասին ժառանգութեան լուսոյն վիճակին հասանել , և պարծանաց խաչին՝ որ կորուսելոցն յիմարութիւն է , և ձեզ որ կեայքդ՝ իմաստութիւն և զօրութիւն և փրկութիւն Աստուծոյ է։

Որ 'ի յորդեգրութիւն արժանի արասցէ աստուածութեանն , ջնջել զմեղս ձեր , և ընդունել զմասն պսակի սրբոցն որ առ ձեզ են ։ Զի դուք լինիք փառաւորանիչ աստուածութեանն , դասուցն փառաբանչացն հաղորդեալք 'ի կցորդութիւն օրհնութեամբն հօրւոյն սրբոյ . և արժանի լինիք դուք զխորհուրդն աստուածութեանն առնուլ։ Զի լուացեալ էջէք 'ի յաղտոյ սատանայի , և նա ձերոց ոտիցն պարշապարացն

կախման լինի ։ Եւ դուք մանկունք հաղորդեալք էիք ՚ի հարստանիս աստուածութեան, ուտել զմիս ճշմարիտ զառանն Որդւոյն Աստուածոյ, և ըմպել զարիւն նորա ։ Եւ կցորդ էիք չարչարանացն Աստուծոյ, և փառացն հաղորդելոց էք․ և լինիջիք ՚ի մի ոգի ՚ի նա, և կցորդեցիք մարմնով և արեամբն նորա ։

Եւ միայնքս այս լինիցին ձեզ ողորմութեամբն նորա ընդդ ամաւր, և աշտարակ հզօր ամրութեամբ, մերձակացուք բարեխօսութեամբ, հեղմամբ արեամբն քաջացեալք, նահատակութեամբքն իւրեանց զձեզ առ Աստուած մատուցանիցեն․ որ շահեալք ըղձեզ՝ զիւրեանց նահատակութեանըն մարտին ցուցին ձեզ յաղթող զօրութիւնն ։

Արդ այս օր ընդ երեկս է անցեալ, երթայք ՚ի հանգիստ քնոյ, խաղաղութեամբ ննջեցէք․ և ՚ի վաղու հերակ փոյթ լիցի ձեզ շինել Նշարկս հանգստոցացդ ։ Զի

և սոքա փոխարէն ընդ հողեղէն յարկացն՝ զոր սոցա շինեցէք աստ, պատրաստեսցեն ձեզ զյարկս լուսեղէնս յարքայութեանն երկնից. որում ակն ունիմք հասանել բարեխօսութեամբ սրբոցս, ՚ի նոյն ժողով միաբանութեան յարքայութեանն Քրիստոսի: Զի նորա են փառք և զօրութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ծ. Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զամբոխն. բայց Թագաւորն և մեծամեծքն ոչ երբէք մեկնէին ՚ի նմանէ, զի հարուածեալք, և զցայգ և զցերեկ օթեվանք առ նմա լինէին ՚ի մէջ այգւոյն. առ դուրս հնձանին էին օթեվանք նոցա. զգեցեալ քուրձ, և նստեալ ՚ի վերայ մոխրոյ, և պահեալ լինէին պահս աւուրս վաթսուն և վեց: Եւ այսպէս երանելին Գրիգորիոս անհանգիստ անդադար զցայգ և զցերեկ ոչ դադարէր երբէք աւուրս վաթսուն և հինգ, խօսել խրատել և ուսուցանել և

հաստատել․ իբրեւ զիմաստուն բը-ժիշկ դարմանել ջանայր զդեղն օգ-տութեան ։ Զի նոքա մատու-ցեն առ նա զանձինս իբրեւ զհի-ւանդացեալս, եւ նա իբրեւ զճար-տարապետ բժշկեսցէ զանձինս նոցա աւետարանաւն Քրիստոսի ։

Համօրէն անդեկացուցեալ խե-լամտեցուցանէր, ոչ եթէ ծայ-րաքաղ ինչ արարեալ օգտաքանս կամ աւրամարս խօսեցաւ, այլ յառակապատում արարեալ ու-սուցանէր ամենեցուն՝ ի սկզբանց անտի արարեալ յաշխարհահա-մար յաշխարհապատում արար-չութենէ անտի՝ մինչեւ ՚ի բուն սըր-բոցն պատգամախօսացն Աստու-ծոյ, ամենեցունց իւրաքանչիւր գործոց առաքինութեան եւ հո-գեպատում պատգամացն ընդելս եւ ծանօթս կացուցանէր ։

Եւ զարանց աստուածախօսաց ըստ քրիստոսաւանդ հրահան-գելոցն ճշմարտութեանն, զայր իւրաքանչիւր աստուածամօտս կենօքն՝ վաստակասէր հոգեւոր

վարուքն խուրովքն հանդերձ վը-
կայութեամբն, զմի մի ոք 'ի նո-
ցանէ առանձինն յականէ ծանու-
ցանէր. և նոցին յԱստուծոյ ա-
ռաքելովքն՝ կարգեալս յարմա-
րեալս ընծայեցուցանէր զամե-
նայն ասացեալ զպատգամն Հոգ-
ւոյն սրբոյ, և 'ի նմին զմեկնու-
թիւն նորուն՝ հանդերձել գրեաց
նորին զօրութեամբն:

Իսկ նոքա ժողովեալ կուտեալ
անթիւ մարդկանն, զմիմիամբքն
զտութեալ՝ խնձոյս կացուցա-
նէին՝ ունկնդրութեան վարդա-
պետութեանն մատուցանել զկե-
նըս. քաղցրութիւնք անհունք ան-
չափութեամբք անհնարին շա-
Ապա գայր հասանէր յանուանեալ Դիցնաւանն ամենայն մեծամեծօքն և զօրօքն և աշխարհակոյտ ամբոխիւն, որ ժողովեալք 'ի կողմանց կողմանց ժողովուրդքն՝ որ գային շրջէին ընդ հետ նորա, որք գտանէին զբժըշկութիւնս, և ընդունէին զպէտս իւրաքանչիւր 'ի նմանէ: Եւ նա ամենայնիւ վարդապետութեամ

բըն ամենեցուն սերմանեալ զբանն կենաց, և հանդերձ ամենայն բապատասաւորօք աւետարանին՝ որ ընդ իւրն էին. զոր չէր ոք բաւական բառ խրատքանչիւր անուանց նշանակել. որովք յանձն եղեալ երանելին եպիսկոպոսն շնորհացն Աստուծոյ՝ գայր հասանէր առ ստորոտովն Նպատա լերինն :

Ընդ առաջ ելանէր նմա Թագաւորն ամենայն զօրօք հանդերձ ; առ ափն Եփրատ գետոյն. որ և անդ պատահեցին իսկ ընդ առնէր զամենեսին շնորհիւ աւետարանաւն Քրիստոսի, և բազում ցնծութեամբ և ուրախութեամբ յաւանին զաւանայելին : Եւ անդ մատուցեալ Թագաւորին իշխանքն եկեալք զբերեալ պատասխանին ողջունաբեր Թղթոյն, զի գրեալ էր զպատճէնն՝ օրինակ զայս.

## ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Գանեալք և խրատեալք, հարուածեալք և ողոքեալք, տանջեալք և նուաճեալք, կա-

րուսեալքդ և գտեալք, մոլո-րեալքդ և դարձուցեալքդ, յանձն առեալքդ և սիրեցեալքդ Տեառն, Տրդատես Թագաւոր Հայոց մեծաց և Աշխէն տիկին և օրիորդ Խոսրովիդուխտ, և ամենայն բազմամբոխ ժողովրդոց՝ որ լցեն Հայոց մեծաց, Ղևոնդէս արքեպիսկոպոս մետրապօլիտ մեծա՛յն Կեսարու և ամենայն ուխտ եկեղեցւոյ սրբոյ քահանայութեան, եպիսկոպոսաց, երիցանց և սարկաւագաց և ժողովրդոց, 'ի Տէր խնդալ:

Վասն կենսատուր փրկութեդ հասելոյդ ձեզ յԱստուծոյ՝ որպէս մեզ պատմեցաւ, անպայման ուրախութեամբ գոհացաք զանգլջական փառացն Քրիստոսի, և վասն սրբոց վկայիցն Աստուծոյ՝ որ 'ի մէջ ձերում աշխարհիդ փառաւորեցան: Չի և դուք նայեցեալք յելս գնացից նոցա, և նմանողք լեալ հաւատոց նոցա, փառաւորեսջիք. նոցա պսակօքն սըսակելով պսակեսջիք:

Զի արարիչն ամենայնի և ա-
մենայն աշխարհաց՝ որ ընդ ամե-
նեցուն հաճեալ զի առցեն զոր-
դեգրութիւն, և որով հաճոյական
կամացն խրատէ զամենեսեան, որով
մխիթարեսցէ 'ի մտաւորական աշ-
խատութիւննէն, յիւրում արքա-
յութեանն հանգուսցէ զբեռնա-
ւորսն զաշխատեալսն, զի լուծն
նորա քաղցր է և բեռն իւր փոք-
րագի. առ իւր թեթևարկէ, վարդա-
պետէ, զի յիւր հանգստեան ար-
ժանիս արասցէ զամենեսեանն:

Վասն զի ոչ կանխեալ զգիտա-
ցեալ ձեր զարժանն, վասն այսո-
րիկ ած զարժան գաւազանն 'ի
վերայ. իբրև 'ի քնոյ ընդոստու-
ցեալ ձեր, տեսէք զզգաստու-
թիւնն ոչ արժանն է: Եւ զի ոչ
իմացայք դուք զմարդկանն 'ի
մարդկայնեան, զգթութիւն ա-
րար ձեզ 'ի չմարդկայնեան: Եւ
զոր յանդգնութեանն արհամար-
հեցէք, հաստատեաց զձեզ յան-
շարժ զգթութիւնն. զի մեծն իսկ
որ 'ի չինադացն անարգեալ, եղև

նա ձեզ գլուխ անկեան: Զի զոր բարկացուցէքն, արտասուօք հաշտեցուսջիք: Զի զոր կափուցեալ զաչս ձեր՝ համբերէիք խաւարի, ծագեաց եբաց և լուսաւորեաց զտեսանելիս. մերկեաց զձեզ ըզգեցեալ զխաւարն հեթանոսութեան, և զճառագայթարձակ ըզգեցոյց զպատմուճանն: Իսկ զոր համարեալ անմտութիւն՝ կորուսանել պանծացեալ, նոյն ինքն ձեզ իմաստութիւն տուաւ, և նոյն ինքն ձեր գանձ պարգեւեցաւ:

Արդ մեք իբրև զայսպիսիս գըտեալք՝ ընկղմեցաք՚ի խորութիւն սիրոյ ալեաց բազմութեան անհատական գոհութեանց. և՚ի վերայ այսորիկ՝ անդադար բերանովք, և անհանգիստ լեզուօք ըզՏէր մեր զՅիսուս Քրիստոս, ըզբարերար, զքանչելագործ, ըզպարգեւաբաշխն օրհնեցաք, և առ Աստուած հայր ամենայնի գոհութիւն մատուցաք. շնորհելով Գրիգորի զանապական պարգեւս

սուրբ Հոգւոյն, որով և դուք արժանի լինիջք շնորհի ողջունելին արքայութեան երկնից: Եւ զմեզ հեռի մարմնով մերձ համարել հոգւով, յիշեցէք 'ի ձեր 'ի նորաթեք յաղօթս` 'ի ձերում պատգեւեալ փրկութեան մանաւանդ յորժամ զյիշատակ սրբոցդ խումբեցէք ձերով ուրախութեամբդ:

Եւ հաստատեալ կայցէ միայութիւն 'ի մէջ երկուց կողմանցդ, զի պարգեւաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանց ձերոյդ նահանգիդ, առ 'ի մէնջ կայցէ անշարժ` յեկեղեցւոյս Կեսարու. ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն չենութեան ձեռնադրութիւն: Որով անապական պարգեւք ձեզ բաշխին վկայացեալ աջովդ շնորհօք նորոգութեան մկրտութեան, և փրկական խաչին, և կենդանարար մարմնոյն և քաւիչ արեանն Քրիստոսի, և երանութիւնք բազմացելոց քահանայութեանց. որով դուք արժանի լինիջք մերա-

նալ խառնելաղօթարուղս մշտըն-
ջենաւորք 'ի զօրս քրիստոսակե-
ցոյց գնդին։ Ո՛չ լերուք 'ի Քրիս-
տոս, և հանապազ վայելեալ լի-
ջիք 'ի փրկութեան Տեառն։

ճժկ. Եւ ուրախ եղեն ընդ մը-
խիթարութիւն Թղթոյն, եւ՝ զի
եկեալ հասեալ էին ուղէգնացքն
լուսաւորութեամբ. և երեւեալ
աստուածաշնորհ պարգեւօք՝ ա-
ռաւել զհոգեւոր անձուկն սփռե-
ցին. և եւս քան զեւս 'ի հաւատ-
սըն հաստատեցան մեծաւ ցըն-
ծալից բերկրութեամբ։

Իսկ նա անդէն և անդատին ըն-
դելական սովորութեամբն 'ի գործ
արկեալ զանդադար վարդապե-
տութիւնն հաւատարութեամբ
բարեպաշտութեամբ արքային
Տրդատայ, զիւր արուեստն առա-
ջի դնէր. խրատէր յորդորելով,
որով առաւելագոյն հնազանդէին
նմա ըստ հրամանացն Աստուծոյ,
թագաւորն և զօրականքն ամե-
նայն, աշխարհախումբ բազմու-
թեամբն յանձն առեալ ամենե-

յաւէտ զինուորեալն կատարել, և ըզ-
հրամայեալն 'ի գործ արկանել: Եւ նորա տուեալ հրաման ար-
քայադունն բանակացն՝ ամսօ-
րեայ ժամանակօք 'ի պահս և յա-
ղօթս յամենալ: Եւ իւրում ան-
ձինն՝ զամփոփականն առաջի դնէր, և իւրովքն անդուստ ածելովքն հաւատարօքն, զպահս և զաղօթս, զողջնութիւնս, զպատրաստանս ար-
տօսրաբերս, զխստամբերութիւ-
նըս, զհոգս աշխարհահեծս: Յուշ-
առնել զառաջեալսն հոգեպա-
տում մարգարէին, թէ յորժամ հեծեծեսցես՝ յայնժամ կեցցես:

Այսպէս բազում աշխատու-
թեամբ կատարեալ՝ վասն համաշ-
խարհին բարեաց ինչ օծանս զաւ-
նելոյ. որում և պարգեւէր իսկ վիճակն յամենաշնորհն Աստու-
ծոյ, հայրական չափոց ծնանել ծնունդ՝ նորոգ և աքանչելի պար-
գեւաբաշխ աջովն իւրով. զամե-
նայն 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ՝ յար-
գանդէ միրտութեամբն միւսան-
գամ վերստին ծնանել, առնել

կատարելով, սրբելով, զարդարելով զ ժողովուրդ Տեառն։ Եւ եդ անդ հիմունս, և շինեաց եկեղեցի. և զնշխարսն զոր ունէր յառաքելոց սրբոցն, ՚ի մեծապայծառ տաճարին բնակեցուցանէր։ Այնուհետև և ընդ ամենայն կողմանս գաւառացն գըտնէր հիմունս եկեղեցւոյ, և ուղղէր սեղան, և կացուցանէր քահանայս։ Եւ ամենայն երկիրն դարձեալ սպասեալ լուսաւորեալ կամխէին ՚ի պաշտամունս և յերկիւղ Աստուծոյ։

ԾԺԸ. Իսկ ՚ի լինել կենօքն եդելոյ պահոցն կատարելոյ, առեալ երանելւոյն Գրիգորի զաշխարհապահականն զօրացն, և զնախնեին զԹագաւորն, և զկին նորա Աշխէն, և զմեծ օրհորդն Խոսրովիդուխտ, և զմեծամեծան ամենայն, և ամենայն մարդկաւ բանակին ընդ առաւօտն լուսանալոյն՝ յափն Եփրատ գետոյն մատուցանէր, և անդէն մկրտէր սուրբ հաւատով զամենեսեան յանուն Հօր.և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Եւ խորին խղճմտանօք մարդիկն ա-
մենայն և Թագաւորքն 'ի մկրտու-
Թեանն 'ի Ջուրսն Եփրատ գետոյն,
Նշանն սքանչելի երեւեցաւ յԱս-
տուածոյ. զի զանեղի տանեալ Ջուրք
գետոյն, անդրէն դարձան ընդ կըր-
րունկն: Եւ լոյս սաստիկ երեւեցաւ
'ի նմանութեան սեան լուսաւորի՝
կայր 'ի վերայ Ջուրց գետոյն, և
'ի վերայ նորա նմանութիւն տէ-
րունականն խաչին. և այնչափ ծա-
գեաց՝ մինչև զճառագայթս արե-
գականն նուաղեցուցանէր: Եւ
իւղն օծութեան՝ զոր արկանէր
Գրիգորիոս 'ի վերայ մարդկանն,
չքնաղ տեսեալ 'ի մէջ գետոյն շուրջ
զմարդկաւն խաղայր: Եւ ամենե-
քեան զարմանացեալք բարձրացու-
ցանէին զողորմութիւն 'ի փառս
Աստուծոյ: Եւ ընդ երեկս աւուրն
նշանն աներեւոյթ լինէր, և նոքա
յաւուրն դառնային: Եւ որ մկըր-
տեցանն յաւուր յայնմիկ, աւե-
լի քան զչորեքտասան բիւր մար-
դիկ յարքունականն զօրացն:
Եւ անտի ելեալ մեծաւ ցնծու-

թեամբ, և ամփոփակ հանդերձիւք, սաղմոսիւք և օրհնութեամբք, կանթեղօք վառելովք, և մոմեղէնօք լուցելովք, և ջահիւք բորբոքելովք, մեծաւ լրջմտութեամբ և բազում զուարթութեամբ լուսաւորեալք և հրեշտակացեալք. և առեալ զանուն որդէգրութե յԱստուծոյ, և մտեալ 'ի ժառանգութիւն սրբոյ աւետարանին, և 'ի վիճակ սրբոցն խառնեալք, ծաղկեալք 'ի հօտ անդոյշ 'ի Քրիստոս, և ելեալք 'ի տէրունական տունն զաւանայինն: Իւ անդ մատուցանէր զօրհնութեան պատարագն, հաղորդէր զամենեսեան 'ի խորհրդն սրբութեան. բաշխէր ամենեցուն զսուրբ մարմինն և զպատուական արիւնն ամենափրկչին Քրիստոսի զկենդանարարն և զկեցուցիչ ամենայն մարդկան, և զարարիչն և զաշխարհագործն ամենայն աշխարհի, զաստուածատուր շնորհն առ ամենեսեան:

ՃԺԹ. Իւ դադարեաց անդ յետ

այնորիկ աւուրս եւեթն վասն հոգեւոր մխիթարութեանն։ Եւ յայն աւուրս եւթեանցն որ մկրտեցան յարքունական բանակէ անտի, ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ՝ աւելի քան զչորեքարիւր բիւր։

Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ հռչակել, յառաջագոյն կարգեալ մնացեալ պաշտամանն՝ 'ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ 'ի նմին տեղւոջ պաշտէին՝ յուրախութեան Նաւասարդ աւուր։ Զի ժողովեալ 'ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու, և սուրբ վկային Աստուծոյ Աթանագինէի, յայնմ աւուր խմբեսցեն 'ի նմին յաւանի։

Յորում և երանելոյն Գրիգորի զվարդապետութիւնն իւր 'ի գործ արկեալ, և ժողովրդոցն առ ընդունել քաղցրացուցանելով, և ծովացուցեալ զվարդապետու-

թեանն խորութիւն, և լցուցեալ զամենայնսն հոգևոր բարութբ, հասանել նմա բովանդակ 'ի մերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց մեծութեան աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, 'ի կողմանս, յաւանս, 'ի շէնս, 'ի գեօղս, յագարակս: Այնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հողս յամենայն յագարակ տեղիս, իսկ յաւանսն եւթն եւթն երդոյ հող, 'ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուէր պտղոց Տեառն մատուցանէր:

Եւ կացուցանէր քահանայս յամենայն տեղիս, և հրաման տըւեալ՝ զի պաշտեսցեն զՏէր Աստուած միայն, զարարիչն երկնից և երկրի. և բազմացուցանէր ըսպաշտօնեայս սեղանոյն Տեառն ընդ ամենայն տեղիս. և կացուցանէր քահանայս առ սեղան սեղան յամենայն եկեղեցիսն: Այնպէս և դեսպանագնացական մեծամե-

ցուցանէր ՚ի զկատարութիւն ժո-ղովրդոցն Տեառն, և հրաման տայր նոցա՝ հաւատարիմ առաջնոր-դութեամբ վերակացու լինել լու-սաւորչական հօտին Տեառն։

ԾԻ. Նոյն հաւանեցուցանէր զթագաւորն, զի գաւառաց գա-ւառաց և կողմանց կողմանց ՚ի տեղիս տեղիս ժողովեսցեն բազ-մութիւն մանկանց, առ ՚ի նիւթ վարդապետութեան։ Զգաղա-նամիտ զվայրենացոյն զճիւաղա-բարոյ զաշխարհականս, զոր ա-ռնել արկանէր ՚ի բանս վարդա-պետութեան, և հոգեւոր սիրով եռանդամբ զաղա և զժանգն զչա-րաւահոտ զխուացն և զմնոտիա-գործ պաշտամանցն ՚ի բաց քե-րէր։ Եւ այնչափ անձնատէր ՚ի հայրենի բնակացն իւրեանց՝ մին-չև առնել նոցա, թէ մոռացեալ ըղ-ժողովուրդ և զառածն հօր իւրոյ։

Ի տեղեաց տեղեաց սահմա-նացն Հայոց՝ տայր հրաման Թա-գաւորն Տրդատ իւրոյ իշխանու-թեանն՝ յաշխարհաց և ՚ի գա-

սրբոց բարեպաշտութեան մանկանց ածել յառաջադէմ զգաստութեան, և կարգել 'ի մէջ իւրոյ հաստատութիւն զպարապելս . առնուլ զայդս արդ ծագեալ քաջացն , զմանկունս նոցա 'ի նոյն ժողովել զուարթել յարժանաւոր ուսուցչաց զդասս, և զարգանալ ուղղորդ կարգել : Եւ զնոսա յերկնաւոր բարձրանեալս , զը-մանս յՍարի զպարապութեան կար-գեալ , և զանձանս 'ի Հելլէն . որ և անձինս յախտն թօթափել զաղ-բեստութիւն և զատարկաբանութեան և անսահմանաբարոյ աշխարհաց մտա-դարձելովք և առաջիկայ ծանուցանել և ուսուցանելովք ասմանն քննել և ամենայն աստեղաց Աստուա-ծոյ ոչ իւրոյ սնուցանելոց:

Համանեալք յառաջնոցն 'ի զատ-ուսելոցն իւր յԸստորաձևութե յայսպայմանական զառաջինն 'ի Վա-ղարշապատու քաղաքն՝ առաջին նախ զառաջինն առաջարկոյ հրա-մանացն քննել ամենայն . ուր նախ նշանաւորացն և նշանակեալ կանո-նաւոր ընդ խորհրդոյ . որք և

Digitized by Google

սուրբ վկայքն Աստուծոյ զետեղեցան և սոցա վկայարանքն, և կանգնեցաւ զսեղանն Աստուծոյ 'ի հանգիստ սրբոցն. և զնկարեալ տեղի տանն Աստուծոյ շինեալ զցուցեալն նմա 'ի տեսլեանն՝ ըզյառաջագոյն դրոշմեալն իւր. և կանգնեցաւ անդ զսեղանն Քրիստոսի: Այնպէս և 'ի տեղի մեհենիցն զոր կործանեաց յառաջագոյն. այնպէս և յառաջագոյն տեղիս՝ յաշխարհս և 'ի գաւառս առհասարակ, այն օրինակ գործեաց բազմացոյց զամենայն եկեղեցիս, և կացոյց քահանայս. և քրիստոսեան դրոշմամբն զամենեսին առհասարակ ընծայեցուցանէր լինել ամենեցուն Հոգւովն սրբ-բով:

Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց՝ 'ի ծագաց մինչև 'ի ծագս ձգէր տարածանէր զվարդապետութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. 'ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կա-

ղարջօք, մինչ խաղաւ 'ի սահմանս Մասքթաց, մինչև 'ի դրունս Ալանաց, մինչ 'ի սահմանս Կասպից, 'ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչև առ Մըծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորոց, առ Նոր Շիրական և Մահքրտան երկրաւն, և առ Կորդւօք մինչև յամուր երկիրն Մարաց, մինչև առ տամին Մահքրտան իշխանին, մինչև յԱտրպատական ձգէր տարածանէր զաւետարանութիւնն իւր:

Զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն՝ զտիւ և զգիշեր՝ անձանձիր առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանական և ողջոյնապատուէր գնացիւքն, առաջի Թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց՝ անընդդիմակաց 'ի հակառակորդաց զամենափրկչին անունն Յիսուսի կրեաց, և զամենայն ոգի աստուածազգեստս և ոգեզէնս վառեաց:

Եւ բազում բանդականաց և կողմնաւորաց 'ի տառապանելոյ 'ի բանդաւորաց փրկութիւն տուաք , կարգեցեալ ընտրս ահաւորութեամբ զօրութեամբ փառացն Քրիստոսի • և զբազում մուրհակս անիրաւապիտոս անիրաւութեան պարտատուաց : Եւ բազում միաւորաց կարծեմնեցւոց մոլոթարական վարդապետութեամբքն յանկնկալութիւն յուսոյն , ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և ամենափրկչին Յիսուսի Քրիստոսի նոթձեւոց • և զամենայն միանգամայն յաստուածպաշտութեան պայմանն փոխեաց :

ԾԻԱ. Եւ դարձեալ բազում և անհամար զունդս զունդս վանականաց 'ի շէնս և յանշէնս , զաւտակսն չքնաղեացս և լեռնակեացս , անձաւամուտս և արգելականս հաստատեաց : Եւ զոմանս յօրդւոց քրմացն առեալ զառաջաւորն ձեռնասունս առնէր • փոյթ ուսմանն 'ի վերայ ունէր ,

ընդ հոգեւոր խնամով եւ երկնա-
ւոր սնուցանել։ Որ յաշխարհին
եպիսկոպոսութեանն էին արժա-
նի կալեալ, առնել ձեռնադրու-
թիւն 'ի նմանէ. որ առաջնոյն՝
Աղեքսանդրոս անուն, որ ապա կող-
մանցն եգիպտոսական դեսպոյն լի-
նէր վերակացու. երկրորդին՝ Եւ-
տաքիոս, որ 'ի կողմանս փռիւգացն
Թասենոյ կացեալ լինէր հովիւ.
երրորդին՝ Թասոս. չորրորդին՝
Մոլքես, հինգերորդին՝ Եւսեբիոս,
վեցերորդին՝ Յոհաննէս, եւթնե-
րորդին՝ Ագապէս, ութերորդին՝
Արտիթէս, իններորդին՝ Արսու-
կէս, տասներորդին՝ Անտիոքէս,
մետասաներորդին՝ Տիրիկէս, երկո-
տասաներորդին՝ Կիւրակոս։ Այսք՝
որ յորդւոցն քրմացն ընտրեցան
լինել եպիսկոպոսք կողմանց կող-
մանց, աճեցուցանել զքարոզու-
թիւն։ Եւ զայլոցն անուանս թէ եւ
կամիցի ոք, ոչ կարասցէ շարժել։
Եւ զԱղեքսանդրոս զայր ճշմարիտ
եւ աստուածասէր՝ վերակացու
թողոյր աշխարհականն գործոյն քա-

նաւակին , և [illegible] ընդ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] . որ և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] ամենայն յաջողակութեանցն յիւրաքանչիւր ձեռնարկութեանց , երթեալ ընտանեկաց , մերձաւորաց , սիրա[illegible] , ծանուցանել [illegible] , և զառաջիկայ [illegible] խոստացեալ Հայաստանի [illegible] ։ Եւ [illegible] [illegible] տկարութեան [illegible] [illegible] , մանաւանդ հայեցեալ ևս 'ի մխիթարութիւն տառապելոցն [illegible]՝ եթէ յորժամ վասն Քրիստոսի տկարանամ , յայնժամ զօրացեալ լինիմ . և եթէ՝ [illegible] [illegible] լինիցի [illegible] տկարութեամբք , զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի ։

Անդ էր տեսանել չարչարանաց զգեցեալ , այլ տառապելոյ հոգւով , և [illegible] զոհիլ [illegible] հաւատարիմ 'ի փառսն և 'ի գովութիւն Աստուծոյ ։ Անդ կրթութիւն [illegible] ընթերցուածոց հոգեպարարութեան գրոց ։ Անդ քա-

ջալերութիւն յորդորական լու-
սաւոր վարդապետութեան, առ
'ի յառաջադէմ ընտրութիւն առ-
աքինահամբար քրիստոսադիր կե-
տին : Անդ եղաւ հոգւով աս-
տուածապաշտ ծառայութեամբ:
Անդ աղօթք աղերսալիք եւ պա-
ղատանք փարելիք եւ խնդրուածք
հաշտեցուցիչք վասն ամենեցուն
կենաց առ մարդասէրն Աստուած:

Եւ նովին հոգեւորաւ արուես-
տիւն հանեալ աւուրս բազումս,
յանապատ տեղիսն յականս եփ-
րատական գետոյն, յայլս եւ 'ի
քարածերպս երկրին բնակեալ
լինէր, եւ 'ի կատարս լերանց: Օ-
րինակ առեալ զմեծին Եղիայի
մարգարէին, եւ կամ զերանեալ
զմկրտչին առաքինույն Յովհան-
նու. բարեաց գործոց նախան-
ձաւոր եղեալ, զնոյն կեանս վա-
րուցն քաջութեան աստուածա-
մուխ կենացն անձին մատուցա-
նէր:

ՃԻԲ. Իւ Թէ երբեք երբեք ի-
ջանել չէջել զօրացուցանել զա-

չարչարանաւորացն՝ ճշմարտութեանն հոգւովն, երկայց երկայց պաշտօնէից օգտակարաց. ամենայն եկեղեցեացն, հաստատել յօգնականութիւն շնորհացն Աստուածոյ տանելոց երբեք ըղբաղձելոյ, հանապազ եղանակը 'ի Թեկուեան դիպաց դիպաց պատահելոց, եւ վճարէր զօրութեամբն Աստուածոյ։ Եւ յորդառաջոյն եւ պատրաստադրութեամբ եւ անխոնջ բերանով. ըղձական վարդապետութեանցն 'ի սիրտս մեկնելով ծառայեցուցանէր. եւ զայս արարեալ զամենայն ժամանակս իւր՝ վասն անձին եւ վասն աշխարհի։

Քանզի առաջի իւր էին ճշմարիտ վարդապետք, զանձանց առաքինութիւն կանոն աշակերտելոցն դնեն. մանաւանդ յոյժ առնելով զանեղծականն զմիոյն զմիայնոյն զիմաստնոյն Աստուածոյ. քանզի ասէ իւր. Սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել։ Որով բազում անգամ առնէր զաշակերտացն ուրոյն, եւ ամենախաղական անձամբ օրինակ կատարելոցն լի-

նէր · յորժամ 'ի թաբօրական լերինն զաւետաւեացն զերանութիւն տայր · և կամ 'ի նմին լերինն զկանոնական աղօթսն առնէր, մինչ դեռ աշակերտքն 'ի տիբերական ծովուն նաւէին: Եւ դարձեալ՝ յաւուրս բաղարջակերացն յօրինական տօնին զգիշերոյն աղօթս երկիցս անգամ 'ի ձիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր: Ուստի յայտ իսկ էր և առանց հետազօտելոյ, թէ ոչ վասն անձինն ամենատէրն՝ այլ համաշխարհի յուսումն զայս գործէր, որ է օրինակ ամենայն հնազանդելոց · վասն որոյ և ասէն իսկ, թէ արթուն կայցէք, յաղօթս կայցէք, զի մի մտանիցէք 'ի փորձութիւն:

Իսկ արդ՝ թեթեւագոյն արուեստից պակասագոյն 'ի գիտութենէն ազգք երկրածնաց, որչափ այն արուեստի ոք համարիցի՝ որ ընդ աստուածախօսն կատարեացէ, որով և երանելին Պաւղոս ամենեցուն ազխտանաւ

տայ. վասն որոյ և զամենակեցոյց Հոգին՝ 'ի թիկունս հասանել անմըռունչ հեծութեամբն բարեխօս գտանէ ։

Արդ յորժամ լսիցեմք, թէ սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, ապաքէն առնելն, զի ուսուցէ՝ ոչ զի պարգևեսցի, իմանալի է. և բարեխօսել Հոգւոյն սրբոյ՝ առ 'ի վարդապետելոյ մեզ, զի ընդ միմեանս բարեխօսիցեմք. և ոչ եթէ առ բարձրագոյն ոք միածնին կամ Հոգւոյն սրբոյ բարեխօսելն՝ գիտելի է. քանզի միապատիւ աստուածականն, և ոչ բազմաբար։ Իսկ երանելի Առաքելոցն ընկալեալ 'ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարօտական անձանցն օգուտ, և ապա օրինակ աշակերտեցելոցն, բարձեալ տանիսն. երբեմն առանձինն, և երբեմն ժողովովք գումարելովքն զփառսն Քրիստոսի բարձրացուցանէին։

Քանզի առաւել ևս օգտակար յամենայն աշխարհական զբօսա-

նաց առանձին սահման, և միայն աստուածպաշտութեան պարապել։ Ձոր և մարգարէքն յառաջագոյն գործէին, որք 'ի լերինս յանապատս, յայրս և 'ի քարածերպս վիմաց զաստուածեղէն կրօնիցն ծառայութիւն հարկանէին։ Նոյնպէս և ամենայն հարքն, որ առաջնորդեցան յառաքելական կանոնացն, և յինքեանց անձանցն բերին օրինակս վերջնոցս։ Աստի և երանելիս այս բարձեալ տանէր զաւանդելոյն պատիւ, և ամենայն ումեք մատուցելոց առ նա զնոյն պատուիրեալ գուշակէր։ Եւ այսպէս յառաջ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լցեալ, պարարտացուցանէր ամեթութեամբք զամենեսեան. խաղացեալ գայր 'ի բազում ժամանակս, և նովին 'ի նոյն կանխեալ և 'ի նմին հանապազորդեալ։

ՃԻԴ. Յայնմ ժամանակի երանելի ցանկալի և անպայման սքանչելի լինէր երկիրս Հայոց. որպէս

և Մովսէս յանձնարարն ուրեմն ու-
րէնսուսոյց Հեբրայականին՝ ամե-
նայն մարգարէական գաւառն, և
կամ խորին յառաջադէմն Պաւղոս՝
բովանդակ առաքելական գնդաւն
հանդերձ աշխարհակեցոյց աւե-
տարանաւն Քրիստոսի․ սոյնպէս
և առ եկեալ հասեալ երեւեալ՝
հայրապետարանս Հայերէնախօս գը-
տաւ ։

Արդ ըստ գաւառաց գաւա-
ռաց երթեալ ընթերցէր անձին խո-
րում կայր հանդարտեան յանա-
պատ տեղիս և անդ բնակէր, և
յանապատիցն լուսաւորէր զամե-
նեսեան ։

Եւ բազմացոյց կացոյց առա-
ջնորդս Եպիսկոպոսս յամենայն գա-
ւառս Հայոց իշխանութեանն իւ-
րոյ․ և որ եպիսկոպոսացն յաջորդ-
ման ձեռնադրեցան ՚ի նմանէ, ա-
ւելի քան չորեքհարիւր եպիս-
կոպոսս, որք կացին տեսուչս տե-
ղեաց տեղեաց ։ Իսկ զկարգս երէ-
ցանց և կամ սարկաւագաց կամ
անագանոտաց, և որ այլ եւս ՚ի

պաշտօն Տեառն կացին, անթիւք էին 'ի բազմութենէ:

Իսկ Թագաւորն Տրդատ՝ զայս ուխտ դնէր ընդ ամենայն մարդոյ՝ որ միանգամ ընդ նորա տէրութեամբն էին ընդ մեծի և ընդ փոքու, զի ամենեցունց հաստատութիւն այն կայցէ առ նոսա, զի անխորշ և անխէթ Աստուծոյ հրամանացն հնազանդեսցեն առանց երկմտութեան, և արարչութեանցն հաւատալ յամենայն սրտէ: Եւ ամենեցուն հաւանեալ այնմ՝ փութային կատարել վաղվաղակի զհրամանն:

Իսկ Թագաւորն շատ աղաչեաց զԳրիգորին վասն հանապազորդ առ նմա կալոյ, զի ընդ ինքեան շրջեցուսցէ· որում ոչ հաւանեալ չառնոյր 'ի յանձն, այլ յանապատ տեղիսն հաճեալ բնակութեամբ, պահովքն կոխել զինքըն՝ զի մի տացէ հպարտութեանըն բարձրանալ կոխել զինքն· կէս եդեալ ինքեան զամենայն աւուրս կենաց իւրոց քառասուն

քաղաքաւորաց որոգայթեալք ձեռին մինչ էր յոր գերեզմանաւորաց հանդերձա-ւորեալն խաչին մարմնաւորեալն։ Իսկ իբր-րեւ կայսրն կարգաւորեալ թագաւորին ազգաւորն հաւատոյ հանդերձեալ զնմանէ՝ որ 'ի մէջ նոցա բնակեցաւ, և քաղա-քաւորքն կարգաւորեալք 'ի կայսր նո-րա, յայնժամ ժամանակին լուսաւոր յա-ւուրց 'ի սուրբ եկեղեցւոյ՝ որ գիտակ ա-րարչին զթագաւորին մանուկ սրբոյն Գրիգորի, զի յաւուրս մինչ զնա 'ի մանկութեան ուխտն էր աստուածսիրա-կեալ, և երկրպագու աստուածեալ որոյ աստուածեղոյն ամենայն Հանդերձ-եալ ընթանալոյ, որ յաշխարհ հանդերձ կեանսն էր. որ աղօթս և նա յաղ-թութեան պաշտամանն նոցաց ցնծու-թեան։

Եւ երկրորդքն՝ Ուղղափառեկեա, որ 'ի մանկութենէ ըստ աստուածա-գործ ծառայութեան անձամբ էր. որ 'ի մենակեաց ընտանեկեաց կրօնս մտեալ էր, և բազում ազ-գի աղքատ պչտանկեցութեան ըստ աւա-ւետարանին կրթեալ աւետարանին կրօ-նաւորութեան, և աւետարանին կրօնից հա-

զեւղորայց զանձն ատակեալ. մնա-
ւորութեան ընտանանականութեան,
քաղցր և ծառայութ, և քանեթայրա-
ճաշակ կենաց, և աղօթելանաց անե-
րուսեց, խաղաղանազգեստ և զեա-
նասարած անկողնաց, և բաղդում
անդամ զհեշտական հանդիստան
զեհերաց՝ զհարկ քնոյ՝ յանձնա-
ւոր ողջնութեան 'ի թարթափ ա-
կան ցնծարելով, և զայս արարեալ
ոչ սակաւ ժամանակս ։ Գտեալ
և զումանս յինքն յարեցուցեալ,
և աշակերտեալ սմին աւետարա-
նական սպասաւորութեան ։ Եւ
այսպէս ամենայն փորձութեանց
'ի վերայ հասելոց կամայական
քաղցրութեամբ տարեալ, և նմին
լուսաւորեալ և պայծառացեալ,
և ծանօթական և հաճոյ եղեալ
տաճարի Աստուծոյ և ամենայն
մարդկան ։

Արդ խորհել լուսա զայս ամենայն
Տրդատա, վարդապետականի փութով և
անդրբաղդանակս արձակէր երկոս ա-
ւագս փառաւորս պատուականս
Տրդատականութ հանդերձ, զի զեր-

կուս որդւոյն Գրիգորի վաղ ա-
նա հաստատեցին ։ Եւ որ առաքե-
ցանն յարքայէն՝ զի ածցեն զնո-
սա, այսոքիկ են. առաջինոյն ա-
նուն Արտաւազդ, որ սպարա-
պետն էր ամենայն զօրացն Հայոց
մեծաց. և երկրորդին Տաճատ ա-
նուն՝ իշխան Աշոցաց գաւառին.
երրորդին՝ Դատ անուն՝ կարա-
պետ արքային ։

ԾԻԳ. Արդ իբրեւ եկին հասին
նոքա յաշխարհն կապադովկաց-
ւոց, և գտին զԱրթանէս 'ի կե-
սարացւոց քաղաքին, և զսուրբն
Ռոստակէս բնակեալ յանապա-
տի յիւրում մենաւորաստանին ։
Այլա ոչ հաւանէր նա իջանել յա-
նապատէ անտի, թէ ոչ եղև ժո-
ղով բազմութեան քրիստոնէից,
որ հաւանեցուցին զնա գնալ ան-
տի. զի լաւ է ասէին քեզ գործ
մշակութեանն Աստուծոյ՝ քան
զայդ մենաւորութիւն բնակու-
թեան յանապատս ։ Զորս այնու-
հետև յղարկեցին զնոսա անտի ։
Իսկ նոքա եկին հասին յերկիրն

Հայոց. և յանդիման ունելին զածեալն զերկուսին զորդիսն Գրիգորի առաջի Թագաւորին. զորս առեալ Թագաւորին ինքնին նոքօք հանդերձ 'ի խնդիր ելանէր սրբոյն Գրիգորի՝ ուր և գտցէ: Ապա եկեալ՝ գտանէր 'ի Դարանաղեաց գաւառին, 'ի լերինն որ կոչի Մանայարք յանապատին:

Ապա աղաչեաց երանելի Թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր զի ոչ հաւանեցաւ նա գալ և շրջել ընդ նմա և սիրեաց զմենաւորութեան կեանս, ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր զոր եա ածել ինքն՝ զԱրիստակէս: Զոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր. որպէս ըստ գրեցելոյն 'ի դէպ, թէ փոխանակ հարց՝ եղիցին որդիք կալ իշխան 'ի վերայ երկրի: Որ առաւել ևս քան զհայրն վերագոյն երեւեցուցանէր սա զիւր վարդապետութիւնն առ հարբն. և յետ նորա կալաւ զտեղի հայրենեացն,

ընդդէմ նոցա յանիրաւ կալանաւո-
րութեան Հայոց մնաց։ Արդ
և քննեմ խաղ մեծն Գրիգորոփորոս եղբ-
նեյր զանազան կարգաւորեալք, և ղեկա-
ւորացն աշխատութեանցն յաջողու-
թեան Հայոց զուարթացուցանել,
զօրացուցանել, նորոգել և հաս-
տատել։

Աստուածատուր թագաւորին Տրդա-
տայ վասն՝ բարեպաշտութեանն
ապաստանութեան ըստ աշխարհա-
կան հաւատոց ՚ի Քրիստոս, եր-
կիւղած պատմենք. որ սա անդե-
կացեալ և մարտնեալ աստուա-
ծակերտ հրամանին, և ցանկալի
եղեալ օրինաւորին կայսերց ; և
բարերաց օրինակ ամենայն աշխար-
հի։ Եւ անդէն ՚ի նախն ուշ եղեալ
վկայութեամբ ընթերցուածոց աս-
տուածեղէն գրոց։ Զի յուսու-
կան աշխարհական զարդութեանն
եկեղեցւոյ իմաստութեանն՝ յա-
ռաջնորդին ուսանել էր ամենեցուն
փրկչական մնաց հանճար-
գիտութեան, զի ունելով էր զայն
Արդ ընթերցեալ և զհնարս եղե-

նաւոր պարգեւացն, որով առժամայն լուսաւորեալ և Թեւակուռ Թեւամուխ եղեալ աստուածատուր հրամանացն 'ի հանգամանս, և ամենայն պատրաստուԹե՟ զանձըն յարդարեալ, և ըստ աւետարանական չափոցն 'ի ծառայուԹիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ: Մերկացեալ այնուհետև զհեԹանոսակիր ցանկուԹիւնսն, առեալ զնշան պարծանաց խաչին Քրիստոսի յանձն իւր, և պաշտել զնա ամենակեցոյց խաչեցելոյն՝ հաճել ըստ հրամանաց պայմանի, խաչակիր զընդին Քրիստոսի աշակերտելոցն հետևել. անձինն իւրում եղեալ սահման պահօք տքնուԹեամբ աղօԹս մշտնջենաւորունչս, և բազկատարած պաղատանս առ Աստուած, և արտասուս հանապազարուղխ վասն աշխարհին իւրոյ: Նոյնպէս և վասն իւր խնդրէր՝ զի մի՛ յիշեսցին մեղքն որ յառաջին տգիտուԹեանն, յայնժամ զոր 'ի հեԹանոսուԹեան անդ գործէր:

Եւ քաղաքումն և ամենայն ուժով նպաստաւորութեան ընծայեցու-ցեալ, ամենաստուածապահորդն վարդա-պետութեանն հայրապետութեան ցուցեալ, և ծառայեալ ամենա-բանիքն վայելչութեամբ. և այսպէս խորատեսեալ զգաստացեալ՝ կրօնա-ւորականն. վերջապէս յառաջագէմ լինել ամենայն ուղղութեամբ յա-մենայն 'ի գործս բարութեանցն նորա, տալով նա պայծառա-ցուցանէր զվարդապետութեանն սատարութիւն :

Իսկ մեծ Արքեպիսկոպոսն Գրի-գորիոս՝ սուրբ որդւովն իւրով Ողոստափիսեան և ամենայն ե-րեւելի օգնականօքն զամենայն ա-շակերտելովքն չըմէր՝ և հաստա-տէր զնոսա կալ 'ի պատուիրանին Ճշմարտութեան :

ԾԻԵ. Ընդ ժամանակին ընդ այ-նորիկ Թագաւորեաց Կոստան-դիանոս որդի Կոստանդեայ ար-քայի յերկրին պատանիացուց և խոայինացուցն. և հաստատեաց նա յԱստուած արարիչ երկնի և երկ-

Digitized by Google

րի, և 'ի ծնունդ և 'ի Բանն նորա յՈրդին միածին և 'ի Հոգին սուրբ աստուածութեան նորա: Եւ կուտեաց առ ինքն գումարեաց զբազմութիւն զօրաց առ ափն Ովկիանոս ահագին ծովուն. և ուխտէր զայս բան ընդ ամենեսին, զի առ հասարակ ամենայն ոք ճշմարտութեանն հաւատասցէ. միով աստուածաբարբառ պատգամօք մի ազգ կատարեալ փառաւորիչ միոյ Աստուծոյ լինել:

Եւ յԱստուած խրախուսեալ՝ դիմէր 'ի վերայ հեթանոսական թագաւորաց, և անդէն սատակէր զամենեսեան. զորս կործանէր զօրութեամբ քրիստոսեան խաչին՝ զպիղծ և զանօրէն թագաւորսն զԴիոկղետիանոս և զՄարտիանոսն և զՄաքսիմիանոսն և զԼուկիանոսն և զՄաքսենտիանոսն. և զամենայն զաւակ պղծալից թագաւորացն հեթանոսաց ջնջէր 'ի միջոյ:

Շինէր և զաւերեալ եկեղեցիս,

և կանգնեսջիք զանդամս կործանեալս 'ի տանն Տեառն. շինեսջիք զատուսքե- նարանն վկայիցն, և բազմեցուս- ցանէք զփառաւորութիւն յիշա- տակաց երանելեացն մարտիրո- սացն. յանձնէք զպատիւ քա- հանայից Աստուծոյ, և միաբա- նայն տանէք զխաղաղութիւն եկե- ղեցւոյ, բառնալ զգայթագղու- թիւն 'ի միջոյ. զի մի՛ ոք մի՛ իւիք սայթաքեալ յաստուածայնոց Ճանապարհաց: Աւերէք զաղծա- ւեց մեհեանն զխուցն. և զնոսա սա հասարակ միանգամայն իսկ իւրեանց պաշտօնէիւքն 'ի փա- խուստ դարձուցեալ պակասե- ցուցանէք. Դարձեալ և պարգեւս այնոցիկ շնորհէք՝ որք յաստուածս պաշտօնութեան Ճշմարտութեանն կեցեալ էին, և ոչ երբեք զհաւա- ստութիւն թողեալ: Վասն այ- սորիկ յաղթութեան տուաւ նմա 'ի մերոյս ամենեցունց, վասն զի եղե- նա զնշան յաղթութեան խաչին յանձին իւր:

Եւ զհրաման աստուածութեան

Digitized by Google

պատուիրանին Քրիստոնէութեանն՝ կալ 'ի յայսմիկ 'ի հաստատու-թեան հաւատոցն զոր էառ 'ի Տեառնէ, հրովարտակօք եւ բանիւք ընդ տիեզերս տարածանէր · բա-րառնացեալ յաղթող զօրու-թեամբ լուսոյ հաւատոցն՝ որ առ 'ի Տէր, ունել զբարեպաշտու-թիւնն · այսուհետեւ հալածէր զզօրս խաւարին, եւ 'ի վերայ ամենայն վերնոցն զօրութեանց վեր 'ի վե-րոյ լինէր ։ Իսկ որ այսմ՝ հաւա-նեալք՝ զի երկրպագուք լիցին Քրիստոնէութեանն, զնոսա բարե-կամեալ մերձեալ պատուեալ՝ առ-նէին մատուցանէր ։ Եւ այսու օ-րինակաւ հզօր երեւեալ 'ի վերայ մարդկան հաստատէր զթագաւո-րութիւնն իւր, աստուածակարգ թագաւորութիւն զիւր թագա-ւորութիւնն անուանեալ · մինչ այնչափ հզօրացեալ 'ի վերայ ա-մենայն մարդկան՝ երեւելի լինէր պայծառացեալ ։

Եւ այսպէս յաղթող երեւեալ՝ զինքն հաստատէր, մինչեւ զամե-

Digitized by Google

Նոյն աւուրս կենաց լուրոց՝ Հրեշտակ ՛ի յերկնից երեւեալ. զօրհանապազ նմա ապաստաւոր կարգեալ ընդ առաւօտս առաւօտս, զքրիստոսեան նշան թագի նորին առեալ՝ նովին ՛ի գլուխն դնէր, և այնպէս տեսեալ զերկնաւոր ըղՀրեշտակն յիւրում ՛ի ապաստաւորութեան երանելին և ցանկալին ամենայն թագաւորաց Կոստանդիանոսն: Որ և զիւր թագաւորութեանն ծիրանիսն Քրիստոսի աւանդէր աստուածասէրն և աստուածապաշտն, յաղթողն ՛ի վերայ ամենեցուն. հաստատէր զթագաւորութիւնն հաւատովք, և յամենայն եկեղեցիսն հաստատէր զհաւատս Ճշմարտութեանն:

ՃԻԶ. Ի յայնմ ժամանակի լուեալ այս յերկրին Հայոց մեծաց՝ ՛ի դուռն թագաւորութեանն արշակունեաց առ Տրդատ արքայ Հայոց մեծաց: Որ իբրև լուաւ զայս, բաղում փառաւորութիւն ամենատեսանն մատուցանէր. խընդութեամբ և մեծաւ ուրախու-

Թեամբ գոհանայր զայնմանէ, որ ընդ ամենայն երկիր զիւր սուրբ անուանն փառաւոր առնէր։

Ապա իբրև լուաւ զայս ամենայն մեծ արքայն Հայոց, խորհուրդ առնէր վասն Ճանապարհացն այնոցիկ. հանդերձեալ կազմէր, առնէր ընդ իւր զմեծ Արքեպիսկոպոսն Գրիգոր և զնորուն որդին զՌըստակէս, և զեպիսկոպոսն Աղբիանոս։ Եւ 'ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցան իւրոյ տաճարին, որ Բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն 'ի Նոր Շիրական կողմանէն, և երկրորդ սահմանակալն՝ յԱսորեստանեաց կողմանէն, և երրորդն՝ յԱրուաստական կողմանէն, չորրորդն՝ 'ի Մազքթաց կողմանէն։ Զմեծ իշխանն Անգեղ տան, և զԹագադիրն Ասպետն, և զՍպարապետն մեծ, և զիշխանն Մոկաց, և զիշխանն Սիւնեաց, և զիշխանն Ռշտունեաց, և զիշխանն Մաղխազութեան տանն, և զՇահապն Շահապիվանի, և զիշ֊

խանն Սպասկապետութեանն ։ Ու այլ բազում մեծամեծօք, և եւթանասուն հազարաւ ընտիր զօրուն հանդերձ՝ խաղայր գնայր յԱյրարատ գաւառէ 'ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել 'ի սահմանս Յունաց․ զանց առնէր զբազում օթեվանօք մեծաւ ուրախութեամբ ։

Ու բազում պատիւս պատրաստութեան հպատակութեան ըստ քաղաքաց քաղաքաց դիպելոց, և իշխանաց իշխանաց պատահելոց, գտանէին մեծարանս ընդունելութեան ։ Ընդ ցամաք և ընդ ծով փութացեալ աճապարէին, մինչ երթային հասանէին յաշխարհն խաղխացւոց և յերկիրն գաղմատացոց 'ի Թագաւորական քաղաքն հռովմայեցւոց ։

Զորմէ խիկոյն պատմեալ յարքունական պաղատանն․ զոր իբրեւ լուաւ աստուածակարգ Թագաւորն պատուական աթոռոցն Կոստանդինոս, և Հայրապետն մեծ Արքեպիսկոպոսն աշխարհա-

մուտ դրանն՝ որում անուն կոչէր Սեղբեստրոս, որք մեծաւ սիրով պատիւ արարեալ ընդ առաջ ելանէին. և տուեալ հանգիստ՝ շնորհս ունել ժամանակս ինչ անդէն 'ի տիեզերական քաղաքին: Ապա զարմացեալ Աստուածասէր կայսրն Կոստանդիանոս՝ հարցանելով զարքայն Տրդատայ, թէ զիա՞րդ ո՞րպէս առ քեզ եղեն Աստուծոյ սքանչելիքն:

Իսկ նա եկաց պատմեաց առաջի կայսերն զամենայն արարեալսն Աստուծոյ առ նա զբարերարութիւնն: Եւ զայն 'ի պատուհասին լինել 'ի կերպարանս անասնոյն՝ ոչ ամօթ համարեցաւ պատմել նմա: Եւ զհամբերութիւնն նահատակեալ վկայիցն քաջութեան, և որ գործք գործեցան, և որպէս բնակութիւն զօրութեան նոցա: Կամ զոր անդէն իսկ յանդիման ցուցանէր կայսերն զատարեալն ընդ իւր ըզԳրիգորին, եթէ այս այն այր է, ասէ, յորոյ 'ի ձեռն ծանեաք մեք

զմարդասիրութիւնն Աստուծոյ, և զնորուն ժուժկալութիւն նշանագործ զարմանալութեանցն: Վասն որոյ զարմացեալ կայսրն Կոստանդիանոս, խոնարհեցուցեալ զանձն՝ անկանէր առաջի Գրիգորի, զի օրհնեսցի 'ի նմանէն. և բազում վայելուչ մեծարանօք պատիւ արարեալ նմա, իբրև Խոստովանողի Քրիստոսի ըստ արժանաւորութեան նորա:

Սոյնպէս և արքայն Տրդատայ՝ իբրև եղբօր սիրելոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել դաշինս կնքէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատսն որ 'ի տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ 'ի բուն զհաւատարիմ սէրն 'ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն. զի ևս քան զևս առաւելագոյն արքայն Հայոց հաստատէր 'ի յերբորդութիւն 'ի հաւատսն, պատմէր և վասն վկայիցն նոցա թէ որպէս, և կամ զինչ օրինակ վկայեցին:

Ապա և կայսրն Կոստանդիանոս սկսաւ պատմել նմա վասն անզուգական վարուցն նոցա զոր յառաջագոյն գիտէր՝ մինչ դեռ անդ էին յիւրեանց աշխարհին. եթէ որպէս հաճոյ վարուքն էին, կամ որպէս ազնուականք 'ի մարմնաւոր կողմանէ տոհմաց իւրեանց։ Եւ զգործսն զօրութեան յաղթութեանն Աստուծոյ նմա տուելոյ պատմէր, առ ամենայն թշնամիսն ճշմարտութեանն յաղթող երեւեալ։ Ասէ. Գիտես, եղբայր, զի Աստուած յամենայն երկրի երեւեցուցանէ զիւր զողորմութիւն զօրութեանն. զի ամենայն արարածք նորա ծանիցեն զնա, և լինիցին նորա փառաւորիչք ճշմարտութեան. քանզի այնպիսի երկրպագուս իւր խնդրէ։

Ապա յետ այսորիկ մեծարեալ լինէին զարմանօք, մեծապատիւ շքեղութեանն կարգօք յարքունեացն և յեկեղեցեացն և 'ի պատուական իշխանաց քաղաքին. և մեծամեծ պատարագօք և երեւե֊

լի պարգեւօքն պատուեալ սիրով։ Այս հրաժարեալ 'ի ծիրանափառ օգոստականացն և 'ի սրբոյ Կաթողիկոսէն, ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերեւելի իշխանաց քաղաքին, և ամենայն իրօք աջողեալք, ելանէին յոսկիապատ կառս արքունատուրս, և մեծաւ շքաւ և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս։ Եւ ամենայն քաղաքաց պատահելոց պայծառագոյն լինէին. և մեծամեծս ըստ արժանողութեանն արքայութեանն մեծամեծ պատուեալ անդստին, մինչեւ գային հասանէին յերկիրն Հայոց յԱյրայրատ գաւառ 'ի Վաղարշապատ քաղաք 'ի հանգստակայս սրբոցն ։

Եւ բերէին զպարգեւս բերեալս անդստին, զոսկին և զարծաթն և զպատուական կարասին, 'ի նուէրս սպասու Աստուծոյ եկեղեցւոյն և 'ի տունս նուիրաց սրբոց վկայիցն դնէին. նա և զորւեալ զոսկի սպաս կայսերն 'ի

նոյն հանգիստ սրբոյն դնէին ։ Եւ առաւել զկուրեանց եկեղեցիսն շինեալ հաստատէին ։ Եւ մեծն Գրիգոր էառ շրջել ընդ աշակերտեալսըն յառաջագոյն, հաստատէր ըղնոսա 'ի Ճշմարիտ քարոզութիւնն։

ՃԻԵ. Ապա յետ այսորիկ հրաման ետ մեծ կայսրն օգոստականն Կոստանդիանոս, ժողովել ամենայն եպիսկոպոսաց 'ի քաղաքն Նիկիացւոց ։ Յայնժամ մեծ արքայն Տրդատ և սուրբ Կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին և արձակեցին զԱրիստակէս ։ Որ երթեալ հասանէր 'ի ժողովն մեծ Նիկիոյ ընդ եպիսկոպոսսն ամենայն. ուր ամենայն ախոյերացն կարգեցաւ ընդունելութեան աւանդութեան հաւատք, կարգք լուսաւորութեան, կանոնք պայմանաւորք, աստուածատուր զօրութիւն հաճոյից Աստուծոյ անչափ բարձրութեանցըն ։ Ուր և մեծ կայսրն Կոստանդիանոս մնեալ խոստովան լինէր զհաւատոյն, և օրհնութեամբ ալ-

տակեալ 'ի ժողովըն՝ զանուն 'ի յերկրի Թուղթ, և զարդարութիւն 'ի յերկինս հաստատել։

Իսկ երանելին Արստակէս զայն հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն և հաստատուն աստուածահաճոյ նիկիական կանոնօքն երեւեալ 'ի հայաստան երկրին. առաջի դնէր Թագաւորին և Կաթողիկոսին սրբոյ՝ զբերեալ աւանդութիւնսն։ Որով սրբոյն Գրիգորի 'ի նոյն լուսաւորական կանոնսն յաւելեալ, առեալ զիւր վիճակն զհայաստան երկիրն՝ պայծառացուցեալ հանդերձ արքայիւն Տրդատաւ, զամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորէր։

Այս յետ այսպիսի գործոյ սկսեալ երանելոյն Գրիգորի ճառըս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորհրդոց դիւրալուրս յարմարեալ 'ի զօրութենէ և 'ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յարմարեալս աւետարանական հաւատոյն ճշմար-

տութեան։ Յորս բաղում նմանութիւնս և օրինակս յանցաւորաց գտանել աստ՝ առաւել վասըն յարութիւնական յուսոյն, առ ՚ի հանդերձեալն յերիւրել. զի հեշտընկալ և դիւրահասոյցք տխմարագունից և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին առ ՚ի սթափել զուարթացուցանել և հաստահիմն առ խոստացեալ աւետեան քաջալերել։

Զաւետարանական ընթացն և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ՝ շնորհօք Աստուծոյ առանց պակասութեան տանէր. և առաւել փութայր գուն եդեալ՝ զամենայն ոք յորդորելով առ ՚ի բարեացն քաջալերութի։ Զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք, և բարձր բարբառովք զաստուածադիր պատուիրանացն զհրամանն յուշ առնելով, զգուշացուցանէր ամենայն մարդոյ։ Չտայր քուն աչաց և ոչ նինջ արտեւանանց, և ոչ հանգիստ կրանացն, մինչև հասանել ՚ի հանգիստ Տեառն։

Նւ այսպէս հանդերձ Թագաւորաւն և ամենայն աշակերտելովքն զամենայն ժամանակն իւրեանց՝ ընթերցուածոց գրոց ծախէին զտիւ և զգիշեր. և նոքին ծաղկեալք և շահաւէտեալք, և օրինակ բարեաց ուսմնասիրաց ընթերակայից ցանկ լինէին : Մանաւանդ զի ունէին ևս պատուիրանս զգուշացուցիչս զաստուածակարգ պատգամաւորացն, որոց առաջինն հրամայէ, թէ յօրէնս Տեառն խորհեսցին ՚ի տուէ և ՚ի գիշերի. և երկրորդն զհամգունակն պատուիրէ, թէ միտ դիր ընթերցուածոց մխիթարութե վարդապետութեան, մի անփոյթ առներ զշնորհսդ որ առ քեզդ են. յայդ խորհեաց և ՚ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ յայտնի լիցի ամենեցուն. զգոյշ լինիջիր անձինդ և վարդապետութեանդ և ՚ի դմին յամեսջիր. զի եթէ զայդ առնիցես՝ զանձն քո ապրեցուսցես և զայնոսիկ որ քեզ լսիցեն:

Արդ այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց առաքելարան առաքելագործ վարեալ ըղձեա երեւեալ հրամանացն ընկալելոց, մինչեւ 'ի վախճան կատարածին զայս առնէր ամ յամէ, թաղեալ 'ի սէրն Քրիստոսի լուսաւորէր :

Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս քո թագաւորութեանդ, Տրդատ, գրել զայս ամենայն որպէս օրէն է զժամանակագիր մատենաց՝ ըստ այնմ ձեւոյ, ոչ թէ դրոշմեցաք ըստ օրինակի յաճական ճարտարութեանն արկեալ 'ի շար զամենայն : Բայց նոյեցաք իբրեւ 'ի ցուցող հայելի յաստուածագիր բարձրութեանցն տուչութեան հրամանացն՝ որ առ երանելին Մովսէս եկեալ վասն ամենայն իրաց եղելոց աստուածեղէն պատգամացն աւանդելոց՝ մատենագրել 'ի պահեստն յաւիտեանցն որ գալոց են : Նոյնպիսիք և այլոց մարգարէիցն հրամայեալ

Աւ, ասէ, քարտէզ նոր մեծ և գրեա 'ի նմա գրչաւ դպրի ճարտարի, և այլուր՝ թէ գրեա զտեսիլդ 'ի տախտակի և 'ի գիրս հաստատեա, զի որ ընթեռնուցուն՝ համարձակ ընթեռնու: Իսկ Դաւիթ յայտնագոյնս ևս վասն ամենայն ազգաց վկայէ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովն, թէ գրեսցի այս յազգ այլ, և թէ՝ Տէր պատմեսցէ գրովք ժողովրդոց: Զոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանօքն, թէ եկէք ընդ ամենայն ազգս, և եթէ՝ քարոզեսցի աւետարանս 'ի ներքոյ երկնից. փութով երեւելի և արդիւնակատար ըստ աւետարանին զիւր մշակութիւնն ցուցանէր:

Եւ արդ քանզի ըստ օրինակի գրելոյս առ 'ի մէնջ՝ 'ի կատարումն դարձուցեց, ոչ եթէ 'ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզէն իսկ ականատես կերպարանացն և առընթերակայ

հոգեւոր գործոյն և լոյսք չնոր-
հապատումվարդապետութեան,
և նոյին արքանեակք ըստ աւե-
տարանական հրամանացն. ոչ
սուտապատում ճարտարախօ-
սեալ առ 'ի մերոյն բանիցն, այլ
զյաճախագոյնն թողեալ և 'ի նը-
շանաւոր գիտակաց քաղելով ըղ-
համառօտն կարգեցաք. որք ոչ
մեզ միայնոյ թագաւորաց, այլ
յորժամ Քո առաջի զմատեանդ
ընթեռնուցուն՝ յայտնի է: Քան-
զի չէաք խոկ հանդուրժող զամե-
նայն արարեալ սրբոցն գիտակա-
զիւրաքանչիւր նշանակել, այլ 'ի
գլխաւորագոյն և 'ի հեշտագոյն յա-
ռաքելականդ. անդ զանձինս ա-
պատանեցաք. որոց զանցեալ
զբազմախուռն արդասեօք սրբո-
ցըն, առ 'ի մանրակրկիտ առնե-
լոյ զկարեւորագոյնն և զօգտա-
կարագոյնն պատմեցաք:

Ուստի և մեր առեալ հանդոյն
ասացաք, ոչ 'ի պատիւ ընտրելոյ
Աստուծոյ՝ որք ամենապարծ և
կենդանատուր խաչին ծառա-

ցեալք յարգեցան, այլ յօրինակ
քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւ-
րեանց, որք աշակերտելոց էին
յազգս ազգաց, ըստ բանի հո-
գեւորական երգչին որպէս ասէ.
զի զոր ինչ միանգամ պատուի-
րեաց հարցն՝ ցուցանել զայս որդ-
ւոց իւրոց, զի ծանիցէ 'ի յազգ-
այլ: Որդիք որ ծնանին՝ յարիցեն
և պատմեսցեն որդւոց իւրեանց,
զի դիցեն առ Աստուած զյոյս իւ-
րեանց, և մի՛ մոռասցին զգործս
Աստուծոյ. և զպատուիրանս նո-
րա խնդրելով խնդրեսցեն, զի մի՛
եղիցին իբրև զհարս իւրեանց: Զի
նոքա առ արարչութիւն անդր
այսպիսի բարբառ արձակեալ ա-
սասցեն. Տէր Աստուած մեր դու
ես:

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

*Աբրահամ* 53. 121. 134. 229. 230. 231. 242. 248-397. 486. 487.
*Ագապէս* 630.
*Ադամ* 209. 210. 211. 214. 216. 217. 220. 222. 224. 225. 228. 262.
*Ազովտոս*. 515.
*Աթանագինէս* 607. 623.
*Աթէնք* 519.
*Ալանք* 30. 628.
*Ահարոն* 317. 319.
*Աղբխանոս* 630. 650.
*Աղձնիք* 596.
*Աղուանք* 30. 31.
*Ամանորայ գիւք* 623.
*Ամդացիք* 628.
*Ամովս* 349.
*Այրարատ* 33. 38. 103. 122. 582. 594. 602. 612. 626. 651. 655.
*Անակ* 36. 102.

Անահիտ տիկին 51. 54. 61. 106.
Անահտական մեհեան կամ դիք 49. 50. 584. 590.
Անանիա 375.
Անգեղ տուն 596. 650.
Անդրէաս 331. 511.
Անի 590.
Անտիոք 348.
Անտիոքէս 630.
Աշխէն 575. 594. 600. 612. 614. 620.
Աշոց.ք 641.
Ասիա 515.
Ասպետութեան իշխ. 596.
Ասողիկ դիք 607.
Ասորեստան 30. 35. 103. 159. 257.
Ասորեստանեայ.ք 429. 650.
Ասորիք 104. 628.
Ատրպատական 159. 628.
Արամազդ 52. 61. 106. 590. 591. 593.
Արծրունիք 597.
Արշակունիք 34. 109. 587. 649.
Արուեստական գաւառ 650.
Արսուկէս 630.
Արտաշատ 40. 103. 166. 167. 168. 584.

Արտաշիր, որդի Սասանայ 29. 32.
Արտաւազդ 641.
Արտաւան, արքայ Պարթևաց 29. 31.
Արտիխթէս 630.
Ափրոդիտէս 607.
Բաբել 429.
Բաբելացիք 142. 164.
Բաբելոն 257.
Բագայառիճ, գիւղ 593.
Բագուան 612.
Բաղասար 370.
Բառնաբաս 512.
Բասեն 630.
Բասս 630.
Բարթուղիմէոս 511.
Բարշամինա, դիք 589.
Բարսաբաս 512.
Բեգղէհէմ. Բեթղէհէմ. Բեթղա-հէմ. 288. 291. 293. 297.
Բիւթանիա 515.
Գաբրիէլ 310. 323.
Գամիրք 515.
Գայիանէ 113. 116. 120. 131. 132. 139. 145. 149. 150. 157. 160. 161. 163. 555. 570. 576. 577.

*Գայլ գետ* 49. 591.
*Գարգարացւոց լեռնան* 597.
*Գէդէոն* 245.
*Գոմորացիք* 277.
*Գութք* 44. 47.
*Գրիգորիոս. Գրիգոր* 43. 49. 50. 52. 96. 97. 105. 110. 112. 167. 168. 169. 170. 171. 181. 182. 183. 538. 545. 548. 549. 553. 569. 570. 572. 573. 574. 576. 578. 579. 581. 583. 585. 591. 592. 595. 596. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 611. 612. 616. 620. 621. 623. 645. 650. 653. 656. 657.
*Դամաստացիք* 515. 651.
*Դանիէլ* 141. 242. 245. 296. 350.
*Դաս կարապետ արքայի.* 641.
*Դարանաղիք* 588. 642.
*Դաւիթ* 148. 149. 240. 241. 243. 280. 291. 294. 295. 296. 297. 299. 333. 378.
*Դեբովրայ* 144.
*Դերջան* 593.
*Դիոկղետիանոս* 112. 124. 646.
*Դիցաւան. Դիցնաւան* 612.
*Դպիրք ատենակալք՝ նշանագրաց* 89.

Եբրայեցիք 233.
Եգիպտացիք 232. 233. 237. 253. 277.
Եգիպտոս 233. 299. 413. 515
Եզեկիէլ 371. 408. 415.
Եկեղեաց 49. 590.
Եղիա 632.
Եմաւուս 364.
Ենովս 224.
Ենովք 67. 224. 225.
Եսայի 294. 330. 358. 365. 371. 485. 488.
Երազամոյն 584.
Երասխ 40.
Երեմիաս 489.
Երէզ աւան 49. 590.
Երուսաղէմ 315. 339. 341. 348. 495. 496.
Եւայ 70.
Եւսեբիոս 630.
Եւստաթիոս 630.
Եփրաթա 291.
Եփրատ 158. 606. 607. 613. 620. 630. 632.
Զարեւանդ գաւառ Հայոց 597.
Զաքարիա հայր Մկրտչին 317.

Զաքարիա մարգարէ 245. 350.
Էմմանուէլ 279.
Ըռոտամնատակ դաստակերտ 626.
Թաբօրական լեառն 634.
Թադէոս 512.
Թեսաղոնիկեցիք 451.
Թէոփիլէ 367.
Թիլն աւան 591.
Թովմաս 511.
Թորգոմ 24. 582. 597.
Թորգան 589.
Թրակ 51[illegible].
Իսահակ. Սահակ 134. 231. 305.
Իսրայէլ 118. 237. 288. 291. 305.
Իսրայէլացիք 233.
Իտալիացիք 645. 651.
Լակոնիա 515.
Լիբէացիք 515.
Լիկիանէս 42. 45. 46. 47.
Լիւրիկիա 519.
Լփինք 31.
Խաղխաղ քաղաք 37.
Խաղալիք 627.
Խոսրով Հայր Տրդատայ 29. 30.
32. 37. 42. 102. 103.
Խոսրովիդուխտ 165. 167. 575. 600.
612. 614. 620.

Խուժաստան 515.
Ծաւդէից իշխան 597.
Ծոփաց իշխան 597.
Կաղարջք 627.
Կայէն 70. 221. 223. 226.
Կայնան 224.
Կապադովկացիք 42. 597. 641.
Կապադովկիա 515.
Կասպք 31. 628.
Կաւկաս 586.
Կեսարացիք 598. 603. 604. 610. 641.
Կեսարիայ 42. 614. 617.
Կիւրակոս 630.
Կիւրենացիք 515.
Կղէոպեանք 363.
Կոստանդ 645.
Կոստանդիանոս 23. 645. 649. 651. 652. 653. 654.
Կորդիք 628.
Կորդովաց, կամ Կորդուաց իշխան 597.
Հաբէլ 221. 222.
Հայաստան 41. 129. 163. 185. 539. 582. 597. 657.
Հայք 30. 33. 37. 42. 49. 61. 102. 103. 106. 109. 110. 122. 123. 127.

129. 137. 582. 587. 590. 597. 600. 606. 611.
Հեր, գաւառ Հայոց 597.
Հնդիկք 515.
Հոնք 30. 104.
Հռիփսիմէ 113. 114. 116. 120. 130. 131. 133. 139. 140. 143. 144. 145. 149. 154. 157. 158. 160. 163. 164. 555. 570. 575. 577.
Հռոմ 19.
Հռովմայեցիք. Հռոմք 113. 149. 159. 651.
Հրէայ 124.
Հրէաստանեայք 299.
Ղեւի 318.
Ղեւոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու. Ղեւոնդէս 600. 603. 604. 614.
Ղեւտացիք 423.
Ղովտ 244. 263. 346. 398. 400.
Ղուկաս 367. 512. 532. 534.
Ղուկիանոս 646.
Ճիղպք 31.
Մաթուսաղայ 224.
Մաժաք 598.
Մահքրտան երկիր 628.

Մաղաղիէլ 224.
Մաղխազունեան տան իշխան 597.
Մամբրէ 230.
Մանայալք 642.
Մասիս 576.
Մապքութք 628. 650.
Մատաթիաս 512.
Մատթէոս 511.
Մարդպետութեան իշխան 596.
Մարիամ Աստուածածին 287. 319. 585.
Մարիամ քոյր Մովսէսի 404.
Մարկոս 512.
Մարտիանոս 646.
Մարք 515. 628.
Մաքսիմիանոս 646.
Մաքսինտիանոս 646.
Մեծամօրի կամուրջ 40. 161.
Միջագետք 515.
Մեքիէ 371.
Մծբին 628.
Մոգք Արեւելեայք 292.
Մոկաց իշխան 597. 650.
Մովսէս 192. 233. 234. 236. 237. 238. 239. 246. 248. 251. 295. 317. 318. 320. 335. 408.

*Մովսէս եպիսկոպոս* 630.

*Մրհական մեհեան* 593.

*Յակոբ* 231. 243. 244. 280. 294. 305. 321. 332.

*Յակոբոս առաքեալ* 331. 511.

*Յայէլ* 144.

*Յաշտիշատ* 606.

*Յարէդ* 224.

*Յեսու* 239. 245.

*Յեսսէ* 240. 294.

*Յոհաննէս եպիսկոպոս* 630.

*Յոյնք* 41. 42. 43. 44. 45. 49. 104. 106. 123. 126. 144. 602. 607.

*Յովբ* 249. 349.

*Յովէլ* 496.

*Յովհաննէս կարապետ* 278. 304. 305. 309. 312. 315. 317. 320. 321. 323. 344. 486. 607. 623. 632.

*Յովհաննէս աւետարանիչ* 282. 331. 511. 530. 535,

*Յովնան* 141.

*Յովսէփ* 370.

*Յուդա նահապետ* 280. 291. 294. 332. 495.

*Յուդա Սկարիովտացի* 399. 471.

*Նաբուգոդոնոսոր* 164.

Նազարէթ 299.
Նանէջական մեհեան 591.
Նաւասարդ 623.
Նիկիա 656.
Նիկիացիք 656.
Նոյ 227. 346.
Նորաքաղաք, մականուն Վաղար-
շապատու 123.
Նոր Շիրական 628. 650.
Նպատ 613.
Շահապն Զարեհաւանդ եւ Հեր գա-
ւառի 597.
Շահապիվան 650.
Շուշան 142.
Ոյծք, անուն աւելոյ 42.
Ոսկիամօր դիք 607.
Որմիզդ 584.
Ուղմպիականք Յունաց 157.
Ուռի 37.
Ուռխայեցւոց իշխան 597.
Պահլաւ 36. 39.
Պանփիլիա 515.
Պարթեւարէն 594.
Պարթեւք 29. 32. 36. 106. 159. 515.
Պարսք 29. 30. 31. 33. 35. 37. 39.
41. 42. 103. 104.

Digitized by Google

Պետրոս․ Շմաւոն 299. 331. 343. 376. 511. 522. 528. 532.
Պիղատոս 349.
Պոնտոս 515.
Պօղոս 174. 324. 341. 348. 351. 353. 359. 401. 402. 451. 495. 512. 535.
Ռեբեկկայ 134.
Ռշտունեաց իշխան 650.
Ռըստակէս 639. 641. 642. 645. 656. 657.
Ռուշտունեաց իշխան 597.
Սահմի ամիս 611.
Սամարացիք 300.
Սառայ 134.
Սատաղացիք 627.
Սաւուղ 378.
Սափիրա 375.
Սեբաստացիք 604.
Սեղբեստրոս 652.
Սէթ 223. 224.
Սէնեքար 429.
Սիմոն 511.
Սինէ 234. 318.
Սիոնի 315. 316. 317.
Սիւնեաց իշխան 597. 650.
Սոդոմ 397. 400.

Digitized by Google

Սոդոմացի 230. 433.
Սողոմոն 271.
Սպանիացիք 515. 645.
Սպասակապետութե իշխան 651.
Սպարապետութեան իշխան 597. 650.
Ստահր գաւառ Պարսից 29.
Ստեփանոս 401. 402.
Վահագն 106. 607.
Վահեվահեան մեհեան 606. 607.
Վաղարշ արքայ Պարթեւաց 29.
Վաղարշապատ 33. 38. 40. 103. 122. 123. 127. 168. 584. 594. 602. 612. 626. 551. 655.
Վանատուր դիք 623.
Վիրապն Արտաշատու 103. 105. 110. 112. 167.
Վիրք 30.
Վրթանէս 639. 641.
Տաբիթա 375.
Տաճատ 641.
Տաճիկք 35. 158.
Տաճկաստան 159.
Տարօն 606.
Տաւրոս 606.
Տափերական (կամուրջք) 40.

Digitized by Google

Տիեզերական ծով 365. 634.
Տերիկկէս 630.
Տարոն 30.
Տրդատ. Տրդատիոս. Տրդատէս. զօրութիւն նորա մեծ յԱգա-
թանգեղոսէ 19. 42. 43. 45. 46. 47. 48. 49. 90. 101. 103. 105. 106. 110. 123. 124. 129. 137. 143. 573. 588. 600. 611. 614. 625. 649. 652. 653. 656. 657. 660.
Փայտակարան 628.
Փառական դաշտ 164.
Փարաւոն 370.
Փիլիպպոս 511.
Փղշտացիք 134.
Փոխուղիա 515.
Քանանացիք 134. 238.
Քարքէ լեառն 606.
Քորեբ 233.
Քուշանք 32.
Օտա 167. 188.

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Ա...
Կարգ ...

Digitized by Google